9/47.925/ 1794
Տ-84
Տոնապետյան, Գ.
Հայաստան և հայ ժողովուրդը
դարերի միջով: Հատոր 1.

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ
ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

P. TONAPETEAN

145, Holland Road

LONDON w. 14

Price 20 /-

9(47.925)
S-84

ՊԵՏՐՈՍ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ
(ՎԱՂԻՆԱԿ)

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

ՀԱՏՈՐ Ա.

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ

1764
A II 80282

IMPRIMERIE H. TURABIAN
227 BOULEVARD RASPAIL
PARIS
1947

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍԵԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ես տակաւին երիտասարդ էի՝ լի կենսունակութեամբ, երբ զաղափարակից յեղափոխականներ եւ ոչ—յեղափոխական բարեկամներ ջերմօրէն փափաք էին արտայայտում, որ դրի առնէի յեղափոխական եւ բանտային կեանքիս յիշողութիւնները, մի փափաք, որ անշուշտ առարկայ էր իմ մտածութեան, յայնժամ եւ յետ այնու: Այժմ, աւա՛ղ, մօտենում եմ ութսունի, կամ անցնում եմ ութսունը: Նըբանք որ, իրենց ունկնդրութեան բոպէական տպաւորութեան տակ արտայայտեցին այդ ցանկութիւնը, դրեթէ այլ եւս անյայտ են աչխարհի վրայ: Նրանց տուած խոստումս մնում էր անկատար, եւ մտադրութիւնս անմեռանելի: Այժմ սկսում եմ խորապէս խորհիլ թէ՝ եթէ յարատեւեմ այս անթափելի ծուլութեամբ, անշուշտ իմ անունը պիտի զրկուի փայլելուց Հայ Յեղափոխութեան փառաւոր հերոսների շարքերում: Չի, թէեւ չեմ հաւատում, բայց հաստատ գիտեմ թէ անսանձելի մահը այլ եւս մեծաքայլ յառաջանում է դէպի ինձ. բայց,

Երբ պետք հասնի ինձ, ես չեմ փախչում իմանալ. նա ինքն միայն գիտէ այդ: Բայց ես զգում եմ թէ՝ վերջին ատիճն է այս որ պէտք չէ փախցնեմ, եւ սկսեմ ու աւարտեմ քանի տակաւին տակաւ աչքերիս լեռնի լոյսը չէ խաւարել, ձեռքիս չարժումը չէ անշարժացել, եւ մաշուած ուղեղիս մեքենան չէ կանգ առել:

Բայց ի՞նչ կարող եմ դրել իմ յեղափոխականութիւնից, որով պանծամ եւ պարծենամ: Որպէս յեղափոխական, ես երբէք չեմ նկատել ինձ յեղափոխական այն իմաստով եւ վերհուիթեամբ, որպէս ես եմ երեւակայել յեղափոխական մարդը, իբր անբռնատարկելի, ազատ ապարէզում: Եթէ եղել են մարդիկ, որ իրենցից ստեղծել են, կամ իրենց կուսակցութեանց դրդիչներով ստեղծուել են այնպէս, ես թողում եմ նրանց իրենց քաջագործութեանց փառքի մէջ, ուր պանծալի դրեթէ ոչինչ է կատարուել, եւ ողբալի յոյժ շատ: Ես ես, որպէս անբռնատարկեալ կեանքով յեղափոխական, եղել եմ այդպէս փառաւորեալ ոչնչագործներից մէկը: Բայց, որպէս ձերբակալուած եւ բռնատարկուած յեղափոխական Թուրք ռասիկանական իշխանութեան առաջ, եւ Թուրք բռնաւերի մէջ, ես զգացի, որ յայնժամ միայն կարող էի արդարացի դասել Թէ՝ ես յեղափոխական էի արդարեւ հոգւով եւ յուզմունքով, եւ Թէ ունէի իրաւունք պարծենալ ես ինձմով:

Այս երկրորդ տխուր եւ փշալից հայ յեղափոխական ասպարէզի մասին ի զուր չպիտի լինի ի գիր առնել դէպքեր՝ յետագայ հայ ընթերցողների հետաքրքրութեան համար: Բայց որպէս իմ, անշուշտ եւ ինձ նման շատ հայ երիտասարդների մտքերը եւ սրտերը փոքրութիւնից սնուել էին ազգային ազատութեան գաղափարների յուզումներով, եւ որքան մեծանում էինք, մեր յուզումները յեղաշրջւում էին, և՛ երազային յեղափոխութեան, և՛ ազգային անկախութեան օգային դղեակները կառուցւում էին մեր զգացումների վրայ, եւ բարձրանում մեր երեւակայութեան մէջ: Ուստի, որպէս այդպիսիներից մէկը, ես աւելի յարմար եմ համարում գրել ոչ միայն իմ յեղափոխական եւ նրան հետեւող բանտային կեանքիս մասին, այլ սկսելով այն օրից երբ կեանքը ծաղկեց իմ գոյութեան մէջ, մինչեւ այն օրը, երբ կեանքի ծաղիկը տերեւաթափ վիճակի մէջ է, այլ եւս չը ծաղկելու երբէք: Սակայն կեանքի յոյսը այնու ամենայնիւ չարունակում է ապրել անմահութեան հաւատքով, որքան որ զգում ենք թէ տակաւին կանք:

Երբ սկսեցի այս գրուածքը, Յառաջաբանը վերջացրի վերոգրեալ տողով եւ բուն գրքից տակաւին չէի սկսել եւ ոչ մի տող, բայց գիտէի թէ պիտի գրէի մի նիւթ, որի ամէն տողերը պիտի լինէին հիւսուած իմ կեանքի դէպքերի

եւ տեսարաններէն անտեսանելի թելերով հետ։ Մտածութիւնը ոսկոյն անսահման է, նա չունի սահմաններ եւ ուղղութիւններ, եւ մղում է զբաղիչը այնպիսի ուղղութեամբ եւ զէպի այնպիսի նիւթեր եւ տեղեր, ուր երեւակայութիւնը չէր երեւակայել նախապէս, եւ ուր մտքը չէր խորհել բնաւ։ Այսպէս պատահեց իմ զբօսին, որին ես չեմ մեղադրեմ, եւ որի մեղքի եւ յանցանքի համար ես չեմ ցաւում, եւ մեղքը եւ յանցանքը առնում եմ իմ վրայ, եւ պատրաստ՝ ընդունել ամէն պարսաւ եւ պատժապարտութիւն որ կարող են անտարակոյս դալ կրօնի կեղծաւորներից եւ պարզամիտներից, եւ մխիթարական անբաժանելիօրէն կեղծաւոր ապաստրներից։

Այս պարտուղի տեսարանների եւ նրանց նկարագրութեանց մէջ կան երկու նպատակներ, ցոյց տալ ճշմարիտ եւ մաքուր կրօնի մարմնի մէջ արմատացած ոտոտ վէրքերը, որոնք միայն յիմարութեան մէջ են պահում մարդոց հոգին եւ որ աւելի կարեւորն է՝ ցուցադրել այն հետեւանքը ապականութեանը, որից բաժանել է խորհրդային Հայաստանի ժողովուրդը։

Բայց Հայաստանից դուրս, Թէհրանից մինչեւ Նիւ Եորք, ամառնպատան հայ հասարակութեանց մէջ, այդ տխուր ապականութիւնը չարունակում է մնալ անբաժանելի մաքով

ազքատ եւ դիւրահաւատ անհատներէն եւ նրանց հետ ապրող խորամանկութեան վարպետ մի կարգ ուսեալներէ մէջ, որոնց համար ազգասիրականութիւնը եղել է անուան, փառքի եւ պատուասէր մուրացկանութեան արհեստական կամուրջներ, առանց որոց նրանց անուններըը կը մնան խաւարամած, եւ առաքինները կիսակուշտ կամ սովամած:

Որպէս Յիսուսի եւ նրա Գաբրիէլ հրեշտակապետի խորհրդածութիւնները, եւ նրանցից աւելի հեռուն, երկնային պատշգամում նստած Աստուքի եւ Եղիայի հակառակաբանութիւնները՝ Հայ ազգի քրիստոնեայ դառնալու օգտակարութեան եւ վնասակարութեան մասին, նոյնպէս եւ Քրիստոսի գրաբառ բանախօսութիւնը Վարդապետաց երկնակամարից՝ շրջապատուած բիւրաւոր հրեշտակներով եւ ուղղուած Հայ ազգին եւ յատկապէս Հայաստանի ամէն ծայրերում, նմանապէս Գրիգոր Լուսաւորչի քարոզը Տրդատ թագաւորի չքեղափառ պալատի ճակատից, այս ամէնը վերացական են:

Անշուշտ, մեծ ազմուկ պիտի բարձրացնեն մեր վարիչներն ու նրանց յետեւից հաւատարիմ քայլողները Սուլթան Համիտի երազային ճառին առթիւ՝ ուղղուած Նեբուքէնեզարին Բաբելոնի տաճարին վրայ: Ես դրած եմ այդ ճառը, որպէս թէ նա ինքն էր մատուցողը, դատողը եւ խօսողը որպէս մի իսկական Թուրք վե-

հապետ Թուրք կայսրութեան, իւր սկզբնական բարի տրամադրութեան չրջանից մինչեւ իր դայրոյթի եւ կատաղութեան օրերը դէպի Հայ ժողովուրդը:

Անշուշտ կը լինեն կարծողներ թէ՝ ես արդարացնում եմ մէկ կամ հարիւր յանցաւորների համար տասնեակ հազարաւոր անմեղ հայերի ջարդը:

Բնա՛ւ երբէք:

Բայց ես չեմ կարող մեր կեղծ ազգասէրների լեզուն բռնել: Ես գրած եմ, ինչ որ իմ ճանաչողութիւնը, փորձառութիւնը եւ դատողութիւնը թելադրեցին ինձ:

Ես գրում եմ Պատմութեան համար, եւ ապահով եմ, որ մեր աշխարհացիր Թրքահայ բեկորները հաւանութիւն պիտի տան իմ դատողութեան եւ պատմական այս ճշմարտութեան:

Այս գրուածքը Հայոց պատմութիւն չէ, եւ ոչ եւս ինքնակենսագրութիւն, ինչ որ նպատակս էր անուանել:

Կեանքիս սկզբնական տեսարանները եւ այն ամէն պատկերները Վաղարշապատից մինչեւ Տիգրանակերտ, եւ Տիգրանակերտից մինչեւ Լջմիածին 19րդ դարի վերջին քառորդում, շատ տարբեր չէին հին հին դարերի Հայ ժողովուրդի կեանքի չարժման եւ երեւոյթների պատկերներից:

Եւ կրօնական ամէն տեսակ ծէսերն, արա-

բողոքիւնները, նախատաչարումները եւ այլ կեղծիքները, որ իմ եւ իմ նման փոքրերի մէջ բուսնում, աճում եւ զառնում էին հաւատալիքներ, խոր արմատներ էին ձգում մեր մեծերի հետ, եւ Հայ ժողովուրդը իւր մտքով եւ հոգիով զարերով անցնում էր կեղծիքների միջով:

Բայց նեղկաց զարի Հայ ժողովուրդը, որ ապրում է մի նոր Հայաստանի մէջ, մտքի կըրթութիւնն եւ հոգւոյ ազատութիւնն մի նոր եղանակաւ զրեթէ խորտակել է, եւ հաւանաբար պիտի խափան խորտակէ իւր միտքն ու հոգին զարերով շղթայած ամէն կրօնական հաւատալիքներ որ ոսկեզօծուած են խաբէութեամբ:

Պ. ՏՕՆԱՊԵՏԵԱՆ

Լոնտոն, 26 Սեպտեմբեր 1946

Քէյմպրիճ, 10 Մայիս 1946

Սիրելի Տօնապետեան,

Երբ ես եւ կինս վայելում էինք քո ծովահայեաց բնակարանը՝ Պրայթընում, որ դրել էիր մեր տրամադրութեան տակ, տեսայ քո ձեռագիր տետրակները, որոնք ցոյց էին տալիս թէ՝ դրում էիր կենսագրութիւնդ, եւ ես ինձ թոյլ տուի կարդալ սկզբնական մասերը: Նրանք ունեն գրական բարձր արժէք եւ արժանի են կարգացուելու հայ գպրոցներում: Նրանք յիշեցնում են Ֆրանթէզիայի եւ պետերութեան տեսարանները, որ մենք դնում ենք մարդկանց եւ առարկաների մէջ՝ ծանօթ մեր մանկական կեանքում — պայծառ լուսաթափանց տեսարաններ, որոնք հաճոյք էին պատճառում եւ համայում մեզ մեր մանկութեան օրերում, բայց կորսուած՝ յետադայ կեանքի փոթորկալից յորձանքում:

Քոյդ սիրով՝
ԱՐՇԱԿ ՐԱՖՖԻ

Արշակ Րաֆֆին, մեծ վիպասանի ապրող վերջին շառաւիղը, այս նամակը գրելուց երեք ամիս վերջ յանկարծակի եղաւ ի Լոնտոն, ուր հաստատուել էր յիսուն տարի առաջ հանգուցեալ մօր եւ եղբօր հետ:

Իր նամակը դնում եմ այստեղ գրածիս մասին իր յայտնած գնահատանքից աւելի զգացած խորին ցաւս արձանագրելու համար իր անակն-

կալ մահուան առթիւ, որ դեռ թարմ է յիշողութեանս մէջ:

Հանգուցեալը երկար տարիներ դասախօսել էր Ռուսերէն լեզուն Լոնտոնի համալսարանում, եւ վերջին տարին հանգստեան կոչուելուց յետոյ դասախօսում էր Քէյմպրիճի մէջ: Հասցրել է բարձր դիրքերի հասած բազմաթիւ ուսանողներ, որոնք *Թուրմ* եւ այլ անգլիական թերթերի մէջ գրելով իր բարձր արժանիքների մասին պատշաճ յարգանքը մատուցին իր յիշատակին:

Պ. Տ.

———

ԿԵԱՆՔԻ ԱՐԹԱԼՈՑԸ

Հեռաւոր մշուշապատ մանկական առաջին յիշողութեանս միջով տակաւին լսում եմ բուռն քամին եւ տեղատարափ անձրեւի կաթիլները, որոնք դժուարաւ ճեղքելով քամին ուժգնօրէն թափւում են դեմնի վրայ գիշերային մթութեան մէջ. եւ ես, ընկղմած դեռնամած անկողնի խորքում, հեկեկում էի անմխիթար իմ սեւ կատուի համար, որ կորած էր կէս օրից ի վեր, եւ յայնժամ ով դիտէր ո՞ւր էր թափառում այդպիսի խաւար եւ տխուր գիշերին: Ջունս չէր գալիս, եւ լացս չարունակում էր, քամին փչում էր, եւ անձրեւը տեղում էր: Եւ ահա հասաւ ականջիս նրա ողբալից մլաւիւնը, մայրս, մի լաւ չորացնելուց յետոյ նրա ջրապատ փափուկ մաղերը, դրեց նրան անկողնիս մէջ, ես գրկեցի նրան, եւ քունը գրկեց ինձ իւր լուռ թեւերով:

Զարթնեցայ մի նոր անծանօթ ձայնով որ լցրեց սիրտս ցնծութեամբ, եւ ամբողջ էութիւնս մի զմայլելի երջանկութեամբ: Ձայնը բարձրանում էր վեր, եւ վեր օդի մէջ, եւ բարձրանում անտեսանելի բարձրութեան մէջ: Իւր

եանեից կարծես թագելով փոքրիկ ալիքներ որ լսվանում էին շուրջանակի եւ ոտուում ամենուրէք, մինչեւ նրանց ձայնաւոր հետքերը դադարում էին դառնալ լսելի, լսելով մթնոլորտի անսահմանութեան մէջ: Հայաստանի Մայր Եկեղեցւոյ կիրակնօրեայ պանդուխտութիւնն էր որ հրաւիրում էր իջմիածնի հոգեւորականներին, եւ վարժարջապատի աշխարհականներին եկեղ, եւ ժամերգել Սուրբ Գրիգոր Լուսաւորչի լուսերէն առաջին մէջ: Բայց ես դեռ անընդունակ էի հասկանալ, թէ ի՞նչ էր այդ զարմանալի ձայնը, եւ ի՞նչ բանի համար:

Սակայն նշմարում էի, որ առաւօտեան օր չէր: Չդեռաս թուում էր ուելի նոր եւ հրապուրիչ, մօրս պատրաստութիւնները կերակուրի համար ուելի աշխուժալից, եւ եռալ կերակուրների հոտը ուելի տարածուում: Կառուս երեւի յաղնած իւր դիշերային արկածախնդրութիւնից, հաճոյքով մրափում էր դեռեւի վրայ պայծառ արեւի ճառագայթների ջերմութեան տակ, ծուլիպարող պարտէզի եղերքին, եւ մեր կիսամայրենի չուանը ինքն իրեն կրծած մոտիկում աչքերով նայում էր դէպի ինձ:

Պարտէզը իւր կանաչներով եւ ծաղիկներով պոյպոյն եւ եւեւէջ բոցերութեան երեւոյթներով համայում էր ինձ, եւ կարծես նրանց ամէնի անոյշ հոտերը բուրում էին, զոլորշիանում էին, եւ լցնում օդը քաղցրութեամբ: Եւ ահաւոր ի՞նչ էին այնտեղ եղած-

նները: Ամբողջ պարտէզը բաժանուած էր փոքր քառակուսիների, եւ իւրաքանչիւր քառակուսի պատուած բարձր պարիսպներով եւ անջատուած միմեանցից, եւ Թզաչափ լայնութեամբ բաց դռներով միմեանց հետ, որպէս զի ոռոգելու ժամանակ ջուրը անցնէր մէկ քառակուսին, եւ այսպէս ամէնն եւս ոռոգուէին հաւասարապէս: Տան հանդէպ առաջին դժի քառակուսիներից մէկի մէջ, իրենց փոքրիկ ծառերից կախ ընկած եւեւում էին կապուտագոյն հասունսլոր պատիջաններ, մէկը միւսից աւելի սիրուն եւ աւելի դիւթական: Նոյն շարքի վրայ էին Թումաթէսի, բամիայի եւ բոլոկի ածուները ամէնը չարուած առաջին կարգի վրայ՝ տան դիմաց: Ունէինք նոյնպէս համեմի, կոտեմի, սոխի, Թարխունի եւ նոյն իսկ սխտորի ածուներ, եւ յետին շարքում պատի ներքեւում, վառոնգ, ձմերուկ եւ սեխ, միայն մէկ քանի ճիւղեր այս երկրի իւրաքանչիւրի սեռակիներից:

Այս մանրանկար բանջարանոցը զարդարուած էր ածուների մէջեւ ասդ անդ բարձրացած արեւածաղիկներով, փոքր ինչ բարձրատունկ ծաղիկներով որ իրենց կարմիր, կապոյտ եւ դեղին գոյներով ներկայացնում էին մի տեսարան, եւ իմ աքանչացման միակ սեռանկէլի աշխարհը: Պարտէզի եւ աշակողմեան պատի մէջեւ, ծայրից մինչեւ ծայրը, ուր էր փողոցի դուռը, պատի մօտով երկարում էր ծաղիկների մի չարք, մեծ մասամբ բազմագոյն եւ հոլա-

A 80282

նոցաձեւ, որ ցերեկները բացուում էին եւ դիշեր-ներըփակուում:

Կարծեմ երբէք չեմ մտաբերում տեսած լինել այնպիսի անտառ, կոչտ եւ ամենահատո տախտակով դուռ, որպէս էր մեր փողոցի դուռը: Կարծես չինուած էր Ադամի օրից, երբ հիւանները նոր էին սկսել սովորել իրենց արհեստը: Դրան նիգը փայտից էր դրեթէ մէկ մատնաչափ լայն էր, եւ կէս մատնաչափ հաստ, եւ աւելի քան երկու թզաչափ երկայն, եւ դուռը փակելու համար խրուում էր պատի մէջ յատկապէս շինուած մէկ թիզ խոր խոռոչի մէջ: Պարտէզի երեք կողմերի պատերը հողի ապիւսներից հաղիւ էին մէկ եւ կէս մատնաչափ բարձրը, եւ ծեփուած ցեխով: Նոյնն էր եւ տունը իւր պատերով, եւ յատակները պատած էին Աստուածոյ շինած ամուր տախտակով, եւ քօղարկուած թուրքի եւ քիւրդի ձեռքով հիւսուած խոիրներով եւ կարպետներով: Տունը միայարկանի էր. չեմ յիշում թէ ան առաջից լուսամուտներ կայի՞ն թէ չէ, բայց յետեւից չը կային, եւ ամենափառաւոր լոյսը, որ մտաբերում եմ, գալիս էր առաստաղի կլոր ծակից, որից սակաւն իմ աչքերը կարծես լիովին առանում էին երեք լուսամուտներն առած լոյսերի չափ պայծառ լոյս:

Որքա՜ն զօրաւոր էին աչքերիս լոյսը այն ժամանակ, եւ որքան խաւար են այս ժամանակում:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Միայն պարտէզի մէջ չէր որ կարող էի մանդալ։ Տանիքի վրայ ուելի շատ ոեղ կար, եւ ուելի անարգել։ Տանիքը բոլորովին հարթ էր եւ միացած մեւս տների տանիքների հետ։ Որպէս նեերքեւից, եւս ուելի այս դիրքից ալ կողմի վրայ, դէպի հարաւ, երկու բարձր տուներ, բաժանուած իրարուց, եւ երկուսն եւս երկյարկանի, մեր կողմի վրայ նայող երկար պատուհաններով եւ լուսամուտներով։ Վաղաբշտապատի երկու ամենաերեւելի շէնքերն էին, որ իրենց առաջին անխափան ունէին ջրի քանքարը, ուր կիներ եւ աղջիկներ գալիս էին դատարկ կուժերով, եւ ջրով լի կուժեր թեւի տակ առած կամ գլխի վրայ բռնած վերադառնում էին տուն։ Եւ այդ տուների առաջ փուռում էր մէյ տանը, ալ կողմի երկայն, երկա՛յն քառակուսի պարապատատ բաղարը, դէմ առ դէմ բզգաւոր պարիսպներ, որոց մէջից դէպի վեր բարձրանում էր էջմիածին իւր բզգաձեւ գմբէթներով, եւ հեռաւոր հեռաւորութեան մէջ երկնագոյն երկու Մասիսները իրենց սուր եւ սպիտակ կատարներով։

Որքա՜ն տարբերութիւն այդ տուների տեսքի եւ տեսարանի միջեւ, մերինի ուր միայն պարտէզի տեսարանն էր միակ գարդը։

Աւելի վտքր քան եւս, ունէի մի քոյր եւ մի եղբայր, բայց ուելի տարէց կային երկու եղբայրներ։ Անդրանիկը, Կարապետ, նմանում էր Հօրս. եւանդուն էր պատմումով, եւ բարի

էր բնաւորութեամբ, բայց երբեմն տեսնում էի երեսի վրայ եւ ձայնի մէջ դժգոհութեան ոյժը: Նա երեւի չատ զրաւէր էր. եւ այն օրից որ ես կարողացայ թուղթ բռնել ձեռքումս, մեծ զբեղով մի Այբուբեն դրեց ձեռքիս մէջ, եւ սաստիկ հետամուտ էր որ ես ծանօթանայի այդ զրերի անձնաւորութեանց հետ: Բայց ծանօթութիւնը բաւական դժուարին էր կատարւում: Կամ նըրանք չէին սիրում մտերմական ճանաչողութիւն կապել ինձ հետ, կամ ես անհոգ էի նրանց բարեկամութեան համար:

Եթէ ես այսօր կարող եմ զրել, այս պարտ եմ նրա անխոնջ հսկողութեան եւ չանքերին, եւ առանց նրան հազանօրէն դուրկ պիտի մնայի Այբը բերից զանազանելու բազդից: Անզրազիտութիւնը տակաւին թեւատարած թագաւորում էր Վաղարշապատի բնակիչների վրայ, որպէս էր այն երբ Վարդկէսեան Քրիստոսից զարեր առաջ եւ երբ նրա բնակիչները անշուշտ խօսում էին զրաբառի պէս մաքուր եւ ընտիր հայերէնով, եւ ոչ թէ իմ օրերի անկեալ Վաղարշապատի բարբարոնական հայերէնով:

Միւս եղբայրս էր Մխրտչ, խաղաղ եւ հեզահոգի եւ յօժարակամ, պատկեր իմ մօր ազնիւ բնաւորութեան: Նա չատ սրամտզրութիւն չունէր Մեսրոպ Մաշտոցի զտած հայ զրերի հետ. եւ նրա աչքն էր աշխատութիւն Աստուծոյ առեղծած հոգի համար, եւ այդ աշխատասիրութիւնը նա ցոյց էր տալիս այն հոգի վրայ,

որտեղից բարձրանում էր մեր բանջարազարդ եւ ծաղկազարդ պարտէզը։

ՏՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ

Մեր փողոցը վերջանում էր մեր պարտէզի դռան եռեւում, եւ բարձրանում էր թնթեւակի. աջ կողմի վրայ յիշեալ երկյարկանի տուների պատն էր, եւ ձախի վրայ, մի տուն, իւր պարտէզի հողաշէն պատով. հողաշէն աջ եւ ձախ։ Այս հողագոյն անհետաքրքիր տեսարանի մէջ այդ տան ակերը, մի կարճլիկ գունտ ու կլոր մարդ, ներկայացնում էր ինքն իրենից ամենահետաքրքրական տեսարանը, նրա մարմնաշուրջ սպիտակ գոգնոցը եւ գոյդ լեարկ այտերը յաճախ տեսնում էի զարդարուած լիառատ կապուտակ բիծերով։ Երկու ձեռները միշտ մերկ մինչեւ արմունկները, եւ միշտ կապոյտ ամբողջովին, կապո՛յտ, կապոյտ լեզակի պէս կապոյտ։ Անունը Բոյաղչի (ներկարար) Գէորգ էր։ Գիւղերում գործուած բամբակից կտաւները ներկում էր կապոյտ, որով գիւղացիները երեւի աւելի լաւ էին համարում վայ-

լել դիւտաւորուած, քան պարզ սղխտակ դոյնով:

Բայազէի Գէորգը մեռաւ կապոյտ ձեռնոտով, եւ յայտնի չէ թէ Գարբիէլ հրեշտակապետը արդեօք ճանաչե՞ց նրան, թէ արդեօք նա պատկանում էր մարդկային ցեղին, ըստ նմանութեան Աստուծոյ, թէ կապկային ցեղին, ըստ նմանութեան մարդակապկի:

Նրա տան դռնից մի քանի քայլ հեռու վերջանում էր մեր երկանանի փողոցը, եւ բացւում հրապարակի վրայ. նրա առաջով հիւսիսից հարաւ ընթանում վրան ծածկուած ջրի առու, անհետանում էր էջմիածնի վանքի պարիսպներից ներս, եւ իւր փոքր ինչ բարձրացած գծով բաժանելով հրապարակը երկու մասերի: Ուր սկսում էր հրապարակի արեւմտեան մասը, առուից ջրի մի մասը ճիւղաւորւում էր փոքր ինչ եւ քարաշէն աւազանի երկու բրոնզ ծորակներից ջուրը առատօրէն հոսում էր սակաւաջուր Վաղարշապատի համեմատ: Կիներ, աղջիկներ եւ ծառաներ, կուժերով կանդնած, երբեմն սպասում էին կարգի, լցնել իրենց կուժերը, եւ գլխի կամ ուսի վրայ բռնած վերադառնալ իրենց տները: Եւ մշտահոս ջուրը դռնդաղօրէն յառաջանալով դէպի արեւմուտք կազմում էր մի բաց առու երկկողմեան ճանապարհների միջեւ, մէկ ճանապարհը գծուած տուներով, եւ միւսը հրապարակով, եւ միւսը

քառակուսի եւ չորս դռնանի մեծ բազարի եր-
կայնաձիգ պարիսպով:

Բայց իմ աչքերը դեռ չէին տեսել այս տե-
սարանները, երբ առաջին անգամ վաղ առա-
ւօտեան մխոքս սկսեց հետաքրքրուիլ ականջիս
հասնող յոյժ աննկարագրելի եւ այլակերպ եր-
գեցողութեան բարձրահնչիւն օտարոտի ձայ-
ներով: Երկու բոպէից հասայ մեր փողոցի բե-
րանը: Նորածագ արեւի ցօղասփիւռ ճառա-
գայթները իրենց շողշողումներով, եւ զովա-
սուն զեփիւռը իւր փափկութեամբ, տալիս էին
հրճուանք իմ աչքերին, եւ աշխուժութիւն իմ
դիւրագրգռած կեանքին:

Աբշակունեանց թագաւորական քաղաքի,
իմ կեանքիս օրերի Վաղարշապատի արքայա-
կան զօրահանդէսն էր, որ տեսայ իմ առաջ:

Հրապարակի վրայ բացուող երեք իրերա-
մօտ փողոցներից եւ Երեւանեան լայն ճանա-
պարհի կողմից կուվեր եւ հասուն հորթեր, զո-
մէշներ իրենց անդրանիկներով, եւ էշեր իրենց
զուռակներով, ոմանք հանդիսաւոր հանդար-
տութեամբ, ոմանք քառատրաբակ, ոմանք ցըն-
ծութեամբ ցատկռտելով արշաւում էին հրա-
պարակի վրայ, ոմանք բառաչելով, ոմանք մը-
ռնչելով, եւ ոմանք զռռալով: Եւ ամէնքը դուն-
չերը անկած յառաջանում էին դէպի հրապա-
րակի երկրորդ մասը: Այս զօրաշարժի մէջ ե-
րեւում էին հասուն կիներ եւ նորահաս աղջիկ-
ներ որ փոքր քթոցներ ձեռներին, վազվզում

էին քառասանի բազմութեան մէջ, եւ երբ նըկատում էին թէ բազմութեան անդամներից ո եւ է մէկը բարձրացնում էր իւր գլուխը, այդ կիներից մէկը կամ միւսը մօտենում էր եւ այնպէս ճարտարօրէն բռնում իւր քթոցը, որ գլխի տակից առատօրէն հեղող հեղուկը անկորուստ թափուէ իւր կողովի մէջ: Եւ այն դանձերը որ ձեռք չէին բերում այդ հնարքով, եւ թափում էին գետնի վրայ, խուզարկուներից, իրենց քընքոյշ թաթերը խրելով թանձր եւ տակաւին դողդղուն ընդող թարմ թրիքի կոյտերի մէջ, եւ որպէս մի ոսկեզանձ ձգում իրենց ձախ ձեռքով բռնած դանձարանի մէջ:

Ինչո՞ւ այս աղաւեղութեան համար այդ հայ կանայք այնքան մեծախիտաք ապառում էին իրենց ձեռները:

Ի՞նչ պիտի խորհէին Աբշահունի վեհապանծ թագաւորներն Աբշակ, Արտաշէս, Տըրդատ, եւ Գրիգոր լուսաւորչին Հայաստանի, եւ Տիկնայք Փառիկասուն Հայոց աշխարհին, եթէ ունենային անմահ հոգիներ, եւ տեսնէին իրենց փառաց մայրաքաղաքի այս ամենանըուաստ անկումը, եւ թշուառութեան նշանը: Բայց տեսարանը իւր նուազահանդէսով էր շատ հետաքրքրական եւ զուարճալի ինձ համար, եւ քիչ անգամներ էի դրկում ինձ հանդիսատես լինելուց այդ տեսարանից: Բազարի պարիսպի սկզբում նախրապահներից մէկը երկայն եւ հաստ հովուական ցուպը բռնած, հրամանա-

տարի նման կանգնում էր Ճանապարհի մէջ, եւ ամէն չորքոտանի պիտէր թէ այդտեղէն դուրս գալը արդիլեալ էր ուրուն հրամանի: Ամէնը, ուսաի, մնում էին հաւաքուած հրապարակի վրայ, եւ երկաթօրէն չարուած, ուուի երկայնութեամբ, կարգաւ եւ անկարգ զուլացնում էին իրենց կոկորդները Արտագից բղխած կեանդանարար ջրով: Եւ ապա հրամանը հնչում էր, եւ նախիրը անհետանում հրապարակից դէպի արեւմտահոգմեան դաշտերը եւ Քասագ գետի մօտակայքը:

Դատարկուած հրապարակի վրայ կովերի թրիքի հետքերն էին միայն երեւում. բուն արուպրութիւնները արդէն բնակարան էին դարձել ժրաջան հայ կանանց թանկագին կողովների մէջ:

Այն տեղից որ ես սովորաբար կանգնում էի դուարճանալ այդ տեսարանով, տեսնում էի մէջքին փողոցը իւր կարճ երկարութեամբ, ձիւդաւորում էր երկուսի, իրենց մէջ գրկելով վազարշապատի միակ պարզ եւ ցածր քարաշէն եկեղեցին: Փողոցի երկու կողմերում չէին երեւում տուներ, որոնք բակերի խորքերումն էին շինուած, բայց միայն մարդաշատի բարձր եւ պակաս պատերը, շինուած հաստատակ աղիւսներով որ կրակոտ փուռի երես չէին տեսել, եւ նրանց երեսները երեւում էին կոչտ ու կոպիտ ծեփուած հաստատակ ցեխով խառնուած յարդի հետ: Դռները էին ամենահասա տախտակներից

որ երբէք ուրախ երես չէին տեսել: Աւելի քաղաքակիրթ դռները կրում էին իրենց երեսների վրայ հաստատուն դէմք, երեւի իրրեւ զարդարանք: Տներից մանոյ պատերը զեղազարդուած էին սիրեցեալ կովերի յետոյքից արտահոսուած բաղադրութիւնից հիւսուած կանաչագոյն եւ բուրումնալից վահանաձեւ եւ ապիւսակերպ դրօշակներով: Եւ տակաւին իրենց մէջ կրում էին իրենց բնածին խոնաւութիւնը: Եւ երբ թոլորովին չորանում էին, հոգատար տիրուհին դիւրաւ բաժանում էր նրանց բռնակալ պատերից եւ դարսում պատի նեղտում համամատ ընկերների կողքին որոնք արդէն այնքան էին բարձրացել, որ նրանց համախմբեալ ամրոզջութիւնը իւր կազմով, ձեւով, եւ վերի մասով սկսում էր նմանել Եգիպտոսի Փարաւոնների սրածայր պերճամաններին, այն տարբերութեամբ որ Եգիպտոսի պիրամիտները կառուցուած էին ապրելու յաւիտեան, իսկ Հայաստանի այս պիրամիտները կառուցւում էին, որ ապրէին ոչ աւելի քան տասն եւ երկու ամիս, այրուել թոնիրների եւ բուխարինների մէջ, լցնել անները մուխով եւ ծուխով, եւ ծառայել որպէս վառելիք համեստ հայ ընտանիքներին մարմնի տաքութեան համար ընդդէմ ցուրտի, եւ նրանց կերակուրների եփման համար:

Այդ փողոցը միակը չէր ուր բարձրանում էին այդպիսի բուրգեր, եւ ուր պատերը ծեփծեփուած էին այդօրինակ յարդախառն կոմա-

յին նուիրատուութեամբ, իրենց ձեւերով նմանելով հայկական գաթային, եւ վրացական պուրիին, բայց ոչ իրենց գոյնով եւ հոտով եւ համով:

Դարձեալ, թէեւ հազուագիւտ, փողոցներից մանր մէջ, կամ անպատեհ բակերում, պատերի եզերքով շուրջ 5—6 երկայն եւ երկաթ մեխը լայն եւ երկու թիզ հատ գետնի վրայ գորգի նման տարածուած անանում էին յարդախառնեալ անալին անասուններին ճրիքով, որ սկզբում այնքան կակուղ էին որ վրան քայլող անխոհեմ ազանների ոտները խրում մէջը, եւ ոմանք լալով եւ ուրիշներ ծիծաղելով վազում էին իրենց տուները իրենց մայրերին լուալ տալ իրենց կոշիկները եւ ոտները: Եւ երբ մարդագետիններն ամբանում էին անմոռանգ քայլելու համար, երեխաները մեծ հաճոյք էին զգում ցատկռտելով նրանց վախուկ մարմիններին վրայ, մինչեւ որ նրանց սեփականատէրերը իրենց բահերով չերտաւորում էին եւ դարձնում արեւի դէմ բոլորովին չորանալու համար, եւ ապա միանալու իրենց միւս ցեղակիցներին իրենց գեղատեսիլ բուրգերի բարձրացման համար, եւ ի վերջոյ հրոյ ճարակ լինելու Թոնիրներում ճմեռնային ցրտերին տաքացնելու համեստ բնակիչների բնակարանները կամ դիչերից մինչեւ միւս առաւօտ դանդաղօրէն եփելու համեղ հարիսան որի ճաշակելուն անհամբեր

սպասում էին ընտանիքի բերանաբաց մեծ ու փոքր անդամները:

Տան մայրը, կամ աղջիկը, խոերով եւ կապերտով կամ գորգով ծածկուած դեռնի վրայ սփռում էր սպիտակ կամ դունատարդ սփռոցը, հարիսայի հոտից եւ խղաղատու երեսի տեսքից դրդռուած անօթացեալ դայլերը իրենց չիմչիրի վայրից զարդարուն դղալները խրում էին հիանալի Թանձր հեղուկի մէջ եւ լափում ախորժակով:

Հարիսան մեր այդ մատաղ կեանքի կերակուրների Թագաւորն էր, եւ դաՀան մեր խմորեղէնների գերեզկադէմ Թագուհին, որ իրենց համեղալից հրապոյրով հմայում էին իրենց վրայ նայողների ակնարիները, եւ կախարդում էին իրենց ուտողների կոկորդները, տուաւելապէս ձմեռնային ցուրտ եղանակներում, երբ մարսողութիւնը իւր գօրաւոր կարողութեան չրջանումն էր, եւ երբ նահապետական վիճակի մեր անհանները աղքատօրէն տաքանում էին կամ Թոնիրի տաքութեամբ, եւ կամ անծոպաւոր մանղալով, եւ նրանց վրայ բարձրացած, եւ վերմակով ու կապերտով ծածկուած քուրսի տակ խրում էինք ներս մեր ոտքերը նստում էինք չուրջը, եւ կամ Թեքւում, եւ պառկում էինք գորգապատ գետնի վրայ, երջանկանալով մեր զգացած տաքութիւնից որ քուրսի ներսից ներածւում էր մեր չերմակաթոռ մարմինների մէջ:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Այս անապին քուրսիներից դուրս, Վաղարշապատը ունէր եւ ուրիշ դիւթական ջերմանոցներ. դրանք էին դոմերը, կովերի, դոմէշների, էշերի եւ ձիերի միախառն բնակարանները, որոց մուտքի մէկ կողմի վրայ յատակը որոշ տարածութեամբ, գրեթէ մէկ մեթր բարձր էր կանդնում չորքոտանիների կանգնած յատակից։ Զիւնալից եղանակին, այդ բարձրաւանդակները նոյն թաղի տղաներից ամանոց ակումբներն էին, ուր նրանք դնում էին տաքանալ առնասունների արտաշնչած հաճոյալի գոլորշիներով, եւ զուարճանում էին խաղալով զանազան խաղեր, եւ լցւում էին խնդալից ուրախութեամբ երբ ժամանակ առ ժամանակ լսւում էին կովի բառաչիւնը, կամ մի ձիի խրխնջիւնը, կամ մի անքաղաքավարի էշի երկարաձիգ հեկեկալից զռռոցը։

Այսպիսի չորս դոմեր կային հրապարակի մօտակայքում, թէ Վաղարշապատը քանի այսպիսի շնորհալի ակումբներով բաղդաւորուած էր, չգիտէի, եւ անկարող էի դիտնալ. բայց կարծեմ գլխաւորը հրապարակի վրայ էր, էջմիածնի արտաքին պարսպի գլխաւոր դռան դէմ հանդէպ։ Այդտեղ մօտաւոր եւ հեռաւոր տեղերի ճանապարհորդներ վայր էին իջնում երենց ձիերից, ջորիներից կամ էշերից, որոնք ընդհանրապէս երենց վրայ կրում էին կիսովին կամ ամբողջովին լի խուրջիններ, պարունակելով տէրերի պաշարները։ Աւելի ցուրտ եղա-

նակնեբաւ, այս մարդիկ հպարտօրէն վրէս մինչեւ առաջ բոլոր մարմնով պատառուած նաւուընջի մէջ, Թանձր թոպիքից վերարկու, զբօսի կողմից ծածկուած խոտ երկար մազերով, ամենատատ բրդոտ, սեւ աչխարնների նման, առանց թևևրի, եւ գարշարուն թևիրով ամբացուած վրէ տակից: Գուցէ ոչ առատական թռպաւորները, եւ ոչ հասմէական կեսարները այնքան ինքնագոհ եւ այնքան պարծենկոտ չէին դրսում երենց ամենաթանկագին եւ չքեղ պատմուճանների մէջ, ինչպէս երեսում եւ ցոյց էին տալիս երենք երենց Վատարչապատի գոմերի այս նաւուընջագարդ այցելութիները: Նաւուընջինները նրանց անկոչիններն էին, եւ ննջարանները, երենց մինչ այդ սեղ կրող քառատանիների մօտ, նոյն առատագի նեղքեւ, ի բաց առեալ նոքա որ ունէին, բարեկամ եւ բարեկերպ հիւրընկալները, ընդունել նրանց երենց մարդկային բնակարաններում:

Այս վերաբերմամբ անմոռանալիօրէն մրտաբերում եմ զուարճալի միջադէպ . . .

Մի օր այդ սեղ առաջ երեւեց անսովոր երեւոյթով մի երիտասարդ: Տեղացինների սովորական հագուստն էր երիվարով կամ սեւ սարիճով արխալուխ, պարզ կաշի կամ արծաթազարդ գօտի, եւ չուխա· երբեւ զրկատրկի, հասակաւորները եւ հները ունէին երենց գլուխների հրաբխային լեռների վերնամասի ձեւով, աչխարի մորթից բրդոտ եւ փքուն գա-

փախցներ. պատկառելի ծերերից ոմանք, իրենց սպիտակահեր գլուխները վրայ կրում էին երկու թիզ աւելի երկայն եւ երկու կողմից ծալուած, գառան մորթից մի բաժքարկած սեւ գլխարկ, ծայրերը երկզանի Հռոմայ Գապի հանդիսաւոր խոյրի նման. իսկ աւելի ուսեալները եւ նորահաս սերունդի անդամները գործածում էին շեապկա սովորական, եւ զինուորականութեան յատուկ ձեւի գլխարկներ: Այդ յանկարծապոյտ էակը իւր վրայ ունէր ոչ այս զգեստներն եւ ոչ այս գլխարկները նմանութիւնները: Երեխաները հետաքրքրութեամբ չըմպատակցին նրան, ինչպէս սովոր էին չըմպատակել երբ տեսնում էին մի նորեկ կապիկ կամ արջ պարածող պարսիկ, որ երեւում էր այդ իսկ հրապարակի վրայ: Երեխաների հետաքրքրութիւնը եւ հետաքոյքը ոչ թէ պայծոյթ, այլ հաճոյք պատճառեց նրան եւ զուարճութեամբ պատասխանում էր նրանց հետաքրքրութեան, ասելով թէ ինք Թիֆլիսցի էր, թէ իւր անունն էր Ժորժ ըը Փարլ, այսինքն Փարիզի Գէորգը, թէ Փարիզը մի չատ հեռու, մեծ եւ հիանալի քաղաք էր, եւ այնտեղ ամէն մարդ հագնւում էր ինչպէս ինքն էր հագնուած, եւ թէ նա գալիս էր այնտեղից, եւ այժմ իջեւանել էր Վազարշապատի Գրանդ Օթէլ ա'Ասանակում: Երբ երեխաները չը հասկացան վերջին բառերը, նա ձեռագրով բացատրեց. «Էշերի Մեծ Տունը», ա-հա ուր ես ևկայ երէկ երիկուն, եւ յոգնած գը-

լութա դրի պառկած էշի փորի վրայ, եւ հանդիստ պառկեցի էշի եւ ձիւի վիճերնեռով անկողնի վրայ»:

Երեխաները սկսան կուշտ ու կուռ ծիծաղել, եւ նա եւս միացաւ նրանց: Նա թէեւ տարիքով մեծ էր, բայց մտքով զարճել էր փոքր: Եւ յետոյ, ժորժ որ Փարիզն սկսուեց կոչուել խելքից պակաս ժորժ որ Փարիզ, թէեւ իւր վարկաբեկիչները ճշմարիտ էր թէ՝ իւր Վազարշապատի իշխանը էր արդարեւ Գրանդ Օթէլ մ'Ասանակ:

Գիշերուայ մութին, եւ ցերեկուայ լոյսին, երբեմնակի լսում էին զանգուածների չարաչարական գոռոցներ, եւ դիակներ որ բեռնատարճ ուղեւոր էին, որ չարան չարան գալիս էին արեւելքից, եւ ճեղքելով էջմիածնին եւ Վազարշապատը բաժանող հրապարակը, կանգ էին առնում կարգաւ Բանիբանի առուի եզերքով, եւ կուշտ ու կուռ ջուր խմելուց յետոյ, նոր ևս անգով յառաջանում էին դէպի արեւմուտք. եւ ընդ հակառակն: Ո՞րտեղից էին գալիս, ի՞նչ էին կրում, ո՞ւր էին գնում. չեմ յիշում թէ երբէք հետաքրքրուեցայ հարցնել եւ իմանալ: Ինչ որ հետաքրքրում էր ինձ նրանց ոլորտող աչքերի խորհրդաւոր նայուածքը, երկայնաձիգ պարանոցը, վիզ անկուած գոյգ կուզերը, կարճ պոչը, թևթեւաչարժ սրունքների եւ սափակ թաթերի արագընթաց զննուրական քայլերը: Հազուագիւտօրէն մի երկու տասնեակ

ուղտեր կանգ էին առնում Օթէլ ս'Աւանակի առաջ, չաբուում դրան երկու կողմի վրայ եւ խոնարհաբար ծունկի գալիս:

Այս նոր հիւրերի գալստեան համբաւը տարածուելով մօտակայ տեղերում, տղաներ վազ էին տալիս տեսարանի վայրը: Մինչ ուղտերը կանգնած էին առջի վրայ, տղաները չէին համարձակում շատ մօտենալ, բայց երբ ծնրադրած վիճակի մէջ էին, չէին թուում այնքան ահարկու, եւ այդ երեխաներից ամենատառաչները, սկսում էին մատներով եւ գըլխարկներով կատակել ուղտերի հետ, որ կատակից չը հասկանալով սկսում էին այնպէս տոսկալի կոկորդալից որռտալ, որ ամէն տղաներ լեզատատաս փախչում էին, վերստին վերադառնալու քաջասրտութեամբ:

Այսպէս էր Հայ Ազգի Հառմը, իւր ինչ ինչ դեղարուեստական կոթողների եւ կեանքի տեսարաններով, որի առաջ կանգնում էր Հայ Կըրօնի Վատիկանը, որի ներսից բարձրանում էր Լ՚Ջմիածնի բրգաձեւ գմբէթը իւր վերստացոյ ոսկեշող փշուր խաչով, եւ որի ներսում բազմում էր Հայ Եկեղեցւոյ Պապը, իւր վրայ կրելով Նորին Վեհափառութիւն Թագաւորական ոսկեզօծ: Նրա վեհափառութիւնը այնպէս էր համեմատած Թագաւորների վեհափառութեան հետ, որպէս էր Վատիքանի վեհափառութիւնը, համեմատած Հառմի վեհափառութեան հետ:

ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻ ՀՐԱՊՈՅՐԸ

Իմ, որպէս անչուշտ ամէն ազգայական կեանք, զգում էր մեծ հրապոյր եւ հաճոյք ամենափոքր իրերից եւ տեսարաններից, եւ վաղարշապատի մէյտանը, բազարը, լիճը, եւ պաղատատ եւ խաղողալից այգիները մանաւանդ մեծագոյն հետաքրքրութիւն եւ հրապոյր:

Զմեռնամուտի օրերին, դեկտեմբերեան դոշ երկինքը մեզ աւետում էր սպիտակազարդ պարահանդէսի սկսումը: Գզուած բամբակով զգեստաւորուած փքուն ձիւնահատիկ հազարներով մեղմաշարժ պարերով միասին, նազելով իջնում էին կապոյտ երկնքից, եւ իրենց փափուկ ոտներով սպիտակացնում էին մեր աշխարհի սեւ երեսը: Սպիտակ ամենուրէք ուր նայում էի, մեր երբեմնի ծաղկազեղ բակը, պատերի վերերը, տափակ կտուրների երեսները, աւելի երես չը տեսած փողոցները, հրապարակը, եւ մինչեւ Գրիգոր Լուսաւորչի կանդնած Եկեղեցւոյ կաթողիկէի երկնահայեաց կտուրը:

Սպիտակահեր երկիրը, փոխանակ ցաւի՝

հանդիպել եւ զուարճութեան պատճառ էր մեզ՝ երկրի զարնանային ծաղիկներին: Երբ օդը մաքրւում էր ձիւնկէն պարոշներից, մենք գաւակում էինք ներսից դուրս, եւ խաղում ձերացած գետնի արծաթափայլ թաւ մազերի հետ, եւ վերադառնում ներս կարմրած թաթերով եւ կապտած ցրտահարուած մատներով, եւ դղդուն մարմնով, տաքանալ օճախի ոսկեդէն կրակի առաջ, ուր մեանձեր նստած ծալապատիկ, կամ մանդալի չուրջ, ուր աղբաչեկ անծոպ ամենազօրեղ հրայրն այժը մեղմացած էր ածխանի բարակ քօղով, եւ կամ մինչեւ մարմնի կէսով խրւում էինք հուրսի մէջ:

Իսկ մեծերը վեր էին կենում, թիակներով մաքրելով տան դրան առաջը, եւ կտուրներից վայր շպրտելով կուտակուած ձիւնը բակերի կամ փողոցների մէջ: Բակերում, փողոցներում ձիւնդէն ծածկոցը մնում էր մինչեւ որ արեւը իւր աւելով մաքրում էր գետնի երեսից: Բայց մինչեւ այն ժամանակ ձմեռնային երկնաոտաքը չարունակում էր խաղալ իւր ցրտաբար եւ զուարճասու դերերը: Փոքր եւ մեծ ազատներ, զանազան փողոցներում բաժանուած խմբերի, մէկ մասը՝ կանգնած փողոցի մէկ ծայրում եւ միւս մասը՝ միւս ծայրում, ձիւնի գընդակներ ուղղում էին միմեանց վրայ, որպէս անում են թշնամի բանակները միմեանց դէմ, մինչեւ որ հակառակորդ խումբերից մէկի կամ միւսի ձիւնագէն զինուորները պարտուած էին

զգում եւ փախչում պատերազմի դաշտից: Այդ երանելի փողոցները ոչ կառք էին տեսնում եւ ոչ ապր, եւ ձիաւոր հազուագէպ եւ յոյժ սակաւագէպ անցորդներից սմանք, դիտմամբ երթեալ մէջքի վրայ դժբաղդութիւն ունէին սառնալ երբեմն ձիւնի հզօր գնդակներ, ծիծաղ պատճառելով հարուածողներին նաեւ հարուածուղին: Գնդակահարութեան այսպիսի դէպերը բացառապէս էին տեղւոյն կամ շատ սերտած, կամ շատ սուսած անհատներ, որոնք այնուամենայնիւ կամ վեհանձնութիւնից, կամ ուղիղ հարուածների երկիւղից, ներողամտութիւն ցոյց էին տալիս դէպի երթեալ անառակ փոքրահասակ թշնամիները:

Այդ փողոցները, որքան մատնեցուցի եմ, երբէք բազդաւորութիւն չունէին եւ թողուել էին Աստուծոյ անօրէնութեան: Ուստի եւ մակերեւոյթները առաւօրէն խորտուբորտ էին, կլոր եւ երկայն վէմքերով, որով միշտ լցուում էին ջրով երբ ծանր անձրեւ էր տեղում, եւ այսպէս կտրիճով լճակներ, եւ ձմեռնայինս ցուրտ ժամանակ սառում էին մինչ այն աստիճան, որ փոքր տղաներ ձիւնի տակից դիտէին ուր վնասուել այդպիսի երկայնաձիգ լճակները, եւ նրանց վրայ սահելով սահելով, յղկում էին սպակիի երեսի նման յղկուն, եւ կերած սենի կեղեւի նման լպրծուն: Այն ժամանակ, այս հըներաբոյրեանները, կարգաւ չարուելով, երբ յետեւից վազում եւ պաղի էին տալիս սահուն

սառոյցի վրայ եւ երբեմն թաւալ գլոր վայր ընկնելով, սառնց վիրաւորուելու, կամ վիրաւորուած:

Այս պաղպի տեղերը խոհեմաբար ընտրում էին դէպաւոր փողոցներից դուրս, երեք չորս տուներով չրջապատուած անել փողոցներով, եթէ կարելի է անուանել փողոցներ, եւ ամէն վտանգից դուրս այդպիսի զուարճութեան համար: Գրանդ Օթէլ ա'Աւանակի ձախակողմեան փողոցի մէջ կային երկու երեք այդպիսի բացուղ տոպրակաձեւ փողոցներ:

Եւ դալիս էր մի ժամանակ, երբ տեսնում էին մարդիկ, որ կարծեմ անուանում էին կոռեր, կարծեմ ձրի աշխատողներ, որ խոշոր մեծութեամբ քառակուսի եւ թանձր սառոյցի կտոր կրած իրենց մէջքերի վրայ, տնքալով ուղտի նման իրար ետեւից հրապարակի մէջով քայլում էին, եւ անհետանում Վանքի պարիսպի դռնից ներս: Ամառուայ կրակոտ տաքից իջմխածնի հոդեւորականներին եւ Վաղարշապատի աշխարհականներին փրկելու համար, այդ կաթկթող բիւրեղի բեռները դնում էին դասաւորուել իրար վրայ իջմխածնի տեղատան մի մօտակայ խոր վիրապեան սառցարանում, եւ յուլիս եւ օդոստոս ամիսներում իրենց հալուղ մարմիններով զովացնել ակնկալող հրապարակի հոդինները:

Ես մնացի անտեղեակ թէ ո՞րտեղից էին բերում այդ վճիտ սառոյցի քառաձեւ խոշոր

հառուածներըը, բայց հետաքրքրութիւնը մղեց ինձ դանել թէ ո՞ւր էին նրանք տարուում, եւ ինչո՞ւ համար: Ձմրան վերջերին, քարի պէս պինդ սառած ճանապարհները իրենց աւելի քարացած կոշտերով, եւ սայթաքուն եւ ժանտադոյն երեսներով, եւ մի-ժամանակ նոր գցուած բամբակի պէս փափուկ եւ սպիտակ եղող ձիւնի, այժմ Երեւանցայ հօրացած լուսաչէն նամանող ժժդունացած տեսքը, մառ, ականջ եւ քիթ սառոյցի պէս սառցնող, եւ ամբողջ մարմինս դողացնող ցրտաստաբաուն բուքը այլ եւս բոլորովին կորցրել էին իրենց սկզբնական հրապոյրը եւ կախարդական երեւոյթը, որով ոգեւորել էին ինձ սկզբում: Ուստի, նորամուտ գարնան ցանկալի արեւի հրավառ ճառագայթներին տակ կարագի պէս հալուղ, եւ եռացած ջրի պէս գոլորշիացող մահամերձ ձիւնի այդ տեսքը դիտում էի մեծ հրճուանքով:

×

Թագուած գետինը, պատռելով իր սպիտակ պատանքը, մի անգամ եւս ցոյց էր տալիս իմ անձկալից աչքերին իւր կարօտալի մարմինը, նոր կենդանութեամբ:

Այժմ դիտէի ուր էի գնում ոտներս, որոնք իրենց տակ փոխանակ աւելի ցուրտի, զգում էին երջանկարեր ջերմութիւն, որ լցնում էր

ինձ կեանքի գարնանային ոգիով, աշխուժութեամբ եւ եռանդով: Տեսնում էի բնութիւնը, որ կամաց կամաց հագնում էր իւր զմայլելի կանաչազարդ զգեստները:

Մեր մանկական նախանձը յուզւում էր՝ տեսնելով բնութեան պճնազարդութեան փառասիրութիւնը. եւ մայրեր տեսնում էին մեր այդ նախանձի յոյզերը: Եւ տակաւին փառապանծ Զատիկը չեկած, արդէն նրա գալստից մէկ շաբաթ առաջ, ես եւ իմ նման կեանքի գարուններ, մեր հին հագուստներին տեղ, կրում էինք ծաղիկներով զարդարուն չիթերից շինուած զգեստներ եւ զարդոցական շարքերով երկու կողմերի դասերում, եկեղեցւոյ սեղանի առաջ լռելեան, բայց նկատելիօրէն, ամէն մէկս հպարտանում էինք մեր նոր հագուստի տեսքով: Եւ իրաքանչիւրս երեւակայում էինք, թէ մենք նոյնքան ծաղկազարդ էինք, որքան էր ծաղկազարդ կոչւող այդ կիրակի օրը, երբ մեր գեղի գերեզմանաքարի ձեւով նեղ եւ երկար եկեղեցիի սուրբ սեղանը ծածկուած էր ուռենիի անհամար ճկուն տերեւալից թարմ ճիւղերով, որոց առաջ քահանաները չուրջառաղարդուած եւ բերանները լայն բացած կարդում էին օրհնութեան երգեր, եւ տակ ամէն մի մօտեցող փոքր եւ մեծ բարեպաշտ հաւատացեալի տալիս էին օրհնեալ ճիւղերից մէկ մէկ հատ: Երբ մի շարք տարեկիցներից յետոյ կարգը եկաւ ինձ, ես մօտեցայ երկիւղածու-

թեամբ, ընդունելի իմ բաժինը, համբուրելի նրա սուրբ ոտքերունքը, եւ զգուշութեամբ բարձր բռնած ձեռքովս, ոտքերս ուղիղի դէպի եկեղեցիի դուռը, եւ այնտեղ կանգնած նայում էի ուռենիի ճիւղերով պճնուած երիտեւ բազմութեան:

Այս ուրախմբութիւնն էր այն հանդիսաւոր օրին, երբ Հրեայ առաջնորդ Յովսէփի Հոգւով Սրբով ծնած, որդի Յիսուս, մարդ եւ Աստուած, նստեալ յաւանակի էշոյ մտաւ յԵրուսաղէմ, եւ Հրեաները փողոցները երկու կողմերը կանգնած եւ արմաւենիի ճիւղեր ձեռներում բռնած, խառնիխուռն բացագանչում էին « Ովսաննա՛, Ովսաննա՛, փառք քեզ, որ գալիս ես Աստուծոյ անունով » եւ առանց յուսահատ լինելու իւր արարական նժոյգից, մտաւ Սողոմոնի Տաճարը, իւր երկնաձիգ մարտիկի հարուածներով դուրս քշեց Աստուծոյ Տունը պղծողներին:

Եթէ մի Աշտարակցի խառապ (Հիւան) Ուսկիի, Սուրբ Հոգիով ծնած, որդին Յիսուս, մարդ եւ Աստուած, էշու քուռակի վրայ նստած այդ օրը մտնէր Վաղարշապատ, որպէսզի ուռենիի ճիւղակիրը այդ Վաղարշապատացիները պիտի չարուէ՞ն փողոցներում, եւ բարեպաշտօրէն բացագանչէին « Ովսաննա՛, փառք քեզ, որ գալիս ես Աստուծոյ անունով », մանաւանդ եթէ գիտնային թէ նրա տակի քուռակը քառասմբակ պիտի ուղղուէր, տանելով իւր սրբազան

բնաբ ուղղակի Դրիզոր Լուսաւորչի Սուրբ Տաճարը, եւ աքացի տալով մաքրէր Աստուծոյ Տունը պղծող անարժան պաշտօնեաներից:

Այդ ժամանակ ես չէի կարող անենալ այդ մտածումները, որ միայն վորթաւութեամբ են ծնւում: Բայց ինչ որ այդ բոպէին մտածում էի այն էր թէ՝ ե՞րբ պիտի հասնէի տուն, ուր Մեծ Պատոց պատի կերպարը վառվռում էի տեսնել:

Ուտելիք օրհնելու ճիւղը, պատկերի նըման պահուց, պատուով կախուած մինչեւ նրա տերեւները թափուելան, ինքը չորացաւ եւ նրա սրբութիւնը սրբուց իմ սրտից, եւ անհետացաւ իմ մտքից:

Անուշ արեւի հետ վերսկան նաեւ նախընթաց գարնան հին խաղերը: Երբ գետինը տակաւին կակուղ էր, եւ մեր մանկական բազմինները կարող էին բղխել նրա անձօր մարմինը: Ձինւում էինք իղդուճի զօրաւոր բայց կակուղ մի վայրի բժամատի հատուածեամբ եւ մօտ երկու թիզ երկայնութեամբ ճիւղատտաւերով, մի լաւ սրում էինք զանակով նըրանց բարակ մասի ծայրերը, եւ մեզանից մէկը իւր աջ ձեռքի բոլոր թափով ուղղում էր դետնի վրայ եւ ծայրը խրում հողի մէջ: Երկ-

բորդ խաղացողը պիտի Ջանաբ այնպէս նշանել իւր դակկին (փայտի կտոր) զէպի զետին, որ տալիք հարուածով թէ աւելի խորը մղէր հողի մէջ, եւ թէ արմատախիլ անել իւր ախոյեանի դակկին, եւ տապալէր նրան զետնի վրայ: Այսպէս, մենք փոխանակ իրար հետ մենամարտելու, մեր ձեռների ղեկավարութեամբ մեր դակկիններն էին մենամարտում միմեանց հետ:

Եթէ Վաղարշապատի փողոցները եւ տուները շատ աւելի աղքատ էին իրենց երեւոյթներով քան Եւրոպայի ամենաաղքատ գիւղերի փողոցներն ու տուները, բայց նրա սանձարձակ փոքրերը, իրենց խաղերի բազմազանութեամբ եւ մարմնական չարժողութիւններով, աւելի հարուստ էին քան Լոնտոնի եւ Փարիզի սանձահարուած եւ սահմանափակուած փոքրերը, եւ նրանց մի քանի զլխաւոր խաղերի կեդրոնատեղին էր երկրաժան հրապարակի արեւելեան մասը: Եւ նրա մեծերը միայն գիւղարբուքեան մէջ էին բաղդատուր եւ հարուստ որպէս Հռոմի եւ Մատրիտի քաղաքացիները: Երազի պէս յիշում եմ ամառնային գիշերները, լուրը թէ ազմուկը եւ հետաքրքրութիւնը հանում էր մեզ եւ հարեւաններին մեր կարճ փողոցից դուրս, այնտեղ հրապարակի վրայ պատի կողմով երբեմն մէկ, երբեմն աւելի արարածներ տեսնում էինք ընկած փոշեպատ զետնի վրայ, նրանց սրունք-

նեըը յայնապէս կոբցրել էին ամէն ոյժ կանգուն պահելու իրենց ոտքերի վրայ, եւ նրանց լեզուները մոռացել էին խօսելու կարողութիւնը. որովհետեւ նրանք գալարւում էին թաւալգլոր, աչ ու ձախ, եւ մռնչում էին ու րղաւում առանց ո եւ է հասկանալի բառի:

Հրապարակի արեւմտեան մասը վերջանում էր բազարի, չուկայի, արուաքին պարիսպով, որին կպած կանգնում են մի շարք խառնիխուռն խանութներ, մսավաճառ, պըտղավաճառ, ձաշարան, հացի վուռ, դիւանատուն: Այս կայարանից մեր առաջ թաւալող դիւռմները հրաշք էր որ հասել էին ուր մինչ անանում էինք նրանց: Մխակ հասանակառուները էին որ քալելով եւ վայր ընկնելով յաջողել էին մինչեւ այդտեղ, ուր այլեւս գտնւում էին ոտք, լեզու եւ գլուխ կորցրած վիճակի մէջ: Հանդիսատեսների թիւը չատանում էր: Մարդիկ զուարճանում էին այդ տեսքով, կանայք արուատնում էին վա՛յ, վա՛յ, եւ մանուկներ երկիւղով վախչում, երբ տեսնում էին դիւռմների թաւալումները: Ամէն ոք դիտէր նրանց ո՞վ լինելը: Ներանց թեւերից բռնել եւ տուն տանելը՝ անկարելի էր. ուստի մի մարդ ոտքերից եւ միւսը ուսերից բռնած բարձրացնում էին անդադար կենդանի մեռեալը եւ յուզարկաւորութիւնը սկսում էր լուսնի լոյսի ներքեւ, եւ կամ անլոյս մթութեան մէջ: Սպասող ծերունի մայրը, կամ վշտահար

դժբաղդ կինը արդէն ստրված էին եւ դիտէին յուզարկաւորութեան մերձենցման ժամը, եւ արտասուքը աչքերում, կանգնած իրենց դռների դրսում սինդէա սպասում էին իրենց դէնեհարեալ սիրեցեալների խելահորդ մարմիններուն տուն բերուելուն:

Բագդատի հանրային տաճարի այս կարգի անդադրելի դիհեպաշտները բնակիչների այնպիսիներից էին, որ Վաղարշապատի արուեստում ընդարձակածաւալ ծառատոհմներում մէջ չունէին խաղողի այգիներ, եւ իրենց տներում չունէին մառաններ դինիից կարասներով: Ուստի եւ իրենց երկրագործութիւնը կատարում էին հրապարակաւ եւ իրենց կեանքի հրապարակային բոլոր նուաստութիւններով:

Բայց նրանք որ բաղդաւոր էին ունենալով խաղողի այգիներ, եւ շատ էին այդպիսիները ,նրանք ունէին իրենց տան նկուքներում մառաններ ուր կարգաւ շարուած էին կարմիր դինիով լի հաստատուր հսկայական կարասներ: Նրանք որ նախամեծար էին համարում դրամը դինիից, ամէն ոք դիտէր ճանապարհը դէպի այգեղէգ իւր դատարկ չիշով կամ անօթով, բայց կային ուրիշ շատեր որ ոչ մի դրամով արամադիր չէին բաժանուել իրենց ոգեւորող կարմիր հեղուկից: Մխայն մշուշապատ յիշում եմ խօսակցութիւններ թէ այդ անգաններին շուրջ քրմապետը մեծ հաճոյքով նայելով իւր բռնած բաժակի հրապուրիչ պա-

բունակութեանը, ցնծագին անզսպելիօրէն էր պայն դէպի իւր բնթանը եւ այնտեղից ախորժանօք կակօղից ցած դէպի հիւրընկալ անյատութեան կայարանը: Եւ այսպէս յաջորդական, մինչեւ այլեւս տեղ չկար դէպի ցած, դլուխը պատում էր, ձեռները դողում էին, լեզուն խառնակւում, եւ ինք չիմի հայհոյելից բառերով վայր էր ընկնում դիմնհար, եւ քաշքշուելով տարւում էր իւր անեակը, ուր պղտոնելով եւ կիսամեռ մնում էր պատկած օր ու գիշեր: Եւ նրա այս վիճակի կացութիւնը դառնում էր հրապարակային, հրապարակի վրայ ընկած իւր մոլեկիցների համար, նրա յուսահատ կնոջ կամ դայթակղեալ զաւակների դանդատալից զրոյցներով:

Երեւի բազմաթիւ էին փորձութիւնները, որ մղել էին ակարներին դէպի փորձանքները:

Ես ունէի մի հնգամեայր, քաւոր Դաւիթ, որ ունէր տասն դիմի, եւ թէեւ խմում էր առաւօրէն, բայց երեւի դիտէր իւր չափը: Նա դառնում էր սովորականից աւելի զուարթ եւ աւելի սիրելի, եւ դիմին իւր բոլոր զօրութեամբ անկարող էր յաղթել նրա այս քաղցր բնաւորութիւնը: Երբ մօտս հետ երբեմն գընում էինք նրա տունը, նախ կախարդում էի խաղողի սիրուն ողկոյզով, ապա թէյի նամանդ դիւթական գոյնով հեղուկը թափանցիկ բաժակով մօտեցնում էր շրթունքներիս եւ մղում ներս: Հոտը ցնցում էր քթիս ջիղերը եւ

համը լցնում բերանս ախորժալից անախորժութիամբ: Փոքրիկ ումպերը աւելի եւ աւելի նեբածմամբ իմ բերանից վայր, համի եւ հոտի տպեցութիւնը մնում էր, եւ պեւորութիւնս ատամկանում: Գլուխս սկսում էր պըտտյա տալ ոտքերս ոչ նման, երկիրը շարժում էր, եւ գետինը վազում ոտքերիս տակից, եւ գլում էի թէ աչքերս շաղախում էին, սիրտս խառնում էր, եւ մարմինս երերուն, հաստատ մնալու անկարող:

Օմար Խայեամ երեւի չէր խմել Վաղարշապատի Թունդ գինին եւ չէր զգացել նրա այսպիսի ազդեցութիւնը, չէր տեսել նրա ճաշակողների թաւալումները, գառանցանքները, գինեխառն մռունդի ժայթքումները նրբանց տանջող ստամոքսներից, եւ նրանց մարմինները վայր բնկած գիշերային լուսնի լոյսի տակ, կամ մթին խաւարի մէջ եւ կամ չքնաղատեսած երենց դէմքերը ընտանիքով երենց տան պատերի նեբսում:

Գինիի երկրպագու աշխարհածանօթ պարսիկ աշուղը, որ իւր ամէն տաղերի գրիթէ ամէն տողերում վառաբանել է իւր կարմիր գինին, որպէս ամենատոգեւորիչ քրիստոնեայ բանաստեղծը վառաբանել անկարող է եղել իւր Քրիստոսն եւ Հայր Աստուածը, միթէ մեյն այդ ամենապերազանց գինեսիրութիամբ, ճաշակիչը եւ չարունակիչը կոնծել Վաղարշապատի Թունդ գինին, կամ ուրէ ճշմա-

բիա գինի այն չափազանցութեամբ, ինչպէս նրա յիշեալ պաշտօնեան էին անում, Օմար Խայեամ անտարակոյս պիտի ապրէր ցնորական գառանցանքների գինովութեան մէջ, պիտի մնար անանուն, եւ աշխարհը զուրկ պիտի մնար նրա անզուգական զմայլելի բացագանչութիւններից:

———

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ „ՀԻՆ ՓԱՌՔԵՐԸ"

Գլխուն սկիզբը, պատճառքը եւ յանգամանքը խիստ շատ էին Վաղարշապատի բնակիչներուն եւ էջմիածնի վանքի վարդապետներուն մէջ, սկսեալ այն օրից երբ գեանդ եպիսկոպոս առանձնաւոր Թանգրութիւնամբ ջրհեղեղը դադրեցուցաւ երկիրք, կամ Թափուեց Արարքի մէջ: Եւ Նոյ նահապետը խաղողի արիքը բանած եւ իւր աղջիկներըը գրկած դուրս ելաւ առագաստէն եւ Արարատ լեռան գլուխը գտած գալով առաջին դործը արեց անկիլ խաղողի այդին, չինել գինի, գինովանալ եւ գինովցնել իւր հրապուրիչ աղջիկներըը, վարիլ նրբանոյշ քնքոյշ մարմիններին եւ չգտնար հեղուլ նրանոյ կաւսական բաժակներին մէջ սիրոյ կինառարար գինին, ցնցուն ոգեւորութիւնամբ:

Այս կարծիք հեղուկի հրաշագործութեան լուրը տարածուեց Արարատեան գաշտի հարաւային Հայ ժողովրդի մէջ, եւ ամենուրէք անկուեցան խաղողի այդիներ, եւ գինիի տարածութեան հետ տարածուցաւ Հայ սերունդի բազմութիւնը, եւ այդիներին ծայրերը հասան Վարդէս Աւանի քարքարոտ լերանց շուրջ

ուր անկուած այդինները զարձան ամենագե-
դեցիկները Աբարատի մէջ, եւ Վաղարշ Թա-
գաւորը հրապուրուած նրանց խաղողի գինիի
համից եւ հոտից, այնտեղ փոխադրեց իւր
դահը, եւ Վարդգէս Աւանը զարձաւ Վաղար-
շապատ՝ մայրաքաղաք Հայաստանի: Այս այ-
գինների հրապուրիչ համբաւը հասաւ մինչեւ
Հռոմ: Երեք գեղանի կոյսեր Նոյ նահապետի
աղջիկները վիճակին չենթարկուելու համար
փախան կնամոլ Դիոկղետիանոս կայսեր ձեռ-
քից, որ միշտ բռնած աշխատում էր պատո-
ւել նրանց կուսական անարատ քօղերը: Փա-
խան ձորերի միջով, ծովերի մակերեւոյթով,
լեռների կատարներով եւ կանգ առան մի հրա-
շալի կանաչութեան առաջ, որի նման աքանչե-
լին մինչեւ այդտեղ չէին տեսել, զարդարուն
բազմազան ծառերով, որոնց տերեւազարդ
ճկուն ճիւղերը ծանրաբեռնուած էին ծիրանի,
սալորի, կեռասի, սերկեւիլի, տանձի, խնձո-
րի եւ արքայական դեղձի պտուղներով: Եւ
այս եւ այսպիսի զեղատեսիլ եւ քաղցրահամ
պտուղներ կրող ծառերը չուրջանակի եւ տե-
րեւաւորած կանդնած, խոնարհացրած գլ-
խիններով ողջունում էին իրենց առաջ տա-
րածուած գետինը, խոր, կանոնաւոր եւ ուղ-
դագիծ ակոսներով, եւ նրանց երկու կողմերը
բարձրացած թումբեր, վերեւներն եւ կողերը
պճնաւորուած խաղողի որթերի ծուռ ու
մուռ ճիւղերով, անտեսանելի իրենց լայն տե-

բեւեռքի տակ, եւ իրենց տակտիկ ունէ, կամքի եւ գոհատաղտն խաղալի երկնային ոգիներով:

Հռոմայեցի երէց քրիստոնեայ կեանքը տեսան այս ամէնը, եւ միտքին դնէին.

«Այսուհետ ինչ լինի մեր երիցային պրոթոքը, ուր կ'ապրինք ծածուկ, անտես անիծեալ աչու մարդոց կուսախնդիր հալածանքներից, մինչեւ որ փոխադրուինք երկնաւոր պրոթոքը»:

Վարպետապատի ոչ այդ նպատակները, ոչ այդ ձեռքերը տեսան այս հրեշտականման հոմէական կեանքի ներկայութիւնը՝ իրենց այդ ինեռում, եւ ոչ իսկ մայրաքաղաքի պալատի տատիկանը:

Եւ տակտիկ, անքուն Դիոկղետիանոս կայսրը, Սիրոյ Աստուծոյ նեռշնչումով, իւր երդի մէջ տեսաւ փոխատակական կեանքին իրենց մարմնաւոր մեքենութեան բոլոր հրապոյրներով, Քրիստոնեի նման Թուած Հայաստանի ծառազարդ այդինեռում, եւ այդ երդը իրեն Թուեց երգական: Ցիշեց երեսատարդ հայ Թագաժառանգ Տրդատը, որի հետ ցերեկներըը տանում էին պինեռական գտակը Հռոմում, եւ պիշերային ժամերին տալիս էին սիրային գտակը՝ Հռոմի դեղուհիներին, եւ Թէ Տրդատ միշտ տատիկին էր գալիս պալիս: Եւ այժմ ինքն էր կայսր Հռոմայ եւ Տրդատ՝ Թագաւոր Հայաստանի: Եւ կարծեց Թէ որպէս հին Դան ժուան մանրիմներ կարող էր բանալ

իւր սիրոյ պատանիքը, եւ վառահիլ նրա հաւատարմութեան: Ուստի, երբոր Հայաստանի թագաւորին, նկարագրեց նրանք քրիստոնեայ կեանքի հրեշտակային գեղեցկութիւնը եւ թէ ո՞ր ազգինների մէջ էին թագնուած: Եւ կայսերական չնչաւոր պատուիրեց Տրդատ արքային, որ առանց իւր բանակիով բանտարկ նրանց արքայութեան գանելը, առանց անհամարձակ նեղելնելնելի պահպանութեամբ, ուղղակի դրկէր Հռոմ, իւր կայսերական պալատը՝ Տիբերիոս գնալ վրայ:

Եղիկեանն մտքը սրտէն ապրածուել էր Մեծն Հայաստանի մայրաքաղաքի ակնշող պալատի վրայ, երբ Հռոմի կայսեր նամակը յանձնուեց Հայոց թագաւորի ձեռքը: Տրդատ կարդաց, եւ մտածութիւնը սկսեց պատել իւր վրայ. եղերակայութիւնը սկսեց լուսաւորել եւ լուսաւորեալ եղերակայութեան ակնկէն բոցերի միջով թուում էր անանել Հռոմայեցի կեանքը՝ յաւերժահաղորդի նման, ծածկուած օդահիւս շղարշներով եւ արտացոլուած մարմարագոյն մարմիններով մարդկային եղերքներով:

Գիշերը նա անցրեց յուզմնաւոր երազներով:

Դիակիսախանում խոյանում էր իւր վրայ պաշտպ ի ձեռին, եւ արիւնը աչքերում կայսերը թուում էին արեան հոսանքների մէջ եւ ինքն մանչում էր սրտէս պատան անկեղու, ան-

կարող բացատրել իւր վիշտն ու զայրոյթը:

Նա տեսաւ արեւի լոյսը մթագնեալ աչքերով: Առաւ մի չիչ բռնորպոյն դինի քամուած այն խաղողներից որոնք ծագկել էին այն հողի վրայ որը այժմ իւր դեղանի կոյսերն էին կոխոտում: Նա բարձրացրեց դինելից չիչը իւր բերանի վրայ եւ չիջեցրեց մինչեւ ոտևուրոզ հեղուկի վերջին կաթիլը իջաւ իւր կոկորդից վայր: Հագաւ արքայական կարճ համազգեստը, կապեց ադամանդազարդ գաշոյնը, վաթսաթուն հռոմէական ծաւալուն պատմուճանի մէջ եւ ուղղեց իւր քայլերը արքայական պողոտայով դէպի արեւելք եւ մտաւ Փարաքարի ծագկազարդ լայնարձակ խճուղին, որ կարծում էր վաղարշապատի այգիները եւ տանում էր մինչեւ Սոսկաց մշտականաչ անտառը, որ դէպի հիւսիս ծաւալում էր մինչեւ ապխտակաւերը Արագածի եւ Թադեպատի Արաքսի լեռան ալեծածան սառոյտների տակում եւ դէպի հարաւ տարածւում մինչեւ Արաքսի աւազախառն ափերը, եւ արեւելքում ամբարկուռ պարսպի պէս անառեսանելի էր զարձնում գահավէժ Հրազդանի ժայռաբեկիչ հոսանքը: Ոչ մէկ մարդկային բնակավայր աչքարձի վրայ իւր գոհարանման չէնքերով եւ դրախտանման պարտէզներով նման էր Փարաքարին, Սոսկաց անտառի այս պարծանքը, Հայկազն իշխանների եւ իշխանուհիների ամառնային զովաստանը, ուր ամէն կողմ եւ ամե-

նուբէք եւ մխմանցկից երկու հարիւր քայլ հեռաւորութեամբ բարձրանում էին ցորենագոյն եւ ձիւնագոյն մխաչափ եւ երկյարկանի մարմարիոնէ եւ երփնագոյն գրանիթէ վիլլաններ, զօսեւորուած բիւրեղափայլ պատշգամներով շուրջանակի:

Եւ ամէն մէկը չքեղափառ կանգնած իրենց ինքնուրոյն հաւասարապէս քառակուսի պարտէզներում եւ, պարտէզները, փոխանակ քարով կամ վանդակով, շրջափակուած էին բազմագոյն վարդերի ծառիկներով:

Այս հրաշագեղ չէնքերի կեդրոնից, որպէս արեգակի կեդրոնից, ծառուղիներ ճառագայթում էին զանազան ուղղութեամբ եւ նրանց ծայրերը մթնում, խաւարանում էին թանձրախիտ անտառի խորութեանց մէջ: Եւ նրանց ընդարձակ անցքերի միջով երեւում էին կարմրագէմ իշխանազուններ պճնուած բոսորագոյն, եւ հայ իշխանուհիներ որպէս ամազոններ, ձիաւարում էին յետ առաջ խանդաւառ ոգեւորութեամբ:

Ամենագեղեցիկները այս չքնաղ պալատիկների մէջ էին Տրդատ Թագաւորի երեք դուստրանմանները: Եւ սրանց վրայ էր մտածում մտայոյզ հայ ազգն, երբ տատանելով մօտենում էր կուսանաց այգիին, եւ խորհում երբեքին եւս իւր Թեւերի վրայ առած Թոռնել Փարթաքարի այդ երեք ոսկեդէն վանդակների մէջ:

Եղանակը աշնանային էր, ծառերը մերկ

էին պատգներից եւ տերեւները վայր էին թափում գունաթափ: Խաղողի ողկոյզները սկսան տեսքը աննկատելի փոխել երանց հովանաւորող կանաչ թուփերի տակից: Այգեստէրերը, այգեպաններն եւ նրանց զաւակները զաւակները ցնծալից ձայներով գոչիւնները չէին լսում այլեւս. կենդանութիւնը լուռ էր տիրում այգիներում, միայն տերտղիմ ծառերի կիսամերկ տերեւների յարատեւ շունչը չնչում էր մեղմօրէն:

Լուռ էին եւ Շամի կոյտերը: Ինչպէս պարտէզից մինչեւ աշնան այս վերջերը ապրել էին այդ այգիների ամենաչարժուն կենդանութիւնն ընթացքին, առանց տեսնելու եւ առանց նկատելու երեւան գալու երանց պատուղ բազմութիւնն մէջ, եւ առանց կենսատար ալնուհետեւ: Երանց համար կարելի էր ամէն հրաշք ինչպէս կարելի էր Բրիսառոսի ամենաջերմ հաւատացեալների համար:

Մինչ երկինք համարձակ թնդում էին որոտներից չանթահարիչ ձայներից, յանկարծ Մեծին Հայաստանի, անդորդող քայլերով, արքայական ճանապարհից ծառից դէպի ձախ, եւ մեղմութիւնք գտել վայրում մեծաքայլ մտաւ Եղյառունկ, եւ չորս կողմից ամէն տեսակի քառաչար պատառու

ծառերով շրջապատուած խաղողներով ամենահնդաբեան այդիի մէջ, հեռուից տեսաւ եւսէբ երեք ազջիկները, որոնք իրենց կազմերով եւ դեղեցկութեամբ նմանւում էին աւելի որպէս երկնային հրեշտակների քան երկրային էակների։ Նրանք դեռ չէին տեսնում նրան, մինչեւ որ յանկարծ լսեցին խոտերի շշնջիւն, քայլերի ձայն, եւ նշմարեցին նրա հսկայ մարմնի երեւումը։ Առաջին անգամն էր որ իրենց այս հեռաւոր այդիները պատահում էին մարդ արարած երեկոյթեան, դի մինչեւ այդ օրը Գաբրիէլ հրեշտակապետ պահապան պաշտպան էր նրանց յաբաժամ։ Նրանք պահպանում էին անտեսանելի մարդկային աչքերից, եւ նրանց առնաճյները անբանէլի մարդոց ականջներից։ Եւ հողերն արարածների աչքերը պահւում էին կոյր որ չը տեսնեն նրանց, եւ ականջները խուլ՝ որ չը լսէին նրանց։ Տըրդատ մէկի՛ն արեց իրեն փաթաթող վերարկուն, եւ ցոյց տալով իւր թագաւորական համապղեսը իւր բոլոր չքեղութեամբ, ասեց քաղցրութեամբ.

«Դաւերք վտառապանձ Հռոմի, մի՛ երկընչիք, ձեզ ողջունդն է Մեծն Տրդատ, թագաւոր Հայոստանի, եւ պաշտպան ձեր թանկագին կենաց»։

Ազջիկները նախ կեցան կանդնած ապշահար տեսնելին թէ Հայոստանի թագաժառանգ Տրդատ եւ Դիոկղետիանոս գոյք բարեկամներ

էին Հռոմում, եւ զուգընթաց հետապնդիչներ դեղեցիկ կանանց, եւ զգացին թէ Դիոկղեսիանոսի թելադրութեամբ այժմ եկել եւ զբաղել էր նրանց: Այս մտածմունքից նրանց սրբերը լցուեցան սոսկումով, յուսահատական ճիչերը բարձրացան նրանց անմեղ լեզուների տակից, եւ առանց խորհելու վախան զանազան ուղղութեամբ: Տրդատ վազեց Հռիփսիմէի յետեւից, որ իրեն երեւաց ամենագեղեցիկը: Հռիփսիմէ դիմադրեց մոլեգնաբար: Անբռնազբօսի էր Տրդատի հաւժիւռ ձեռների կատաղութիւնից, եւ անբռնաբարելի նրա կատաղած սիրոյ հեղեղից: Իւր ամէհի պայքարի մէջ նա այլեւս մոռացաւ թէ ինք կուսում էր մի կնոջ հետ, եւ նրա սիրոյ առարկայի սիրապաշտութեան համար, այլ կուսում էր ընկած մի կատաղի էգ առիւծի ճիրանների մէջ: Հանկց գաշոյնը պատեանից եւ մխեց տակաւին անբիծ կոյսի սրտի խորը եւ ապա կոկորդի մէջ: Ամբողջ մարմնով դողաց, եւ մարմնի վրայի նուրբ թելերի ծակոցները զգաց իւր մարմնի ներսում, որպէս սրածայր ասեղների ծակոցներ: Ցնցուեց եւ փակեց իւր աչքերը որ չը տեսնէր իւր գաշոյնի հարուածների տեղերը: Երբէք իւր մարմինը դէպի ուր մեռանելը վախել էին:

Կիսամեռ մարմնով, դէմքը բռնած բարձրպիրը, աչքերը արիւնուռայ, ոտքերն եւ վայրապ ակնարկներով, առնգերը չնչելով քաց ու փակ, լեզուն հեւալով եւ կարմիր չուր-

թևերը սպիտակացած լոթֆինախառն փրփուրով, եւ ամբողջ երեսը դունատուրուած զազանային արտայայտութեամբ, նա ցատկից յառաջ զղղոջուն ձեռքով իւր առջեւ ուղղահայեաց բռնած կարմրաներկ գաշտերը, որից տակաւին կաթում էին բոսորագոյն արեան կաթիլները:

Նա հասաւ երկու կոյտերից մէկին որ չատ հեռու չէր եւ որը վախչում էր քարքարոտ դեռնի վրայ մայրաքաղաքի ուղղութեամբ: Եւ երբ հասաւ նրա վրայ, նա վայր թաւալուց հողի վրայ այլեւս յուշտ անկանգնելի եւ անշունչ: Եւ երբորդը յետ յետ նայելով այծեամի նման վազում էր երկայնաձիգ ոյդինների եղերքներով դէպի արեւմուտք, մայրաքաղաքը, եւ խելահեղոյս թաղուորը հետապնդում էր, որպէս մի դիշատիչ գայլ:

***

Արքայական երեք անեկապետները, լսած սովորութեան մասին առաւօտեան թագուորի ննջարանը առաջնորդելու համար զայն մարմարեայ բաղնիքը եւ լողացնել նրան վարդապոյր լոգարանի մէջ եւ ապա զգեստաւորել նորին վեհափառութիւնը իւր արքայական փառքով:

Նրանք չուարեցան եւ ապշեցան տեսնելով անկողինը պարապ եւ վեհապետը բացակայ, յայտնապէս բոլորովին հագնուած: Ցրուեցան եւ խուզարկեցին լայնածաւալ պալատի

ամէն կողմերը ուր պատերազմած էին մօտ երիտ. Տարեւոր անհատներ մէկը միւսէն աւելի չքնել: Ի գուր: Ամբ անցան պատերազմի մէջ եւ Հոմանիներէն տակ: Աչքան անհետացել էր: Լուրը տարածուեց պատերազմի մէջ եւ պատերազմէ գուրս մատրաքաղաքի մէջ: Մարդիկ եւ կանայք ծառայարդ վերցնելէ անհետանալուած եւ հրապարակներէ վրայ յուզումնալից եւ անձկալից փափաքներով վիճաւած էին գանել սիրելիները թաղուելէ անհետացման պատճառները: Եւ նախարարներ իրենց պալատներէն չառած էին զէպի պատերազմի պալատը, անհետ պալատականներէն եւ խոչընդոտել թաղուելի եւ արքայազուններէ հետ: Եւ մինչ այդ ընդհանուր չվրթին ու մտայուզութիւնն էր տիրած ամենուրեք, այդիներէ վրայ, երկնքում երեւցան երիտ. նոքառնելի արեգակներ մէկը միւսին մօտ, մօտաւոր հետաւորութեամբ, եւ իրարանչիւրից երեցս մեծ մարդաձեւ մեծութեամբ երկնագոյն լոյսներ, ներփակուած լուսեղէն խորհրդանիներէ մէջ, երիտասարդ էին մինչեւ գետին, Նոյեան այդիի մօտակայքը: Մեծն Հայաստան չգիտէր ինչ էր հրաշքը եւ այս առաջին հրաշքն որ տեսնում էին, զարմանում էին թէ-տա ինչ բան էր եւ ո՞ր տեղից էր ծնում: Եւ տեսին ու տեսարանը այնքան զարմանալի էր որ ամբողջ վարդապետատա ուրի վրայ էր եւ ապիկայոյ չարժման մէջ: Աչնուտականները իրենց գեր-

պատառներով կանդնած իրենց բարձրաբերձ ապարանքների պատշգամբներում եւ ծոպակապարկ պարեգոտներում, իրենց խայտաբղետ, ոսկեճամուկ եւ արծաթաթել պեհեռներով եւ իրենց կարմիր, դեղին եւ կապույտ հատուածապէս արծաթաթել եւ ոսկեթել կօշիկներով, եւ քաղաքացիները իրենց ոչ նուազ սիրուն հագուստներով իրենց կանանց եւ երախաների հետ բարձրացած կառքերի վրայ եւ խանուած ճեմ եւ փոքր հրապարակներում, նայում էին ապշահար երկնքից երկարող եւ երկրի վրայ վազող այս լուսեղէն գետի անասարանին:

Եւ շուկը սարսափում էր բերնէ բերան, թէ աշխարհի վերջը մօտենում էր, թէ ամենակարող արեգակի երիւ եղբայրները երկնքի կրակի ծովից երիւ գետեր էին քաշ արել մինչեւ երկիրը եւ այդ կրակի գետերն էին որ այդ լուսեղէն ճանապարհի միջով հոսում էին եւ շուռով պիտի հեղեղէին աշխարհը կրակով եւ այրէին ամէն մարդ եւ անասուն, տուն եւ այգի, եւ խորհում էին մոսոսանջ ու սուսմ էին միմեանց սարսափահար թէ Աստուած հին ժամանակներում աշնչացրեց մարդկութիւնը, խեղդելով նրանց ջրի հեղեղներով, եւ այժմ մոխիրի պիտի վերածէ նրան, այրելով կրակի հեղեղով եւ թէ իրենց վատաւոր Վաղարշապատը եւ նրա այգիները պիտի լինէին մոխիր: Շատեր արդէն խելահեղութեան սկսան բռնել դէպի հիւսիս դիւրամատչելի Արտազը, եւ ու-

բիշներ հարաւ՝ բարձրագոյն Մասիսը, յաւահով մտնել Նոյեան տապանին մէջ: Բայց արքայական պալատը եւ նախարարները կարծում էին թէ այդ երկնաւոր նշանը կապ ունէր արքայի անհետացման հետ, ուստի ամանք նստած իրենց երկանիւնների մէջ, ուրիշներ իրենց սպիտակ եւ կարմրագոյն ձիերի վրայ, բռնեցին փայլող հրաշքի ուղղութիւնը, հապշտապ, ամէն մէկը ձգտելով աւելի առաջ անցնել քան իւր կողակիցը: Կանգ առին սակաւ ինչ հեռի. մի անբնական ուժ արգիլեց նրանց աւելի մերձենալ եւ մղեց իջանել իրենց ծունկերի վրայ: Զորս անմարմին լուսաճաճանչ ոգիներ թեւատարած հսկում էին չորս կողմից: Ներսում հանդչում էր երկնագոյն զգեստով մի կին, երեսը դէպի վեր, ձեռները տարածուած, որպէս թէ ամբողջ մարմնով խաչուած լինէր գետնի վրայ եւ երկնքից խողովակի միջով փայլակնացայտ շողեր կաթկթում էին հրեշտականման անշարժ մարմնի վրայ: Ամենքեան, որ բոլորած էին չուրջնակի, բնազդաբար խոնարհեցան համբուրելին հողը, որ իրենց առաջին էր: Լօեվեան ոտքի եան եւ առանց բարձրանալու իրենց կառքերի եւ երիվարների վրայ, պատկառաշարժ քայլերով յառաջացան Թեթեւակի զառիվայրից դէպի վոքր ինչ վեր, ուր կանգնում էր միւս եւ մեծագոյն երկնային սիւնը: Ներանք մօտենում էին ահիւ եւ դողութեամբ: Շուրջանակի

կից առ կից կեցած էին ձիւնափայլ հրեշտակները, բիւրեղափայլ թեւերով, ամէնը խոնարհած գլուխներով դէպի ներս, ուր հանդչող կոյսի կարուած կոկորդից եւ վիրապատ սրտից մէջ ընդ մէջ կաթում էին սպառող արեան վերջին կաթիլները: Նրա կապոյտ հագուստները նկրկուած էին կարմիր, եւ գետինը ամէն կողմից թրջուած էր աղնուագոյն արիւնով: Հազարագոյն գոլորշիներ չոգիանում էին այդ անծանօթ արիւնաշաղախ մարմնից եւ՝ թանձր ծուխի նման վերանում էին ի վեր, անծայր լուսեղէն ծիանելոյզի միջով: Եւ երբ տակաւին անբաւականալի ապշութեամբ, բերանաբաց եւ ակնապիշ նայում էին այս զարմանալի տեսարանին, որի նմանը ոչ իրենք եւ ոչ իրենց նախնիքները տեսել էին աշխարհի ստեղծուելուց ի վեր, ահա՛, մի երրորդ համանման սիւն պատկերացաւ իրենց աչքի առաջ, մայրաքաղքի հարաւում:

Առանց հարցման եւ որոշման միմեանց հետ, ամէն ոք ցատկեց իւր կառքի մէջ եւ ձիի վրայ, եւ օ՛ն, այն ուղղութեամբ, այգիների առաջով, որոնց ծայրը հարաւից երկարում էր արեւելք Նոյեան այգին, եւ այդ կէտից դէպի հիւսիս, կազմելով մի եռանկիւն, որպէս մի կարկին, որի ունելիքները մի կողմից երկարում էին հարաւային արեւմուտք, եւ միւս կողմից հիւսիսային արեւմուտք, իրենց հանդէպ ունենալով փռուած եւ իրենց ծայրերի

մէջեւ առած մեծատարած մայրաքաղաքը, որի վրայ թագաւորած էր Մեծն Տրդատ: Ներքանք յառաջանում էին արքունիս: Ամէնի սիրալը բարեխառն էր դժբախտութեան ձայնի հարուածնելով: Եւ արդէն հետեւից անոնց մի երջանիկ կանգուն մարմին, պատառատուն եւ անպատմելիք ցնցուցան եւ դեմքեր թմուաղած տաք արիւնով որից մուխը բարձրանում էր: Եւ ուրիշ հետոն, ինքն Տրդատ, ընկած, երեսը դէպի հողը եւ բերանից ժայթքում էին մանչեղենները, արդէն մի վիրաւոր վայրենի խոզի բերանից:

Ոռնոցներից դա տաքն կանդնեց եւ խոկաց իւր պետականը անելիութեան մասին, եւ նորա, արդէն նորա Ագամ երբ արտաքսուեց դրախտից: Նրա հիանալի սպիտակ մարմինը այլակերպուեց եւ ի փոխարէն ցնծացին դոյնի մի տգեղ կաշի պատեց ընդհանուր մարմինը տաք եւ տրեղ դրշտանելով մազիւով: Ոռները կրճտացան կէսով պակաս; նոյնպէս եւ կրճտացան ձեռները տուներին հաւասար, եւ բնիկ չորս տուների վրայ: Նա այլեւս չունէր ձեռներ, ամէնը տներ էին եւ ոչ տարբեր խոզի տներից եւ յետուից մի կարճ պոչուկն պոչ, նոյնպէս յար եւ նման խոզի պոչի, որտեղից մէջքը իւր ամբողջ կազմուածքով լիովին դարձել էր խոզային: Հայասատանի մեծամեծները դիտում էին տսկումով իրենց սիրած արքայի տհանելի այլակերպութիւնը, երբ

ասելի զարհուրելի ապառասիով անոնք պլուխը, որ տակաւին մարդկային էր, եղաւ անհետ, եւ նրա խոպոպեալ մազերին կարաւ վիզ եւ պլուխ, աչք ու բերան եւ ականջներ, բոլոր ամենայնի խոպոպան։ Նա իւր կիսաբաց աչքերով նայեց իրեն սիրօրէն նայողներին վրայ, զարձրեց իւր դանչը հակառակ կողմ, եւ իւր յետոյքը նըրանց երեսին, եւ ուռ՛պ, ուռ՛պ ձայնելով սրպէս մարդ եւ մրթմրթալով ու խռխռալով սրպէս խոզ, սկսաւ վազել վշտահար հետաւ դէպ հարաւ, եւ այնպէս երասխից ոչ հետաւ, շարս ապրիլ ցանկից հնազանդեան ճահիճներին մէջ եւ սկսաւ թաւալուիլ նրա զարշահոտ ջրերում։ Բոլորին սրտերում կարծես խրուած լինէին թունաւոր նետակներ։ Գլուխները կախ, աչքերնին արտասուահոս, իրենց ձիերը հանգարտ եւ յամրընթաց, սրպէս սգաւոր թափոր վերադարձան վազարշապատ, բայց միայն մի երիտասարդ ազնուական երիտասարդ քաջեր մնացին յետ, վճռելով դիշեր ցերեկ հետեւել իրենց թշուառ թագաւորի հետքերին, ուր որ նա երթար եւ ուր որ կանգ առնէր։ Նրանք գտան նրան որ տակաւին ճահիճների մէջ թաւալում էր կամ յետ ու առաջ սահսահում չրջապատ կարճ եղէգների միջեւ, ամբողջ պլուխը պատուած ճահճային ապականութեամբ, կարծես իւր անառանձնի աչքերը ուղում էր վէր, երկինք, եւ մէջ ընդ մէջ մրթմրթում էր, մռնչում էր կսկծալից, կամ ուզում էր զո-

չելով. «Աւա՛ղ, աւա՛ղ»: Յանկարծ դուրս ե-կաւ ճահիճներից բոլոր մարմնով ցնծագին, եւ ամենայն արագութեամբ վազեց դէպի Երասխ գետը, ձգեց ինքն իրեն արբնջաց հոտանքի մէջ եւ կորաւ ջրերի ներքեւ եւ երեւեց հեռուն, գետի մեւս կողմի ափերի վրայ եւ յառաջացաւ Մասեաց սառոյտներով դէպի վեր, որպէս թէ ուզում էր բարձրանալ Աբրահամի կառատը եւ այնտեղ Նոյեան Տապանի մէջից հայցել երկնքի դիւութիւնը եւ քաւութիւն իւր անգութ արարքների համար: Կեցաւ մի արտակարկառ ժայռի առաջ, բարձրացրեց իր առաջին երկու ոտները, վարուեց ժայռին այնպէս չարժանաւորով, որ կարծես թէ մենամարտում էր ժայռի հետ: Եւ ահա նրա մէկ մասը պոկուեց եւ վայր ընկաւ դղրդալից: Մէկ ոտով բարձրացրեց իրեն մարմնից երեք անգամ մեծ կտրուած քարը, դրաւ իւր մէջքի վրայ եւ դարձաւ դէպի դեպ այնպիսի թեթեւ քայուածքով, որպէս թէ ոչինչ էր իւր կրածը եւ թէ նա կազմում էր իւր մարմնի անբաժան մի մասը: Նա անցաւ Երասխը անվտանգ եւ հասաւ իւր առաջին դոհի մօտ ուր վայր դրաւ քարեղէն բեռը: Նոյն ձեւով նա տարաւ Մասեից քարեր մեւս երկուսի համար: Միամամանակ նախատարեները առանց մէկ վայրկեան կորցնելու աւրհնագործները դրկեցին Աբրահամեան երկրի բոլոր արտօրէնների ամենախիտ հրամանաւ դադրեցնել ամէն արտօրդութիւն, մանաւանդ

վայրենի խոզերի դէմ, ցնոր անօրինութիւն:

Ժամանակը սահում էր, խոպացնալ Թագաւորը մշտական չարժման մէջ էր առանց հանգստեան եւ քունի: Եւ երկոտասան անձնուէրները հսկում էին նրա վրայ ուր որ նա վազվզէր: Մինչ այդ Խոսրովիդուխտ, Տրդատի քոյրը տեսնում էր յուզումնայոյզ երազներ: Նա իր երազում լսեց մի ձայն որ ասեց.

«Գնա՛, հանիր Անակի որդի քրիստոնեայ Գրիգորին խոր վիրապից եւ նա միայն Քրիստոսի զօրութեամբ պիտի բժշկէ եղբայրդ եւ դարձնէ զայն իր մարդկային կերպարանքին»:

Տանեւչորս տարի էր անցել այն օրից որ Տրդատ այդ ամենախոր ջրհորի մէջ ձգեց իր պատուական Անակի որդին, քանդի նա մերժեց հրաժարիլ իր քրիստոնէական նոր կրօնից որ Տրդատ Թագաւոր ատելով սսում էր: Խոսրովիդուխտ խորհեց Թէ այդ միայն երազ էր եւ Թէ Գրիգոր այդ անջրդի հորի մէջ մի քանի օր ապրելուց յետոյ մեռած լինելու էր եւ այժմ միայն նրա չոր ոսկորները մնացած են: Երրորդ երազը հզօր, հրամայական եւ յուսատու էր: Նէ յայտնեց իր իշխաններին եւ հրամայեց նրանց հետեւիլ իրեն: Կանգնած խորախոր ջրհորի շուրջ, Գրիգորի պատուական ընկերներից մէկը ծռուեց ջրհորի մէջ եւ ազաղակեց իր ամենաբարձր ձայնով.

— Գրիգո՛ր,, այդտե՞ղ ես, ո՞ղջ ես:

— Այո, այստեղ եմ եւ ողջ եմ Քրիստոսի

զօրութեամբ, խոր անդունդից լսուեց Գրիգորի ձայնը։

Տէրութեան ամենաերկար պարանը բերել էին իրենց հետ միասին եւ կախեցին գայն մինչեւ յատակը ուր հազիւ թէ հասաւ։ Գրիգոր արտով ու հոգւով գոհ էր որ վերջապէս պիտի ազատուէր այդ նեղ խաւարի մէջից ուր պահելու տեղ իսկ չկար եւ տասնեւչորս տարի իւր օրերը անցրել էր կանգնած եւ իւր դիշերային քունը նստած։ Ուստի չտատանուեց կապկպեց իւր մէջքը պարանով եւ ամուր, անլուծելի հանգոյցներով որ կէս ճանապարհին չվտանգուէր եւ վայր ընկնելով գլուխը ջախջախէր, ոտները կոտրէր եւ ապաննուէր, առանց լոյս աշխարհ տեսնելու մի անգամ եւս եւ որքան կարող էր բարձրաձայն գոչեց։

— Պատրաստ եմ, քաշեցէք չուանը։

Երանք որ մեծ մասամբ ծանօթներ էին, զարմացան զարմանօք մեծաւ։ Երեսը նոյն երիտասարդական երեսն էր ինչ որ էր տասնեւչորս տարի առաջ եւ զգեստները նոյն նորաթիւները, կարծես նա երբէք չէր եղել այն խոր վիրապում, որտեղից դուրս եկաւ իրենց աչքերի առաջ։ Յառաջացան եւ համբուրեցին նրան, բայց նա ծոցից դուրս հանեց արծաթեայ մի խաչ եւ ասեց հեզ ձայնով։

— Համբուրեցէք այս Սուրբ Խաչը։ Սա է որ պահեց եւ պահպանեց դիս այսքան տարիներ այս անհաց, անջուր, անլոյս եւ օդապուրկ

անդունդին մէջ, ուր այս հրաշագործ նշանին չհաւատացող մէկը կրնայ նետուիլ այնտեղ որպէս զի նետուելով, պիտի չմեռնի եւ մեռնելը յաւուրը հասնելու թոյլ ին»:

«Աւդ, այս Խաչն է որ փրկեց զիս անխուսափելի մահից: Այս փրկարար Խաչն է նաեւ որ պիտի փրկէ Հայաստանի Թշուառ Թագաւորը, մաքրէ այդ բազմամեղ մեղաւորը իւր ապիսաթաթախ ապականութեան մեղքերից: Այս Խաչի վրայ խաչուողն է որ իւր ամենասղոթման բարութեամբ պիտի դթայ վայրենի խոզի փոխուած մարդուն վերստանդգել եւ դարձնել մարդ, լսա նմանութեան իւրում եւ լցնէ նրա կեանքը անսահման երջանկութեամբ եւ նրա սպասուր սիրեցեալների եւ ընդհանուր հայ ժողովրդեան սրտերը՝ երկնային բերկրութեամբ: Եւ ով հաւատայ այս Սուրբ նշանին նա պիտի չմեռնի, այլ պիտի մնայ անմահ եւ ապրի յաւիտեան: Այս է որ ես ասում եմ ձեզ եւ պիտի ասեմ ձեր թագաւորին որ նա եւ դուք խօսէք ձեր որդիներին եւ ձեր որդիները իրենց յետագայից:

«Այժմ մենք պիտի սկսենք յառաջանալ ընդ յառաջ, ուր Տէրն մեր Յիսուս Քրիստոս պիտի ցուցանէ իւր զօրութիւնը եւ չնորհը եւ յայտնէ իւր կամքը եւ կոտակը: Եւ քանի որ գնում ենք Առաւօտոյ տեսութեան, պարտինք գնալ առաջ վրայ խոնարհաբար եւ ոչ թէ այս ապաստղ ձիերի վրայ յոխորտաբար»:

ՀԱՑԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Գրիգոր, որդի Անակի, Խաչը ալ ձեռքում բարձրաւեսիլ անցաւ յառաջ եւ միւսները յետեւից, ամէն մէկը նոյնպէս հետեւոան եւ բռնած իրենց նժոյգների սանձերը: Նրանք եւս կարծես զղում էին մի ինչ որ խորհրդաւոր բան եւ իջեցնում էին իրենց երկաթազէն ոտները միեղմաբար: Երբ հասան ճահիճների մօտ, Գրիգոր ուղղեց հրաշափառ Խաչը դարչահոտ ու պղտոր եղեղնալից կայուն ջրերի վրայ եւ գոչեց մեծաձայն.

— Քեզ ասեմ, Տրդատ, որդի Մեծին Խոսրովայ, արքային Հայոց, քեզ ասեմ յանուն Քրիստոսի, որդւոյն Աստուծոյ եւ ինքն Աստուած, քեզ ասեմ երիցս, ել յարատաքս ապուղութենէ մեղաց եւ ընկալ չնորհս երկնային ի քաւութիւն մեղաց քոց, զի սրբացեալ ձեռամբ քո դրոշմեսցես զանուն Քրիստոսի եւ զառաքս նշանն Խաչին նորա ի հոգիս եւ ի սիրտս ազգիս Հայոց»:

Մինչ այս կոչն էր արձադանգ տալիս չքնաղատեսիլ հովիտի մէջեւ, խոր ճահիճների միջից երեւեցին խոզի ականջները, գլուխը եւ ամբողջ մարմինը աստիճանաբար: Նա ցնցելով ազմաթաթախ մարմինը եւ ոլորելով իւր բարակ պոչը, չորս ոտերով եւ մնջմնջելով մօտեցաւ Գրիգորին եւ համբուրեց նորա կախ ընկած ձախ ձեռը իւր երկարած լեզուով: Քրիստոսի այս նոր հայ առաքեալը դրեց Խաչը խոզի գլխի վրայ եւ ապա մօտեցրեց նրա ցեխա-

պատ դուռչին: Ոտքը գոլորշիացաւ եւ նրա տեղում կանգնած երեւեց Տրդատ իւր երկայն հասակով, հսկայ կազմով եւ հզօր կուրծքով, երեսը նմանում էր որպէս լրումն լուսնի եւ աչքերը ճառագայթում էին որպէս զոյգ արեգակներ, գլուխը պսակուած արքայական թագով, եւ մարմինը ոսկեզօծուած վեհապետական ծիրանիով: Երեսը թաց էր: Ցաւի եւ ցնծութեան արտասուքները կաթում էին նրա վրդովեալ աչքերից, նմաններով ադամանդափայլ հաւիկների: Նա քայլում էր հանդիսաւոր լռութեամբ եւ իւր ուղեղը զալարւում էր եւ երկունքի մէջ էր վեհ գաղափարների յղութիւններով եւ ծնունդներով: Այս երկրորդ եւ երրորդ օրն էր որ այս ուխտաւորները քայլում էին այրող արեւի տակ եւ փոշոտ ճանապարհների միջով. եւ այժմ անցնում էին Վաղարշապատի այգիների միջով: Աչքի վրայ հեռւում երեւում էր երկրից երկինք բարձրացած երկու հրաշափառ լոյսերը որ կարծես Քրիստոս կառուցել էր Հռիփսիմէ եւ Շողակաթ կոյսերի սուրբ մարմինների վրայ, որպէս երկնաբերձ կոթող ցոյց տալու կռապաշտ հայ ազգին, թէ նա իւր ամենակարող զօրութեամբ այսպէս կարող էր վառաւորել իրեն հաւատացողներին եւ թէ թէեւ նրանց մարմինները յետ մահու պիտի անհետանա մահկանացուների մարմինների նման դառնան ի հող, բայց նրանց հոգիները պիտի մնան ողջ եւ հրեշտակների թեւերի

վրայ պիտի տարուին երկինք եւ ապրեն այնտեղ լուսեղէն բնակարաններուն եւ մշտակեանաչ պարտէզներուն մէջ, մինչեւ որ նրանց հոգացած մարմինները դառնան մարմիններ եւ վերստին միանան իրենց հոգիներուն հետ: Ձախէ վրայ, որպէս միւս երկու կոյսերն նման, լոյսը բարձրանում էր Սուրբ Գայեանէի արիւնաներկ մարմնից: Տրդատ նախ նայեց դէպի աջ եւ յետոյ ձախ, բնազդաբար ծունկի եկաւ, աջ ձեռքի բթամատը, ցուցամատը եւ մէջնամատը միմեանց կպցնելով որպէս մի երրորդութիւն, դրեց իւր ճակատին, ապա իւր սրտի եւ յետոյ աջ եւ ձախ ուսերի վրայ, ապերասպից նայեց վեր երկինքը եւ ապա ձեռները տարածեց դէպի վրայ եւ համբուրեց հողը: Հայ մեծամեծները մնացին զարմացած եւ չգիտէին ինչ պատահեց թագաւորին, որովհետեւ ձեւափոխութիւնը անծանօթ էր նրանց:

Գրիգոր պատասխանեց նրանց զարմանքին.

— Մեր թագաւորը այս վայրկեանին Հոգւոյն Սրբոյ ներշնչմամբ մկրտուեց այն հաւատով, որ վաղը պիտի դառնայ մեր Հայաստանի ժողովրդեան համար մի նոր հաւատ:

Գրիգորի առաքեալը լռեց, լուռ մնալ չարունակեցին եւ մեռնելը: Հսկայ մայրաքաղաքի աղմկալից չարժումը հնչում էր օդի մէջ: Եւ չուրջանակի ծառատառաններուն եւ նրբանց մէջեւ կեռադրեալ չքեղ ապարանքներն

պատշգամբներից, պարտէզներից եւ ծառուղիներից մարդիկ եւ կանայք պատկառանքով նայելով թափօրին, ողեւորութեամբ գոչում էին.

— Կեցցէ մեր սիրեցեալ թագաւորը:

Տրդատ առաւ արծաթեայ խաչը Գրիգորի ձեռքից, եւ բարձր բռնած օդում, խաչաձեւաբար դարձնում էր դէպի ծափահարողները, որպէս նշան ողջոյնի, գոհունակութեան եւ օրհնութեան:

Երանք կանգնեցին մի մեծ դարպասի առաջ: Դարպասը եւ նրա աջ եւ ձախ բարձր պատերը երկաթաճոյղ էին, վանդակաձեւ շարադրուած եւ բոլորաձեւուած գեղեցկօրէն, եւ դրսից կարելի էր տեսնել ինչ որ կար, ինչպէս որ մարդ դրսից կարող է տեսնել վանդակի մէջի գունագեղ սոխակը: Դարբասի վրայ հանդչում էր թագաւորական ոսկեզօծ զինանշանը: Եւ վանդակիզէն պատերի ներսում փռուած էր մեծատարած պարտէզը հազարագոյն ծաղիկներով եւ համաչխարհային տեսակի ծառերով: Եւ այնտեղ ուր վերջանում էր այս յաւերժաթարմ պարտէզը, կանգնում էր Հայոց թագաւորի պալատը, կրկեսաձեւ, կիսաբոլորակ, նայելով լեռնային ստեղծագործութեան երկու հրաշալիքներին՝ մեծ եւ փոքր Մասիսներին: Պալատը երկարում էր արեւելքից արեւմուտք եւ երկարութիւնն էր հինգ հարիւր ոտք եւ չորս յարկանի: Երեք վերին

յարկերի առաջ ընդ երկայնութեամբ կային նոյնպէս կիսաբոլորակ ճեմարաններ, կամ պրօսաւայրեր, հինգ ոտք լայն, եւ նեղսի յատակներին յար եւ հաւասար: Երեքն եւս ամրապէս հաստուած երկաթճաղյլ ճաղերով, գետնից մինչեւ վեր: Թագաւորը, արքայական դերդաստանը եւ պալատականները, յաճախ իրենց կերակուրից եւ խնճոյքներից յետոյ դուրս էին գալիս այդ տեղերը եւ խրոխտաբար եւ սիպտաբար ճեմում մէկ ծայրերից միւսը բաց օդի մէջ իրենց նազելի սիկիւններով հետ թեւ թեւի տուած: Ճեմարանք երբեմն ծառայում էին որպէս բացօդեայ սեղանատուններ մեծ ամառնային ճաշկերոյթների համար, եւ նրանցից ամէն մէկում մինչեւ երեք հարիւր հոգի կարող էին նստել սեղանի իրենց երեսները դարձրած մօտում թագաւորական լայնատարած պարտէզներին, եւ հետում խոնարհ ներսից վրայով բարձրահասկաց հսկայ Մասիսների սուր կատարների վրայ: Շէնքի բուն կեդրոնում տանիքի եւ պատի եզերքում, կանդնում էր ենուքի մարմարոնեայ արձանը իր բնականի երեք մեծութեամբ: Հայոստանի թագաւորը եւ ազգը այս առանձին պատիւը ընծայել էին նրան, այն ակնածութեամբ որ նա միակ հայ մարդն էր ջրհեղեղից առաջ որ հաճոյացել էր Աստուծոյ՝ երկրային մարմնովը վերափոխուել երկինք: Նախաջրհեղեղեան հայերից ուրիշ երեք մեծահռչակների արձանները

ալ կողմում քանի որ հետու կանգնած էր նախահայրն Ադամ, ախթապէմ եւ դվխիկոը, եւ ձեռքում բռնած երկու սեսամի արդիլեալ պտուղները կխտածածկուած նուրբ տերեւներով: Ձախ կողմում նպիլաչուք բարձրանում էր Եւայի կախարդական արձանը, դէմքը եւ աչքերը լի ժպիտով, եւ մեծամիտութեամբ ճաշակում էր արդիլեալ պտուղը, եւ իւր ականակիր ձգած մէջս կողմի վրայ, ուր կանգնած էր Նոյ նահապետ սիրահարութեամբ լի աչքերը յառած Եւայի երեսի եւ մարմնի վրայ: Ադամից քանի որ հետու կանգնում էր Նոյի անդրանիկ զաւակը կուրծքին բռնած իւր նորածին երեխան, առաջին յիսնդհեղեղեան մարդը, եւ նոր մարդկութեան հայրը, նա դարձրել էր երեխայի դէմքը դէպի Ադամ, եւ իւր ալ ձեռքի մատնացոյցը ուղղած Նոյի ուղղութեամբ, յայտնելու թէ նա էր իւր երեխայի հայրը:

Այս հինգ սիեղերահռչակ դէմքերից բացի, նրանց ալ եւ ձախ կողմերում կային ուրիշ քանի նախապատմական հայ նահապետներ, որոնք կառավարում էին Հայաստանը, նախքան բարելոնացի տորի Հայկը երեք հարիւր ուրիշ տոբիններով հետ ինկլի ձեռքից փախած Հայաստան եւ տորիի խորամանկութեամբ եւ ճարպարութեամբ գարձած երկրի տէրը, եւ իւր տորի անունը փոխելով ինքն իրեն անուանեց Հայկ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Այս քանը հինգ մարմարեայ արձանները շարուած տանիքի եզերքով, երկք ճեմարանները մէկը միւսի վրայ, գօտեւորուած չէնքի պատին, եւ մերձ առ մերձ նրբաճաշակ լայն եւ բարձր լուսամուտները նրանց յետից, ցուցադրելով ներքին սենեակների մեծափառթիամ կահկարասիները եւ գեղատեսիլ գեղարուեստական առարկաները:

Այս ամէնը տալիս էր պալատին մի գեղեցկութիւն, որին հաւասարակից չկար ոեւէ տեղ երկրի վրայ: Բայց այս ճարտարապետական գեղեցկութիւնը գերազանցում էր ինքնին առաւել եւս մարդկային բազմութեան գեղեցկութեամբ: Կտուրը, ճեմարանները, լուսամուտները եւ պալատի յախճապակեայ առաջքն մինչեւ ծայրագագաթ պարսէզի սկզբնաւորութիւնը լի էին Հայաստանի նախարարների եւ ազնուականութեան երկսեռ անդամներով, հագած իրենց ամենալաւ հագուստները: Այսպէս չքեղ էր ծայրաստանի հանդիսակաց տեսարանը, երբ Գրիգոր Անակ նեբս մոտաւ հեռաւոր մեծ երկաթգացանց դրոնեբից արքայական պարսէզի մէջ, իւր ալ կողմում ունենալով Տրդատ թագաւորը, եւ յետեւից միւսները: Պալատի կողմից արտաբուխ ձայները եւ ոգեւորեալ ծափերը արձագանգ տուին մինչեւ ծառուղիների խորերը, եւ շրջակայ այգիների եւ անտառների մէջ:

Գրեթէ մօտեցել էին պալատին, երբ պայ-

ծաու արեգակը անհետացաւ երկնքից յանկարծ, եւ արեւադոյն լոյսին փոխարինեց մի երկնային քնքոյշ լոյս, բայց այնքան լուսաւոու, որքան ինքն ամենալուսաւոու արեգակը:

Լոյսի այս զարմանալի այլափոխութեան հետ միաժամանակ երկինքը պատուեց, եւ բացուեց ծովաչափ լայն բացուածքով, եւ զարդարուն ասղների ներքոյ չուրջանակի երեւցան հարիւր հազարաւոր սպիտակազգեաց թեւաւոյց հրեշտակները, երգելով փառաբանութեան երգեր, եւ մինչ երգեցողութիւնը իւր գերագոյն կատարի վրայ էր, աւելի բարձր անհուն բարձրութիւնից երեւեց ասղի պէս պայծառ, եւ լուսնի նման խաղաղ, մարդկային կերպարանքով մի աննման էակ, եւ կանգ առաւ փառաբանող երկնային բանակների մէջտեղում. ընդունեց նրանց ողջոյնը եւ տուեց նրանց իւր ողջոյնը, եւ ապա չարունակեց իւր էջքը դէպի վայր, դէպի երկիր, Հայաստանի մայրաքաղաքի վրայ, այնտեղ ուր էր վիհատեսիլ առաքեալը: Նա կեցաւ հազար ոտք բարձր անպատուանդան օդային հիմքի վրայ, եւ մի ձայն հնչեց օդի մէջ, մի ձայն որ մարդկային չէր, բայց հասկանալի էր մարդկութեան ականջին, եւ ձայնը համահաւասար լսելի էր Հայաստան երկրի չորս ամենահեռաւոր ծայրերը, եւ ապշեցուցիչ էր մօտաւոր ու հեռաւոր լռութեան համար: Եւ ամենայն Հայոց դէմքեր ակնապիշ դարձած էին այն բարձ-

բաղիւր ուղղութեան ուր կանգնուն էր երկնաւաք հրաշքը, եւ որից հնչում էր աշխարհածաւալ ձայնը այսպէս.

«— Ձեզ ասեմ, քե՛զ, ով Գրիգոր Լուսաւորիչ Հայ ազգին, քեզ ո՛ Տրդատ, թագաւոր Հայոց, ձեզ, ով դուք, այրք եւ սիկնայք եւ դստերք Հայաստան աշխարհի, ձեզ ասեմ ես, որդին ամենակարող արարչին երկրի եւ երկնից: Ասեմ ձեզ զի հայր ամենազօր այնպէս սիրելով սիրեաց զերկիրն ձեր յանչափս, զի անդ անկեաց զբանխան եղեմական, եւ անդ առեղծագործեաց զմարդն առաջին, ըստ նմանութեան իւրոյ, եւ ես նմա զկեղուն, զոր ես արդ խօսեմ առ ձեզ, եւ զոր դուք խօսէք ընդ մխիթանս, եւ զոր Աստուած խօսեցաւ ընդ Ադամայ: Եւ Հայր իմ արար զառաջնաստեղծ ազգն ի մէջ համայն ազգաց տիեզերաց: Այսպէս մեծագոյն է եւ սէր Որդւոյն նորա որ այսու բառբառէ ձեզ, պանծալի զաւկունք Աստուածային սիրոյ, եւ առաքեալք սիրոյ իմոյ: Զի ես այնպէս խորապէս խորհիմ զձենջ, զի յետ յարութեան իմոյ ի դերեզմանէ, եւ յետ համբարձման իմոյ յայս երկրէ առ Հայր իմ յերկինս, ոչ եղէ յետ այնու ի վերայ ի սէր ոչ մի ազգի եւ այս է առաջինն եւ վերջինն զի իջանեմ, եւ այս վասն ազգիդ Հայոց: Դուք, ահա, տեսանէք ի մէջ ձերոց զԳրիգոր որդին Անակայ, որ վասն իւր անխախտելի հաւատոյ առ իս անկաւ ձեռամբ արքային ձե-

թոյլ Տրդատի ի խորախորհ վիրապն, եւ ևս իմով առաւածային ամենակարողութեամբ պահեալ, պահպանեցի յամս չորեքտասան ողջամբ յանվնաս եւ քաջառողջ, մինչ եւ ոչ մի ի ձենջ կարելոց կալ կենդանի յայնմ անդոյս եւ անօդ անդունդն եւ ոչ խակ ժամ մի: Զի ոք հաւատայ յիս յաւիտեան կացցէ, եւ գործեսցէ զհրաշն զարմանալիս, որպէս գործեաց այսօր հաւատացեալն իմ Գրիգոր Անակ վերափոխելով զքաղաւորն ձեր ի խոզացեալ կերպարանաց նորա առ ի կերպարանս մարդկային: Արդ, յետ այսու ևս տայ նմա իշխանութիւն դարձուցանել ի խոզ զամենայն ոք ի ձենջ, որ ոչ հեռանայցէ բանից նորա, եւ որ ոչ հաւատացցէ հաւատալեաց նորա: Հաւատան զոր ևս պատուիրեմ է յոյժ պարզ, եւ գժուարին ծայրայելչ: Կրօն իմ զոր ևս աւանդեմ մարդոց երկրի, կամիմ զի դուք, որդիքդ Հայկայ, եւ աշխարհ ամենայն, զետացէք, եւ երթիցէք զկնի նորա, թէ ոչ է ցուցահանդէս ապօթից, ծէսաց եւ արարողութեանց ի ցոյցս մարդկան, որպէս առնեն զպիրք եւ փարիսեցիք Հրէից, եւ քուրմք եւ քրմապետք ազգաց կռապաշտից ի ժողովարանս եւ ի հրապարակս իւրեանց, եւ ի վերայ տաճարաց իւրոց: Բայց որ ոք արդեամբ եւ ճշմարտիւ հաւատայ յիս, եւ պաշտեսցէ զկրօն իմ, մացի ի մեկուսարանն տանն իւրոյ առաջէ զաղօթս իւր առ Հայր եւ առ ևս, զի ևս եւ Հայր իմ եմք մի անբաժան եւ մեք լաւա-

դայնա լուիցուք զձայն սրտի նորա, առանց միջնորդութեան եւ բարեխօսութեանց, եւ ձայնարկութեանց պղծոց եւ վտիտեցուց, եւ ծխահատութեանց եւ արտասրութեանց նոցա: Զի որ ինչ պիտոյ վասն առաքինութեան եւ կատարելութեան անցնելոյ անհատի ի միւսն դմիմեանս, դի նիթ սիրեսցին զմիմեանս, անդ հզիցի ոչ նախանձ, ոչ առելութիւն, ոչ թշնամութիւն, ոչ պատերազմ ազգաց, ոչ սպանութիւն անձանց, ոչ գողութիւն եւ աւազակութիւն, եւ ոչ առութիւն եւ խարէութիւն: Եւ մարդիկ յերկրի հզիցին անարատ եւ առլոր եւ արդար, որպէս հրեշտակք յաւիտենականք են, անդ վեր յերկինս կատարեալ գոյ գաստուէր, դուք, ազգ Հայոց, հզիցիք ազգ մեծագոր ի պետութիւն ,առատապարես ի հարստութիւն, եւ բազդաւոր ի բարօրութիւն մինչ կայք յերկրի: Եւ ամենեքեանդ լիցիք սիրելի որպիք Արարչին ամենակաց, նիթ վերին արքայութեան նորա հզիցիք հասանել բանիւ խմոց, զոր ասացի: Իմա՛, առաջին անգամ ես նկի յաշխարհ որպէս մարդ, որպէ ամն հիանի, բնակեալ յանմիժամ ի Բեթղեհեմ ի գոմի միոյ ընդ անասունս, եւ ես ծնեալ ի մսուրս աչխարաց: Եկի այսպէս խոնարհարար ի վերկութիւն մերոց համայն ազգաց: Այս անգամ, սակայն, գամ ի մայրաքաղաքն Հայաստանի, ի չքեղաշուքն Վաղարշապատ, ոչ որպէս մանուկ ծնեալ ի մսուրս ընդ անասունս անբանս,

այլ գամ որպէս ասուած անձին եւ անակնկալ եւ արարիչ ամենայնի: Ոչ ուրեք ցարդ եկեալ եմ տեսանելի եղեալ յաչս մարդոց այսպէս, եւ ոչ երբէք գալոց եմ յետ այսու այլուրէք, եւ վասն այլ ազգաց, բայց միայն վասն յաւէտ սիրեցեալ Հայ ազգիդ: Եւ յայսմ տեղւոջ ուր ես կամ ի բարձունս կոչեսցէ էջմիածին առ որ աչք եւ սիրտք ամենայն Հայոց կացցեն ուղղեալ յաւիտեանս յաւիտենից»:

Զայնը լռեց, եւ տեսիլը մեղմօրէն վերացաւ ամպերից վեր անհետացաւ երկնքի մէջ: Եւ նրա ներքեւի հողի վրայ երեւեց մի լուսեղէն ամպհովանի կանգնած չորս սիւնակների վրայ: Միաժամանակ անհետացան երեք նահատակուած կոյսերի մարմինների վրայ մինչ երկինք երկարող բոլորակ լուսեղէն սիւները, միայն դմբէթաձեւ լոյսեր շրջապատելով նրանց բոլորին թարմ դիակները: Թագաւորը մտաւ պալատի մէջ, եւ դուրս եկաւ պալատի ճակատի կեդրոնական պատշգամի վրայ, Հոյակապ եւ վա՜հ պալատ: Վերը բարձրում կը-տեսնի երկրքով բուն մէջտեղում բարձրանում էր Հայկի հերկուլեան արձանը, ալ ձեռքը տա-րածած Վազարշապատի վրայ, եւ ձախ ձեռքը բռնած բարձր, եւ մատները բաց եւ ուղղած դէպի Արագածի գլուխը: Նրա ալ եւ ձախ կող-մերում հաւասար հեռաւորութեամբ կանգ-նում էին Արմենակ, Արամ եւ Հայկազեանց եւ Արշակունեանց երեւելի թագաւորները, եւ

նրանց վեհաշուք շարքերը շարունակում էին ցածում ընդարձակ լոլորաձեւ հրապարակի ներքին շրջանակի վրայ: Այս նկարագիր չէնքի առաջ նրբատաք ասպետուհուած անթիւշի մեծ հրապարակում, հրապարակից անդին վազոցներում, հանդիսակաց ապարանքների պատշգամներում եւ հեռաւոր տունների տանիքների վրայ հեռաքրքրաշարժ բիւրաւոր բազմութիւնը անձայն ողջունելին խոնարհեցնելով իրենց դլուխները երբ Տրդատ Թագաւոր եւ Գրիգոր Լուսաւորչի հետ միասին նա եւս համանման խոնարհութեամբ ծռեց իր դլուխը դէպի վայր հրապարակի վրայ, եւ ուղղահայեաց ամենուրէք ապարանների պատշգամներում, պարտէզներում եւ հեռաւոր տանիքներում հանդիսասեաս հազարաւոր բազմութեան վրայ ողջունալից չարժումներով: Եւ մնաց լուռ, առանց մի ձայն հանելու: Խորին լռութիւնը խզուեց մի ձայնով, որի ոյժը, հընչիւնը, կարծես արեգական ճառագայթների լոյսի նման տարածուեց ամբողջ Հայաստանում, եւ լռեց ամբողջ Հայոց ախանջներում:

Գրիգոր Լուսաւորչի ձայնն էր այն:

«Ո՛վ ժողովուրդ Հայաստանի, ահա, տասներեքհինգ օր է որ դուք տեսնում էք զարմանալիքներ, որպիսիք մարդիկ տեսած չէին աշխարհիս առնեղծումից ի վեր: Դուք տեսաք Հայաստան երկիրը լուսեղէն սիւներով կապուած երկնքի հետ: Դուք տեսաք ձեր թանկա-

դին Թագաւորի վրայ կատարուած հրաշալի հրաշքը: Եւ մի քանի րոպէ առաջ տեսաք Որդին Աստուծոյ եւ ինքն Աստուած, ամենակարող արարիչն ամենքիս իւր երկնային փառքով խոնարհեցաւ, եւ իջաւ ահա, այնտեղ մեր վրայ: Այս ամէն մեծագոյն նշանները բաւական են ցոյց տալ Աստուծոյ հոգածութիւնը ձեր վերաբերմամբ, եւ համոզել ու հաւատացնել ձեզ թէ Յիսուս Քրիստոս ճշմարիտ Աստուածն է որ դուք պարտիք պաշտել, ինչ որ իւր ձայնով ասեց եւ պատուիրեց ձեզ փոքր ինչ առաջ Որդին, այսօրից սկսեալ կտորատեցէք ձեր կուռքերը որ դուք ձեր խակ ձեռքով չինել, եւ որոց պաշտում էք, որպէս ձեր աստուածները, կտրծանեցէք ձեր կռատուններըը, ջնջեցէք քուրմերին, որ ձեզ հաւատացրել են թէ կուռքերը աստուած են, այրեցէք ամէն գիրք եւ դրականութիւն որ վերաբերում է այդ հեթանոսական կրօնին, եւ հեթանոսական կեանքի չրջանին: Եւ վաղն, վազ առաւօտ, Նաւատարդի առաջին երջանիկ օրը, երբ դաշտեր եւ ձորեր ծածկուած են ծաղիկներով, արտեր դարիի եւ ցորենի ցօղուններով, կամ ձմերուկի եւ սեխի թաւերով, եւ այգիների ծառեր ծանրացած լիառատ պտուղներով, եւ խաղողի որդերը կախարդող ողկոյզներով, այո, այսպէս է մեր Հայաստան, աշխարհի փառքը Նաւասարդի առաջին օրում երբ ես կամենում եմ որ դուք ձեր կիներն ու զաւակները զարթնէք վա-

առաւօտեան եւ ամենեքեանդ միասին զուարթ սրտով եւ ցնծալից երգերով քայլէք ձեր մօտակայ դեաերն եւ դեասակները, հանէք ձեր հագուստները ջրերն եղերքներում, եւ մերկ մարմիններով ցայտէք ջրերի մէջ, եւ նրանց սահուն հոսանքների հետ ձեր մարմինների եւ ձեր հոգիների մեղայ ապաները մաքրուած ձեր մէջից պիտի քշուեն եւ տարուեն Հայաստանից դուրս, եւ թաղուեն այն ծովերում, ուր այս դեաերը վազում են եւ թաղւում յաւիտեան: Եւ դուք մաքրուած մարմնով եւ հոգով, եւ մկրտուած Սուրբ Հոգւի չնորհքով դուրս կը գաք դեաերից որպէս նոր ծնած մարդիկ, մերկացուած կռապաշտութեան հասարակից եւ հեթանոսութեան անունից, եւ զգեստաւորուած Քրիստոսի անունով, եւ քրիստոնեայ անունով»:

Հետեւեալ օր Հայոց Նոր Տարին էր: Բոլոր Հայերը զգեցած լրենց գարգարուն զգեստները եւ դուրս եկած ամենուրէք լրենց պալատներից եւ տներից եւ խրճիթներից արեւածագի հետ ընթանում էին արագընթաց ճանապարհների երկայնութեամբ, մարզադետիններով եւ դաշտային ծագիկների վրայով, ցօղնով արտերի եւ խոզոզի այդիների մէջով, խմբակներով եւ անջատաբար ընթանում էին յառաջ, յառաջ գանագան տեղերում եւ գանագան գաւառներում, եւ ամէնը զգալի գեաեր եւ դեասակներ: Եւ Հայաստան երկրի երեսը նմանում էր մի

մարդկային ծագկափթիթ ծառերի համատատած չարժուն մի անտառ: Վաղաբշտպատի մէկ միլիոն մեծ եւ մանր բնակիչները հետեւում էին Գրիգոր Լուսաւորչի քայլերին, ըրջապատուած Տրդատ Թագաւորով եւ իշխաններով եւ իշխանապուններով: Ամէն գետերի եւ գետակների, սկսեալ իրենց ակունքներից մինչեւ անհետացումները, երկու կողմերի վրայ երկարում էին մարդկային խիտ ու խիտ շարքեր, կանգնած եւ մերկ որպէս Ադամ եւ Եւա դրախտից յետոյ:

«Օ՛ն անդր, ի Ջուր, ի Յորդանան» արձագանգից Լուսաւորչի հրաշալից ձայնը Հայաստանի ամէն գետերի եւ գետակների ափերում: Եւ երկրի մէջ չմնաց մէկ Հայ որ այդ ձայնը չը լսեց եւ չը ձգեց ինքներեն սահուն եւ սառն հոսանքների մէջ առանց երկիւղի եւ լի ցնծութեամբ: Գետերը փոխանակ ջրային մակերեւոյթի, պատկերացնում էին մարդկային մարմիններից կազմուած մակերեւոյթներ:

«Օ՛ն, յարուսքս» հնչեց ձայնը վերստին: Եւ մինչ մերկ էդ եւ արու, առանց այլեւս ամաչելու իրենց մաքրեալ մերկութիւնից եւ մկըրտեալ մարմիններից, մնացին այդպէս, կանգնած լսեցին Լուսաւորչի երրորդ ձայնարկութիւնը.

«Այս օրից Հայ ազգը դառնում է առաջին Քրիստոնեայ ազգը: Ուստի ամէն ազգերի մէջ պիտի լինի առաջինը, որ վայելէ Տէրն մեր Յի-

առաւ Քրիստոսի լաւագոյն պաշտպանութիւնը եւ երջանկութիւնը երկրի վրայ, եւ բարձրագոյն տեղը երկնքի արքայութեան մէջ»:

Հայաստան երկրի վրայ եւ նրա օդի մէջ պատկերացող արտասովոր տեսարանները տեսանելի էին երկրից շատ վեր հեռաւոր երկինքում, ուր դրախտի մակերեւոյթը ոչ հողեղէն եւ ոչ օդեղէն, բայց ծաղկեղէն յօրինուած բիւրաւոր եւ բիւրաւոր ծաղիկներից, բիւրաւոր եւ բիւրաւոր գոյներով, որոնց նմանները չկան երկրի վրայ:

Եւ այդ ասուածային պարտէզի ամէն մի ծաղիկը փայլում էր որպէս աստղ եւ նրանց լոյսերը չոլչոլում են երկնքի անհունութեան ամէն կողմերում: Եւ այնտեղ կային միայն երկու էակներ, որ նմանւում էին մարդկային արարածներին, բայց մէկը բարձր եւ հսկայ սովորականի մարդաչափով եւ նրա միրուքը սկսում նրա երեսի բարակից լինում էր մինչեւ նրա ծունկից վայր եւ զգեստները եւ աննման լոյնարձակ վերարկուն հիւսուած էին այնպիսի անասունների բրդերից, որոնք որ գոյութիւն ունէին դարեր առաջ, երբ Նոյ նահապետ չէնից իւր տապանը Լիբանանի անտառների ծառերից՝ փրկուելու համար գալիք ջրհեղեղից:

Նա իւր ճակատով, աչքերով, քիթով եւ երեսով նմանում էր մի կատարելատիպ Հայի: Բայց ի՞նչ դարձ ունէր Հայը մի այդպիսի տե-

դում: Միւսը էր մի էակ, կարճ եւ խորամանկ եւ զուրկ վերարկուից իւր մէջքի վրայ եւ նմանում էր Աբրահամի զաւակներին, որպիսիք թափառում էին Պաղեստինի հովիտներում եւ դաշտերում եւ դուշակում էին Իսրայէլի որդիների բազմութիւնը որպէս աւազ ծովու եւ նրանց դրամական տիրապետութիւնը ընդ ամենայն աշխարհ:

Առաջինն էր հայազգի Ենովք, երբ բոլոր մարդկութիւնը Հայ էր ցեղով եւ լեզուով եւ որին Աստուած բարձրացրեց երկինք, որպէս զի իւր յիշողութեան առաջ միշտ ունենայ իւր Թանկագին Հայ ազգի պատուական պատկերը:

Երկրորդն էր Եղիա մարգարէ, որ երկինք բարձրանալիս վայր ձգեց իւր վերարկուն՝ իւր սիրելի աշակերտ Եղիսէի վրայ: Եւ երկնքի մէջ այս հրէան ու հայը միշտ ազգային վիճաբանութեան մէջ էին: Եւ այդ օր, կոթնած իրենց ամրակուռ եւ անկոտրելի զաւազանների վրայ, համաց համաց քայլեցին դրախտի մի արտակարգ դեղատեսիլ անկիւնը, նստեցին վարդահիւս թիկնաթոռների վրայ եւ անթառամ ծաղիկներից ձեռներով գործուած պատշգամը, եւ միրուքները կախ տուած դէպի դուրս, անյատակ անհունութեան մէջ, սկսան նայել այն երկրի վրայ, որի առաջին նախածնողներն էին Ադամ եւ Եւան եւ այն Հայաստանի ուր Աստուած տնկեց նրանց դժբաղդաբեր Դրախտը:

ՀԱՑԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Եւ ի՞նչեր տեսան եւ ի՞նչպէս բացուեցան նրանց լեզուները:

— Ահա, տեսնո՞ւմ ես, դու որպէս Աբրահամի, եւ եղբայր Յուդայ Իսկարովսացի, ինչ փառաւոր կեանք է սպասում Հայ Ժողովրդեան, Քրիստոսի անունը իւր վրայ առնելուն, եւ առաջին քրիստոնեայ ազգը դառնալուն համար:

— Երանի քեզ, ո՛վ դու նախաջրհեղեղեան դառամեալ անհետասեռ Հայրապէտ, մոռացել ես որ քո ազգըդ իւր անհետասեռութեամբ եւ բռնած ծուռ ճանապարհով իւր վրայ հրաւիրեց Աստուծոյ արդար բարկութիւնը, եւ կորաւ երկրածաւալ ջրհեղեղով: Եթէ Քրիստոս էր որպէս Աստուծոյ եւ Աստուած, ուրեմն գոյութիւն ունէր այն ժամանակ. ինչո՞ւ թոյլ տուեց իւր Հօր ոչնչացնել ազգա ազգը: Գոնէ դու եւ լաւ գիտենք թէ Աստուած բնաւ չէ եղել ամուսնացած, չէ ունեցել կին, ուստի եւ չէր կարող ունենալ որպէս, որպէս մեր Նախահրեշտակ Հրեան, կամ նրա կեանքը դրող ուրիշ հոգի հրեաներ երբևէ գրուածքներով ծրագրել են հաստատացնել աշխարհին: Ես նկատադրութիւնից ինձ երեւում է թէ չտեսով քրիստոնէութիւնը պիտի տարածուի նաեւ երկնքում, եւ դու պիտի լինես առաջին եւ վերջին քրիստոնեան: Բայց ենոքը, եւ եւ արի, եւ Հմմտրիտը ասա: Արդեօք, բռնատեղծութեան ոգին առա՞ւնեց քո երեւա-

կայութեան վրայ, եւ դու տեսար այս տեսիլները քնած աչքերով, եւ դու լսեցիր այդ անդոյ ճառախօսութիւնները քո անծակ ականջներով, կամ թէ դու տեսա՞ր այդ ամէնը բաց աչքերով եւ ուշադիր ունկերով: Եթէ իրական էին, եւ ճիշդ էր Քրիստոսի սպառնալիքը քո հայ եղբայրներին, թէ ամենին խոզ պիտի դարձնէր եթէ քրիստոնեայ չդառնային, ես ապահով եմ թէ այդ դիշեր մինչ արշալոյս ոչ մէկ հայ քուն ունեցաւ: Ամբողջ դիշեր, ամէն վայրկեան, ամէն ոք ձեռքով չօշափում էր իւր մարմինը, քիթը եւ ականջը եւ յետոյքը տեսնելու թէ արդեօք մարդ էր, եթէ դարձել էր խոզ որպէս դարձաւ իրենց թագաւորը: Եւ նոյնպէս անկողիններուն տակից դուրս հանելով իրենց գլուխները, նայում էին ընտանիքի մեւս անդամների երեսին: Երբ լոյսը բացուեց, ամենքն անսահման ուրախութիւն զգացին, որ Քրիստոս պահել էր իրենց մարդկային կերպարանքներով, եւ առիթ չէր տուել խոզերի բազմացման Հայ ազգի մէջ: Այնուամենայնիւ տակաւին արտադրչ, խոհեմութիւն համարեցին հապշտապ եւ արագաբար ընթանալու դէպի դեռը լողանալ, մկրտուիլ, եւ այսպիսով դառնալ եւ անուանուիլ քրիստոնեայ: Դառնալ քրիստոնեա՞յ: Որովհետեւ Քրիստոս խոստացաւ Հայ ազգին բարօրութիւն եւ մեծութիւն իրենց երկրաւոր թագաւորութեան մէջ, եւ ամենաառաջին տեղը նրանց հոգիներին երկնքի

թագաւորութեան մէջ: Ենո՛վք, եթէ դու բանաստեղծ ես, ես Եղիա մարգարէն եմ. Աստուծոյ մարգարէների մէջ ամենամեծը: Եւ մարգարէանում եմ այսօրից, թէ այս քրիստոնէութիւնը այս երջանիկ Հայ ազգի դլխին պիտի թափէ դժբախտութեան մի այնպիսի նոր ջրհեղեղ որի մէջ նրա ժողովուրդը խեղդամահ պիտի թաւալէն տասնեակ դարերով: Ահա, նայէ, տես, այս առաջին օրից խակ սկսում է դժբախտութիւնը եւ ստեղութիւնը, վոխանակ սերոյ: Նայէ վայր երկրի վրայ, Հայաստանի վրայ: Տես ինչպէ՞ս Քրիստոսի նորահաստատ քրիստոնեաները կոտրտանում են միմեանցները, արատաքսում, սպանում են քուրմերին եւ նրանց ընտանիքներին, կամ յափշտակում նրանց ինչքերը, եւ կրակի բոցերը որ բարձրանում են այրուղ գրքերի դէմերից, անցեալ դարերի՝ այս կատաբելատիպ Հայ լեզուին համահաւատաար՝ գրական մտքերի անգնահատելի գանձերը, որ ոչնչանում են Հայաստանի լուսաւորութիւնը տասնճնող Գրիգոր Լուսաւորիչ անուանուածի խաւարեցուցիչ հրամանով: Պիտի տեսնես Հայր Ենովք, երկաթեայ կամքով եւ տևիծի զօրութեամբ այս Տրդատը իւր քրիստոնէական մոլութեան ազդեցութիւնից՝ պիտի դառնայ Թուլամորթ իր պատաս մօր նման. եւ կրօնի, Քրիստոսի եւ Աստուծոյ անունով բարբառող Գրիգորը պիտի բարձրանայ, եւ զօրանայ, եւ ինքն եւ իրեն յաջորդները պիտի

նաեւեն ոչ թէ Բեթղեհեմի մատուռներէ մէջ, այլ պիտի բարձեն չքեղ պարտէզներուն, եւ հրամաններ տան իրենց երկրի թագաւորներուն եւ իշխաններուն, եւ խռովութիւններ ազգի մէջ, եւ խառնակութիւններ ու նենգութիւններ միմեանց մէջեւ, եւ ժողովրդեան մէջեւ եւ այժմեան ազատ, եւ անկախ Հայ ժողովուրդը պիտի դառնայ թշուառ եւ ստրկական քրիստոնեայ անունը ատող ազգերից· պիտի մնայ ոչ հայ թագաւոր, ոչ հայ թագաւորութիւն, այլ հալածանք, տարփութիւն եւ անարգանք բռնակալ ոչ-քրիստոնեայի կրունկներէ տակ, եւ նրանց Քրիստոսը հակառակ իւր խոստման, եւ իւր ստուածային զօրութեան անզօր պիտի լինի վրկել նրանց անարգութեան ոտքերի ներքեւից: Եւ Հայաստան իւր բոլոր բարգաւաճ քաղաքներով եւ աւաններով պիտի դառնայ բոյն աւերակաց: Եւ այս փառաւոր Վաղարշապատը որ երկրից մինչեւ երկինք չքեղափառ փայլում է մեր աչքերի առաջ իւր հրաշալի չէնքերով, նրանց աւերակները, եւ ոչ իսկ աւերակաց հիմքերի հետքերը պիտի չմնան ոչ հողի վրայ, եւ ոչ հողի տակում: Եւ այսպէս պիտի լինի նրանց քրիստոնեայ դառնալու վարձատրութիւնը Նազովրեցի Քրիստոսից»: Միայն ամենահեռուստ ապագայում պիտի բարձրանայ մի քրիստոսամերժ մարդկային արդարութեան մի հզօր ձեռք որ զարեւոր տուրքնութեան ցեխի մէջից պիտի դուրս հանէ, եւ բար-

ձրացնէ Հայ ազգին ազատութեան երջանկաւոյ կեանքի մէջ, երբ Հայ բանաստեղծները, պատմագիրները, եւ վիպասանները իրենց տըխրաթաթախ գրիչներով, եւ լալկան ձայներով այլեւս պիտի չը սգան.

«Ողբամ զքեզ Հայոց աշխարհ»:

Բայց, ի ձայն մեծի ցնծութեան պիտի դոչեն.

«Երգեմ զքեզ, Հայոց աշխարհ վեհապանծ»:

Տակաւին տեսնում եմ այս ցածր երկրից բարձր երկնքում մարդկային այս վեհագոյն երկնաբնակ մարդերին, նստած Աստուծոյ զարմանազարմ պարտէզի անկիւնում, եւ նայելով դէպի վայր Վաղարշապատի վրայ, եւ նրա վերջին բառերը տակաւին լսում են իմ ականջներում:

———

ՏԵՍԻԼՔԻՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(ԷՋՄԻԱԾՆԱՑ ՎԱՆՔԸ)

Արդեօ՞ք, հեռաւոր ժամանակներէ պան-
ծալի լրականութեանց անդրադարձուածքնե-
ներն էին որ գոլում էին իմ զարթուն աչ-
քերէ վրայ, եւ հոդ զարձած մարդիկ վերա-
կենդանանալով հառնում էին մինչեւ ինձ, կամ
արդեօ՞ք, երեւակայական հնադարեան վտա-
քերէ անդոյ տեսարաններ էին որ տեսիլներէ
միջով երեւում էին իմ մտքում, եւ նրանց միջի
օդային ձայներն եւ բառերը արձագանգում
էին իմ աներակաև լսողութեան մէջ: Տեսա-
րաններ, դէմքեր եւ ձայներ մէկը միւսի յետե-
ւից անհետացան: Եւ նորէն սկսեցի տեսնել
այն մթնշոյն վաղարշապատը իւր մթնշոյն
երեւոյթներով որ տեսել էի աչքերս բացուե-
լուց ի վեր: Մխայտրիանէ տասիակ տանիքնե-

րով պարզ հողաշէն տուներ, հողից յատակներով, խեցիով պատած եւ անսահ գերաններով ապահովուած սահաստաղներ, մեծ մասամբ առանց լուսամուտների. պատերում, առաստաղների մէջտեղում երդիք կոչուած մի ծակ որպէս միակ լուսատու միջոցը սենեակներում, Թոնիրներ եւ նախնական ժամանակների ամենահասարակ բուխարիներ, որոնք իրենց վառուելու ժամանակ լցնում էին տուները խեղդիչ եւ կուրացուցիչ մուխով եւ ծուխերով: Բակերից ամանք զարդարուած էին կանաչեղէններով եւ ծաղիկներով եւ ամանք ընտանի անասունների Թրիքներով, եւ ամանք Թէ մէկով եւ Թէ միւսով, ամանց բակերում փողոցների պատերին կից բարձրանում Թրիքներից կառուցուած բուրգեր կամ աշտարակներ: Աստ անդ, փողոցների կողմից բակերի պատերը Թխուած էին Թրիքի խմորից ունցուած վահանաձեւ նկանակներ, իրենց չարքերով պատելով պատերի երեսները վերից վայր: Եւ տեղ տեղ պատերի կողքերով փռուած կային դոյնզդոյն Թրիքներից հիւսուած փափուկ դորգեր, որոց տակերից երբեմն մատնաչափ որդեր դուրս էին հանում իրենց երկչոտ գլուխները, եւ պանդաղաքայլ գրօսնում էին իրենց աննպատակ այդ դորգերի վրայ: Այդ միայարկ, հողաշէն եւ այսպէս զարդարուն տների մէջեւ համեմատօրէն բարձրանում էին ատա անդ երկյարկանի պատշգամաւոր տուներ, որ իրենց ներքին եւ

արտաքին երեւոյթներով եւ ճարտարապետութեամբ չատ հեռու էին մրցելուց իրենց գերազանցութեամբ: Փողոցները ողմալից էին մի ժամանակ, փոշելից մի այլ ժամանակ, եւ երբ վչում էր Լուսաւորչի քամին, փոշին բարձրանում էր մինչեւ ամպերը: Գիշերային լուսթեան մէջ զանգուլակների չարաչարական հնչիւնները, բեռնաւորուած ուղտերի չարքեր էին որ երթեւեկում էին արեւելքից արեւմուտք, կամ արեւմուտքից արեւելք: Եւ անասունների խառնաճաղն երաժշտութիւնը վաղ առաւօտեան ինձ յիշեցնում էին կովերի եւ նրանց ընկերակիցների արշաւանքը Վաղարշապատի հրապարակի վրայ, եւ աղքատ կիների վազվզումները աչ եւ ձախ բռնելու կովերի յետոյքից թափուղ կամ թափուած թրիքները իրենց ձեռներում բռնած կողովների մէջ:

Ահա, այսպէս էր այն Վաղարշապատը, որ վերսին սկսեցի տեսնել իր իրականութեամբ, եւ այն էջմիածինը, որ իր հոգաչէն պարիսպների ներսից ցոյց էր տալիս իր բըրդաձեւ կաթողիկէն, եւ նրա գլխում տնկուած խաչը: Աննման տեսածս տեսիլներին եւ տեսարաններին:

Թէպէտ եւ, հարկ եղաւ հազ խելահաս, էջմիածինը նախ հեռուից իր կիսակնօրհայ զանգահարութեան զօղանջիւնով, եւ իր վեհափառ


ճակատով, բարձրաբերձ պոյտ զանգակատուներով, եւ օդաթռիչ խաչակիր կաթողիկէով մօտից, եւ իւր սպիտակածեփ վիհարանով եւ ցածահատակ խուցերով, եւ չինարի ծառերով եւ ծաղիկներով, այս ամէնը միացած միակ բաներն էին իմ ամենօրեայ տեսութեան առաջ որ լցնում էին իմ մանկական զգացումները մանկական պատկառանքով: Մեծ եկեղեցւոյ նեղը իւր պատերով եւ պատկերներով, իւր սիւներով եւ առաստաղներով, իւր կախուած կանթեղներով, եւ նրանց մէջի սժգահոտ ձէթախտով, իւր խոր խորաններով եւ նրանց առաջին կանգնած մոմերով եւ խաչելով զարդարուն սեղաններըը, այս բոլորքեան ազդում էին իմ վրայ մի խորհրդաւոր բարեպաշտութեան եւ երկիւղածութեան զգացումով եւ դրաշմով, եւ մղում էին խոնարհել, ծնրադրել երկրպագել այդ անշունչ անպատկ, նիւթական իրերի առաջ, եւ պաշտել նրանց որպէս մի անըմբռնելի առաւածային արդութիւն: Ուր, այսպէս, անգիտակից կրօնական մոլութիւնը եւ նրա նախապաշարումները արմատ են արձակում, ամրանում են, եւ հաստատում են իրենց իշխանութիւնը մարդկային մանկական մտքերի եւ սրտերի վրայ, այնտեղ եւս գաղտնութիւնը գոյանում է սորուկ կրօնի նախապաշարմանց ցանցերի մէջ, եւ նրանց մէջից ազատուելը դժուարին: Դժուարին, որովհետեւ խորհրդաւորութիւնը խորթափանցիկ

իմ էութեան մէջ իմ կեանքի դիտակցութեան ծննդեան հետ: Զիթաղոյց աղօտ կանթեղները կախուած օդի մէջ, բարակ մոմերը իրենց վառ ծայրերով անկուած ծամածուռ աչքերով սուրբերի պատկերների առաջ, բարձրահայեաց բիւրեղեայ ջահերը եւ իրենց չորաթաղ լոյսերը, սուրբ անդանները իրենց հաստաւիտ մոմերով, խաչերով եւ մետաքսեայ սիւռոցներով, եւ բոսորագոյն վարագոյրներով, երկեցիկ սիրացուներ իրենց սպիտակ եւ խաչանիշ շապիկներով, եւ իրենց կոկորդալից ժամերգութեամբ, սարկաւագներ իրենց խնկաբոյր եւ ծխող բուրվառները աջ ու ձախ շարժելով արդար վարդապետներուն եւ եպիսկոպոսներուն, եւ մեղաւոր աշխարհականներուն երեսներին, եւ վեհափառ Գէորգ Դ. Կաթողիկոսը զարձրած իւր վեհազգեցիկ մօրուսաւոր երեսը դէպի աղօթողները, իւր վեղարի ճակատին փայլատակելով ադամանդալից խաչը, եւ աջ ձեռքը բարձրացրած կարծես դիտմամբ կախարդելու ամէն ոք իւր խոշոր ադամանդեայ մատանիի ճառագայթներով, խաչաձեւ օրհնում էր ժողովրդեան մի լայնածաւալ երկարաձիգ թըրթռուն ձայնով աղաղակելով. «Ողորմութի՛ւն ամենեցո՛ւն»:

Եւ ի լրումն ամենայնի, Քահոբը, վառաւորագոյն ժամերգութեանց ամենափառաւորը, կաթողիկոսը մէջառնում, նրա երկու կողմում թեւատարած պատուգաւոր (վեղարաւոր)

արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ եւ վարդապետներ, ոսկեխայլ եւ արծաթափայլ չուքերով զարդարուած, խաչեր կամ վառ մեծ մոմեր բռնած, ամէնը բերանաբաց մօտուքներ եւ դլուխներ շարժելով, եւ երկեղած բարձրաձայն աղքան լրենց կիսորդների թելերը թոյլատրում էին, եւ նրանց ձայնների միանալով բոլոր սիրտացաւների աղաղակները: Ահա, այս ամէնը բաւական էին որ առիղծէին իմ մէջ կրօնի անըմբռնելի գոյութիւնը, եւ դժալ թէ Աստուծոյ հոգին չնչում էր այդ տեսարանների մէջ, եւ լցնում աղայական սիրտս ահեւ եւ դողդողեամբ:

Այս խորհրդաւոր կրօնական զգացման ահեւ եւ դողդողեամբ սիրտս պատուած էր ոչ միայն Հայաստանի այս Մայր Եկեղեցւոյ վեհութեան մթնոլորտի մէջ, այլ նաեւ այնուհետեւ դուրս, եւ նրա արտաքին պարիսպից դուրս, մեծ դարպասի հանդէպ, ուր եւ Վաղարշապատը անջատող հրապարակի մէջ, մի տեսարան, որ երբէք չեմ մոռանում: Կարծեմ երաշտի մի տարի էր, անձրեւ չէր գալիս, ամէն կառնաչութիւն չորացած վիճակի մէջ էր, եւ երեւի ամէն ոք աղօթում էր, եւ աղաչում էր Աստուծոյ որ գթար, եւ անձրեւ թափէր երկնքից, եւ սովից ազատէր իւր սիրելի Գրիգոր Լուսաւորչի օրհնեալ քրիստոնեայ ժողովուրդը· բայց թէ Աստուած եւ թէ Քրիստոս երեւի բամբակ էին կոխել լրենց ականջներում, եւ չէին լսում



ԷՋՄԻԱԾԻՆ

ոչ ապօթքնելը եւ ոչ ապաչանքնելը: Ուսաի, քսա մի նախընթաց ասվորութիան, երկու վարպապետանէ վանքի մի քանի թփաճէչիների ընկերակցութիամբ, հնձած ձիւնի վրայ, եւ երենց հետ առնելով երկու արծաթեայ սուրբ անօթներ, մեկնեցան դէպի Մասեաց լեռը, եւ բարձրանալով Աբարատի սարոյն վեր, երենց անօթները լցրին Սուրբ Յակոբայ ապրիւրի հրաշագործ ջրով, եւ արագշաւ վերադարձան Սուրբ Էջմիածին:

***

Այդ չորքանաւ այս արբանեայրը լի էր վարդապետներով, որոնց ամբողջ գործունէութիւնն էր օրը երկու անգամ, արեւածագին եւ արեւամուտին, երթալ եկեղեցի, շուրջառնելը թեւերի վրայ բռնած, եւ եկեղեցի նետած չէր մտած վտիտներ երենց ուսերի վրայով, թէ արդեօք ձեւական ժամերգութիւնից զատ նրբանք մտածո՞ւմ էին ապօթել՝ այդ մեծն Աստուած գիտէր, բայց ինչ որ անտարակոյս անցնում էր երենց մտքերից, այն էր երենց մէկ օրում երեք անգամ միաբանական սեղանատունն յաճախելը, թէ արդեօք ի՞նչ պիտի լինէին երենց կէսօրեայ կամ իրիկնօրեայ կերակուրները: Նրանց մտքերը չունէին ոչ սեղանատուն ոչ կերակուր: Նրանց մտքերը խոհարարներ չունէին, եւ ընդունակ չէին նկատել ոչ մի մատուր կերակուր, բայց ընդունակ ծուլութեան եւ ձրիակերութեան, մատուրպէս նրանք շատ ծառեր էին առանց պրաւական պատ-

պէ: Մայր Երկիրն ամենաբրտպէն կեղծուած, ստանց օրինակ առնելու Հայաստանեայց Հարաբաւոր մղումներ հետու Իտալիայում Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան գովելի եւ ըղմայլելի գրական աշխատասիրութիւնից:

Այդ ժամանակ չկար Դէպրէ Դ-ի լուսաւորութեան ձեմարանը· արդ, ո՞ր տեղում էին բուռնում էջմիածնի այս անպատասխան եկեղեցական ծառերը:

Հայ ապրի լուսաւորութեան այս մայր եկեղեցին նմանում էր մի բերդաքաղաքի, շրջապատուած երկու քառակուսի ամրութիւններով· արտաքին քառակուսին ներկայացնում էր բուն պարիսպները, շորս անկիւններում շորս աշտարակներով: Ներքին քառակուսին, հարաւային դէպ վրայ, սկսեալ արեւմուտքից նախ երկար սենեակներն էր գնում յարկում, ապա թփաճիչիների աննշան կրկնակներ, ստորերկրեայ սառցատուն եւ այլն, երկրորդ յարկը ամբողջ երկարութեամբ ցոլանի եւ այլ պարկեշտների չափ տարածներ էին: Այդ ծայրից սկսում էր արեւելեան դէպ անկիւնը, ուր էր հոգեւոր հայրերի սամի եւ բամբի համեմ հացերի փուռը, որտեղից միշտ վչում էր թխուզ սամիների եւ բամբիների հրապուրիչ հոտը: Այս արեւմտեան դէպ սկզբում եւ անկիւնում կար մի ներքնոյք որ ուղիղ դէպ տանում էր Ղազարապատը, կամ ուխտաւորների հեթանոց մի երկյարկանի քառակուսի հատուածութիւն, բակի

մէջտեղում հոսուղ ուսպանով, ուր բնակիչները գնում, եւ լուանում էին իրենց երեսները եւ ոտները: Այդ տեղից պարիսպների տարածութիւնը դէպի մօտակայ Նեթսէս Կոմիտղիոս Աշտարակների լիճը եւ անտառը, եւ երկուքին Առաւածոյ վտառտեղ Աբարտաը կազմում մթնոլորտում: Յիշեալ երրանցքի բուն մուտքի ձախում բացում է տեղանատան դուռը, այդտեղ սկսում է տեղանատան դլուխը ուր բարձրանում էր Կոմիտղիոսի տիտուլը: Այս դուռը յատուկ էր մեծն եպիսկոպոսներին եւ վարդապետներին: Տեղանատան մեծ ծաւրում կար մի երկրորդ դուռ, սարկաւագների եւ տէրտէրների համար, որոնք չեռապետին վիճակուած էին լինել վերապատուր, եւ պատիւ ունենալ նրա մոտից մեծ դռնից, երբ իրենց պատկառելի ծերունապարկներով հետզհետէ վերանային երկինք իրենց անհամբեր սպասող յաւիտենական Առաւածոյ պատասխանական տիտուլ առաջ:

Երրանցքի անկիւնից սկսում է արեւմտեան դիծը որ կանգնում է Եկեղեցւոյ ճակատում, եւ ուր պահածելի երեսներով բարձրանում էր վիհարանը, ունելի պարզ բառով Կոմիտղիոսի ոչ անվիհ բնակարանը, եւ արքեպիսկոպոսներից ամանց բնակարաններըՈմանց մեծն, ոչ ամենաուշադրաժաւալ Հռոմէական եւ ոչ մեծ Օրիատոքս եկեղեցիները համեմատաբար այնքան հարուստ են արքե-

պիսկոպոսներով որքան է՝ամենափոքր եւ ամենաաղքատ Հայ Եկեղեցին: Մեծ անգլիական Եկեղեցին ունի ընդամենն երկու արքեպիսկոպոսներ՝ Կանթերբըրիի արքեպիսկոպոսը՝ պետ Եկեղեցւոյ՝ եւ Եորկի արքեպիսկոպոսը: Ինն միլիոններոց Լոնդոնի գլխաւոր հոգեւորականն իսկ չունի արքունական տիտղոս, բայց պարզապէս, եպիսկոպոս Լոնդոնի:

Միւս կողմից, մի հայ գաղութ որ ուելի չէ քան 100 կամ150 հոգի մի Եւրոպայում, մի էջմիածնական արքեպիսկոպոսի ուսուցիկ խորհուրդի վրայ արքեպիսկոպոսական տիտղոս առացաւ էջմիածնից. թէև էջմիածինը չատ լաւ գիտէր թէ այդ կրօնաւորը եկեղեցիից խոպան քաշուած տառնեւհինգ. տարի տարում էր մի հարուստ կնոջ գրամով եւ կընոջ հետ: Երբ գրամը հատաւ, նա լքից ազքատացած կինը, եւ վնասից գրամատէտ դաշտեր Քրիստոսի հաւատացեալների մէջ: Եւ նա յիշից Քրիստոսի պատուէրը թէ ուեւէ մէկը «ոչ թէ եօթն, բայց եօթանասուն անգամ եօթն խակ մեղանչելու լինի», դարձեալ պիտի ներուի: Ուստի նա գտաւ Քրիստոսի մի փոքր հօտ որին առաջարկից թէ ինք պատրաստ էր դառնալ հովիւը հովիւ առանց վարձքի, եւ հովուել եւ արածել նրանց ձրիաբար, միայն տային նրան իրենց եկեղեցւոյ բնակարանը իւր յոգնած մարմինը հանգստացնելու գիշերները, եւ ցերեկները ապօթելու նրանց հոգւոց փրկութեան համար:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Ոչխարները երբ անասն թէ հովիւը համբոյր կամենամ էր բուռակառնոյ բանին Աստուծոյ, եւ վասն չէր ուզում նրանցից իւր հացի համար: Այս պատճառը մեծ գոհունակութեամբ ազդունուն ոչխարների մեծատուներն կոպիկ: Սակայն հովիւը լինելով ճարտարամիտ իւր ասքը եւ ցուցը չուտով ամրացնելով հարկ եղած ոչխարների եւ ոչխարհինների սրտերում, յայտարարեց Աստուծոյ բանը չի կշռացնում իւր վրայ, եւ պահանջից որ առջիկ տայն իրեն, որ սովածութիւնից չմեռնէր իրենց պժմանուր Սրբազանը: Եւ յաջողեց: Թէ վիհարանի չարքում տպրած եւ ինհետացած արքեպիսկոպոսները ունէր լաւ արտրածներ էին քան այս մէկը, որ տակաւին վայելում է կեանքը, եւ նրա հետ միասին, անաստրակոյս մնինէր իսկ անկուսակրօններին համար արդիլում հաճոյալի պատուհները, այլ միայն իրենք եւ Աստուած դիտէ:

Պատկառելի հովիւարապետներով օծհանուած այս չարքի հիւսիսային անկիւնից սկսում է, հիւսիսային դիծը ուր չարաւած կայնի միայարկանի խուցեր հովանաւոր կամարներով, եւ տեղ տեղ նրանց յետեւն կայնի երկյարկանի բնակարաններ ծառայարդ պարտէզներով: Խուցերում տպրում էին վարդապետները, եւ բնակիչներում եպիսկոպոսները, արքով կամ առանց արքի:

Մնում է անդրադառնալ եւ նշանաւոր չորրորդ դէպքը, արեւելակողմեան դէպքը, որի վրայ կանգնած էինք դոյութիւնը կորսուած է շատ վաղուց: Այդ տեղ էին զարձեալ վարդապետական խուցեր. բայց դէմառերն էր գպրատունը առաջին յարկի վրայ, ուր ուսանողները կը շարուէին աթոռացուներ, հազնում էին երկար վերարկուներ վարդապետների նման, եւ կարմիր ֆէսեր, թրքական ֆէսերի նման, եւ նրանց ուսումը անշուշտ սահմանափակ լինելու էր, որովհետեւ նրանցից էր առաջ գալիս Հայաստանի Մայր Եկեղեցւոյ վարդապետներն ու եպիսկոպոսները, որ տարածւում էին Ռուսաստանի Հայաբնակ մէջ, տպրում եւ մեռնում էին առանց ընդունակ լինելու իրենց ուղեղներից գրական պատուղներ տալու:

Այս դէպքը, յատկապէս անցնելով դարերում, նշանաւոր էր նրանով, որ վերջին անկիւնում էր գտնւում որ իւր կրակով եփում էր Սուրբ Էջմիածնի այս բնակիչների քաղցրաթոյր հացը, եւ իւր վերնասենեակի գժոխային տաքութեան մէջ, որպէս արժանաւոր բանտ, պատժել մեղաւոր վարդապետներին:

1745 թուականներում Համպարանցի մի հայ ազգ, իւր ծերունի մեծ հօր հետ նստած էր վրայ, գնաց կաթոլիկ իւր հօր մօտ, ուր նա վճռատական էր: Իւր զարմանքը մեծ էր տեսնելով որ աշխարհի վրայ կար քրիստոնեայ ազգ որ ոչ միայն ազատ էր ինքն իրեն կառավարող,

թայց մարդիկը նկել էին իրենց հետաւոր երկրից, եւ կարգով ու կանոնով կառավարում էին Հնդկաստանի աշ քրիստոնեայ երկիրն, եւ ոչ քրիստոնեան էր երկնչում մահմետականից, եւ ոչ մահմետականը համարձակում էր նախատել քրիստոնեաներին, եւ նայել նրանց վրայ, որպէս անում էին Պարսկաստանում, եւ նա նկատում էր որ մինչ պարսիկներ Համապատում հրամանատար եւ արշամարշանօք էին վարում հայերի հետ, կալիֆատում վարում էին հեզարար եւ քաղցրարար: Եւ նա սկսեց մտածել ինչո՞ւ մենք հայերս, որ քրիստոնեայ ենք անդլիացիների նման, չկենք ազատ եւ մեծ լինենք նրանց նման, եւ չունենանք մեր ազատ հայրենիքը, եւ երջանկարար կառավարութիւն, որպէս է այս անդլիականը, եւ ինչո՞ւ լինենք անարգուած հպատակներ պարսիկի եւ օսմանցւի ստրկի տակ: Երթամ Անդլիա, տեսնեմ ազգային ազատութեան եւ անկախութեան դիտութիւնը, եւ ազատեմ Հայը եւ Հայաստանը թուրքի եւ պարսկի լծատնութիւնից:

Հայրը ծիծաղեց եւ խենթի տեղ դրեց որդին, երբ նա յայտնեց նրան իւր դիտաւորութիւնը:

Առաւած չէ տուել մեր հայրերին այս ըղդացումը եւ հետաքրքրութիւնը, եւ դրա համար հայ ազգը մնում է տարիութեան մէջ· թայց եա պիտի երթամ:

Նա գաւառ մի նաւ, ուր դրամի փոխարէն

ընդունել նրա աշխատասիրութիւնը մինչեւ Լոնդոն:

Անգրամ դատախազականը իւր յուսալից մատրածապաքում անցաւ կեանքի վշալից անցքերով— եւ հասաւ յուսահատութեան սահմանին, երբ մի օր տարօրինակ դէպքի բերմունքով դուռ ընկերներն Անգլիոյ բարձրագոյն պաշտօնեաներից, Նորթհեմպըլենդի դուքսը տասը, որի ցոյց տուած հետաքրքրութեան վրայ, մեծ ոգեւորութեամբ եւ յուզիչ համառատութեամբ յայտնեց իւր Հնդկաստանից Լոնդոն գալու ժամանակը, ուր միեւն յուսահատութեան հանդիպել իւր ծրագրի իրագործման համար: Դուքսը հայ երիտասարդի պատմութեան վրայ հետացած, «Այսօրից ես առնում եմ քեզ իմ պաշտպանութեան ներքեւ, եւ կ'ոժանդակեմ քեզ որ որքիս այն ամէնը, որ կարող են օգնել քեզ ծառայելու քո հայրենիքիդ: Բայց, դնա՛, եւ գրէ՛ այն ամէն ինչ որ այժմ բնաբանագէտ ասեցիր, եւ բեր ինձ վաղն առաւօտ:

Հայ երիտասարդի գրածը այնքան զգայուն էր, եւ բարձր իւր ազգի պատմութեան ոգիով, եւ Անգլիոյ մարդկային կառավարական ձեւի վեհանձնութեամբ, որից աւելի լաւը չէր կարող գրուել: Դուքսը հետացաւ. նոյն թէ հետեւեալ օր երեկոյեան նոա կարդաց ժամանակի հռչակաւոր Տիկին Մանթէգիւի մի մեծ ընդունելութեան, ուր ի մէջ այլոց ներկայ էր Կամբրիջանդի դուքսը, Անգլիոյ թագաւորի երիտասարդ որդին:

Ես իմ հովանաւորութեան ներքեւ եմ ա-

նում այդ ազատասէրները հային— եւ իմ հաշուով կ'ուզարկեմ Վուլիչի Արսենալը, ուսանիլ զինուորական արուեստին, եւ ինչ որ հարկ է, յայտարարեց թագաւորն որդին:

1759ին, բազմաթիւ անգլիական ապստամբութեանց հետեւողութեամբ, նա եւս գնաց Գիբրալթար՝ Մեծն Ֆրեդերիկի բանակին միանալու եւ ներկայացուց նրան. «քո ազատութիւ եւ թեթեւ երիվարներով, ես անհնար եմ որ քու ճշմարիտ զինուորս ես, հապա, բարձրացիր ձիուդ վրայ, որ տեսնեմ քեզ, Հայ իշխան». Ասիկ Ֆրեդերիկ Մեծն հաճոյքով:

Այս ժամանակիս մի քանի տարիներ յետոյ, մտաւակարտուած իւր բանակներուն զրամական օժանդակութեամբ, եւ զինուած լաւագոյն հրացէններով, ճանապարհորդական կարաէզներով եւ կոմնացոյցով— «Հայ արիածախընդիրը» ճանապարհ ընկաւ երթալ ուսումնասիրել Հայ ժողովուրդը եւ Հայաստանը եւ տեսնել ինչպէս կարելի էր կազմակերպել նրա ազատութիւնը: Հասաւ Ալեքսանդրիէթ, եւ Հալէպի վրայով յառաջ տարաւ իւր ուսումնասիրութիւնը: երբեմն մէկ կամ երկու սպասաւորներով ուղեկցութեամբ, երբեմն միայնակ, տեսաւ Հայ գիւղեր եւ քաղաքներ. եւ հասաւ Էջմիածին, եւ մինչ անգլիական հրացանը ուսին եւ երկու կարճ հրացէններ կուրծքիս վայր ամրացած զօսիկի վրայ, եւ նստած իւր ձիու վրայ, տպաւորեցին ձեւավարած էր Վանքի ազարակի աւազով,

արևու վարպապետանոց սկսեցին արդէն հաշտ չներին ուելի եւս պրպտել ու քշել այդ օտարականի վրայ, այն տատիճան որ չունեցը քաչալերուած վարպապետանոցի պրպտող ձայներից, արամադրուած էին պատառ պատառ անել ձերին եւ ձեռաբերին, որ անանելով որ չէր կարողանում համոզել իւր երկաւանի եւ քառասանի հակառակորդներին, ուղղից հրաշէնը, ապատնից մէկին, եւ վերուածից մեսը։

Այս արիւնհեղութեան հետեւանքը այն եղաւ, որ Հայոսաստան եւ Հայ ժողովուրդ ազատելու ձգտող Համատասանցին ձերբակալուելով տարուեց եւ կոխուեց տաք վուսի վերնատունակ պժոխքին բանալը, ուր նա գտաւ նաեւ մի բանտարկեալ վարպապետ,, եւ հարցրեց նրան թէ ի՞նչ էր իւր յանցանքը, քանի որ Հայր Սուրբ էր։

«Դու ինչ հարց արա օտարական. քու յանցանքը մարդատանութիւնից ուելի է. Սուրբ Աթոռի չունն ես ապանել, եւ քեզ վերութիւն չկայ այս պժոխքից»։

— Հայր սուրբ, ես քեզ չհարցրի իմ յանցանքի մասին, բայց քո յանցանքի մասին։ Քո յանցանքը երեւի այնքան ամօթալի է, որ ամաչում ես ասել։ Հոգ մի անիր, այդ արժանիքիդ համար, մի օր տատիճանդ կը բարձրանայ, եւ կը գառնաս եպիսկոպոս»։

Կաթողիկոսը, Սիմոն Երեւանցի, Մշոյ Սուրբ Կարապետ վանքի վանահայրից դրու-

թեամբ իմացել էր այս խորհրդաւոր հայկ ուղեւորութեան գաղտնիքը, չան ապառնութեան, եւ չնապաղելի բանաբերութեան մասին— եւ հետեւեալ օր, հրամայեց որ բերէին նրան իւր նկարչութեան, եւ ձեռքը դնելով ծնրաչոք լինապաղելի գլխի վրայ, սկսեց երկար բարեկ օրհնել նրան: Նկարչ վարպապետներն եւ եպիսկոպոսները գայթակղուելով կաթողիկոսի արարքի վրայ, ասեցին.

— Վեհափառ Տէր, էդ մարդն է Սուրբ Աթոռի չունը ապառնող անպիտանը, եւ անարժան է ձեր օրհնութեան:

— Ախոռս որ ձեր ամենիդ չէ ապառնել, ասեց կաթողիկոսը յանդիմանութեամբ. եւ այդ էր նրա համարմունքը իւր Մայր Աթոռի հոգեւորականների մասին:

Էմին Յովսէփեան, կամ Զոլեֆ Էմին որ զբաղեց իւր այս կենսագրութիւնը, եւ Զօրամարտ կարնակ անպիտացին հրատարակեց Լանդոնում վեց հարիւր էջերով մի գրքում, մինչ Զոլեֆ ասկաւարն ողջ էր:

Երեւանցի կաթողիկոսի այս նշանակելի խօսքից առնուազն հարիւր երեսուն եւ վեց տարի յետոյ, Միքաէլ Խրիմեան Հայրիկն Հայոց, Վանեցի կաթողիկոսը, այսպիսի արհեստաշատ զգացումն չունէր սուրբ մեռոնով օծուած եւ արարողուած էջմիածնական վարդապետների եւ եպիսկոպոսների համար, բայց առանց նրանց ապառնութիւը վտանգելու, եւ իւր

պատահար ունէր իւր աւելի նրբացած հոգեւորականներէն վրայ, քան ինչ որ ունէր Սիմոն Կաթողիկոս իւր աւելի մութ ժամանակի կիսակիրթ կղերականներէն մասին:

Պրիմեան Հայրիկին ևս հանդիպում էի 1886ին եւ 1888ին երբ վանից ելաւ Կ. Պոլիս եւ յաճախ տեսնում էի եւ լաւ ծանօթներ էինք միմեանց: Երբ վանից ելաւ Կ. Պոլիս, եւ այցելից մեր «Արեւելք» թերթի խմբագրատունը, հարցրեց «Ո՞վ է այդ Տօնապետեանը»: Ապա պատասխանեց ինձ ասելով. «Կարդում եմ քո Տարօնի ժողովրդական վէպերիդ թարգմանութիւնները, ինչպէս կը տեսնում շատ խմորուն ուսուց է, եթանի թէ այդպէս լինէին մեր դասարկարան դրօշները: Շատ ապրես, թարգմանէ նորա վէպերիդը, որ մեր ժողովուրդը կարդայ»:

Պրիմեան սիրեց ինձ, որովհետեւ նա սիրեց Տարօնցի գրիչը, որ ցոյն վայր մի կատարեալ անծանօթ էր իրեն: Եւ այս էր պատճառը, որ 1903ին երբ մի երկու շաբաթ էջմիածնում էի, սիրում էր որ ամէն օր այցելեմ իրեն, եւ յաճախում էր իւր մոտ գալանիքներով, վասնզի նորա գաղափարներով իւր վարդապետների եւ եպիսկոպոսների մասին:

«Մովսէսեան օրեր, ասում էր նա, շատ չեն յաճախել եկեղեցի ժամերգութեան: Գնել, ուսել, երթալ չեն վրայ պատել: Անուններ միայն կատարեալ են: Ամուսնացած չեն, բայց ա-

մուանացածնելի նման կանացի ընկերութիւնը կը վայելեն, կիներ կը բերեն իրենց խուցերը, եւ կիներ ուներն Վաղարշապատի մէջ։ Եթէ կարզապարկ անելուն գայ, դրեթէ ամէնն էլ պատրաստ են կարզապարկ լինելու, եւ էջմիածնը կը մնայ առանց կղերականի։ Մէջերնին մեայն մէկ ճշմարիտ մարդ կայ, որ դէթ ճշմարիտ գործ է արած եւ անում է, պնդելով եւ ի վեր հանելով Զուարթնոց եկեղեցիի աւերակները, եւ ջրով եւ կանաչով մշակելով չքնաղակայ վայրենի հողերը։ բայց այս վարպապետն էլ հայհոյարան է։ Մի անգամ անտրժան վանականներից ամանք եկան ինձ եւ ասեցին թէ Խաչիկ վարպապետը հայհոյիչ էր, եւ խնդրեցին որ կանչէի եւ յանդիմանէի նրան։ Կանչեցի։

— Խաչիկ վարպապետ, ինչ դէմ գանգատ կայ թէ հայհոյարան լեզու ես գործածում։

— Վնասատու ակը, էդ որ շանորդիներն են որ էդպէս գանգատել են իմ դէմ։

— Տօ, արդէն հասատատում ես նրանց գանգատը։

— Այնուամենայնիւ, Հայրիկ Ջան, եթէ շանորդիներ չլինէին, չէին գայ ձեզի։ Բայց այս, ես կարող եմ ցոյց տալ Ձեզ հէն կոնպակներ, որոց մէջ պիտի տեսնէք՝ որ մեր հէն կաթոլիկոսներից ամանք էլ ինձ նման հայհոյարան բառեր են գործածել իրենց կոնպակներում։ («Կոնպակները բերաւ, Խաչիկ հետամուտ էր փնտռել հէն ձեռագրեր եւ կոնպակներ.

խոհեցաւ, եւ ծիծաղելով ինչ ասել որ էր-թար: Մեզաւոր եկեղեցականներն մէջ ամենապահաս մեզաւորն էր»:

Այսպէս էին մեծ Հայրիկի խօսքերը իրենց յատուկ ոճով, եւ հարազատ խտասեռներով:

Այս մեծ ժողովրդապետը մարդը, կարելի է ասել թէ 1895ից, եւ մանաւանդ Բերլինի 1878ի վեհաժողովից յետոյ մինչեւ 1907, երբ մեռաւ, արդէն կաթողիկոս Ամենայն Հայոց, եղաւ այնպէս ժողովրդական բոլոր Հայութեան մէջ, որ ոչ մի աշխարհական եւ եկեղեցական Հայ մարդ Հայ ազգի պատմութեան սկզբից ի վեր չէ եղել նրա հաւասարը: Եւ չիմաց մի Հայ ուսեալ եւ նոյնիսկ անուս, որ չիմանար Խրիմեան անունը, եւ չանուանէր Խրիմեան Հայրիկ, եւ Հայրիկ Հայոց:

Հայ ժողովրդից երեսուն տարիներ պաշտուած այս ազնիւ եւ մարդուր եկեղեցականի մահից յետոյ, մի օր Լանդոնում տեսայ էջմիածնի մեծարան Մեսրոպ վարդապետը, ինքն իրեն մտիւսուրս անուանող, համալսարանի դասախոսութեան հետեւած Գերմանիայում: Եւ ես տեսայ նրան իր երկրագի Աբրահամ Ղուկասովի գործատեղիում: Սա այն առաստաձեան նաւթատէրն էր, որի վրայ օդապին յոյսեր դրած Գաբրիելն վարդապետ, իր աշխատութիւնը ձրատած, 1914ին մեկնեց Պետերբուրգ նրան տեսնելու, եւ հրատարակութեան գրամբ գերպատած մեկնել Բերլին, այնտեղից Հայութեան

վրայ սխալու. եւ զբչի ընդօրինակութեանց յոյսերը: Մեծագոյ վարպետներն առաջին անգամ սեանկ էի էջմիածնում 1903ին, ձայնով համակրելի, կերպարանքով ազնիւ պաժանակերպ, ի մէջ այլոց խօսակցութիւնը բնականապէս կառաւրուեց ապրանքին գործելոյ վրայ, զի նաւթատէրը նոյնքան էր ապրատէր լեզուով, որքան էր գրամատէր գործով, եւ աշ նաւագ նաեւ սիրում էր ինձ:

Խօսակցութիւնը գործառ Հանդուցեալ Աբրիամեան կաթողիկոսի վրայ, եւ գործանքս մեծ եղաւ երբ այս վարպետը սկսաւ խօսիլ գիտելով եւ անարգանքով բառերով դէպ զրկել, Աբրիամեանի կաթողիկոսութիւնը արդէն անարժան եւ քանգոյ եւ մեծն արատներ չինոյ, եւ այլն:

Այս պարագաները շատ ծանր ազդեց իմ վրայ, մի անձի մասին որին Հանդէպ այնքան մեծ յարգանք ունէի ես, եւ որի նմանը ուրիշ ունէ Հայ չէր վայելել ընդհանուր Հայութենէ, եւ յաւուրս Հարցրի.

— Եթէ Աբրիամեան այդքան անարժան կաթողիկոս եղաւ, ո՞վ է արդեօք եղել արժանաւոր կաթողիկոս:

— Այո, Գէորգ կաթողիկոս, որ ձեմարանը չինեց, եւ էջմիածնի միաբանութեան, եւ Հայ ժողովրդի յարգանքը վայելից:

— Հայր Սուրբ, դուք կամ ասում էք ինչ որ չգիտէք, կամ այլաբանում էք ինչ որ գիտէք:

Ես փոքր ատեն էի Գէորգ կաթողիկոս հիմնադիրը ազգ էր։ Ամէն տարի նրա անուան տօնի օրը մենք նրա տանները, մօտ երկու հարիւր, տարում էինք Վեհարան։ կարգում չարում բարձր գահի վրայ բազմած կաթողիկոսի հանդէպ, որի սպիտակաթիկ մազերով խառնուած ահւ մօրուքը եւ պատկառելի երեսը յարգանք եւ ակր էին ներշնչում մեզ։ Նա նախ ողջունում էր մեզ օրհնութեամբ, եւ այնուհետեւ աշակերտներից մէկը մի պատրաստուած ճառ էր կարդում, փառաբանելով նրան, եւ յայտնելով նրան մեր երախտապարտութիւնը, ի վերջոյ երգելով նրան նուիրուած երգը։

Այսպիսի հանդիսաւորութիւններից մէկի ժամանակ նկատեցինք կաթողիկոսին առանձին յուզուած, արտասուքը սկսաւ կաթիլ աչքերից եւ դրնթէ հեկեկալից ձայնով ասեց.

— Օրհնեալ լինէք, զաւակներս։ Դուք էք իմ յոյսը եւ մխիթարութիւնը. դուք էք որ պիտի ցոյց տաք թէ եւ այնպէս անարժան մէկը չեմ որ վառարանն դիս անարգալից նախատինքներով։

Կաթողիկոսի արտասուալից աչքերը եւ վրդովուած խօսքերը վրդովեցին մեր սրտերը, եւ մեզանից չատերի աչքերը լցուեցան արտասուքով։ Այս 1879ին կամ 1880ին էր։ Յետոյ մենք կարոտացանք հասկանալ թէ վառարանութիւնը եւ անարգանքը բղխում էին էջմիածնի Սուրբ Հայրերի բերաններից, եւ թէ Թիֆլի-

սի «Մշակ» Թերթի խմբագիրը Գրիգոր Արծրունի, որ իւր բարեկամ բժիշկ Քոչարեանի կինը զլխից հանելով, մխանին էր ապրում, կաթողիկոսից պահանջից կնոջ ամուսնալուծութիւնը օրինաւոր ամուսնից եւ ամուսնանալը իր հետ, նա, Արծրունի, պայքարած այս մեղմութիւնից, ահագին մի անարգալից անուանարկութիւն իւր Թերթի էջերում այդ կաթողիկոսի դէմ, որ անարժան վարմունք էր ունէ արժանաւոր գրչի եւ ուղիղ հրապարակագրի համար, այն էլ եւս Ամենայն Հայոց կաթողիկոսի դէմ, որ չէը կարող զիջանել եւ քաղաքային դատ բանալ անուանարկիչի դէմ: Եւ երբ մնում վճռարեկ կաթողիկոսը, անմիջապէս վանքի Սուրբ Հայրերն կամ Սրբազաններըը մտան կաթողիկոսարանը դրաւեցին ամէն ինչ, դրաւեցին նաեւ կաթողիկոսի իւր հետ բերած քարտուղար եւ խորհրդական վահրամ եպիսկոպոսի բոլոր գոյքերը, արտաքսեցին նրան վանահարանից եւ բանտարկեցին նրան փոքր մի խուցի մէջ բաւական ժամանակ, սաստիկանութեան հսկողութեան յանձնելով: Ներանք վարուեցան, որպէս թէ մանում էին մի գող աուն՝ բանել գողացած բաները, եւ բանել աւազակներից մէկը: Ներանց դրարանութիւնները երկար ժամանակից ի վեր, այն էր թէ կաթողիկոսը չատ վազ էր դիպել, եւ այդ գէղերը վահրամ եպիսկոպոսի ձօտ էին եւ պիտի վախցնէր ի Կ. Պոլիս: Դիշատիչ թուշուններըը աչինչ գտան մնացած գիակի չարչը, բացի մի

քանի հարիւր ռուբլի կամ այլպիսի աննշան մի դումար նրա անձնական քարտուղար եւ խորհրդականի մօտ, որ ասան եւ չորս տարի այդ պերճի մէջ էր, եւ էջմիածնի միաբանները վարձատրեցին նրան որպէս պոլ, բանտարկութեամբ վանքի մէջ: Ահա, այսպէս էր Գէորգ կաթողիկոսը, յարգուած ձեր միաբանութենից, երբ նա տակաւին ողջ էր, եւ այսպէս յարգուեց նա երբ իւր դիակը տակաւին Վեհարանի մէջ էր: Նոյնպէս եւ Մրմեան Ներսէսեան դարձաւ անտրտունջներէն նոյն եւ համաձայնական ոչ ունեցող աշխարհական եւ եկեղեցական անձնաւորութիւններից, սկսեալ այն օրից որ նա տեսաւ թէ՝ Աբծրուն եւ նրա մշակականները, որ նրա ամենամօտիկն եւ ամենամիձ փառաբանողներն էին, ձգտում էին իւր կաթողիկոսական պաշտօնն եւ պարտականութիւնը ծառայեցնել նրանց կուսակցութեան գծուծ շահերին: Նրանք չէին կարող ոտանել նրա ժողովրդական մեծ պարբերը, բայց երբ նա մեռաւ նրա եղբօրորդի Յովհ. Մրմեան գարձաւ առարկայ անտրտունջի, թէ կողոպտեց եւ դողացաւ կաթողիկոսի դիպած փողերը: Հայր Սուրբ, եթէ Աստուած անգամ իջնէ երկնքից Քրիստոսի ընկերութեամբ, եւ բնտրուի կաթողիկոս Ամենայն Հայոց, նրան էլ էջմիածնի միաբանութիւնը եւ նրանց աշխարհական մտաւիջնները, պիտի գանեն նրան անարժան, եւ էջմիածինը քանդող, եւ նրա աջակից Քրիստոսին էլ որպէս

հարուստ հայերի իրրեւ թաչահամբոյր Աստուծոյ տուած փոպերը զոպացող։

Ընդհառաւած վիճաբանութեամբ, այս խօսքերն էին որ իրենց հունձամբ արտայայտեցի վարդապետին, որ թէեւ էջմիածնի ամենաբուռամեայ եկեղեցականներից մէկն էր, ոչ ամենաբուռամեայն, եւ սակայն Մեսրոպի միտքը անընդունակ էր խոստովանել եւ նրա աչքերը անյօժար տեսնել՝ թէ Երեմեան կաթողիկոս կարող գնել տուաւ թանգարանը, անտարակոյս վանքերից հաւաքել տուաւ հին հայ ձեռագրերը էջմիածնի մէջ, չինել տուաւ քարաշէն հայրենասպառ հիւրանոցը էջմիածին եկող այցելուների համար, Նէրսիսեան լճին ի տես, մինչ մինչեւ այն ժամանակ չկար մարդավարի բնակավայր այդպիսի նպատակի համար, ոչ էջմիածնում եւ ոչ իսկ Վաղարշապատում։ Աբեւեալ գծի խորհուլ չէնքերը քանդել տալով նոր եւ քարաշէն եկեղեցիների բնակարաններ չինել տուաւ այնպիսի ժամանակակից պատշաճ անեւահնելով, որպիսիք էջմիածին երբէք չէր ունեցել, ի յարգանս նրա Աւան Իզմրաշեան նպատակ մի նոր մատենադարանի չինութեան, որի գործը նուիրատուն վատահեց իւր դատակից այս վարդապետին որա խնդրանքի վրայ, եւ սա ծրագրից եւ չինել տուաւ պէսպէս յարմարել իւր անձնական բնակութեան համար, քան ձեռագրերի անվտանգ եւ անվնաս բնակութեան համար. հիմունքը եւ պատերը

այնպէս անճարտարապետական համութեամբ էին հաստատուած որ պատերը խոնաւութիւն էին առնում, եւ ցածի պահարաններուի ձեռագրերը գոնուեցան փտուած։ Դարձեալ մի այլ հարուստ հայ, Ալէքսանդր Մանթաշեան, ի յարգանս Աբրահամեանի համաձայնեց կառուցանել արժանաւոր վէհարան վանքի արեւմտեան պարսպից դուրս, թէեւ այդ մեծ քարեղէն շէնքը բաղդ չունեցաւ լինել կաթուղիկոսական պատառ։ Դարձեալ, Աբրահամ լիովին նորոգել տուաւ Էջմիածին Մայր Եկեղեցւոյ ներքին կրճատուած եւ մաշուած կամարները, ուր տեղ տեղ պատերի վրայ անտուեստօրէն նկարուած ճգնաւորներով եւ նմանօրինակ տարբերով պատկերներ իրենց խոժոռ եւ ծամածուռ աչքերով ահ ու սարսափ էին ազդում մեր վրայ։ Կարծեմ Աբրահամ պատուց մանուկներին այդ սոսկալիկ նկարները չտեսնելու բաղդից։ Եւ ի վերջոյ եթէ Աբրահամ մղուեց մտածել Էջմիածնի վարդապետների արտաքնոցների վրայ, Գևորգեան դպրոցում ապրած վարդապետը առաջինը պիտի լինէր դնահատել եւ երախտապարտ լինել իւր Հայրապետին, որ աշխատեց լսել կաթուղիկոսին պատուել նրանց իրենց պատուս եւ զարշահոտ արտաքնոցներից, եւ տալ նրանց փոքր ինչ առողջապահական եւ անպղտելի արտաքնոցներ։ Բայց Գրիգորի այս երդուեալ եւ օծեալ պաշտօնեայի փափաքն էր նախատել իւր Եկեղեցւոյ դիւրաւորին, ուստի եւ չէր կարող տեղնել ոչ

նրա հոգւոյ մեծութիւնը, եւ ոչ նրա իրական գործունէութեան պատճառները: Եւ նրա նման ուրիշներ եւս կային Էջմիածնի վեհարանական չարքում: Եւ այսպիսինները պակաս չէին սկսեալ Սիմեոն Կաթողիկոսի օրերից, եթէ ոչ շատ եւ առաջ ժամանակներից:

Ես շատ փոքր էի, բայց կարող էի լսել եւ մտքիս մէջ պահել եւ յիշել յաճախ. եւ յիշում եմ մեծերի խօսակցութիւն թէ՝ մի օր-մի վարպապետի թէ եպիսկոպոսի ծառան վրան ծածկուած քթոցով լի պատուհար կամ մի այլ ինչ էր առնում իւր մեծաւոր Սուրբ Հայրի խուցը, երբ դէս չհասած նրա, քթոցի պարանը պոկուեց, քթոցը ընկաւ դետին, եւ մէջի պատուհանները դուրս թափուեցան: Պատուհանները վերանալ էին մի երեսատարփ կնոջ, որ ցաւից եւ ամօթից չդիտէր ինչ անել: Խօսողը ասում էր թէ իւր եսկ աչքերով տեսաւ տեսարանը:

Այս քթոցային ցուցահանդէսը եթէ իրականութիւն էր, եւ ոչ կատակ, այնուամենայնիւ ցոյց էր տալիս Էջմիածնի հոգեւորական հոգեկան ճգտումները, եւ հատկանշութիւնը թէ այդ մի հին սովորութիւն էր լինելու, որով եւայլ պղչիկները նեղմտւում էին Գրիգոր Լուսաւորչի վարդապետ մէջ կաթ տալ եւ կաթ առնել: Այդ պղերգա-դատաճական դէպքից յետոյ բնական է այս սովորութիւնը անկարելի էր շարունակել: Ամէն քթոց որ Վաղարշապա-

ակից տարուէր էջմիածին, դրսի աշխարհականները, եւ նրան տուրք հայրերը պիտի դուշակէին նրա պարտաւորութեան ինչ լինելը: Ասած եւ եղած արժանի տեսան Հռոմէական Եկեղեցւոյ կրօնաւորները բարի եւ անմեռս սովորութիւնը, այն է ունենալ քոյրեր, մօրաքոյրեր, եղբայրակիներ եւ այցելութիւն տալ եւ ընդունել, որով ոչ իրենց հոգեւոր պետը կարող էր տատպել, եւ ոչ ատելիանութեան պետը կարող էր խառնուել:

⁂

Արարատից հրաշափառ Ջուրը բերող վերայշնալ երկու վարպետներն վերադարձին տատում էին ժողովրդի հետ նաեւ ամրողջ մխարանութիւնը: Վանքի հիւսիսակողմեան պարսպից դուրս, Վանքը եւ Վաղարշապատը միմեանցից բաժանող հրապարակի վրայ, վանականները իրենց սրածայր գլխարկներով, իրենց գոյնզգոյն եւ փոլփոլուն ծածկոցներով տարածուած մինչեւ իրենց տաքերը, երեւցան ինձ ասելի բարձր արարածներ, քան այն մարդկային արարածները որ տեսել էի մինչեւ այն ժամանակ: Ասելի նորածիլ մօրուքներով կրում էին կարմիր Փէսեր իրենց գլուխներում, եւ մարմիններն ծածկուած սպիտակ շապիկներով. խաչ խաչվարներ եւ այլ խորհրդաւոր զրօշներ բռնած էին բարձր իրենց ձեռներով եւ

յետ եւ յառաջ մղուող վտանգներուն օդի մէջ ստրածում էին խանդի սխտիժի հատը: Երկու երիտասարդ վեպասուրներուն ձիերից իջնելով եւ իրարանչիւրը երկիւղածօրէն բարձր բանած սրծաթի կժածեւ անօթներ լի Մասեաց սառրատից անձամբ բերած Սուրբ Յակոբի ապրիւրի ջրով, յառաջացան ուր Թամիօրը սպասում էր նրանց: Եւ իմ կողքին կարծեցի լսել մի կնոջ ձայն՝ «Մնիր ջահելնեը, դիտեն որ էպուց պիտի մեռնեն. ով գնում է Սուրբ Յակոբի ջուր է բերում, մէկէյ օրը մեռնում է· էդուց անձրեւ կը գայ եւ էդուց էլ էս խեղճերը անձրեւի հետ կը վերջանան»: Ես սիրտ ինամբ նայեցի այդ երիտասի վրայ, եւ մեղքացայ եւ չարունակեցի նայիլ, մինչ այդ հանդիսաւոր տեսարանի մէջ չարունակում էր բարձրաձայն երկիւղածութիւն ամէն բերաններից, եւ անընդհատապես ընթերցումներ տեսարանից: Նախորդ օրերի ուղեւորները էջմիածնի Տաճարից ուղղակի ան Քրիստոս եւ Աստուած, եւ Աստուածածնին եւ բոլոր սուրբերը չէին օգնել որ երիտասարդ անձրեւ իջնէր երկիր արտերն եւ այգիները, եւ վերջ տար երաշտին, եւ այժմ սուրբ հայրերը երկնց այս ժամատացութիւնամբ, եւ պիտարաց երիտահայեաց ազօթող ժողովուրդը երկնց յոյսերը եւ հաւատքը ուղղել էին եւ դրել էին Սուրբ Յակոբի ապրիւրից բերուած սուրբ ջրի վրայ որ երիտ անօթներով բարձրացած երեւում էր երիտ աստուածամատոյ վարդապետանե-

բի ձեռնարկը արեւմուտք մօտ էր, եւ ինձ թուում էր թէ երկինքը սկսել էր ամպոռալ, բայց չեմ յիշում թէ այդ դիշեր կամ մեւս օր անձրեւ եկաւ կամ ոչ: Մահարի կրօնական արարողութիւնը այդ օրից իւր բազմաճիւղ արմատը անկից իմ սրտում, եւ տակաւին մընում է խորամատ, թէեւ զարձած անհատուտոյտ նրա արժէքին եւ արժանիքին: Եւ այդ օրից արարողութիւնների կրօնաւարները քուեցան ինձ լինել դեմարդկային, Աստուծոյ ներկայացուցիչները երկրի վրայ, պահելու մեզ արբութեան մէջ: Բայց այժմ ես հաւատում եմ թէ մարդիկ կարող են նաւտք զայթակղուել, եւ ունէի մաքուր, արդար ուղիղ կեանք առնել առանց նրանց դոյութեան:

Առաջին անգամ որ արդէն ընդունակ եղայ սահուն կարդալ, ինձ վիճակուեց ուրիշ երկու փոքր ազանների հետ չափիկ հագնել եւ վազարշապատի եկեղեցւոյ սեղանի վրայ կանգնած եւ թուղթ բռնած, եւ կոկորդս թոյլատրած բարձրաձայն երգելով կարդալ Երից Մանկանց փառաբանութեան երգը: Սեղբակ, Մխաք, Աբեթնագով: Ես այս երեքից ո՞ր մէկին էի նեմկայացնում չեմ մոռացում:

Բայց զիտէի թէ Նաբուզոդոնոսոր զազան թագաւորը Բաբելոնի աշտարակի չափ բարձր մի վայրի զէզ չինել տալով, եւ վառելով, բոցերը բարձրանում էին մինչեւ ամպերը:

Հինգ վեց ամէհի մարդիկ բանելով այս մանուկներին իրենց առնելիք, եւ կանգնած հետու, չպառեցին նրանց կրակի մանչող բոցերի մէջ: Եւ մինչ անում էին այսպէս, նրանց մարմիններին մաները հալուեցան մոմի պէս, եւ նրանց ոսկորները այրուեցան եւ փոշիացան, եւ նրանց հետքը չմնաց: Իսկ երեք մանուկներ վէր կենալով իրենց ընկած տեղերից, կանգնեցին կարպաս հրեղէն բոցերի մէջ: Ոչ նրանց զգեստ մազերն էին այրուում, ոչ աչքերի արտեւանունքները, ոչ բնհեղեայ պատմուճանները, եւ ոչ կարմիր կաշիկ կօշիկները: Եւ այնպէս ուրախ եւ զուարթ կանգնած էին, որպէս թէ գտնուում էին մի զարնանային ծաղկազարդ պարտէզի մէջ, եւ երգում էին Աստուծոյ փառքը եւ արարքները այնպիսի համարձակութեամբ, որպէս թէ գիտէին Աստուծոյ ինքնութիւնն եւ ամենազօրութիւնն, որպէս Մովսէս, եւ Ահարոն եւ Յեսու:

Այն օրերում երբ պարսամխա փոքր արքայ էր, երկար մինչ գետին տարածուղ եւ յայնատարած թեւերով վերարկուներին մէջ ամփոփուած երկարամորուք մարդիկ տեսնում էին իմ աչքերում, որպէս խորհրդաւոր էակներ, բարձր սովորական մարդերից: Պատկառանքով կանգ էի առնում, երբ պատահում էի նրանց: Նրանք երկարում էին իրենց մաքուր թէ պատառ ձեռնները իմ բերանին որ համբուրէի, յետոյ լայնատարած մատներով դնում էին մերկ եւ

ծանկաւած պլխիս վրայ, եւ ասում էին «Աստուած օրհնէ քեզ, բալէս»: Այս խօսքերը խոր ապրեցութիւն էին անում իմ վրայ, եւ դրեթէ ամբողջ օր դրում էի մի անբացատրելի թեթեւութիւն եւ երջանկութիւն: Մինչեւ այդ ժամանակ երեւակայում էի թէ կրօնի այդ խորհրդաւոր հանգերը ի բնէ ծնուած էին, ինչպէս որ երեւում էին ինձ, նոյն վերաբերմունքով, նոյն մօտքնելով եւ նոյն հասակինելով:

Հասաւ մի ժամանակ որ հասկացայ թէ այս պերճանական կամ անասնօրական հանգերը բոլոր մեւս անասուն մարդոց նման երենք եւս սովրական մարդիկ էին, եւ թէ տարբերութիւնը մեզի նրանց դրնասանելի ձեւերի մէջ էր:

Մէյդանի բազարի հետաւոր ծէ կողմի վրայ խառատանելի, այսինքն տաղտկագործնելի խանութներ էին, որանցից մէկի անունն էր Խառատ Վարդան: Թէ նա ի՞նչ կահկարասիներ էր շինում, կամ կարող էր շինել չեմ յիշում, միայն այն եմ լաւ մտաբերում թէ նա շինում էր սերան եւ կոկիկ հոլեր որ մեր մանկական ամենագուարճալի խաղերից մէկն էին:

Արեւմտեան մէյդանը, այն է դէպի վանքը ուղղուղ երանգի եւ բազարի պարապի միջեւ տարածութիւնը, ամենահետաքրքրական մասն էր Աբշարունեաց թագաւորութեան երեմնի վեհաշէն մայրաքաղաքի, այդ միջոցին վերապրելի դիւղի մանուկների համար:

Ամառնային ամիսներում, վաղ առաւօ-

նան, սայլերով, էշերով, ջորիներով եւ ուղտերով բեռներ իրենց բերաններըը բաց ապած, դառարկում էին կայտառ ախոքերով եւ գեղապարփ պոյներով բազմատեսակ եւ բազմաձեւ ձմերուկներ եւ սեխեր վանքի եւ բազարի պարիսպներըի երկայնութեամբ, եւ ամէն մի սեփականութեան, բաժանուած իրարուց փոքրիկ տարածութեամբ: Եւ ամէն մի սեփականատէր իրենց պչակիցներըի հետ կանգնած, վորերը դուրս ցցած, եւ երկու ձեռները իրար չօշափելով, եւ բերաններըը լայնարաց գոչում էին արդէն հաւաքուած մեծ ու վոքր բազմութեան, ճարտասանօրէն վաճառականելով իրենց գեղաւեսիլ ապրանքներըը: Եւ շատ ապրներ սկրում էին այս առաւօտեան ախորանը իրենց հօր եւ կամ մեծ եղբօր հետ սկսի եւ ձմերուկ գրկած, եւ չամամներ դրպանած, վերադառնում էին տուն գործոց գնալուց առաջ եւ ուտելու ախորժակը պահելով գործոցից վերադարձին: Բայց այս զարդարկեղեւ բոլորաձեւ եւ ձուաձեւ հրապուրիչ պատկերըի հետաքրքրող այցելուներըը անպակաս էին ամբողջ օրը, շատեր ի հարկէ գնառարկութեամբ գրպանի, ապքառութիւնից սակայն էին յագենալ նայելով նրանց հրապուրիչ կեղեւներին: Այցախոնները սակաւ չէին Աբշահունեաց անշքացնալ մայրաքաղաքում:

Բայց ձմերուկներըի եւ սեխերըի այս ցուցահանդէսներըի ամենահետաքրքրական ժամերն էին երբ սեղ սեղ երկու ախոյեաններ իրենց

արծաթյա պատը կաչեայ գօտիներից չղթայակախ եւ անճաշակ կերպ ոսկեթել պատեանների մէջ անպատրաստ մխիթարի դանակներով պինուած մրցումի էին գալիս միմեանց դէմ: Մէկը նախ մատով խթում էր մի ձմերուկ. ապա առնելով երկու ափերի մէջ, մօտեցնում էր ձախ ականջին, եւ միզմօրէն անցում էր, եւ յայտնում էր թէ ձմերուկի միջուկը արդեօք կարմիր էր եւ ինչ տեսակի կարմիր, եւ ինչ ատամնաձան քաղցր: Նմանապէս արդեօք դեղին էր, եւ որ տատամնաձան եւ տեսակի դեղին: Եթէ մրցակցի արտայայտութիւնը տարբեր էր, նա ինքնագոհ հպարտութեամբ զարձնում էր իր դանակը եւ ճեղքում էր ձմերուկը վերից վայր, եւ կիսովին բաց անում լիովին տեսանելի բաղութեամբ, այնպէս որ իր մրցակիցը եւ ուրիշ մասնագէտներ յայտնէին իրենց կարծիքները: Կարգնատը վճռում էր պատմատարուած դրուը: Եւ այսպէս խաղը շարունակում էր երեմն ժամերով, եւ կտրուած ձմերուկները եւ սեխերը ծախւում էին աժանագոյն գներով, եւ գնորդը գոհ էր ապահով լինելով թէ իր գնածը խակ եւ անհամ տեսակից չէին:

Տարայ մի եղանակին, որն չեմ յիշում, ամէն շարաթ կամ կիրակի կէս օրերից յետոյ ձիարշաւ էր տեղի ունենում վանքի հին արեւմտահայ պարիսպի երկայնքով, որ սկսում էր մէկ կողմից մինչեւ Ներսէսեան լճի ստորոտը: Ամէն ձիաւոր ձեռքում պարզ փայտից երկու թէ

երեք մեթր երկայն սրածայր նիզակներ: Ձիաբաշւի կամ ջրխոի սկզբում երեք կամ չորս պոյդ ձիաւորներ կանգնած մէկ գծի վրայ, միաժամանակ սկսում էին սրչաբը, եւ յետ մնացած ձիաւորը աշխատում էր իւր վայրի նիզակը այնպէս նետել եւ նշան առնել որ հարուածէր իւր յառաջնեթաց մրցակցին, եւ սա առաձգականօրէն նստած իւր նժոյգի վրայ մշտաշարժ մարմնով եւ առնելով ուրուբի նման երբեմն թեքուած գլուխը եւ աչքերը սրում էր դէպի յառաջ, եւ երբեմն իւր մարմնի կէսով դառնում էր յետ եւ նայում թէ հալածողը որքան հեռու էր իրենից, եւ սրտով մարմնով թեքւում էր իւր ձիի ոչ կամ ձախ կողերի վրայ, եւ նոյն իսկ դրեթէ ձիի փորի տակ, որպէսզի իւր թշնամիի նիզակի հարուածը օդի միջով անցնէր ընդունայն:

Վաղարշապատացիները ահագին բազմութեամբ ձիաբշւի երկու կողմերում շարուած, մէջ ընդ մէջ գոռում եւ գոչում եւ ծափահարում էին ցնծագին ամէն յաղթանակի համար:

Այս սովորութիւնը յայտնապէս այս հին մարտաքաղաքի մնացած վարքերից միակ ողջ մնացած վարքն էր: Մի սովորութիւն որ չգիտենք թէ գոյութիւն ունէր Հայաստանի այլ քաղաքներում:

Երկրաժան հրապարակները, կամ մէյդաններըն երկայացնում էին Վաղարշապատ-

ցինելի թատրոնը, կրկէսը, խաղատունը: Աբեւելեան բաժնում մեծ ու փոքր տպաւներ չափաւելով եւ ապրկահարելով խաղում էին դնգակ, վէդ, գերի եւ այլ տեսակի խաղեր: Արեւմտեան բաժնում, եղանակի համաձայն, երբեմն երեւում էին լաթախաղացներ, բեաւդրազներ, որ իրենց երեսուն եւ աւելի մեթր երկայն եւ սմենահասատ չուաններով երկաթում գետնի վրայ եւ երկու ծայրերը ապահովապէս ամրացնում էին գետնի մէջ, եւ իւրաքանչիւր կէտից մօտ վեցական մեթր հեռու դէպի նեղս անկում էին երկու զօրաւոր ձողեր իրար հետ խաչաձեւուած եւ 10—12 սաք բարձր, եւ նրանց վրայով անց էին կացնում հատատ չուաններ, եւ երկու կէտերից քաշում էին մինչեւ որ նա գետնում էր պերկ եւ առաձգական, Օմար Խայեամի թատի թոխմուն յարերի նման: Հետեւեալ առաւօտ Օթէլ դ'Ալանակի մուտքի ձախ կողմի վրայ երկու գետնաշիներ գետնանեղը բերանեղում ուած պղտուղներով յարդարուց չափուն աչքերով, մեծապոչ հնչեցնում էին իրենց պանծալի գետնանեղը, եւ թմրկահարը նրանց կողքին կանգնած, խրախուսարար հարուածում էր իւր դափի երկու երեսները գետնակի աննկարագրելի նկարագրութեան հետ նկարագրուելու ջանքերով: Ամէն կողմերից երեխաներ եւ երիտասարդներ արշաւում էին այդտեղ: Հասարակաւոր հիւրանոցի ներսից երեւում էր օրուայ հերոսը, վոհլիման բեաւդրազը: Նա հագնը-

ւած էր պոլսոյն անգամ հազուադիւտ, եւ ինչպէս ամենաթոյլ ցաւերը, յոգեթափան զօրավարներէն, եւ Հայ Եկեղեցւոյ Հայրապետները փառաւորւում են իրենց կուրծքերը, այնպէս այդ վահանը զարդարել էր իւր կուրծքը բազմահամար եւ բազմազոյն բարձրիկաձեւ հմայիակներով, որոց մէջ կարուած պահւում էին կախարդական գրուածներ, որ գօրութիւն ունէին եւ պաշտպանում էին բարեխաղացին վայրկենական իւր խոպի ժամանակ հասած չարանէ վրայէն, եւ կտաւելուց իւր դլխին եւ առներէն: Ներա այս զարդարանն երեւոյթը կախարդում էին մեր աչքերը, նամանաւանդ երբ նայում էինք Մշոյ ոգեկիներէն ձեռքով հիւսուած գունագեղ թեւերով բոլորակ արախչին, որ ծածկազարդում էր նրա երիտասարդ դլուխը, եւ երկայն նիզակաձեւ ձողը, որ պինդ բռնած ունէր իւր ազ ձեռքում: Ձուռնաչիներէն սկսում էին յաւազ չարժուելով նրա երեւումից մի քանի րոպէ յետոյ, եւ նա նրանց յետեւից, եւ նրանց բազմութիւնը նրա ամէն կողմերից, եւ դէպի ո՞ւր, մօտաւոր հետաքննում բարձրացած տեսանելի էին խաչաձեւ ձողերը իրենց վերջաւորի երկայնաձիգ չուանով: Հանդիսաւոր թափորը հասաւ չուանի մօտաւոր կէտի մօտ. քահանայապետը բարձրացրեց իւր ազ ոտքը չուանի վրայ, ապա ձախ ոտքը, եւ խաչակնքեց իւր երեսը բացատանչելով. «Եա՛, Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետ, ինձ պահապան, քեզ դուրբան»:

Եւ մինչ նա իւր այս բացատրութեան հետ ցաւակից էր մէկ քայլից միւսը մինչեւ խաչաձեւ ձողերի մօտ գողգոչուն չուանի վրայ, մեր մանկական սրտերը տրոփում էին երկիւղով, եւ թոթոռում ցնծութեամբ, երկիւղ նրա անկման համար, եւ ցնծութիւն նրա հրաշալի արարքի համար: Նա դադար առաւ երբ հասաւ խաչեալ ձողերի մէջտեղին եւ պպզեց նրանց միմեանց միացնող տեղի վրայ, եւ իւր ժպտուն աչքերը մեզ ուժեց չուրջանակի իւր հրաշագործութեան համար հիացող հանդիսատեսների վրայ: Չուռնան փչում էր, դափը թնդում էր, եւ բազմութիւնը ապշում, եւ հպարտ քեանդըրտըր բարձրացաւ իւր օդային նստարանից, հաւատարակչական երկայն ձողը ձեռքում, դուռնայից աւելի բարձր ձայնով դոռալով.

«Իմ պաշտպան պահապան, ո՛վ դու Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետ»:

Եւ մեզ ցաւակիցներով օդի մէջ, սկսեց պարել թոթոռացող հօրիզոնական պարանի վրայ, մէկ ձողերից միւսը, եւ յետադարձ վայր պիտի իջնար: Մեր կանայք եւ մարդիկ խաչակնքում էին իրենց երեսները, եւ աղօթում էին Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետին, որ կարող էր այսպիսի չնորհք եւ ճարտարութիւն տալ այս մշեցի քեանդրտրին, եւ երիտասարդներ փափաք էին յայտնում ուխտի երթալ Մշոյ Սուրբ Կարապետի վանքը, խնդրել Սուրբից որ իրենց եւս չնորհէր այդ սքանչելի չնորհքը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Եթէ չլինէր Սուրբ Կարապետ Հայը պիտի չունենար նաեւ այս քանդրբաղութեան շնորհքը, որովհետեւ մեր տեսած միւս շնորհքները միայն պարսիկներէն մէջ կ'ինք տեսնում: Պարսիկներ էին, որ ժամանակ առ ժամանակ կբերեում էին այս մեհենքին հրապարակի վրայ երեմն որպէս արջ պար ածողներ, երբեմն կապիկ, եւ երբեմն օձ պար ածողներ:

Ժողովրդային բերկրութեան այս հապճեպ պէտ ներկայացումներէն բացի, այս հրապարակը ներկայացնում էր նաեւ արհեստաւորին ոգեբերական տեսարաններ: Նրա հիւսիսային կողմի վրայ, ուր Քանիքանիից հոսուն ջուրը կոպտելով առու, յամրօրէն հոսում էր արեւմուտք, շարաթ օրերում միմեանց մօտ կանգնած կբերեում էին մի քանի ոչխարներ, նայելով միմեանց միամտաբար, եւ վրդը ինչ հետու կաթ առու պաչուողից հրաժարուած կովեր, եւ երկեր վարելու այժից դրկուած եղներ: Աստ եւ անդ վրանաձեւ եռոտանի ձողեր, անկուած ոտքերն լայնօրէն բաժնուած միմեանցից, եւ պրլանները կապուած միմեանց հետ: Մի քանի մարդիկ սերտական չարժմանց մէջ կին այդ ոտպարէզի վրայ, մէկը սեւ գոյնոցով գոյնոցաւորուած գոյդ թեւերը մերկ մինչեւ արմուկները, եւ գլխէն գաչոյնի մեծութեամբ մի գառնակ ի ձեռին չարժուում էր այլ ու ձախ պատերազմական հրամանատարի պէս, միւսը պարանի մի կծիկը ձախ ձեռքում: Սա եւ ուրիշ երկու

կաթիճներ, չքնաղատեսիլ նախ աչխատում էին համոզել կովին, որ նա բարեհաճէր ինքնաբերաբար ծունկի գալ եւ պառկիլ գետնի վրայ: Բայց երբ կովը իւր բոլոր կամութեամբ հանդերձ, դուշակում էր նրանց չարանենգ նպատակը, մերժում էր համոզուել, նրանք բռնութեամբ կապկպում էին թեզճի չորս ոտները, եւ ուժգին թեքում գետնի վրայ, մինչ անզօրացած անասունը աչխատամենայնիւ իւր մարմնի մզելովն չարժումներով, եւ իւր կակորդի ամենարարձր բարբով բառաչում եւ հառաչում էր իւր թշնամիների վայրենութեան դէմ: Եւ երբ յոգնութուած եւ յուսահատ եւ առնակապ տարածուած էր գետնի վրայ, յոգնական հերոսներից մէկը նստում էր նրա վորի վրայ, պոչի մօտ, մեւսը վզի մօտ, մէկը յետեւ, եւ երկրորդը առաջի ոտների մօտ: Դահճեր քաջարար կանոնաւոր անճարակ կովի դէմսպերը, խրտխռտարար արում էր իւր մահարեր մեծ դանակը եռանդօրէն քսելով այն իւր կաշեղէն զօսիկից ու կախ երկայն եւ կրծ պողպատի վրայ: Ապա չոքից, ձախ ծունկը ամրացրից նրա դլխի վրայ, ճանկահարից կակորդից, եւ դանակը խրից նրա մէջ պոցի նման. զոհը խռնչից, եւ կարմիր արիւնը դուրս վազից գետնի վրայ, եւ ցայտից օդի մէջ: Մենք, երեխաներս որ սերում էինք ականատես լինել այս սեռսրանների երբ առիթ լինէր, ներկայ էինք եւ այս անգամ: Եւ ահագ սեռսրանի ապրած ապաւորութեան համեմատ, եր-

բնմն մօտենում էինք հետաքրքրութեամբ, եւ երբեմն յետ էինք վախչում սոսկոմաբ:

Փոքր ինչ հետու խմրովին կանդնած նրա ցեղակից կովերն եւ եղնեքը, եւ այլացեղ ոչխարներքը բոլոր ժամանակ նայում էին եւ անհնում կովի պայքարը, տապալումը, դիմահատութիւնը եւ մահը: Ոմանք նայում էին ապշահարուած, եւ ոմանք յուզուած երեւոյթներով եւ ցնցուած մարմիններով: Թէ արդեօք դուշակո՞ւմ էին թէ այդպէս էր եւ իրենց բաղդը եւ կամ ի՞նչ էին զգում եւ մտածում, այդ մեզ անտեսած գիտէը, եթէ նա նեղկայ էր այնտեղ, եւ եթէ աչք ունէը որ տեսնէը: Բայց ամէնը յաջորդարար տեսան մէկը մեզ համանման ճակատագիրը նոյն զոհիճ-գանակով, եւ ամէնը մարթազնդ եղած կախուեցան իրարանչիւրը այն երեք գերաններից, որոց ոտները կանդնած էին, մեզանից հետու, եռանկիւնի, եւ որոց գլուխները համբուրում էին միմեանց շղթայակիր շրթունքներով:

Այս զոհիճն անունն էր, կարծեմ, Աւագենց Ղասար Յովհաննէսեան: Երբ տուներ, որքան մտաբերում եմ, մեր անել վազոցի հանդիպակաց կողմի վրայ էր, ուր հրապարակը վերջանում էր, եւ սկսում էր գիւղի ակռեցու փողոցը: Նա ունէր երկու երեք որդիներ, որ չարութեան, հայհոյախառնութեան մէջ երեւելի էին, եւ սարսուռ փոքր տղաներին, որ նրանց տեսքից ոմանք վախչում էին լեզուապատառ:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Մի օր, փողոցում մօրս հետ կանգ առանք երկաթյա պլեսերկով, երկար սեւ մօրուքով, եւ մինչեւ գետին հասած մի սեւ հագուստով մարդի մօտ: Նա ողջունեց մեզ որպէս ծանօթ, եւ երկարեց իւր ձեռը իւր գլխատ լայն թեւերի միջից: Մայրս խոնարհեց եւ համբուրեց նրա պարզուած ձեռքը, եւ ապա վերից բռնելով ձեռից դրեց որ իմ բերանն էլ մօտենար ձեռքին որ այժմ արդէն կպչում էր իմ շրթունքներին:

«Աստուած օրհնէ քեզ եւ տղէդ, Ռէհան բալի», ասեց նա քաղցրաբար:

Դասաբ Յովհաննէսեան էր, որ տաբինեռով վաղաբշապատակ կովերի եւ ոչխարների կոկորդները կարելու արհեստով էր անկացրել իւր եառնդուն կեանքը, այժմ եղել էր օծեալ քահանայ բարձրելոյն Աստուծոյ, Քրիստոսի ասատարանը եւ կրօնը ուսուցանելու Վաղարշապատակի ժողովրդեան, այդ ժողովուրդը յետ այնու փոխանակ ճաշակելու նրա ձեռքով մարթուած անուռուններին համեղ մսերը, եկեղեցւոյ Սուրբ սեղանից պիտի ճաշակէին Քրիստոսի արիւնն եւ մարմինը, որ նա իւր նոյն ձեռքով պիտի պատրաստէր սուրբ սկիհի մէջ, եւ որպէս սուրբ հաղորդութիւն, իւր մատներով կոխէր քրիստոնեայ ոչխարների բերանների մէջ, ասելով. «Ահէք կերէք այս է մարմին եւ արիւն Քրիստոսի, ի թողութիւն, եւ ի քաւութիւն մեղաց ձերոց»:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Այսպէս նախկին խառատ Վարդանը, եւ նախկին դասատ Օհաննէսը, որ միմեանց հարեւաններ էին փոխեցին իրենց արհեստները եւ հպատառներըը որ ծառայէին Աստուծոյ, եւ պայծառացնէին Քրիստոսի Եկեղեցին: Այդ ժամանակից համարձակութիւն փոխուեց երկնքի անեռանալի այդ Աստուծոյ մասին, եւ այն Քրիստոսի բարձրութեան մասին, որոց պաշտօնեաները այսպիսիներ էին երկրի վրայ: Եւ այսպիսի կեղծիքի կրօնասիրութիւնը արմատ չձգեց իմ սրտում, թայց արտաքին ձեւականութիւնը մնաց արհեստականօրէն:

ՎԵՐԱԴԱՐՁ Ի ԹԻՒՐՔԻԱ

Տան մէջ երբեմն երբեմն լսում էի թէ մենք օտարականներ էինք վաղաբնակացեալների համար, գաղթականներ Թուրքիայից: Թէ մեր բնիկ երկրի անունն էր Բչնիկի, մի օրհնեալ երկիր ուր ամէն ինչ առատ էր, եւ ամէն ոք կարող էր վայելել մեղր եւ կաթ, եւ մեզանք առատ էին թէ մոլորութեամբ գաղթեցինք եւ ընկանք այս աղքատ երկրի մէջ, եւ զրկուեցանք ապրուստի լուսոյն բարիքներից: Այս զգացումը երեւի զօրանում էր նաեւ այլ հայրենակիցների մէջ, որ մեռանին նկել էին Քրիստոսի վայր իջման այս աւուրը քաղաքը: Ուստի, նրանցից ով կարողութիւն ունէին, գնեցին ձիեր եւ ջորիներ, բեռցրին նրանց վրայ իրենց անկողիններն եւ կենսական իրերը, եւ բանեցին գաղթականութեան վերադարձ ճանապարհը:

Մենք գնել էինք հինգ թէ վեց ձիեր: Ձիերի արժէքները այն ժամանակ աւելի աժան էին, աւելի քան նիհար խոզերի գները այժմ Անգլիայում: Կարծեմ մեր ամենաաժան ձին 27 ռուբլի էր, եւ ամենաթանգը 75 կամ 100 ռուբ-

լի: Ամենաչքամ վտիտքաղաքներից մէկը մենք էինք, ուր երբեմն յառմ էի Օսմանլիի բերեթէրլի հողի մասին, եւ իմ հօրեղբայրներից մէկի թախանձանքը որ վերադառնայինք երկիր, եւ ուրանայինք մեր անուէրացած հողերին: Չի հայրս ունէր եօթն եղբայրներ, քսան տասուեհան ամէնն եւս բարեկեցիկ հողագործներ, խաչնաբաժներ: Ուսախ եւ, տասու կաթ ու կարագ եւ մեղր: Ուսախ եւ, վերադարձը երեւում էր ինձ այնպէս քաղցր դէպի այդ չտեսածս երկիրը, որպէս քաղցր էր երեւում Պաղեստինի Աբեսաց երկիրը, Եգիպտոսի գաղթական հրեաներին համար:

Թէ արդեօք յոյս էր կամ դեռ եւս մութ երբ մեր ձիերը մեր ամէն կահան ինչքերը լերնոց վրայ տասած, դուրս էրան, եւ ճանապարհ ընկան, կամ ինչպէս եւ ուր մթացանք մեւս ուղեւոր բնաւանիքներին, եւ կամ արդեօք մեզ երթաք բարով տասողներ եղա՞ն թէ ոչ, այս տեսարաններըը լերնոց քաղցրութեամբ եւ դառնութեամբ, բերբերին ջնջուած էին իմ յիշողութենից: Մտաբերում եմ այնքան միայն, որ մենք անցնում էինք Սեւ Ջուրը, եւ երեկոյեան ժամանակինք Իգռիր, ուր ունէինք ծանօթներ, որոնք եկան մեզ տեսնել: Արդեօք նրանց մօտ գիշերեցի՞նք, թէ մեւանների հետ մեւսին, գրնչուների նման պատկեցինք մեզի տասատապ ուռենատով երկնքի տասղերը: Այլապէս գոմերի մէջ, կոմերի եւ գոմէշների հետ, որովհետեւ

բացի այս երկուսից ուրիշ յարմարութիւններ չկային այդ ժամանակ այդ երկիրներում, եւ մանաւանդ այն ճանապարհներով որ վիճակուած էր մեզ ճանապարհորդել քսան թէ քսան եւ իննօրեր:

Այս երկարատեւ, դանդաղընթաց ճանապարհորդութեան մէջ քանի ապրելիք տեղերն եւ տեսարանները մեզի մնում են պատկերացած իմ ազգական յիշողութեան մէջ: Իպտիրից արդէօք մէկ թէ մի քանի օր յետոյ էր, եւ մութը մօտենալու մօտ էր երբ մեր մարդկային կարաւանը իրենց պլխակաթ ձիերով յամրընթաց յառաջանում էին լեռնային բարձրավանդակի միջով, ուր հովիտը չունէր խորութիւն, եւ երկու կողմերը բարձրանում էին մեղմօրէն եւ տարածւում լայնատարած, եւ լեռների շղթայ պրտեները, որ ցած գաշտերից այնքան բարձր են երեւում, այդ տեղից նրանք ունէին համեմատական բարձրութիւններ: Յոգնութիւնը եւ ծարաւութիւնը յայտնապէս ծանրացած էին երեւում ամէնի վրայ, առանց եւ անառանց: Եւ ես մտքումս արդէն զղջում էի որ թողեցինք ծանօթ վարպետապաար, եւ առժանելի ճանապարհորդութեամբ գնում էինք կաթի եւ մեղրի անծանօթ աշխարհը: Հոդևկան եւ մարմնական այս վիճակի մէջ էինք երբ մեր քայլերի առաջ տեսանելի եղաւ տեղէն նման բլրակ լճակ, թերեւս ոչ աւելի լայն քան 30—40 սաժ, որքան եւ եմ երեւակայում այժմ մօտ հօթանա-

սուն տարուայ մթին յիշողութեանս մէջով: Կանգ առինք կիսայ աւազանի շուրջ: Թևթևացրին ձիերին լրենց վրան բևեռելուց, ամէն ընտանիք քաղելուց կազմելին մի սեռակ օճախներ, հանդարտարհին օրուայ ընթացքին պղտչօրէն հաւաքած չոր ծառերի բեկորներ կրակկեցին, եւ նրանց վրայ դրին ջրալից կաթսաներ եփելու համար ձաւարի վրայ, կամ ձու, կամ ձուապուղ: Եւ մութը բարձրանում էր ամէն օճախներից, եւ սիրուում խաղաղ հովիտի վրայ: Լճակի շուրջ խիտ անտառներ կային, կարծես հոտած ջուր էր, բայց խմում էինք, խմում էինք եւ հոգ չէր թէ յետոյ մեռնէինք խմելով: Այն պիտին այդպես անգիտացրինք:

Հետեւեալ առաւօտ այլ եւս դուրս էինք եկել այդ հսկայածաւօրէն խորդուբորդուած անհոգիների տարածութեան մէջից, եւ ծանրաբեռնուած անցնում էինք մեզմաթեք հողերի վրայով: Եւ այլեւս անցնում էինք այլ հողերի վրայով որոնք նոյնպէս կոչւում էին Հայաստան հին գաղթում, եւ նրանց վրայ բարձրանում էին հայ դիւղեր, քայլում էին հայ մարդիկ, եւ լսում էր հայ լեզու: Այժմ կոչւում էին Թուրքիա, եւ նրանց վրայ հնչող սիրական ձայնները քրդական եւ թրքական էին: Գիւղերի մէջ չկային ճիւղաւիից, սերնատարդ ծառեր, բայց մեթաղոյն բուրդեր, բարձրացած ընտանի անասուններին չորացած թրիքներով չարքերով եւ դասաւորութեամբ: Դրանք ի չգոյութենէ վայ-

ոմէ, պիւզանդիներէն պարէնները էին, նրանց կեանքի ապահովութիւնը, իրենց անունովն, եւ մարմնի ջերմութեան համար: Մինչ անցնում էինք այդ պիւղերի եղերքներով, շուներ հաչում էին, եւ քրդուհիներ ծախում էին պանիր, իւղ, ձաւար, կամ ինչի որ պէտք ունէինք մեր օրական ուտելիքի համար: Այդպիսի պիւղերի կողքերին գերեզմանները կանգ էինք առնում հանգստացնել մեր մարմինները, եւ յագեցնել մեր սոված փորերը, եւ ծարաւի կոկորդները: Քան, մածուն, պանիր եւ ոսխ: Եւ արեւմուտքից առաջ պատահում էր որ իջեւանում էինք կամ մի պիոմի անմարդաբնակ խոպոպ ափերում, կամ մի պիւղի արտաքին մասերում, եւ այնտեղ պատրաստում մեր տաք կերակուրը, եւ գիտեի վրայ երկնքի հովանիի տակ փռում մեր անկողինները: Հոգաչէն տուներում նստելու եւ քնելու համար առհասարակ չունէին ուելի քան մի անկեակ, նրանց յատակները այնպէս բնական պիոմեն էին որպէս մերը, եւ ուր բնաւանիքի անպամներում պահում էին մէկ կամ ուելի շերքերով, միմեանց մօտ: Միւս բնակիչն անկեակն էր գոմը ուր ամեն տեսակ այլատեսակ անասուններ բնում էին կանդնած կամ պառկած: Ուսոմ մենք չէինք կարող բնաբել ուրիշ ննջարան, քան բնութիւնը շնորհում էր մեզ բնաբել:

Քրդականներն այսպէս: Յիշատութեանս մէջ գոյութիւն չունի ոեւէ տեսարան այս հանապարհի վրայ, ուր տեսած լինէի հայ գիւղ,

եւ լաւ հայ բարբառ, որոնք անշուշտ սեռած եւ լաւ լինելու եմ, որովհետեւ անցնում էինք Թուրքիոյ ամենահայաբնակ մասերով, Ալաշկերթի դաշտով: Մի խոյն կարայ վանքն է որ անջնջելի մնում է իմ երեւակայութեան մէջ, իւր համեղ թանով ուր կարպի պնդակինները լողում էին, եւ այսպիսի չքնաղ բան չեմ խմել նրանից ոչ առաջ եւ ոչ յետոյ: Այդ սեղ առաջին անգամ էր որ տան յատուկ ամէն յարմարութիւններով օժտուած նատեցինք սեղանի, եւ կերանք պատուական եւ լիառատ, ձաւարի վրայի հաւկիներըը խղի մէջ լողալով, եւ չքնաղ մածունը իւր դոյնով եւ զովութեամբ ցնցելով մեր ատամոքսի թեւերը: Եւ առաջին անգամ էր որ նստում եւ հանդչում էինք մարդկային ձեռքով չինուած առատապէս ներքեւ, եւ որի երեք պատերը կապմըւած էին կաւից եւ քարերից, եւ չորրորդ պատը երկնային անչօշափելի օդից:

Այդ սեղերումն էր, թէ որ սեղերում մեր ճանապարհի աջակողմերում երկու կամ երեք անգամներ մեր աչքերում երեւցան կապուտակ ջրերի դաշտեր, թէեւ բաւական հեռու, բայց չկային լեռներ եւ բլուրներ որ արգիլէին ինձ սեռնել ինձ համար այդ նորատեսիլ ծփուն ջրերի ամբողջութիւնը, որից չէի կարողանում հեռացնել կախարդուած աչքերս, մինչ կամաց կամաց հեռանում էինք նրանցից, եւ նրանք անհետանում էին մեր սեռապութիւնից:

Մինչ մեր կառաւանը շարունակում էր իւր

օրական միօրինակ ընթացքը, մի առաւօտ հեռուից, շատ հեռուից լսելով դէպի լսելիք վերահասօրէն բարձրացած անասնաձայն մի ահագին լուռ, հսկայ մարմինը կապուտակ, եւ սուր զբոսելով սպիտակ: Նա կանդնած էր ուելի ապառաքան Ազատան Մասիս: Քանզի Ազատան Մասիս երկու թեւերով կապուած է ահեղ լեռներով, այս լեռը իւր բոլոր մարմնով ապառ էր լսելուն լեռնային կապկապող ամէն շղթաներից: Գնում էինք ամբողջ օր, եւ երբէք չէինք մօտենում նրան. եւ ամենուրէք առաջնակարգ տարածութեան հեռաստանում լսելնակապոյտ հորիզոնի վրայ անասնելի էին թանձրակապոյտ սարերի շղթայակապ սուր կատարները:

Օդասահ լսելոյ էր, եւ հանդիպում էինք մի հայ գիւղում: Տեղացիները հիւրասիրեցին մեզ իրենց անուրջ: Հանդստից եւ գեղջկական անզանից յետոյ, աղջիկներ եւ տղաներ իրենց երգերով եւ պարերով պարարտացրին մեր նեհատացած եւ վհատած հոգիները: Այժմ եւ յայն ժամ իրենց ոտների թնդումներով, եւ իրենց ձայների արտաներով գոռացնում էին Սիսեանայ սարի գովասանքները: Սա այն սարն էր որ ամբողջ օրը ցցուած էր օդում եւ մնում էր անկորընչելի մեր ակնարկներից:

Երբ ամառնային այդ գովախառն լսելեանն, ապրուած բնապրկի ապրատիրութեան արատյայտ զգացումներից, հրճուանքով նայում էի այդ հայրենի հոգեզուարճ պարերգական

չարժուեներին, դեռ եւս բնականաբար բոլորովին անպիտան էի թէ եղել էր ժամանակ, երբ այդ երկրաշարժի ծովի նման անկիրքարան եւ բազմաձոց ստրածութեան մէջ կը ծոցրուեմ եւ ծոցրուեմ, եւ հետաւոր լեռներն հովիտներում եւ ձորերում ծագումս էին բազմաւոյակ հայ գիւղերը, աւաններ եւ ամրոցներ, լի բազդաւոր եւ բարգաւաճ հայերով, իրենց ազատ եւ անկախ Հայաստանի մէջ, եւ թէ այդ խակ օդասասի ամռան, Նաւասարդի օրերը, Հայ ազգի նոր ստեղծ օրերն էին, եւ Հայաստանի թագաւորներն եւ նախարարները, ժողովուրդը, հազար հինգ հարիւր ստրերներ առաջ, եւ նրանից առաջ դարերով, զարգացած իրենց բաւարար հագուստներով եւ համապատասխանելով, եւ իրենց թմբուկներով եւ շեփորներով, լցնում էին գաշտերն եւ լեռները ցնծութեան ձայներով եւ մխիթարներով: Եւ իրենց քայլերով ծածկում էին Արտաշատի ափերի եւ Տարկանց լեռան կողերը:

Հետեւեալ օր վարդաւառեան, երբ մեր հերթական հայ գիւղացիները շտապում էին դէպի իրենց արտերն եւ այգիները, բարի ճանապարհ էին մաղթում մեզ, եւ նրանց այծերն եւ ոչխարները մկկալով, եւ կովերը բառաչելով, դոմերից եւ բակերից դուրս գալով, առանց իրենց հովի եւ շների զգուշութեան, բռնում էին դէպի բացօթեայ կանաչ վայրերը, կոխել իրենց քիթ ու բերանները խոտերի մէջ, եւ փըն-

ապակի եւ պահել իրենց առաջնութեան համար յատապոյն եւ անխոտոր բոյսերը: Եւ մեքենքը, մարդ եւ կանայք չինում էին ամենօրեայ սովորական բնակները, կապում ձիերի վրայ, եւ կանայք եւ երեխայք հետած, եւ այլ մարդիկ, պաշտօնները կապած իրենց կոպերին, եւ հրացանները կախած մէջքերին, առաջից կոպքերից եւ յետից սկսում էին քալել ամրաքայլ: Հետապնդութեան մէջ, դարձեալ մեր ձախ կողմի վրայ հետզհետէ բացում է ընդարձակւում է սեւ-կապոյտ ջրերի մխալապատ մեծաւարած մակերեւոյթ, որի վերջերը տեղ տեղ կորչում էին ներս խրուած եւ դարս ցցուած լեռնաշղթաների խորշերի մէջ: Մեր թեթեւօրէն բարձրացրեր ճանապարհի եւ այդ տեսարանի մէջեւ չկար ոչ լեռ եւ ոչ բլուր: Եւ համայնապատկերը հրաշալի էր եւ կախարդիչ: Հանդիպակաց հարաւային, սակայն, ուր այս հեղուկ զաշտը վերջանում էր, ամբողջ երկայնութեամբ բարձրանում էին յարաշար լեռնային դլուխներ, որոնք իրենց բանջերով եւ մարմիններով թեթեւ մշուշի մէջից երեւում էին կապոյտ, որպէս Ամաուժոյ երինքի գմայլելի կապոյտը լեռնացած վիճակի մէջ: Հայաստանի ամենամեծ ծովն էր, որի ամբողջ տարածութիւնը ներսիտւում էր մարդկային աչքերի տեսողութեան չրջանակի մէջ: Վանայ ծովն էր, որ իրաւամբ արժանի է բանաստեղծի գրչի հրապոյրին: Բայց երեք բանաստեղծական գլուխով ու եւ է հայ մարդ

չէ անցած այս ծովի մօտից, որ հրապուրուէր նրա ջրային եւ լեռնային գեղեցիկ տեսարաններով եւ ցոյց տար հայ ազգին իւր ապագային շնորհը: 1916ի Թրքահայոց բնաջնջումով անանցանելի անդունդը փորուեց հայ ազգի եւ հայ ղեկավարի եւ այդ ծովի մէջտեղ: Եւ ի՛նչ տխո՛ւր ապրելակերպին որ նրա արեւելեան, հիւսիսային եւ արեւմտեան ափերով ծագած հայ գիւղերը վանից մինչեւ Արճէշ եւ Արճէշից մինչեւ Տատուան, այլ եւս բնաջնջուած են հայ ժողովրդից, եւ եղել են Թուրքի եւ Քիւրդի բնակավայրեր:

Եւ այն ճանապարհի վրայ, ուր մենք քայլում եւ ճիամարում էինք, 1916ի հայաջինջ ապէսից յետոյ հաւանօրէն ոչ մէկ հայ մարդ է անցել, եւ այսուհետեւ յոյս չկայ որ անցնի, եւ տեսանք այն երկնային հիասքանչ տեսարանը, որ եա տեսայ իմ ապագական աչքերով, Վանայ ծովի հարաւային հորիզոնում: Որպէս ծովը իւր չրջապատող, նոյնպէս եւ երկիրը հարիւրաւոր մղոններով չուրջանակով ստացել զարձան անհայրենակ անգական ժողովրդից ապրելի աչքենչացմամբ, բայց այդ ժամանակ որ մենք օրերով ճանապարհորդում էինք Թուրքերի եւ Քրդերի մէջով, եւ Թուրքերոյ իշխանութեան տակով, ոչ դղում էինք Թուրքի եւ Քիւրդի երկիրը, եւ ոչ իսկ պատահական եւ անցորդ հեծեալ եւ պեզեալ Թուրք ասկիանների եւ պետարնների վախ: Եւ ճանապարհորդում էինք որպէս էինք մեր իսկական հայրենիքի մէջ: Եւ այդ միջոցին

դանում էինք մի ամենամեծ պատմական տեղի վրայ: Ձախում Վանայ ծովը իւր լեռնաշղթայով ծռանում էր իւր վերջին, եւ մեր աջում հսկայական լեռների խումբերից յետոյ մեր հանդէպ կանգնում էր նրանց մէջից ամենահրաշալեացը: Այդ ժամանակ չգիտեմ թէ դիտէի՞ ո եւ է բան Հայոց պատմութիւնից, Հայ ազգի նախահայր Հայկի մասին, եւս նուազ թէ բաներնում կար Նեմրուդ անուն մի մեծ իշխան կամ թագաւոր, եւ թէ նրա որդի Բել եղաւ աւելի մեծագոր եւ կամենում էր որ մեւս մեծերը հնազանդէին նրան հրամանաւ: Բայց նրանցից մէկը, Հայկ, ըմբոստացաւ, եւ երէք հարիւր քաջերով թագից Բաբելոն, եւ Տիգրիսի ափերով քայլից դէպի հիւսիս: Եւ այսպէս, Տիգրիսի արեւելեան ճիւղի ընկերութեամբ, խորխոր ձորերի մէջ էշերով բարձրացաւ եւ բարձրացաւ ցած պաշտերից մինչեւ բարձրագոյն ձորափերքը, ուր է ներկայ Բիթլիս քաղաքը, եւ այնտեղից վերին բացատները, որի վերջում սկսում էր Վանայ ծովը, եւ չուրջանակի լեռներ եւ լեռներ որ վերանում էին դէպի վեր, երկնից բարձրաձեւ կատարներով:

« Ահա, աշխարհը որ ես պիտի տիրեմ, եւ կցեմ նրան իմ անուան հետ յաւիտեան », բացագանչեց Հայկ իւր քաջերին, եւ ճօճեց իւր նիզակը, ծայրը ուղղելով դէպի յառաջ, դէպի արեւելք:

Բայց Բել բիւրաւոր բանակով հետա-

պընդում էր նրան, եւ Տառաւ, երբ Հայկ հպիւ սկսել էր հանդստանալ իւր յոգնութիւնից, եւ չյապեցած անասրանների հետացումից:

Ահեղ պատերազմը սկսեց երկու հսկաների միջեւ. Բաբելոնի սէրը տապալուեց գետնի վրայ դիմադրել, եւ նրա հպարտասէր գինուորները ընկան նոյնպէս, կամ եղան վախճանական լեռների ձորերի մէջ, կորստական: Հայկ իւր երեք հարիւր Հայերով մնացին ամուր եւ կանգուն, իբրեւց չքնաղակազմ ամուր եւ կանգուն լեռների նման: Եւ նա թափեց Բելի մարմինը ամենաուշադրաւ լերան գագաթում, որ աշխարհ անունէր եւ սքանչանար Հայաստանի հեռաստիճ քաջագործութիւնը: Եւ լերան անունը կոչեց Նեմրուդ:

Եւ այս այն տեղն է ուր Հայկը իւր քաջ երեք հարիւր Հայերի հետ յաղթեց Բելի անթիւ զօրքին, եւ սպաննեց նրան »:

Նայեցայ դեռեւին եւ նայեցայ երկնքին պէտ ուր բարձրանում էր հսկայամարմին լեռը, դրսից պատկուած թագաձեւ, նման այն թագերի որ կրում էին մեր թագաւորները:

Նստած ձիւ վրայ, նայում էի անասրանին երբ ուսումնասէր եղբայրս Կարապետ, ինձ չարժելով ասեց. « Այստեղ է որ մեր Հայկը սպաննեց տոռի Բելին, եւ թափեց նրան այս սարի գլխին »: Նայեցի սարի գլխին: Նա երեւում էր թագաձեւ, դուրս ցցուած թեւերով, որպէս մեր հին թագաւորները կրում էին մէջա-

մասը նեղս իջած, եւ եղբերը ել եւ էջ: Դարերի ընթացքում Բելի մեռը եւ ոսկորները փոխուել էին ջրի, եւ կազմել էին մի անյատակ մեծ լիճ, հիանալի երեւոյթներով: Այսպէս պատւ. Բելի գերեզմանը, երբ իմ անմոռաց բարեկամ Հէնրի Լէյնչ 1898ի ժամանակ բարձրացաւ Գրգուռ լեռների Ներբոզը, կամ Նեմրուդ սարի հրաբխային կառոյցը, որի պատկերն եւ նկարագրութիւնը վայելում են նրա Արմենիայի երկրորդ հատորում: Երբ ծննդեան տօներից մէկի միջոցին իւր սովորական հիւրն էի իւր Ուօրդինկդրն Հաուզ մշտակառոյց կալուածքում, եւ պատմում էի մեռս հիւրերին մեր Հայկ Նահապետի այս առասպելական քաջագործութեան մասին, Լէյնչ ժպտելով ասեց. «Ձեր Հայկի համար աւելի դիւրին էր ապաննել հսկայ Բելին, քան տանել նրա դիակը մինչեւ Նեմրուդի գագաթը»:

Եթէ ամբարտաւան Բելի մարմինը չունենար դժբախտութիւն փոխուելու հրաբխային լճակի ալեւատամնաձեւ մեռ Հայկ Նահապետի հրաշագործութեան այս երկնաթրթռ տեսարանը պիտի դառնար անտեսանելի յետագայ ժողովրդեան համար, որպէս Վանայ ծովը իւր մեռձաւոր եւ հեռաւոր լեռներով, եւ հովիտներով եւ դաշտերով, որոնց միջից մենք անցնում էինք օրերով, եւ այժմ արեւը արդէն խոնարհում էր, տեսնում էինք ծովի վերջ, եւ անդ հանգստանում բարձրացած Տաուրան հայ գիւղ

տունները: Տեղացիները, որ կանդնած, կամ նըստած իրենց տան դռների առաջ, նայում էին մեր թափօրին հետաքրքրութեամբ, երբ լսեցին թէ մենք Տիգրանակերտի գաւառից էինք գաղթած Ռուսի երկիրը, եւ այժմ դիջացած վերադառնում էինք հայրենիք, նրանք յուզուեցան ուրախութեամբ, եւ պատմեցին թէ իրենց գիւղացիները նոյնպէս դնացին այնտեղ, բայց Մոսկովի թագաւորը բանից նրանց եւ քշեց Սիբիր, ուր տարին տասնեակով ամիս ցուրտ ձմեռ էր անում: Վայր իջանք ձիերից, իջեցրին բեռները, գտանք հիւրընկալութիւն իրենց տներում, եւ ցանկալի յաւիտենական իւղալի ձաւարէ վերաւ, մածուն, եւ սոխ ու պանիր, եւ տաքուկ պատուհներ: Որոց յաջորդից առատաձեռնութիւնը: Բացատրութիւնը այն էր թէ տեղական ալիւրի հացը այդ խայթոցը պատճառում էր օտարներին, բայց ոչ Տատմանցիներին, որոց աստմաբանները հաշտուել էին իրենց կերած հացի հետ: Ձեմ յիշում թէ հետեւեալ առաւօտ կամ Տատմանից բաժանուելուց առաջ, արդեօք իրաւամբ հա՞ցն էր բուն մեղաւորը կամ ոչ:

Լեռնե՛ր, եւ լեռնե՛ր: Աբշալոյսի կենդանարար օդը կենդանացնում էր մեր կեանքը: Մեր կառաւանը առաջ վրայ էր եւ չորժման մէջ: Ցեսից տակաւին տեսանելի էր Վանայ ծովակը, եւ երկնքից ժպտուն արեւը իւր ոսկեղէն ճառագայթներով համբուրում էր նրա

կապատոյն մեղմայոյզ այտերը: Մեր ձախտում հետուից, եւ մեր աջում մօտից, որպէս ահեղ աշտարակներէ դէղեր ցցուած էին օդում, եւ չարունակում էին դէպի հարաւ, եւ դէպի արեւմուտք, մխմանց մինչեւ եւ մեր առաջ բաց թողելով մի անհաւթ տարածութիւն, որ երկարում էր եւ կարծես դահավիժում չարունակուղ հետտանելի լեռների անդունդների մէջ: Նախրդ եբեկոյեն էր թէ այդ առաւօտ որ մենք տակաւին յառաջանում էինք, եւ վեհափառ Նէրսովդը տակաւին կանգուն էր մեր հանդէպ, պլտիկ պատկառած հրաբխային թաղով: Նրա ոտների առաջից կարծես կար մի բնական ճանապարհ որ տանում էր դէպի ծով, եւ ծովի կողմից եկած ձիաւորների մի չարք մխմանց յեռեից ընթանալով հասել էին լեռան ոտքերից վար քիչ հեռու, եւ այնտեղ մնացել կանգնած անշարժ: Հետաւորութիւնը բաւական մեծ էր որ կարենայինք որոշել թէ հապէս քիչ էին այդ մեր տեսածները, բայց անտարակոյս նըմանում էին մարդոց, նստած ձիերի կամ ուղտերի վրայ: Եւ մեր կարաւանին ընկերացած մի հայ պատմեց թէ դրանք տասրնեակ էին ոբանք զապտաեարար եկել էին Հայաստան Բէյլի մարմինը փոխադրելու համար Բաբելոն: Այսուամենայնիւ բարկացաւ եւ պատժեց, եւ քար կարեց նրանց: Բայց քարերի վիթխարի կտորները պահում էին այդ չոր եւ անհանգիստ դետնի վրայ, եւ կարծես պոկուած վերից եւ դլտորուած Մեծ Նէրսովդի կողերից վայր:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Հետզհետէ առաւօտեան տեսարանները մը-
նում էին մեր յետին, եւ մենք չարունակում
էինք ծանրօրէն ձեռբչաւել Թեւատարած հովիտ
մի ջրով: Ջուրը պակաս էին անդադար տեղ-
ալիս, մխանում էին մխիճանց հետ, եւ ընկերա-
նալով մեզ հետ, մխաին խառնարհում եւ վազում
էին մխիճանց մօտեցող երկու լեռնաշղթաների
ելեւբջիների միջով եւ նրանց ջրածփուն եղերքնե-
րից մինչեւ բարձրագոյն կոպերը երեւում էին
պարզարուն ծառերով եւ տուներով: Քարաքը
կոչւում էր Բիթլիս, ուր տուները մէկը միւսից
մեր կառուցուած էին լեռների պառեխադրների
վրայ, եւ նրանց մէջերում կարճ եւ երկար ծա-
ռեր տալիս էին հրապուրիչ զեղեցկութիւն քնը-
հանուր տեսարանին, որ կարծեմ ծռւում եւ խո-
նարհւում էր խորագոյն ձորի մէջ: Ջուրը, որ
առկաւին չմտած Բիթլիսի խորութեան մէջ,
արդէն ուելի էր մեծացել, վազում էր ցած կա-
ռաղօրէն, ապխտակ փրփուր եւ ապխտակ փոշի
պատում եւ բարձրանում նրա ընթացքի ամէն
մի քայլին, իւր ճանապարհի առաջ ընկած եւ
ցցուած ժայռերին զարնուելով: Եւ այս չարա-
չար անընդհատ հարուածների ուժգնութիւնից,
վիրաւորուած ջուրը գոռում էր չարունակ, եւ
նրա լայն ու կածր արձագանքում էր խորագնաց
ձորերի մէջ եւ բարձրաթռիչ լեռների վրայ:
Մեր իջեւանը, մեր խանը այս ջրի առաջին էր,
բաժանուած մի քարքարոտ զառիթափ ճանա-
պարհով, մենք եւ մեր անասուններն նոյնպէս մը-

ամենք մի՛ւնոյն դանով, եւ միմեանցից բաժանուած մի անդուռ պատով: Եւ նրանց երկեցողութիւնը հասնում էր մեր ականջներին, եւ նրանց հոտերը մեր քթերի մէջ:

Երեք օր եւ երեք գիշեր վայելեցինք այս նահապետական կեանքի հաճոյքը:

Բիթլիսի խանութների հրապոյրը ունէի մեծ էր ինձ համար, քան նրա արուարձին բնութեան հրապոյրը: Խանութները լրւնոց կապմով եւ դառնութեամբ աննման էին Վարդաբշատի խանութներին: Նրանց մէջ առաւօրէն լի չոր եւ թաց պտուղներից ամանք նորատեսիլ էին ինձ համար, եւ նրանց համերը ունէի անուշ իմ անյագ ախորժակի համար: Այնուհետեւ մինչեւ այսօր որ լսում եմ Բիթլիս անունը, իմ առաջում են նրա խանութները լրւնոց խճողեալ քաղցրեղէններով, գետակը լուր տախտակներով, եւ համեստ տունները լրւնոց վեհափառ տեսարաններով:

Երբ եղաւ ժամանակ որ տարվեցի Հայաստանի աշխարհագրութիւնը, տեսայ որ Բիթլիսի հայերէն անունն էր Բաղէշ: Առաւօտաչունչի հայ հնախոյզ աստուածաբաններ, կարդալով Դանիէլ Մարգարէի գիրքը, գտան որ լուն խակ այդ լեռների մէջ էր, ուր մեծն Բաղդամ իւր մենաւոր պատյանների մէջոցին հանդիպում էր, եւ խօսակցում էր Աստուծոյ հետ, եւ թէ այդտեղ էր ուր նրա հետաքրքիր էշը արածում էր այդ գետի ափերի անդադար խոտը, եւ նրա



ԲԱՂԱՄ ԻԻՐ ԷՇԻ ՎՐԱՅ

կենսատու ջուրը: Եւ թէ այդպէս էր երբ Աստուած իւր սովորական փոխհատուածքեամբ պայրացած իւր սիրելեալ Իսրայէլի ազգի դէմ, հրամայեց Եսայեայ նաեւ իւր էջի վրայ, եւ ճանապարհ բնկնել դէպի Հրէաստան, եւ անհնել Իսրայէլի ժողովրդին, եւ աչնչացնել երկրի երեսից: Հայ աստուածաբանները խորհեցան թէ մեծ չնորհ էր Աստուծոյ կողմից չնորհել Հայաստանեայն այսպիսի մի մարգ որի հետ բարեհաճեր էր անձամբ առնակցել եւ խօսակցել, եւ որ նրա էջին հայելին խօսելու կարողութիւն: Նրանց յիշատակը Հայ ազգի մէջ յաւիտեան յաւիտենից անմոռանալի պահելու համար, ժամանակի բարեպաշտ Հայ քրիստոնեայ թագուորը այդ հնախոյզ աստուածաբաններին ջերմ թախանձանքներ վրայ, Եսայեայ բնակատեղիի վրայ հիմնեց մի փառաւոր քաղաք եւ անուանեց Բագ—էշ, որ յետագայ պատմագիրները մեթոդին, եւ գարձին Բագէշ:

Երբ մենք այդ պատմական քաղաքումն էինք, ամէն ուսեսուի եւ ապրանքի փոխադրութեան պաշտօնը բացատապէս էջերի եւ նրանց անհատապատ գաւակներ ջորիների մենաշնորհն էր, որովհետեւ ոչ մէկ կառք եւ սայլ, որքան եւ վոքր, կարող էին անցնել այն նեղ եւ ժայռատ փողոցներով:

Անցել էր երկու օր եւ երկու գիշեր, եւ մենք դեռ եւս այն հողի եւ ճանապարհի վրայ էինք, որոց վրայով Քրիստոսից 2244 տարի առաջ, եւ

այդ օրից 4118 տարի առաջ նախ Հայկ իւր երեք հարիւրնոցով, եւ ապա Բել իւր հետապնդիչ հարձակմամբ տարբեր երկիրներից ընթանալով անցել էին վերին երկիրները, որոնք մարզապէնջառատ չբնակուած էին, նոքա ծածկեր էին, եւ տակաւին անտառներ էին այծեամի առնելք եւ արծիւի թեւերը կարող լինելու համար անցնել այդ կուսական ճանապարհով, երբ դեռ դրօշմուած չէր մարդկային ոտքի քայլերով։ Երկու անտառապատ լեռնաշղթաներ, բաժանուած նոյն դեռով, մերձ առ մերձ, եւ զուգընթաց, կազմում էին հրաշալի եւ զարհուրելի ձորեր։ Տեղ տեղ մեր ճանապարհը այնքան ցած էր որ դեռը երեւում էր առնելի ներքեւ, եւ երբեմն այնքան ցած էր ահագին խորութեան մէջ, եւ զառիվայրերի ծածկող ծառերի պատճառաւ, դեռը կամ չէր երեւում, կամ հազիւ նշմարելի, որպէս մի բարակ առու։ Եւ մեր ձախից զառիվերը դեռ չաւարտակատ, եւ լեռնաշղթայի ծայրերը դեռ հեռու մեզանից։ Յառաջ մէկ ձի կամ մէկ ջորի կարող էր քայլել, այնքան որ ճանապարհը նեղ էր։ Եւ նրա եզերքից սկսում էր թեքուղ անդունդը։ Եւ ես երբեմն զգում էի սեւտարանի վհուկիները, եւ երբեմն նրա սարսափը, եւ շատ անգամ ցած էինք բերում ձիերից, որպէսզի մի զուցէ ձիերի ամենաթեթեւ սայթաքումից թաւալգլոր մենք կորչէինք անդունդի մէջ։ Բայց օրաւոր ընթացքին հանդիպում էինք զը-

բախտային հանդստարաններէն այս լեռներէն ծոցերուն, ուր կիսատատիակ գետինը իւր կանաչատարտ մահիճներովը, իւր հովանաւորող ծառերով եւ վերէն իջնող, կամ կողքին բղխող ակըռւրներով: Այս տեղերուն կինք կ'ընտրեմ եւ հանդստանում, առնում մեր օրական եւ երեկոյեան անուշները, եւ կարծեմ վրան մեր անկողինները, եւ հանդչում Մարմէի դրկում, ինչպէս անչուշտ արեն Հայոց Հայկը եւ Ամասոց Բելը: Չի չեմ կրնում թէ այդ ծորերէն սկզբից մինչեւ վերջը տեսանք ուրէք դիւղ կամ հանդստարշտ: Միայն մտաբերում եմ երեք հայեր, որ պատմեցին թէ նիւղ էին Պոլսէց թէ Եւրոպայէց, եւ վերադում էին ընկուզի կամ նման ծառերի արմատներ թէ բուներ որ չատ թանդագին էին Եւրոպայում, երեսց տասով:

Ինչպէս կապիկները ապրում են անտառներում երեսց բոլոր կեանքում, ուտելով ծառերի պտուղներ, այնպէս եւ մենք պիտի կարենայինք, եթէ բաղդի բերմամբ գտնայինք նոր Ռոբենսան Կրուզոն այս անմարդաբնակ տարերում: Բայց, բարեբաղդաբար ձիերի կողերից կախ ընկած խուրջինները, եղեսէ Մարգարէի կճուճի նման, միշտ անպակաս էին ձաւարից, իւղից եւ պանիրից եւ ճաշակաւոր սոխի գլուխներից:

Երբ առաջնորդաբար գետը կանք մեր վերեւ բարձրացած տարերից, եւ մեր ներքեւ խոտախոտ ձորերից, մտանք մի անծուռ, ալեծա-

ծան եւ ոչնչութիւն եւ միօրինակ հոգեպղծ տառապանքի վրայ, հապա՛ հոգ եղեւցող համեստագրութիւններ տալ եւ անոր, եւ անոր, անձայրածիր հորիզոն մը առաջ: Ես զգում էի թէ մի բարձրադիրք աշխարհի երեսից կամաց կամաց ցած էինք իջնում մի ցած աշխարհի վրայ, ուր երկրի մեծագոյն մասը երեւում էր անրնդունակ եւ անմշակ, եւ չոր եւ անջուր: Այսպէս էր երեւոյթը իմ աչքում եւ ապաւորութիւնը իմ վրայ, թերեւս նախորդ երիցուայ երազային տեսարանների զմայլանքից յետոյ:

Հետզհետէ երկիրը իր նոր երեւոյթներով տալիս էր նոր հետաքրքրութիւն: Դաշտեր հետեւում էին նոր դաշտերի կտրտուած միմեանցից ցած լեռներով, որ ունէին բլուրներ էին քան լեռներ, եւ դաշտերը ունէին յայնաբաժակ հովիտներ քան դաշտեր, եւ կազմելով մշակուած տարեր: Գիւղերը երեւում էին հազուագիւտ, եւ տուներից ոմանք կարծես կիսաւերի տարերքներ էին, եւ չեզոքի տանիքներով, որովհետեւ թուում էին թէ գետնից կարելի էր քայլել ուղղակի յարկից տան վրայ, եւ այսպէս շարունակել մէկ տունից միւսի վրայ, որպէս վազոց: Կայնն եւ հողէ ոչիւղից պատերով միայարկանի տուներ, եւ մէկ կամ մի քանիի վրայ բարձրացած չարդախներ, երկաթ պատանի եւ հարթուկ կտուր անպատ: Այսպիսի տուները դիւղի ամենահետեւելի պարտականքն էին: Կանայք տուների առաջ եւ տանիքների վրայ երեւում

էին կամքերպես, զրամներէ չարտոնէր վկէ-
բից, եւ խոշոր օդակներ ականջներից, ամանք
բարակ արծաթեայ թասերով ծածկած էրնոց
զրահներէ բոլորակը, եւ ճակատները պսակ-
ուած թասերից շարան շարան կախ ընկած դէ-
պին եւ ապխտակ թրքական բարակ զրամներով:
Ուր որ յառաջանայինք, լեզուն քուրդերէն էր:
Թուրքեր չկային, բայց քուրդեր, Հայեր, ասո-
րի, եւ քրդանէ, երեւի քաղդէացիներ: Սրանք
ամէնը միախառն ապրում էին այդ գիւղերում,
եւ միակ լեզուն որ գիտէին խօսել, քրդական
լեզուն էր: Եւ անշուշտ այսպէս միասին ապ-
րում էին անյայտ ժամանակներից ի վեր: Ճա-
նապարհների վրայ երբեմնակի հանդիպում
էինք նիզակակիրք, գինեայ քուրդ ձիաւորներ
որ նստած էին իրենց ձիերի վրայ խրոխտ, որ-
պէս թէ իրենք լինէին երկրի տէրը, եւ ոչ Օս-
մանցին: Նրանց մեծաւորը աւելի նշանակելի
էր իւր թագիքեայ ձուտձեւ քլոզով, փոքրաթ-
ուած ոսկեճամուկ գունդակով մեսաքեայ թաշ-
կինակներով, մէջքը հատաօրէն փոքրացած
պարսկական շալերով կամ մեսաքեղէն գո-
տիով որի մէջ խրուած լինում էր արծաթապատ
կոթիերով հրացիններ, եւ իրենց բոլոր զգեստա-
ւորութեամբ էին հին հին դարերի արեւելեան
տպաւորներ, հատաօրէն այնպէս էին մեր հին
դարերի նախարարները եւ իշխանները: Եւ որ-
քանք էին քուրդ ցեղապետները: Շատ քուրդ ցե-
ղերի անուններ լսեցի այդ ընթացքում եւ յե-

ասէ, բայց մէկ քանիսն է մնացել իմ յիշողութեան մէջ, Մամբրեան Յաչքօթան ցեղը, որոնց առաջինը չատ նման հնչում է մեր Մամիկոնեան ցեղի անուններին, եւ ով կարող է ճշմարտօրէն հերքել թէ այդպիսի քրդական ցեղերը մեր հին նախաարարական ցեղերի այլափոխուած անուններն չեն: Դաշտերի եւ լեռների այս սքողուած մեծաւոր ասպետները, որոց ձիերը իրենց նման պճնազարդուած էին, երբ իրենց հետեւորդների հետ հանդիպում էին մեզ մեր ճանապարհի վրայ, ազատաբար բարեւում էին մեր կառաւանը եւ հարցնում էին թէ ուսկի էինք գալիս եւ ո՞ւր էինք գնում: Եւ արդէն չատ մօտ էինք, եւ նոյնիսկ նոյն երկրի մէջ էինք արդէն: Մեծ ընտանիքները բաժանուելան մեզանից, եւ ուղղուելան իւրաքանչիւրն իրենց մայրենի գիւղերը, եւ մենք մնացինք առանձին, եւ հայրս ուղեց իւր ընթացքը դէպի ուր էր իւր ընտանեկան տունը, եւ հօքին եղբայրները: Յիշում եմ, արդէն գրեթէ մութ էր երբ մօտեցանք գիւղին մի տուն տիեղով: Եւ ես քաղցր երեւակայութեան մէջ էի թէ ինչ պատահ պիտի գանէի, եւ ինչ մեզը ու կարագ: Կեանքի այս նոր ծագկառանում, Վաղարշապատից մինչեւ այս վերջակէտը մեզ ոչ մի տեղ եղաւ, ուր դադէինք թէ ազգարարուեց մեզ թէ ճանապարհը երկիւղալի էր եւ վտանգաւոր, եւ կարող էինք կողոպտուել քուրդ աւազակներից: Այդ Գլիճ Գեղուկի անցքն էր: Բլուրների եւ ցած լեռնե-

բի մէջ, որպեսզի Բիբլիայից առաջ էր թէ յետոյ, չեմ յիշում, բայց պիտեմ որ քուրդ պետպաշինների խորհրդով վարձեցինք մի քուրդ, որ նա ապահով անցկացնէր մեզ այդ վտանգաւոր անցքի միջով: Մի քանի քուրդ ձիաւորներ բռնեցին մեր առաջքը, բայց մեր քուրդ ուղեկցի բարեխօսութեամբ թող տուին մեզ, եւ հեռացան: Այժմ աւելի քան երբէք քուրդերի մէջ էինք, եւ ամենայայտնի քուրդ ցեղերի չորքանեղում:

Ի՞նչ էր այս դիւղի անունը: Մեր երկարատեւ եւ տաժանելի ճամբորդութեան այս ակնդէտ եւ ցանկացեալ վերջին կայարանի անունը բոլորովին զոլորշացել է իմ յիշողութեան չանմարանից, բայց մեր ժամանման եւ հանդիպման տեսարանը տակաւին մնում է տեսանելի իմ մտաւոր աչքի առաջ: Մի սքնչող երեկոյ էր: Մարդիկ, կառայք եւ երախայք երեւում էին տուների առաջ կիսամութ կիզակառնքներով: Երեւի այսպիսի այցելութիւն անսովոր լինելով դիւղի համար, ամէն ոք նախօրոք դիտէին թէ մօրերում աչխատներն էին, որ վերադառնում էին տուն: Եւ տեղական հին ճանապարհները ուրախութեամբ բարեւում էին նորերի հին ճանապարհներին: Ջոյրս եւ ես էինք տակաւին ձիի վրայ, մեւանները քայլում էին, իրենց շուրջ տարեց ծանօթներ եւ նորատի անծանօթներ: Լուրը հասել էր կրտսեր հօրեղբօրս տունը, որ տեղից ընդառաջ վազում էին մի

քանի երախանոք, եւ քայլում մարդիկ եւ կառնայք: Նայում էի նոքա չարժուն բազմութեան: Մենք եւ նոքանք երեւոյթներով երեւում էինք երկու տարբեր աշխարհների արարածներ: Նոքանք իրենց կեանքի ընթացքում չէին տեսել այնպիսի զգեստներ որպիսով մենք էինք երեւում, եւ ես առաջին անգամ տեսայ այդպիսի հագուստներով մարդ ու կառնայք Բիթլիսի ճոթերից դուրս: Բայց մարմիններ ծածկող զգեստների խորհուրդները, չէր խորհացնել որեւէ զգացմանց հարուցանութիւնը: Ուստի եւ զրկախառնութիւններ տեղի ունենան երեքտյանների, նոքանց կիներով եւ պատկերի մէջ: Արեւի հարազատութիւն, հագուստների անհարազատութեանց մէջ: Մեր նոքին խորհրդակը իրենց խայտարդէտ չիթէ արխալուխներով եւ բազմազան մինթաններով, պատկերացնում էինք հետաւոր արեւելքի Թաթարիստանը, եւ մեր նոքաստեղ անձերը իրենց դէմքերով, երեւոյթներով արձանացնում էին Թագուհի Աստեղատանի մարդկութիւնը կենդանի չարժման մէջ:

Որպէս համազարհարդութեան ամբողջ ընթացքին առնելի մէջ տեսայ միայն հոգէ յատակներ, եւ գերաններով ազատհոգուած խերթատար առաստաղներ, եւ ձեթաթխմած պատերդով հրապներ, նոյնը այսօրեղ: Մի թեթեւ յուսախարութիւն ծանրացաւ իմ սրտի վրայ, որովհետեւ ակնկալում էի գաղջը անկարելին:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Հետեւեալ առաւօտ նոր ընկերակիցներէն ընկերակցութեամբ մտն էի գալիս մի նոր կեանքի մի նորածանօթ չրջապատի մէջ: Տեղը մի փոքր գիւղ էր մխայարկ առուներով, շինուած մի գահավայրի հովիտում, երկու կողմերից պատուած կարճ բլուրների չարաններով, որ աջակողմից ցածանում էին, թաղւում էին հողի մէջ եւ հետապատում լայնատարած գաշտի մակերեւոյթի հետ: Գաշտի հեռաւոր սահմանում հիւսիս արեւելքի երկնագոյն բարձրաբերձ լեռների ծոցից երեւում էր երկնատիպ ջրերի մի լայն հատանք որ երկարելով անհետանում էր հարաւ արեւմտեան հորիզոնի յետին: Բաթման գետն էր նա: Գետի մեւս կողմը, բարձր ափերի ներքոյ, եւ համապատած մի լեռնագաշտի վրայ տեսանելի էր մի ապիտակափայլ քաղաք: Ի՞նչ էր պատճառը որ ապտակ էր երեւում այդ աշխարհում, ուր միայն տեսանելի էին հողաշէն գիւղեր եւ քաղաքներ, բայց այդ տեղի հեռաւոր չէնքերը երեւում էին ապիտակ: Անունն էր Մուֆարղին, այլապէս, Մարտիրոսաց Քաղաք:

Այսպէս էր համապատասխանը, որ պարթմանս առաջին առաւօտեան տեսայ, իմ առաջ պարզուած, մթնոլորտի միջով:

Հովիտի երկու կողմերում արտեր երեւում էին մերկացած ցօրենի եւ այլ արմտիքների ցողուններից, եւ ուրիշ մասեր երեւում էին որպէս արօտավայրեր: Երկու կողմերի բլուրները

եւ նրանց թևքաւոր կոպերը շատ հեռու չէին դիւղից, եւ պարզ տեսանելի, եւ աչխատի հոտը արդէն երեւում էին տարածուած այդ տեղերում: Եւ փոխանակ դիտցի թէ նրանի ես գըտնուէի նրանց մէջ, տեսնէի նրանց արածելը, դառնայի հովիւ, եւ կթէի նրանց կաթը այդ խիկ կանաչների մէջ, բլուրների առուրտաներում, երևելեան արեւմտուից առաջ:

Այս ամէն հեռուից տեսարանները գրաւել էին սիրտս, երբ տակաւին առիթ չէի ունեցել ուշադրութիւնս դարձնել իմ մօտաւորապէս շրջապատին:

Գիւղը փոքր էր. տուները բակերով, աչխատների փարախներով, եւ գոմերով: Մարդիկ կրում էին քլորներ իրենց գլուխներում, չինուած թաղիքից, գլուխի մօտ լայնութիւնը երեսով նեղանում էր, եւ վերջանում սուր սուր ծայրով, եւ կրտղները քսա հաճոյս կամ քսա կարողութեան փոխոխում էին ամէն շատ կամ ամէն լաւ դէպքում թաշկինակներով: Շատ ամէն գնդասեխել, քան թոխոտական վայելուչասեխել բրդոտ մորթէ փոխոխները որ տեսել էի Վաղարշապատում մարդոց գլուխների վրայ: Վղից մինչև մէջքի տակրին մասը պեսպսուտուած էին բրդահիւս սեւ կամ դուռնատուր բաճկոնակներով, եւ կոճկուած գնատաճև թևքահիւս կոճակներով: Այս բաճկոնակներից ամանք ունէին ասկեզոյն կամ արծաթափայլ թելերով հիւսուած պարզատրանքներ

կուրծքերի վրայ· ամանք կրծարաց էին, եւ ոմանք կոճկուած մինչեւ օձիքը: Մեզ ուշադրաւ հագուստն էր շերտաձեւը մխիթարն ապիտակ բամբակեղէն լայնաթեակ շապիկը որ իջնում էր մինչեւ ծունկերը լայն թեւերով, եւ խրտքանչիւր թեւը երկայնաձիգ պոչերով, որոցմով սովորական ժամանակ փաթաթում էին իրենց թեւերը պաշտպանելու համար եւ անչափ ցուրտի դէմ, եւ սաստիկ տաքի եւ աշխատութեան ժամանակ, երկու պոչերը կցում էին միմեանց հետ, եւ դարձնում վզի չուռն, եւ այպէս չորցնելով եւ մերկացնելով իրենց թեւերը այնքան շատ, որքան որ ուզենային: Այսպէս շերտաւոր կտաւները զոգնոցի էին նման, եւ անուանում էր բեկ: Երեւի այն միեւնոյն սեռակի զոգնոցած կտաւն է, որ մեր հին պատմութեան մէջ յիշուել է այնքան դիմատանքով, եւ անուանում էր բեհէզ: Եւ արդարեւ արժանի էր դիմատանքի այն մարդոց համար, որ անուրբակոյս գործ էին լուսապոյն գործեր սեանելուց, ինչպէս որ հիանում էի սեանելով այդ շերտաւորող բամբակեղէն շապիկը, որովհետեւ գեղեցիկ հիւսուած կտաւներ դեռ հազիւ էի սեռել իմ կեանքում: Եւ այս չքնաղ շապիկի ցածից նայնպէս կար եւ բամբակեղէն, որ եթէ վարտիք, բազմածալ եւ բազմածալուլ, որ եթէ լինէր հնարաւոր փչել փուքսով եւ ուռեցնել փուչիկի նման, հաւանօրէն պիտի փքուէր երկու խոշոր փքուած սիկիների մեծութեամբ:

Վարսիքի առօրեպէն դեռևս հայկաց բաժանմունքի կենսրոնական կէտում, անտեսանելիօրէն կար մի փոքրիկ եռանկիւն ծակ խուսափելի օդանցքի եւ անխուսափելի ջրանցքի համար: Այս չքնաղիկ ապերախտութիւնը վերջանում էր սեւ կամ կարմիր անկրունկ եւ անվիզ կօշիկներով:

Այս նկարագրութիւնը արդէն ոգորմելի եւ չէ տալիս մի յստակ պատկեր մարդոց հագնուածքի մասին, ուստի չեմ փորձում նկարագրել կանանց զգեստների ձեւերը, բայց միայն ասել թէ նրանց զգեստների կտաւները էին երկար, եւ յիշեցնելով հեռաւոր ժամանակների նահապետական կեանքի կիները:

Գիւղի ներքեւ հոսում էր մի աւազուտ ափերիւր: Կային օրեր որ նրա երկայնքով շարուած էին խոշոր պղնձէ կաթսաներ մէջը ջրով, եւ տակը պղտոր բոցերով որոց միջով թանձր մուխը ոլոր մոլոր բարձրանում էր խաղաղ հովիտից վեր միախառնուում էին միմեանց, եւ ամպատում մոգուր մթնոլորտը: Գիւղական լուացքի տեսարան էր: Անձնիւթ մայր եւ դուստր անում էին երկնից գերդաստանի լուացքը: Ապուռ ջուրերը թափուում էին աւուխ հեռու, եւ ոչ աւուխ մէջ: Եւ մաքրուած շորերը փռում էին ցցերից կապկապուած բարակ պատնէների վրայ, եւ խոտերի վրայ:

Լսում էի թէ մեր սերունդը բազմամարդ էր. հեռաւոր ժամանակներում նախ ապրում

էին ձխոխ անուն քաղաքում որի աւերումից յետոյ, նրանք տարածուեցան Բչերիկի դաշտերում եւ անուանուում էին Տուն Տօնիկ:

Իմ մէկ հօրեղբայրը ապրում էր մեւս գիւղերից մէկում, ուր ես երբեմն մնում էի ժամանակ առ ժամանակ: Այս տեղը իւր կեանքով աւելի է կենդանի մնացել իմ յիշողութեան մէջ: Քահանան եւ իւր որդին երբեմն հայերէնով հարիւր հատ հասկանալի էին ինձ, թէեւ շատ հազուագիւտ էին երբեմն հայատիտութեամբ: Եւ անհասկանալի եւ ծիծաղելի էին դանում իմ Աբաթաեան հայերէնը: Արդեօք իւր ժողովրդից քանի՞ն պիտէին հայերէն, եւ որչա՞փ: Որովհետեւ այդ երկրի քաղաքակրթութեան լեզուն քրդերէն էր, եւ հայ, Քլդանի (Քաղդէացի՞, Եազուդի Սիրիանի (Ասորիք) ամէնը բարբառում էին քիւրդի լեզուով:

Այս հայ քահանայի եկեղեցին հողէ տաւիակ տանիքով, եւ խորտուտ եւ գերանակապ առաստաղով, եւ հողեղէն յատակով, եւ հազուագիւտ պատերով երկայն եւ ոչ շատ լայն մի սրբատեղը էր: Տանիքի վրայ չհաւ գանգակատուն եւ գանգակ, բայց մի քանի կարճ գերանիներ խրուած տանիքի վրայ, գամերով միացուած, եւ կապակցուած տախտակներով: Ամուր հարուածներ որ իջնում էին տախտակների վրայ, եւ տարածում էին իրենց շուր արձագանգները օդի մէջ ի լուր հայ քրիստոնեայ ժողովրդեան: Եւ այս հնչիւնները միակ տե-

սակի զանգերն էին, որ այդ եւ այլ դիպվերի քրիստոնեաներ երբ եւ իցէ կարօղացել էին լսել իրենց կեանքում:

Արեւամուտի հետ երբ բազմաքանակ ոչխարներ, սակաւաքանակ կովեր եւ գոմէշներ կուշտուկուռ եւ ինքնագոհ վերադառնում էին դէպի իրենց դիշերային հանգստարանը, իւրաքանչիւրն իրենց ինքնայատուկ արշաւանքով եւ աննեղաշնակ երգերով, փոքճառու տանտիկիններ վառած դռլեր, եւ պղնձէ կաթսաներ ունէին պատրաստ իրենց ձեռներում կոզոպտելու նրանց այն ծաղկեզէն եւ խոտեզէն անուռնելից որ նրանք օրուայ ընթացքին հաւաքել էին, եւ այժմ դարձրել էին պատուական ապուսակ հեղուկ, եւ չանմարանել էին իրենց ծծերում կթուելու որպէս կաթ կանացի մաքրուած մատներով: Կաթը կթւում էր, եռացւում մեծ եւ միջակ կաթսաների մէջ, եւ արամադրւում էր գառնալ հետեւեալ առաւօտ սերուն մածունի: Այդ կաթսաները հետեւեալ առաւօտ տեսանելի էին բակերի խորքում, եւ չարչարների տակ: Մայրեր զգուշաբար վերցնում էին մածունի մակերեւոյթի ստացյց կապած սերացեալ հատու կամ բարակ կեղեւները: Եւ մանուկներ կանգնած իրենց մայրերի մօտ ագահ ակնարկներով սկսկալում էին խոշոր կտորներ բաժին ունենալ իրենց անօթի եւ ամենակուլ բերաններին համար եւ մի լի սման թարմ մածուն իրենց նախաճաշի համար, ինչ

որ անտարակոյս առանում էին թէ մէկը եւ թէ մեւսը: Եւ այնուհետեւ թողնում հանդիսաւ խնդճ մայրերին, որոնք անմիջապէս ունէին աւելի ծանր պաշտօն առանձնելիք:

Ջարդախի կամ կաթնառատ առատասպի գերաններից հոլիզոնտալ կամ ընկած առկառաձեւ խնոցն լցւում է մածունով եւ համեմատական ջրով, եւ բոլորակ բերանը պինդ փակուելուց յետոյ սան մայրը մխալնակ, կամ իւր մէկ ապջկայ հետ մխաին բռնում էին խնոցին համապատասխան ծայրերից, եւ հրում խնոցին երթալու դէմ: Եւ հարում եւ հարում մինչեւ որ կարագի հիւղերը անջատւում էին յեղեղուկ հեղուկից, եւ կազմում մանր գնդակներ, բռնուելու եւ հաւաքուելու յարմար: Քրտնած կիները յոյնժամ յաղթական իջնում էին իւր կախաղանից, բայց անում նրա փակ բերանը, եւ բոլոր հեղուկը շրջում մի մեծ տաշտի մէջ եւ դգալով ու մատներով հաւաքում էին բոլոր չօշափելի գնատակները, եւ թեւեւս մնում էին մի քանի անձերրակալելի սպասամբ գնատակներ, որոնք մնում էին սպիտակ հեղուկի մէջ, որ որպէս թան իւր քաղցրաթթու համով զովացնում էր անցկենների ծարաւը ցերեկւայ տօթին, եւ երեկոյեան եփւում էր համեղ թան ապուր, եւ տաք կաթսայից լցւում մեծ ամաններով եւ դաշտերից վերադարձած սան տղամարդիկ մխանալով իրենց կնամատաններ հետ, փրթում հացը թանապուրի

մէջ եւ իրենց վայրէկ վայրկեան զգալները խըրտում հողէ խոր ամաններուն մէջ, եւ լցուած թանով տանում էին զէպի իրենց անհամբեր բերանները:

Ընթրիքից յետոյ այր մարդիկ կամ նստում կամ թեքւում էին տանիքների վրայ, շարզախների տակ եւ բակերի մէջ փռուած անկողինների վրայ չերուխ քաշելով առանձին, կամ հարեւաններուն հետ միասին: Եւ մայրերը, շրջապատուած իրենց զաւակներով, պատմում էին նրանց հետաքրքիր հէքեաթներ, մինչեւ որ երեխաներից ամենը վեհում էին իրենց աչքերը երազելով քունի մէջ: Եւ երբեմն այսօրուայ կամ այնտեղ ապայ եւ աղջիկ, քեռրա եւ քրիստոնեայ, միասած միասին պարում էին ձեւ երգում, եւ ծափերը հարկանում եւ հիանում հանդիսդով: Սրանք եւ մեւաներ ինչ լոյս որ տեսնում եւ առանում էին, այդ միայն գալիս էր նրանց անհուն երկնքի չորչորան առեղներից եւ մեղմաձայն լուսիններից:

Երեխայոց կրթութիւնը թողուած էր բնութեան: Ոչխարների մկկումը, կովերի եւ գոմէշների բառաչիւնը, եւ էշերի զռռոցն էին նրանց դպրոցական պանդահինները: Նրանց ձայնների նորագարթ մանուկները դուրս էին գալիս իրենց անկից, եւ բակերում չրջելով ոչխարների մէջ վայելում էին նրանց փափուկ բրդոտ մէջքերը, շոյում էին նրանց քնքոյշ ըլուխները, եւ նայում նրանց անմեղ աչքերի

մէջ: Եւ բանում էին էշերի պոչերը, խաղում հետը եւ քաշքշում: Էշերը հանդարտօրէն դարձնում էին իրենց, եւ վերհանձնարար նեռում էին իրենց չարաճճի չարագործներին, առանց արժանաւորապէս պատժելու նրանց իրենց ոտքերով:

Օրւայ դանդաղ ժամանակին ուրիշ տարբեր ազաներ զբօսնում էին այլ եւ այլ խաղերով, նման եւ աննման Վարպետապետի ազատական խաղերին: Կրօնական եւ ցեղային խառնութեան հասկացողութիւնը եւ զգացումը դոյութիւն չունէր այս քեռիա, հայ եւ տարբի ազանների միասին խաղացողների մէջեւ: Քեռդ ազանների ամանք իրենց դասընկերից պարծանքով կրում էին վոչխր դեղապատեան դաշոյնները, նրանցից յետ չէին մնում նաեւ հայ ազանները, եթէ հայրը ի կարզութեան էր զարգարել իւր որդին այսպիսի նուէրով: Թէեւ իրեն կամ տատն տարեկան, եւ նա եւս ունէր եւ դաշոյն եւ կրակով թամանչա: Զանազան հրացան զարդարեալ եւ թամանչա պակաս չէին որպէս քեռդերի, նոյնպէս եւ հայերի սեփականութիւնից:

Յիշում եմ մի գիշեր կռւի գոռոցներ եւ հրացանի թնդիւններ արձագանգ տուին մէկ եւ ուրիշ գիւղերում այդ դաշտի վրայ, եւ հայ եւ քեռդ գինուած արշաւեցին գիւղից գուրս: Զինաւոր չարժուհներ եւ ազիկալից յուզումներ չարունակուեցան մի քանի օրեր, եւ ես լաւ մտաբերում եմ մի քրդական ցեղի մարդիկ գինեալ

կողոպտել եւ տարել էին մի հայ գիւղի անասուններըը գէպի իրենց լեռնավայրերը: Դաշտի քիւրդերը միացած հայերի յուր են գրկում իրենց բարեկամ մի այլ ծօտակայ լեռնական քիւրդ ցեղին, եւ ամէնը հաւաքարար գնում եւ յարձակւում են կողոպտիչ քիւրդ ցեղի վրայ, եւ ծանր կռիւներից յետոյ յաղթում են նրանց եւ յետ առնում ու բերում կողոպտուած անասուններըը իրենց սեփական հայ տէրերին: Եւ բաւական երկար լսում էի այս համերաշխ պաշտպանութեան եւ քաջագործութեան պատմութիւնը, որ քիւրդերը եւ հայերը պատմում էին պարծանքով միմեանց մէջեւ:

Այս գէպքից մի ժամանակ յետոյ տեղի ունեցաւ մի այլ տեսակի պարբերական կողոպտուններից մէկը: Քիւրդ պատուաւ եւ ջահել կիներ կային, որ սուգի մէջ էին, եւ լաց էին լինում: Նրանց ամուսինները եւ որդիները կողոպտուած էին, եւ կողոպտուած թուրք կառավարութեան պինդ ոստիկանների ձեռքով: Նրանք բռնուած, տարուել էին պինդ ուրութեան: Լուրերը պատում էին թէ պատերազմ պիտի լինէր, կամ պատերազմ կար ռուսների Մոսկովի թագաւորի հետ, եւ թէ կողոպտուած խնդիրները գրկում էին կռիւ գաշտը: Եւ նրանց որոնը լի էին վշտով իրենց սիրելիների համար թէ թերեւս, այլեւս չտեսնէին նրանց:

Քիւրտերը ասում էին կառավարութիւնը, որովհետեւ նրանք ուզում էին պինդ արդարութեամբ

նրանց, զրկել իրանց սարերի եւ դաշտի ազատ կեանքից եւ ընտանեկան տունից, եւ տանում էր նրանից, եւ ոչ թէ տալիս էր նրանց։ Մինչդեռ իրենց կարծիքով փոշ ունեցողը եւ հարուստը կառավարութիւնն էր, եւ նա էր որ պէտք էր տալ, եւ ոչ թէ առնել։

Տարրեր երեւոյթով այս քրդական խնդիրը, հասկացողութիւնը եւ պետութիւնը ունէին անցեալ դարի վերջին քաոտրդի առաջադէմ նահանջողական դրականութեան յեղափոխական անձնազոհութեամբ զրոյցներ, որ առանց նեղսրտի եւ տխուր հայ ժողովրդի երեսը տեսնելու, իրենց յօդուածների, վէպերի եւ բանաստեղծութիւնների մէջ արհեստ էին արած սեւ գոյներով յեղյեղել Թուրքիոյ հայ ժողովրդեան անասնելի տուրքերի բեռների տակ հեծեծն եւ չարչարուելը, որպէսզի այսպիսի աւետիսներով սրանք առաջացնէին կարեկցութեան զգացումը իրենց ընթերցողների սրտերում տուրքերով ընկճուած խեղճ Թրքահայ ժողովրդեան համար։

Թէեւ տարիքով շատ փոքր, բայց մտքով այնքան փոքր չէի եւ աչքով այնքան կարճատես չէի, որ չդատէի եւ չհասկանայի թէ իմ տեսած հայ գիւղացիները ճնշուած էին անասնելի տուրքերով, եւ չարչարուած նրանց բեռների տակ։

Մէկ տուրքը որ կար, այդ վիճակագրական տուրքն էր։ Որպէս հայերը, նոյնպէս եւ մեր քրիստոնեայ ցեղերը զերծ էին զինուորութիւնից եւ ի փոխարէն պարտաւոր էին տալ գլխա-

հարկ կամ պինաւորական տուրք: Ոմանք այս տուրքը չէին տալիս: Որովհետեւ Թուրքիոյ մէջ կանանաւոր եւ ճշդրիտ մարդահամար չէր յաջորդում, եւ շատեր խոյս էին տալիս տրձանապրուելուց վախենալով պինաւորութիւնից եւ տուրքից:

Բուն լեռնարնակ բիւրակերը տրդէն տպրատամբ կէս անկախ ցեղեր էին տուրքից եւ պինաորութիւնից դրեթէ դերծ: Ժողովրդից դանձուած տուրքերով է որ մի կառավարութիւն կարող է ունենալ դրամ, տպրեցնել ինքն եւ զարդացնել իւր երկիրը: Տուրքեր դանձելու վատթար դրութիւնը, եւ կառավարութեան տպրատ նկատուած է որ պատճառում է անվճար կամ նուազ վճար պաշտօնեաներին մէջ գիջում եւ կաշառակերութիւն, եւ անբարեկարգութիւն: Թուրքիոյ մէջ մէջտակ եւ փոքր պաշտօնեաներից շատեր, մանաւանդ պինաորականութեան մէջ, ամիսներով առճիկ չէին առնում, եւ կէս գնով, կամ առուել եւ կամ նուազ, գիջելով ծախում էին անպանաւորներին եւ այդպէս վաշխառուներին, որոնք եւ տալիս էին նրանց բնկալագիր, որպէս ամբողջ գումարը վճարուած, օրինաւոր տոկոսներով: Այսպիսի վաշխառուներ առհասարակ Հայեր եւ յոյներ էին եւ մասամբ Թուրքեր: Բնական էր որ այսպէս դրկուած պաշտօնեաներ իրենց կորուստը վերադանել ուզէին կաշառակերութեան մէջ, ուր որ գանէին առիթներ:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Ուսոմ ոչ թէ տուրքերի անսահմանելի չատութիւն, բայց տուրքերի քիչութիւնն էր որ ստեղծել էր Թուրքիայում մի թոյլ եւ դէզծ կառավարչական դրութիւն, որից յառաջացել էին Ռուսիա միշտ հետամուտ էր եղել օգտուել, յարուցանելով քրիստոնեաների դէմ անբնական եւ հալրատահարութիւնները. Թուրք իշխանութեան ներքեւ, որպէսզի արդարացնէր Թրքական դատաստանը տիրապետելու իւր քաղաքականութիւնը: Որքան եւ այս պատրուակը անհաճելի եւ ատելի լինէր բոլոր եւրոպական մեծ պետութիւններին իրենց քաղաքական շահերի տեսակէտից, այնուամենայնիւ ամենամեծ բարդատրութիւնը պիտի լինէր Թուրքիոյ Հայ ժողովրդեան համար, որովհետեւ կատարուած պիտի չլինէին մի արհեստական յեղափոխութեան հետեւանօք, եւ այսօր Կարմրզպային Հայաստանը Մոսկվայի մեծագօր պաշտպանութեան ներքեւ պիտի ունենար 5—6 միլիոն Հայութիւն, եւ մի մեծ Հայաստան, որի սահմանները հասնէին մինչեւ Վան, Բիթլիս, Տիգրանակերտ, Կեսարիա, Կարին եւ Տրապիզոն: Բայց Եւրոպա չէր կարող հանդուրժել եւ թոյլատրել յարեան Ռուսիոյ թեւերի տարածումը դէպի Միջագետք եւ Միջերկրական եւ Թրքահայութիւնը զոհուեց, եւ զրկուեց երջանկութեան բաղդից ապրելու ազատութեան կեանքով վասն Կարմրզպային Միութեան երջանկարեր հովանիի տակ իւր ազատ ապրակիցների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

1892ի գարնան սկիզբն էր երբ նոր ձերբակալուած յաճախ տարուում էի ոստիկանութեան նախարար Նապոմ Բէյի ներկայութեան, որպէսզի խոստովանեմ իմ բնիկ բնաւորութիւնը: Նա մի անգամ ասեց.

«Եթէ մենք միևնոյն անգամ տանք ձեզ անկախ կառավարութիւն, Ռուսիա ինքն պիտի պիտպղէ, որովհետև նա ինքն է ուզում տիրել այդ երկիրը իւր համար: Հարկաւ անցեալ տարի տեսար այն վայրենի երեսներով քրիստոնեաները, որոց մէջ վիճակուս թափառելը բնդունեց իւր ներկայութեան, եւ պատուեց նրանց նուէրներով եւ չքանչաններով եւ որոշեց նրանց Համիտիէ անունով զօրապետներ կարգել իրենց համար պետական ծախքով: Մենք պիտենք Ռուսիոյ Հայոց պրոպանութիւնը իւր խաղաղասիրական գրաւած քաղաքով թունաւորած է ջահել հայերի մտքերը մեր կառավարութեան դէմ: Այն ժամանակ որ յեղափոխականն չարժուձեւներ եւ խռովարարութիւններ հանէք, մենք պիտի չհատուցանէք հայերին, բայց այս Համիտիէ քրիստոնեի ձեռքով պիտի ջախջախենք: Եւ մեզ պիտի լինի, ձեզ նման տղայական հայ չհեղնեներ էլ պէս պիտի տատկեն ամէն տեղ, եւ դուք էլ Աքիլլէի տատկելի բանաստեղծ, չղխայտիպ ոճրագործներն մէջ»:

Եւ երբ Նապոմ Բէյի այս մտածութիւն տպատնալիքը գործադրելու հարկը տեսնուեց, եւ Թրքահայ ժողովրդեան արիւնը թափուեց հա-

մատուցած Թուրքիոյ ամէն կողմ եւ Տիգրանակերտի նահանգում, ես տեղաբնակ Աքիայի բնակչուհին էի եւ լսում հայ ազգի մահը: Եւ մատծումս գնում էր դէպի իմ մանկութեան այդ սահմանաւոր միջնորդը, խորհում էի այն ազգականներիս եւ միւս հայ գիւղացիների վրայ որոնք այնպէս սիրով եւ համերաշխ ապրում էին իրենց կենակից քիւրդերի հետ, մնացո՞լ էին ողջ, թէ նոյնպէս կոտորուած էին երկրամնի բարեկամ այն խեղ քիւրդերի ձեռքով:

Սեւ պատմութեան այժը մղեց միտքս այն անտարանից ուր էի դրեթէ հօթանասուն տարիներ առաջ, եւ ուր այժմ գրիչս վերադառնում էր իւր հոյլ կարօտութեան ձգտումներով:

Տակաւին նոյն գիւղին մէջ եմ, ուր հայ մանուկներ, եւ քիւրդ մանուկներ խաղում էին միասին պանապան խաղեր առանց ցեղային խորութեան ոչխի, եւ հաշտասանում էին մէկը միւսին ցոյց տալով իրենց փոքր դաշոյնների գեղեցկութիւնը: Բայց այժմ մեր բնակրութեան դիմաւոր խաղն էր վազել դիւղի բացօդեան ուր շուրջանակի աստ անդ երեւում էին ցորենի եւ գարեի խուրձեր գարսուած մխեանց վրայ, կազմելով բարձր դէզեր, աւելի բարձր քան այդ համեստ տուներն բարձրութիւնը: Ներանց շուրջ սմուռ յատակով ատիակ գետիններն վրայ կային փռուած բոլորակի իրենց կապերից արձակուած երկայնացոզան հատատպատուկ ցորեններով խուրձերը, ցան եւ ցիր, եւ բարձրամած, նրանց իւրաքանչիւրի համար երկու եզներ սայ-

թաքուն քայլերով անուշ էին պատյաներ եւ պլատյաներ անկանոն չրխնոցիներով, իրենց հանւելից քաշչելով փոքր անկողնի ձեւով եւ մեծութեամբ մի թանձր ասխատակ եւ պխտածայրը բարձրացած որպէս մի բարձիկ: Տախտակի վրայ կանգնած էր մի մարդ, չուած բոյնարձակ բացուածքով, որպէսզի վայրը չընկնէր, եւ ձեռքում պնակաձեւ դնկամաքում էր եղնելի ուղղութիւնը, երբեմն քաղցր բարբառով, երբեմն անբարբառ վայրում, նախ մէկ, ապա միւս չորքոտանիին: Այս անասարանը հիանալի եւ անդիմադրելի էր մեզ համար, եւ յաճախ ցաւակում էինք կակուղ, լոյծուն եւ վշբուղ չոր ցորնեղի գանգուածի վրայ, եւ ասյիաքուն քայլերով մօտենալով յանկարծ հասնել եղնամարին եւ կանգնել նրա հետ իւր կտաքի վրայ: Բայց այդ անանիւ կտաքի ցնցումներից ընդհակառակն թաւալլոյր վայր էինք ընկնում:

Եղնամարը իւր հրաշագործ ասխատակի ասկի անառնանելի համակիռատրած արագայր ասմներով չարունակում էր կարտաել միշտ ցորնեղը, մանրել եւ պարձնել յորդ ընտանի անասուններին անդնան համար, եւ նրանց պլխատածայրի հատկերից արտահանել ցորենի ցանկալի հատիկները, որոնք կազմում էին իւր եւ իւր ընտանիքի կենդանութեան հայը: Թէ քանի օր էր անում մինչեւ որ նա յանկարծ էր հասնել այդ վիճակին, իմ դիտողութեան եւ յիշողութեան սահմանից դուրս է, բայց ես յիշում եմ թէ գործողութիւնը ոչ կարճ էր եւ ոչ դիւ-

րին: Յոբննախառն յարդը նախ թխակներով կամ յեղաններով եւ կամ մաղերով լի բաց էին թափում օդի մէջ, եւ հովի հոսանքից յարդը մասամբ քշւում էր տակաւ ինչ հեռու, եւ ցորենի հատիկները ուղղակի ցած: Այս գործողութիւնը չարառնակւում էր նախ մաղերով խոշորածակ մաղերով, ապա մէջակ եւ ի վերջոյ աւելի նուրբ մաղերով, մինչեւ որ միայն ցորենի հատիկներն էին մայր ընկնում, առանց յարդի մասնիկների: Յարդը ներքահիւս քթոցներով կրւում էր դարմանատուն, եւ մայր թափւում պատի վերի մասի պատուհանաձեւ ծակի միջով: Իսկ մաքրուպրդ ցորենը դիզւում էր կալի մաքրուած յատակի վրայ գմբէթաձեւ կոյտերով: Թէ արեւօք ամէնն էր մնում, թէ մէկ մասը դիշեր ժամանակ խոհոյն անհետանում էր ցորենատերոջ ձեռքով, այդ միայն նա գիտէր: Բայց յիշւում եմ մի պինուտրական, եւ երկու սովորական պղեսաններով մարդիկ կանգ էին առնում ամէն կալի մէջ: Մէկը մի կերպ վայրկ չափ լցնում էր ցորենով, հարթում մակերեւոյթը իր ձեռքի քանոնով, եւ միւս երկուսը թուղթերի վրայ դրում էին չափերի քանակը: Պինուտրականը թուրք էր, եւ միւս երկուսը հայեր, որոնք կապալով վերցրել էին դիւղերի ցորենի պետական հարկը, հաւաքում էին հարկաչափի վերաբերեալ ցորենի քանակութիւնը, եւ ի փոխարէն դրամ տալով կառավարութեան: Այս դարձուածուռ գործողութեան մէջ հաւանօրէն

ամենաշահաւորները կապալառու հայերն էին, ապա Թուրք կառավարութիւնը եւ ի վերջոյ առուրի եւ քիւրդ գիւղացին: Պետական տուրքերի վերաբերեալ ես չլսեցի եւ չնկատեցի թէ հայ գիւղացիները զինուորական եւ այս երկրագործական տուրքերից բացի, ունէին ուրիշ տուրքեր, տաննելի կամ անտանելի:

Երրորդ գիւղը, ուր երեսին հիւրընկալեցայ էի, իմ հօրաքրոջ բնակատեղին էր: Նրա ամուսինն իւր ալեւոր մօրուքով, սեմական դէմքով եւ աքեմով նմանում էր Մէքքայից վերադարձած սուրբ ուխտաւորի, անպլիական բանտանեզծնների նկարագրած մի խորհրդաւոր չէյխի, կամ Հին Կտակարանի Յոբ Երանելիին: Նա ունէր մի աղջիկ, մի որդի, մի հարս եւ մի թոռ: Ասում էին թէ նա ունէր երկու հազար ոչխար, եւ բաղմաթիւ կովեր եւ դամէշներ: Ինձ համար դժուարին չէր համրել կովերը եւ դամէշները, բայց որդիների նման չարժուն եւ չրջուն ոչխարները իմ աչքերի կարողութիւնից եւ թուաբանական համաութիւնից վեր էր համարել, թէ յիսրաւի երկու հազար էին թէ երկու հարիւր: Բայց այս նահապետական երեւոյթի ոչխարատէր հարուստի որդին իւր գեղազարդ զգեստներով, ութծաթոպատառ գաշոյնով իւր գօտիի մէջ խրած, եւ իւր սիրտպանծ կեցուածքով յետ չէր մնում իւր հարեւան քիւրդ ցեղապետից, երեսատարդ եւ անուանի այդ չրջանում, եւ բարեկամ ձիավարներ մխանին:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Ես եւս մեր երկար ճանապարհորդութեամբ այնքան վարժուած էի ձիավարութեան եւ իմ պարոյ չէին այնքան վարժուած էր ինձ, որ ես չատ անգամ մխայնակ գնում էի այդ երկու դիւղերից մէկը եւ միւսը բլուրների վերին ստորոտներով ճանապարհներով: Մի օր երբ երեկոյեան վերադառնում էի դաշտատարած դիւղից, հովիտի մէս կողմում եւ բլուրների վերին ստորոտներում տեսայ 6—7 դայլեր, որոց դայլ լինելն չգիտէի, եւ ոչ եւս դայլի վտանգաւորութեան չափն ու սահմանը: Ուղիղ գծով չատ հեռու չէին ինձանից, եւ հովիտի միջով դիւրաւ կարող էին հասանել ինձ եթէ կարիք ըղդայլին: Բայց մեքան վիճերը դարձրած դէպի ինձ, կանգնած նայում էին իմ ուղղութեամբ, եւ երեւի մտածում էին, դալ թէ չդալ, եւ յայտնապէս չդալու որոշումն տուին, որով իրենց ցան եւ ցիր դիւքերից ուղղեցին իրենց քայլերը հակառակ ուղղութեամբ, եւ անհետացան բլուրների մէս կողմը: Երբ հասայ դիւղ ամէն ոք պիտէր դայլերի այդ վհմակի մասին, որ յարձակել էին հովիտում արածող ոչխարների վրայ, եւ ոչնչացրել նրանցից մանոց: Ուրեմն այն դայլերի յոդնած տոտմանները, եւ նրանց կուշտ տոտմոքանները փրկեցին կեանքս տաջին հրտատարկը դէպքից: Այնուհետեւ պրկուեցայ քաջասիրտ ձիավարութեան այդպիսի առանձնակի հաճոյքից:

ՈՒՍՈՒՄՆ Ի ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Այս եղջանիկ եղկիրը հաճելուց ի վեր ես մի անվերջ արձակուրդի մէջ էի. այսպէս էին նաեւ եղկրի ամէն ազգաները, տարին տասն եւ երկու ամիսներ: Որովհետեւ ընդհանուրի քաղաքակրթիչ տարրը քրիստոնեան էին, եւ քաղաքակրթութեան լեզուն էր քրիստոնէն: Քրիստոսը չունէր այրուձին, ուստի եւ ոչ պիտք, եւ ոչ պրահանութիւն, եւ ոչ եւս պարոց: Եւ իմ սեւասած Հայ ակրաները եւ սիրացուն հազիւ թէ ընդունակ էին մտցնել ինձ հետ առհասն ընթերցանութեան, եւ հայերէն խօսելու կարողութեան մէջ: Եւ ես անտարակոյս պիտի մոռանայի Հանդիսել Մեսրոպ Մաշտոցի գրերը երեսունը, եթէ ասելի երկար կենայի այդ օրհնեալ երկրում: Մեծ նպատակս, որ հակառակ իմ խուսափողական ձգտումներին, այնքան ջանացել էր կրթութեան ճանապարհի մէջ դնել ինձ, արդէն սկսել էր պղջալ մեր դարտեան համար, եւ մատաղանջ լինել իմ ուսման համար: Եւ մի օր ասաւ ինձ, կարծեմ ձեղքելինք Բաթմանի վտակը,

Տիգրիսի մէջ ճիւղը, եւ հասանք մի մեծ գետի առաջ: Նրա ափերի մօտ, երկու համեստ եւ խոնարհ թուփերից վեր բոլորակի բարձրացած եւրեւում էին վիթխարի գեղազարդ դունեակը, ոմանք գրեթէ մէկ մետր բարձր: Գետի մէջ կողմը մի չքնաղ բարձրութեան վրայ վեհափառօրէն բարձրանում էին արբատաշ քարերով բարձրարուեստ պարիսպներ, զօսեւորւած ամրակապ եւ ազդու պարիսպներով: Հայոց ազգի Մեծն Տիգրանի Տիգրանակերտն էր, ներքեւում հանդիսաւորապէս հոսող գետը Տիգրիս գետն էր, որ բղխում էր Հին Կաճաբանը կոչուցող եւ չկոչուցող եւ չգաւառող հայ կրօնաւորների փայլուն երեւակայութեամբ առեղծուած Եդեմական դրախտից, եւ գետափի վիթխարի դունեակը ձմերուկներ էին, որոց մեծութեան ձմերուկներ միայն Տիգրանակերտի Տիգրիսն է արտադրում երկրագնդիս վրայ: Եկել էի կրծուել այդ տեղ, խմել դրախտի ջուրը, եւ ուտել Տիգրանակերտի ձմերուկը:

Մեծն Տիգրան ապացուցած է իւր ճաշակի մեծութիւնը, հիմնելով իւր մայրաքաղաքը այս յաղթական դիրքի վրայ: Արդեօ՞ք նոյն պարիսպներն եւ բուրգերն են որոցմով նա ամրացրեց իւր մայրաքաղաքը աւելի քան երկու հազար տարիներ առաջ, եւ որոնք տակաւին կանգուն են յաւիտենական ժայռի նման; եւ տարածելով իրենց երեկոյեան երկայնաձիգ ստուերները Հայաստանի սրտից բղխող, եւ

Պարսից Ծոցի մէջ թափուղ Տիգրիսի ծփծփուն ջրերի վրայ: Մեծ թագաւորը իւր աղեուսականներով մէկտեղ առաւօտեան կենդանատաք եւ ճառագայթաւէտ արեգակին ի տես, եւ զովաշունչ երկրային օդիւ արեւմուտք զմայլումով սկզբնեմ զբօսնում էր բարձրագիր պարիսպների տանիքաւոր ճեմասրահների վրայ, նայելով Տիգրիսի դիւթական ափերին, եւ զաշտերի եւ հովիտների մէջ կանգնած ամարանոցներին եւ աւաններին: Եւ այդ ամէն կէտերից կէս, երեսայ եւ մարդիկ զարթած իրենց երեսները, հրճուանքով նայում էին զարմանահրաշ բերդերի վրայ, ուր փայլում էր Հայաստանի մեծ թագաւորը իւր ասիճամուկ պղեսանների մէջ:

Երկու հազար եւ աւելի տարիներից յետոյ, եղբօրս ձեռքից բռնած, ես տարում էի այս պատմական քաղաքի մեծ դռներից ներս, որ խուսափէի տպխուխիան խառնից:

Ինչպէս գնացին մեր քայլերը, եւ ինչպէս եղաւ, բայց պատահեցինք մի եռանդալից սերայօժար եւ բարեսիրտ տարեց մարդի, պատուելի Թոմաս, եւ յուսարար Սուրբ Կիրակոս Մայր Եկեղեցւոյ, որ ունէր երկու քոյր եւ մի քեռորդի, Գետոս Թորոսեան, որ խոստացաւ եղբօրս իւր զաւակի նման հոգ տանել ինձ եւ իմ կրթութիան: Եղբայրս լեռնցոյ եւ տխրասիրտ բաժանուեց ինձանից, եւ այդ վէրքի բաժանումն էր, եւ այլեւս չտեսայ նրան: Եւ մինչ

մտածում եմ եթէ չլինէր նրա կրթասիրութեան հոգը ինձ համար, այսօր պիտի չկարենայի գործածել այս գրիչը եւ գրել այս տողերը, այլ կրնչէի տգիտութեան խաւարի մէջ, ապրէի նահապետական պարզամտութեան մէջ, մինչեւ որ գուցէ կռտորուէի այն խակ քիւրդերի ձեռքով, որոց հետ ընկերաբար խաղում էինք բլուրների վրայերում, ուր հաւանօրէն ոչնչացան եւ անհետացան ամէն տզրտականներս եւ նրանց ծանօթ այլ հայեր, մեծ կոտորածների ժամանակ:

Տիգրանակերտ ունէր մի երկրորդ հայ եկեղեցի, Սուրբ Սարգիս, որ ես երբէք չտեսայ: Սուրբ Կիրակոս մի լայն եւ երկայն եկեղեցի էր. ունէր մեծ քան Թիֆլիսի մայր եկեղեցին, որքան կարող եմ յիշել: Ունէր մի երկար բակ, որ սկսում էր իւր արեւմտեան կողմից, եւ եկեղեցիի տաճարով տանում էր դէպի հարաւ, ուր կար մի երկրորդ դուռ: Այս երկրձանի բակի վրայ կային երեք գպրոցներ, մէկի դլխաւորն էր Սիմոն Հէքիմեան, ուսուցիչ եւ բանաստեղծ, երկրորդն Տակատ աս Տակատ եկեղեցիի մուտքի հետեւ, դլխաւորն էր Պետրոս Ադամեան, լի գաղափարներով եւ ոգեւորութեամբ, եւ երրորդն էր բակի հարաւային անկիւնում, երկրորդ դռան մօտ, ունենալով կարապետ վարդապետ Պատմաճեանն իբր դլխաւոր:

Ես ընդունուեցայ Ադամեանի գպրոցում, մի երկար սենեակ եռանի պատը կազած տաղնոդպարանի պատին, եւ միւս երկար պատը

լուսամուտներով, դէմ առ դէմ էր եկեղեցին: Մուտքի հանդիսապահպ պատի կենտրոնում կախուած էր Սուլթան Համիդի պատկերը: Ներքանից ներքոյ Սուլթան Ազիզ մէջտեղում շրջապատուած եւրոպացի մեծ պետութեանց թագաւորներով: Երկուսն էլ զինուոր եւ ազդու: Սուլթան Համիդի մէկ կողմում կախուած Հայկի պատկերը սեւազգեստ փոքրագրութեամբ, եւ մեծ կողմի վրայ Վարդան Մամիկոնեան, սպառազէն եւ սպառազին: Այնուհետեւ մինչեւ դռան մօտ, երկու կողմի վրայ ներքաշնակօրէն կախուած էին Մեծն Տիգրան եւ այլ թագաւորների եւ զօրավարների, ինչպէս վերջին ժամանակների երեւելի հայոց պատկերներ, Ղազար Ամիրա եւ այլն: Այդ ժամանակներում եւ յետոյ, մինչեւ 1888 այսպիսի պատկերներ շատ կային Թբղահայոց զարդասենեակում եւ ննջարում, եւ փոքրագրուած էին Կ. Պոլսում թէ Վենետիկում: Մեծ երկու զարդասենեակը ունէին Սուլթանի պատկերի հետ մեծն մէկ երկու այսպիսի պատկերներ: Մեր զարդասենեակը բացառութիւն էր: Պետրոս Ադամեան ոչ մեծն պատկերը պատել էր պատմական Հայաստանի մեծ մարդոց պատկերներով այլ եւ աշակերտների անունները ջնջել էր նրանց քրիստոնէական անունների միջոցից եւ կնքել էր նրանց հայ թագաւորների անուններով, սկսեալ Հայկից, Արամից, Արամայիսից, Արայից: Մօտ 30—35 աշակերտներ էինք, եւ ամէնը

կրում էին իրենց նախնիքների դիւցազների անունները: Մէկը իւր մարմնական կազմի գիղեցկութեան համար կրում էր Գարոյը անունը, միւսը իւր երեսի նրբութեան համար արժանացել էր Աբրայէլ անուան, եւ մի ուրիշն իւր մեծ եւ վայելուն աչքերի համար ունէր Հրաշեայ անունը: Երբ ես մտայ այդ պատմական Հայաստանը երեսի Ագամեան իւր ցանկի մէջ այլեւս չունէր արժանաւոր կամ փափաքելի հայ թագաւորի անունը, եւ անունս գրեց Գարգեւ, որպէս պարգեւ մեծ աշակերտներին, որոնք իրենց անուններով ներկայացնում էին գերեալ Հայաստանի վիճակը:

Բաբելոնդանի օրերը մօտենում էին: Երբանց մէջ ամենացանկալին եւ ուրախարուղը Վարդանանց Հայրենասիրական ոգնի օրն էր: Կարապետ վարժապետ Բասմաջեան երբեմն գպրոցի դրօրը մեծ պատրաստութիւն էր անում այդ պաշտելի օրուայ համար: Ազջիկներ նրատած Թաւերական հագուստներ էին կարում դերասանների համար, եւ աննկատ լի էր որպէս բոլմպոդոն կառուցէին, նոյնպէս եւ արծաթազօծ եւ ոսկեզօծ թուղթերի կարուածքներով, թագեր, պսակներ, զինանշաններ եւ այսօրինակ գործեր շինելու Թաւերական դերասանների եւ նրանց բեմի գեղեցկութիւնը լուսապէս գեղեցկացնելու փափաքով: Դերասաններս իննից մինչեւ տասներեք կամ տասներեքս տարեկանից աւելի չէին: Դերասանութեան համար մեր

պղծոցից ընտրուել էին մի քանի ապտակը, ո-րոնցմէ մէկը ես էի, եւ ինձ տրուել էր Աչխէնի գերը, ապջկայ հագուստներով։ Յիշում եմ պղ-ծոցի յատակը ծածկուած թղթի եւ կաւէ կո-տրտնելով, յիշում եմ զգեստաւորուած մեր վոտքերը կաւատելը, բայց ոչ նեղիչ յուզումը, ոչ հանդիսականները, եւ ոչ նրանց ծափահարու-թիւնները։ Եւ այդ եղաւ իմ առաջին եւ վերջին դերասանութիւնը իմ այս երկարատեւ կեան-քում։

Այդ ժամանակ, երբ յայնժամ Հայաստէր, եւ յետոյ Հայաստան Սուլթանի պատկերը, եւ նրա հետ միասին մեր դատարանի պատերից կախուած Հայկի եւ այլ Հայ թագաւորների պատկերները լրւնց անկենդան աչքերով նայում էին Սուլթան Համիդի, միմեանց եւ մեր վրայ, եւ երբ մեր մանուկ կեանքի թատերական բեմի վրայ մեր տհաս հասկացողութեան լիահատուն ազդասերութեան մեծապատիւ Մեծն Վարդանի արտասանութիւններով նեղիչ յանում էինք Մեծն Վարդան եւ նրա զինակից հայ քաջերը եւ քաջուհիները։ Այսպէս էին մեր այդ երջանկու-թեան օրերի անուրանալի եւ արտրքները եր-ջանիկ ապրեցին այդ ժամանակին, մինչ Թուր-քիա պատերազմի մէջ էր Ռուսիոյ հետ Բալ-կաններում եւ Հայաստանում։ Եւ ես չեմ յի-շում թէ դիակի՞ թէ կար պատերազմ։ Երեւի կեանք եւ երեւոյթ այնքան բնական ընթացք ունէին, որ իմ մտքի վրայ չեն թողել յիշողու-

թեան նշան եւ ապաւորութիւն: Բայց պիտեմ դարուն անցնում էր, արձակուրդը մօտենում էր, եւ Գեւորս Ագամեան պատրաստւում էր դպրոցի վարման մեծ հանդէս կատարել: Տիգրանակերտի նահանգապետը, գինւորական հրամանատարը, եւ այլ մի քանի երեւելի թուրքեր ընդունելով հրաւէրը, Գեւորս Ագամեան զգծածեց իւր գեղարուեստական ճաշակը եւ քաղաքակրթութիւնը թուրք հիւրերի վրայ լաւ ապրեցութիւն թողնելու համար: Օսմանեան պրօշի հետ ծածանում էր եւ հայ պրօշ դուրան եւ ներսում երբ հանդիսականները եկան: Նրանց հետ կար եւ անգլիական հիւպատոսը, մի հայ, Թոմսոս Բոյաջեան Տիգրանակերտցի: Սուլթանի պատկերը պատկուած էր հատրնակեր ծաղիկներով: Նահանգապետը ընդունուեց իրեն նուիրուած թուրքերէն ճառով, որ արտասանեց Անուշաւան տասնեւերեք տարեկան մի տղայ: Եւ Հայկակ եւ Արամայիս կարդացին թուրքերէն դրուատանութեան բնաբեր կտորներ: Նահանգապետը եւ միւսները չատ ուրախ էին տեսնելով փոքր հայ տղաներ որ այդքան լաւ կարդում էին այնքան դժուարին դրութիւնը: Ի պատասխան նահանգապետի հարցումին, Ագամեան բացատրեց թէ ո՞վ էին Սուլթանի երկու կողմի եւ միւս պատկերների ինքնութիւնները տասնց երկինչելու, եւ նրանք լսեցին տասնց գժգոհութեան, բայց զրուցութեամբ: Ապա երկեցինք Ագդային Սահ-

մանագրութեան եւ կեցցէ Հայաստան ազգասէր բարեպաշտ հրդեհը, որ յայնժամ այնքան աւատատ էին Թրքահայ բանաստեղծութեան մէջ, եւ այնքան ազատ, հրդեհու զգրոցներէ, ընկերային հանդէսներէ եւ տուներէ մէջ, ազատ համբոյրով: Նահանգապետը եւ իւրայիններըը ծափահարում էին նոյն հաճոյքով, որպէս հայ հանդիսականներըը:

Մինչ մտքիս առջեւ պատկերանում է այս տեսարանը, ամէն անգամ որ մտածում եմ հայ ժողովրդեան կատարածներըը Թուրքիոյ ամէն քաղաքներում, եւ նաեւ այդ Տիգրանակերտում, եւ ի՞նչ եղաւ մեր սիրեցեալ ուսուցիչ Գեորգ Ադամեանին:

1914ի դեկտեմբերին, մեծ պատերազմի վրատանգալից օրերում, երբ գերմանական ընդծովեայներըը սկսել էին իրենց ազիտատոր գործունէութիւնը Ադրիատեան ովկիանոսում, ես եւ մի անգլիացի բարեկամ, Լարոնս Բինեան, Անգլիոյ գլխաւոր քնարերգակ բանաստեղծը, եւ Բրիտանական Թանգարանի էգուտրդ Թագաւոր գեղարուեստներէ մեծաւորը, միասին գնացինք Միացեալ Նահանգներըը: Նիւ Եորքում գտայ Տիգրանակերտի գերդաստակիցներիցս ամանք. Հայկակը մեռած էր, Հրաչեան գարձել էր գերձակ, եւ աչքերի հուրը այլեւս զուրկ էր իւր բոցերից, եւ Ռուբէն, այն է Գեորգ Թորոսեան եղել էր տարաբաստիկը: Նա հրաւիրեց որ կիրակի օր երթայի Հոբոքէն, Նիւ Եորքի մի մա-

ար, եւ տեսնէի իւր մայրն եւ մօրաքոյրը, որ մայրեր էին եղել ինձ այդ ժամանակից երեսուն եւ հօթ տարիներ առաջ: Տարաւ ինձ Հայոց եկեղեցին, լի հայերով, մեծ մասամբ Տիգրանակերացիներ: Ազօթողները երդում էին երգեցիկների հետ եւ նրանցից մէկի ձայնը հնչում էր աւելի քանդր եւ աւելի ծանր, եւ նրա ձեռքի համբիչը, կամ ակրոգոմեան չարունակ չարժման մէջ էր, եւ դնաակները ընկնում էին յաջորդաբար միմեանց հարուածելից հարուածնելով առաուածային օրհնաբանութեանց մէջ:

— Կը տեսնե՞ս այդ ծերունին: Մեր կարապետ վարժապետն է, որու վարժատան մէջ խաղացինք մեր Մեծն Վարդանի ներկայացումը:

Նայեցայ նրա վրայ, եւ խորհեցայ ինչպէ՞ս ճակատագիրը ցրուած էր մեզ աշխարհս երեսի վրայ, եւ ձգել մեզ Տիգրանակերտից մինչեւ Լոնդոն եւ Նիւ Եորք:

— Ի՞նչ եղաւ մեր Ագամեանը, հարցրի անուանակից մեղմաձայն:

— Էրզրումի բանտին մէջ ապանուեցաւ թէ կախուեցաւ մեծ կոտորածներու առեն, յաճախ համաձայն:

Մնացի լուռ: Սիրտս կոտրուեց, ձայնս խեղդուեց, եւ աչքերս թրջուեցան արտասուքով եւ մթագնեցան:

Այդ, դարձեալ դալիս եմ ի Տիգրանակերտ, եւ այն ղպրոցի մէջ ուր մեր հանդէսը առար-

ան։ Թուրք նահանգապետը, դիւանագիտական հրամանատարը եւ մեծ թուրք մեծատունները չերմապէս ափալեցին Պետրոս Ագամեանի ճեռքը, շնորհակալութիւն յայտնելով նրան իւր պատուական կրճատանի համար, եւ քաջալերական ողջոյններով դէպի մեզ, հեռացան մեր աչքերից։

Ագամեանի դէմքը լի էր երջանկութեան ժպիտով, երբ դառնալով ասաց մեզ, ասեց.

— Ապրիք ազատ, մնաք բարով այս օրէն, մինչեւ նորէն վերադառնամ Ամիճոպէն։

Երբ այս պահանջկութիւնը խայտում էր նրա աչեր պարում, եւ ուրախութիւնը վայելում էր նրա բարի աչքերում, նա անկարող էր երեւակայել թէ իւր այդ ժամանակի հայկական ազատ ճաշը պիտի դար մի ժամանակ որ պիտի խեղդուէր, եւ ազատ զրպարտներն ու չարժամներն այնպէս անգթուէին որ առանելիկ տարի յետոյ պիտի մանէր բանտ եւ բարձրանար կախաղան, կամ ապաստանէր թուրքի կառավարութեան դռները։

Նա դնաց հայրենիք հանգստանալ եւ առողջանալ։ Եւ մենք արձակուրդի քաղաքում եւ գտանում։ Իմ ուսման նախանձախնդիր, եղբայրս Կարապետ չկար այլեւս, բայց իւր մահով նա եւս ուրիշ կենդանացրեց իմ մէջ նախանձայուզութեան վառ զգացումն, քայլել մտաւոր չարժման ճանապարհը, առանց առաջնորդութեամբ ուսուցչի, եւ առանց առաջնորդութեան

ուսուցչի: Եւ աւելի վիճակուեցայ այս վերջին բաղդին, քան առաջին բաղդին:

Արձակուրդը մատամբ օդնեց ինձ փոքր ինչ աւելի ծանօթանալու Տիգրանի մայրաքաղաքի յիպաշրջուած կեանքի եւ կացութեան հետ, որքան այդ հասակիս կարողութիւնը կարող էր թոյլատրել ինձ դիտել եւ դատել: Իւր արտաքին պարզապատում վիճակուածքամբ, եւ ներքին հնապաշտական յատկանիշերով, նա անմոռանալի էր այն ամէն քաղաքներին որ ես յետոյ այնուամենայնիւ Հայաստանում, եւ Հայաստանից դուրս: Եւ կայծին կէտը որ կարծես յիշեցնում էին Պոմպէյ եւ հին Հռոմէական աշխարհը, նոր փողոցներ ստոր եւ անդ, բարձրադիր պատերով, եւ յատակուած բազմաձեւ քարերով, բերդանման բակեր յատակուած սրբատաշ քառակուսի քարերով, եւ բակի մէջտեղում ջրաւից աւազան, որի ջրով լուանում էին բակի քարտշէն յատակը, կամ թրջելով զովացնում արեւակէզ քարերը, եւ բակի մթնոլորտը: Թէեւ շահասոյ չատ տուներ, բայց այդպէս էր սիրելացել Հայկակի եւ մի քանի ուրիշ տուներ որ ես պատահմամբ ունեցայ տեսնել:

Բակերի պատերին յարակից միայարկ եւ երկյարկանի տուներն եւս արտայայտում էին հնապաշտական ճարտարապետութեան կերպարանքները: Բազարը եւ Բէզպազիստանը իրենց նրբին բազմազանութեամբ եւ յարաշարժ բազմութիւնը իրենց զգեստների գոյների եւ

դլխաւորների գանազանութեամբ, ներկայացնում էին հետաքրքրական եւ հրապուրիչ տեսարան, որ կարելի էր տեսնել երազների մէջ, եւ ես սկսում էի դիտել արթնութեան, առանց յոգնութեան զգացումի, թէեւ երկրի իշխանութիւնը թրքական, եւ չքնաղատեսը, սակայն հայկական ձայնը տակաւին հզօրապէս հնչում էր այդ խառնիճաղանճի մէջ, խառնիճնների մէջ, որոց սէրերը միմամանատարած հայեր էին, որոց նաեւ բոլոր Տիրանակերացիների լեզուի մէջ ա գրի արտասանութիւնը միակն է որ փոխել է նրանց հայութիւնից, եւ զարձրել նրանց անգլիացիներ Ջէմբրիջի համալսարանի արտասանութեամբ ուր ա գրերն այնպէս է հնչում որ անկարելի է գրերով ներկայացնել եւ հայ ընթերցողը իւր առաջին ունենալու է կամ մի Ջէմբրիջի համալսարանական, եւ կամ մի Տիրանակերացի հայ, որ նրա լեզուով լսէր ա գրի արտասանութիւնը, եթէ մոռացած են ոչնչը այդ պատմական հայ քաղաքի յայնժամ երջանիկ, բայց յետոյ երջանկազուրկ հայ ժողովրդից: Բայց յայնժամ երբ իմ արձակուրդի օրերում քայլում էինք մի քանի գպրոցականներով, վազգնեբում լսում էինք հայ լեզուն, Սուրբ Կիրակոս եկեղեցին լի էր հայերով եւ ժամերգութեան արձագանգը հառնում էր եկեղեցի բակում կանգնած եւ նեղ փողոցով անցնող հային եւ Թուրքին եւ քրիստոնին: Եւ պարիսպների հրապարակ գոներից չարաճճի եւ կիսամերկ հայ օրիորդ

յետոյ պլեսաւորապէս հայ մարդիկ, կանայք, երեխայք լուացողնս պլեսաւորուած դուրս էին չարժուում եւ ծանրօրէն վայր իջնում դէպի Տիգրիսի զուարթուն ափերը, եւ հակառակ կոպմերի պար ու փոս դաշտերը կանաչելէնի արաևերով, եւ խաղողի այգիներով:

Արեւմուտքը վերջանալու մօտ էր երբ մեր սիրած ուսուցիչը նկաւ երկու ջորիի բեռներով, իւր Ամշիածապին յաւուն չոր պատուղներով, նըւիրելու իւր դասընկերաց աշակերտներին: Բոլոր նրանց մէջ եւ լաւ մտաբերում եմ չորացրած թուխը, որ Աշտարակի անուշահոտ մեղրի պէս քաղցր էր, եւ Ղարաբաղի կարմրագոյն դաթայի պէս համեղ: Եւ մեր ամէնի սէրը աւելի զօրացաւ դէպի մտքի եւ արուի այդ ղեկոյն դաստիարակը:

Արդէն գպրոցը բաց է: Եւ մենք մեր նոր եւ երկար անդաններին առաջ կամ նստած սերտում ենք մեր դասերը եւ կամ կանգնած վարժահարար կամ երկմտարար արտասանում մեր ժըրաջանօրէն ուսած դասերը:

Այդ ժամանակին մի նոր ոգեւորութիւն բռնկեց մեր շուրջ, եւ քաղաքի հայութեան մէջ, եւ ասում էին միմեանց թէ առաջնորդը գալիս էր: Առաջնորդն էր Փիլիպոս վարդապետ Նաղարեան, որ պատերազմից առաջ գնացել էր Էջմիածին եպիսկոպոսանալու, եւ այժմ, պատերազմից յետոյ կարոզանում էր վերադառնալ իւր ժողովրդի մէջ ուր վայելում էր մեծ

ժողովրդականութիւն, եւ ունէր հերոսի համբաւ, որպէս մեր հին եկեղեցականները Եղիշէի նամանաւանդ պատմութեանց մէջ, եւ որպէս մեր մի շատ յեղափոխականներ, որ առանց հերոսական արարքի դարձել են հերոսներ իրենց կուսակցութեանց առասպելային պատմութեանց մէջ, եւ նրանք հաւանաբէն այդպէս եւս պիտի դառնան ապագայ պատմագիրների համար, եթէ այդ հերոսական պատմութիւնները չհետաքրքրեն եւ չի աշնչանան, կոտրուած եւ աշնչացուած Թրքահայ ժողովրդեան նման։ Փիլիպոս եպիսկոպոսի հերոսութիւնն եւս ուսոի թող արձանագրուած մնայ այս տողերի մէջ։

Առաջնորդը Կ. Պոլսից ճանապարհ էր ընկած։ Տիգրանակերտի եպիսկոպոսներից երկու հարիւր կամ աւելի ձիաւորներ մի հնձելագօր դունդի նման հանդիսաւորապէս դուրս էրան բերդաքաղաքի հիւսիսային մեծ դռնից եւ քաւամարտակ հետացան, ուղղուելով դէպի Արզին եւ երկու օր հետու տեղ դիմաւորել սիրուած եպիսկոպոսին։ Եւ սիրուած լինելու պատճառն, արդարեւ կար էլ եւ հասկանում, այն էր որ նա որպէս այդ նահանգի հայ հասարակութեան դլուխ մասնակցում էր նահանգային կառավարական ժողովներին եւ յաջողում էր հայոց ունէ խնդիրներ լուծել տալ ի գոհունակութիւն իւր ժողովրդեան։

Մինչ ձիաւորները հետաստանում ոգեւորութեամբ համբուրում էին օծեալ Եպիսկոպո-

սի սուրբ աջը, Սուրբ Կիրակոս եկեղեցիի բակը դունաւորուած էր դունաւոր կտաւներով, եւ Հայ եւ Օսմանեան դրօշակներով: Եւ Ազամեան ոչ նուազ քան միւս ուսուցիչները, գործնապէս ակնկալում էր ընդհանուր զարդարանքին: Մեր դպրոցի դռնից ուղղակի մի քայլ աւելի հեռուն պատից բացւում էր մի այլ դուռ որ դնում էր յետակողմ ուր էր Առաջնորդարանը իւր բաց բակոնով փոքր ծաղկալից պարտէզի վրայ: Այս դռան աջ եւ ձախ կողմերի վրայ չինուեցան երկու բոյորակ բեմեր: Ձախի վրայ կանգնած էի ես եւ աջի վրայ մի ուրիշը մեր դասարանից: Երկուսս եւս զարդարուած էինք արտասովոր պճնանքով, որանց ձեւի հեղինակը եւ թերեւս նաեւ դերձակը մեր չքնաղակի եռանդուն ուսուցիչներն էին: Ծաղկեղէն չարաններ կապում էին յաղթական կամար այդ տեղից մինչեւ մուտքը: Եթէ չեմ սխալւում մենք ըզդեստաւորուած էինք որպէս հրեշտակներ տարածուած թեւերով, եւ իմ ձեռքում կրում էի մի թերթ բանաստեղծական տողերով, եւ միւսդաչ բառերով, որի հեղինակը ես չէի, եւ որի իմաստը շատ քիչ էի հասկանում հաւանօրէն, նայնիսկ շատ անգամներ սերտելուց յետոյ: Եւ երբ այս բոլոր փառքերի առարկայն մօտեցաւ պղեստաւորեալ քահանաներին, սարկաւագներին եւ սերացուներին օրհնարանութեան երգերով, եւ խնդուած բազմութեամբ, նա կանգ առաւ յաղթական կամարի առաջ, եւ նայեց ներ-

կու բարձրադիր թեւառաբած պահապան հրեշտահներին. երկնպոպութիւնը զարմրեց, եւ ես ինձ տրուած հրահանգի համաձայն, ոհոտս ձայնիս բոլոր ուժգնութեամբ սկսայ բանասանգծութիւնս, գոչելով.

ՋԱՐԹԻՐ ՄՈՐՓԻ, ՋԱՐԹԻՐ:

Այս բացագանչութիւնս եմ միայն մտաբերեմ, եւ տրվել էի թէ Մորփէն քնոյ ատուածն էր, եւ բանատանգծութիւնս միւս ատղերն էին ակղերի նման մխուել նրա կոպերի մէջ, որ նա զարթնէր իւր խոր քնից, եւ տեսնէր այդ վտուտուրութիւնը, որի համար ոչ ես տեսել էի ատաջ, եւ ոչ էլ պիտի ունենայի բաղդն տեսնել այնուհետեւ:

***

Այս երեւելի հանդիպից մի քանի օրեր անց մեր դատարանը ցնցուեց որոտալից բարկութեան մի ձայնից.

— Այդ ո՞վ էր: Ո՞վ էր այդ անօրէնը որ հայհոյեց Քրիստոսի սուրբ կրօնը: Ո՞վ է այդ անղգամը:

Հետաքրքրութիւնից չարժուեցանք մեր տեղերից, եւ նայեցինք այն կողմն որ տեղից ձայնը թնդաց: Եւ տեսանք Փերիստա հալեհապոսը, դլուխը բաց, դերձ իւր չայնաթեւ եւ չայնատարած քղանցքով վերարկուից, եւ պատրաստած իւր նետքին երկայն հարուածի մէջ,

թառնցքները սեղմած, եւ ձեռները ճոճելով ճըլոթիի նման, անցաւ մեր դասարանի դռան առաջով, եւ մեծաքայլ դէպի ձախ, ուր անկիւնի չինքի երիցուղ յարկում Թաղեան եւ այլոց թնդիրների ժողովատեղին էր: Եւ լուսամուտը բացուած էր առաջնորդարանի պարտէզի վրայ: Մի Թուրք պաշտօնեայ, որ գործի համար այդտեղ էր եկած, վիճաբանութեան բռնուելով, հայհոյում էր խօսակից հայի կրօնը, եւ Փիլիպոս մեր կողմից լսելով այդ, դուրս եկաւ եւ բարկաճաճանչ, բռնեց հայհոյիչը եւ պատժեց: Եւ արդարեւ մի քանի րոպէ յետոյ անասնաբ եպիսկոպոսը բռնած Թուրք ասպիկանի թևից, եւ հանելից մի քանի հայեր, գնաց առաջնորդարանի դռնից ներս: Ապա, իմացանք թէ ասպիկանին նա կախել էր իւր առաջնորդեալ բանակ մէջ, դուրը կողպել, եւ թնդիրը հաղորդել կառավարութեան: Ասպիկանութեան բարձրը պաշտօնեաներ եկան: Եւ յանցաւորը ապաստանեց իւր բանակից հրապարակաւ ներողութեան թնդրելով իւր հայհոյանքի համար: Աստիճ էին ամբողջ քաղաքը, Թուրք, հայ, եւ քիւրդ, խօսում էին Փիլիպոս եպիսկոպոսի այս քաջութեան համար մի առժամանակ:

Այսպիսի արարք ուրիշ հայ առաջնորդներից չէ լսուած, թէ արել են, թէ ոչ, բայց հաւիւրեւ եւ աւելի կամ պակաս այսպիսի յուցարար ընդունելութիւններ ստացրական էին Թուրքիոյ հայ հոգեւորականութեանց մէջ: Երբ Աբդուլ Համիտ

դումն էի, ուրիշ հայ բազդաւիճակներից, մանաւանդ Վանեցիներից եւ Մշեցիներից լսեցի թէ ոչ միայն առաջնորդների համար, այլ նոյնիսկ երբ Միացեալ Ընկերութեան Թրքահայաստանի ընդհանուր տեսուչը իւր տարեկան այցելութեան էր գնում ի Մուշ, հարեւաւոր ձիաւորներ ընդառաջ էին գնում մինչեւ մի օր հեռու տեղ:

Յայտնապէս թուրք կառավարութիւնը Հայոց ազգային գործումնների այսպիսի ցոյցերի մէջ չէր նկատում վնաս, եւ չէր գործ տալիս, որքան ժամանակ որ յեղափոխութեան գաղափարը դեռ չէր ծնել եւ անկասկածելի էր թուրք կառավարութեան համար: Եւ Տիգրանակերտի այդ բոլոր ազգային գործումնների մէջ կար միայն ազգասիրութեան անմեղութիւն կամ պարզութիւն, ուստի եւ արտայայտում էր ազատ եւ անվախ:

Եթէ Փիլիպոս Եպիսկոպոս լինէր առաքհայ մի թեմի առաջնորդ եւ եթէ համարձակէր մի ձարպիկ ոստիկանի օձիքից բռնել եւ բանտարկել, նա ինքն պիտի բանտարկուէր, պաշտօնազրկի պիտի լինէր, եւ պիտի աքսորուէր ի Սիբերիա, կամ մի տեղ, ուր հայի երեսն իսկ պիտի չկարենար տեսնել: Բայց Տիգրանակերտցիներ նման անգործութեան առաջնորդի հետ, եւ կարծեմ մահը միայն կարողացաւ բաժանել այդ հովիւը իւր հօտից:

Մշուշապատ յիշողութեամբ յիշում եմ թէ

այդ ժամանակ Կ. Պոլսի Ազգային Ժողովի, այն Թէքհայոց վարչամեծնաի որոշումով պատրիարք եւ կենտրոնական քաղաքական վարչութիւնն հայ քննիչներ ղրկեցին հայաբնակ նահանգները, տեսչելու եւ տեղեկագիր տալու Ազգային Ժողովին, հայ ժողովրդեան վիճակի եւ բարենորոգմանց պէտքերի մասին, եւ այդպիսի մի քննիչ մարմին եկաւ Տիգրանակերտ, երկու կամ երեք աշխարհականներ էին, եւ մէկը Հոգեւորական: Այսպիսի հանգամանքով մի քննիչ մարմին Ազգային Ժողովը կարող էր ղրկել անշուշտ միայն Թուրք կառավարութեան գիտութեամբ եւ համաձայնութեամբ: Երանգիկ ես յիշում եմ միայն մէկի անունը, բժիշկ Գեւորս Բարայեան:

ՎԵՐՍՏԻՆ ԴԷՊԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՈՐՊԷՍ ՍԱՆ ՋԵՄԱՐԱՆԻ

Կաթողիկոսը, Դէպի Դ., ասել էր Փիլիպպոս եպիսկոպոսին երկու տպաներ դրկել էջմիածնի նորահաստատ Դէպրպեան ճեմարանը, Տիգրանակերտի թեմէից: Եւ խնդրի առարկայ էր թէ ո՞ւմ պէտք էր դրկել: Երկար առարկութիւններէց յետոյ ընտրութիւնը ընկաւ իմ վրայ, եւ մի ուրիշ տպայի վրայ, Կարապետ Դամբիկեան, որ մեզ պղտոցներէց մէկի աշակերտ էր: Իմ ընտրութիւնը քաղաքի մեծաւորներէ մէջ դժգոհութիւն պատճառեց, որ լինելով մի նորեկ եւ ոչ տեղացի, երկնց քաղաքի անուանով ընտրուած էր, փոխանակ բնիկ տեղացիի: Եւ այսպէս տասնեւմէց տպաներ պահանջեցին որ երկուքն եւս դրկուին: Այս թիւը շատ մեծ թուեց Փիլիպպոս եպիսկոպոսին, այնու ամենայնիւ չուզեց ընդդիմանալ ազգասիրաբար տպաներին, եւ քաղաքական ժողովի որոշման համաձայն հեռագրեց Կաթողիկոսին: Պատասխան եկաւ, դրկել երկու աշակերտներ, քաջառողջ, եւ ընդունակ: Արդէն ընդունակութեան համար էր որ առաջին որոշումը կայացաւ իմ վրայ: Ուստի այս մասին եւս տպահով էի:

Այս խնդիրը որ կ'արծարծուէր առաջնորդարանի մէջ, ակնկց հետաքրքրութեան առար-

կայ պատնել եւ Հայաստանի բարենորոգմանց քննիչ յանձնախումբի անդամներուն համար: Եւ ընդհանուր համաձայնութեամբ այդ յանձնախումբի բժիշկ անդամին վստահուեց քննել տառնեւութի թեւինոժունների սրտերը եւ թոքերը քննութիւնը: Տառնեւեվիւսը դուրս ելան վառոտոզէ, ամէնը մեծ ոգեւորութիւն արդիւնք, չորսը միջակ, մէկը լաւ, եւ մէկը քաջառողջ: Ես առաջին քաջառողջութիւնն էրցանակը: Կարդը եկաւ վիճակ ձգել մեր վերջ մէջ, եւ մեզմանից ո՞ր երկուսին վիճակ պիտի ընկնի: Առաջին վիճակը ընկաւ ինձ, երկրորդը Կարապետ Ղամբիկեանին: Թոմաս Մոմճեան, քաղաքական ժողովի առենապետը, որ շատ կարեւոր էր իմ ընտրութեան, չեմ մոռնար ծափահարեց երբ իմ անունը եղաւ, նրա հետ միասին եւ իմ ուսուցչին Ազամեան, եւ ապա միւսները: Միջոց եւ ծափահարութիւն եղաւ ընդհանուր երբ քահն դուրս եկաւ Ղամբիկեանին: Ենչն երկուքս որ ամէն ազգուհիներից առաջ արդէն ընտրուած էինք այդ մեծ բազդի համար:

Այն անմոռանալի հանդիսից վաթսուն եւ մէկ տարի յետոյ Լոնդոնում հանդիպեցայ մի Տիպրանակերտցի, որ պատմեց հին կեանքի պատմութիւններից, եւ Փիլիպոս եպիսկոպոսից, որ ասէլ մեծ հերոս էր եղել ժողովրդի պատմ, ասեց նա: Հայաստանի բարենորոգմանց քննիչ յանձնախումբի եկեղեցական անդամը Գաբրիէլն վարդապետ Սրուանձտեանն

էր, ապա անուանի եւ հեղինակ: Մինչ նա այնտեղ էր, անդադար մեծաւորներէն փոքիմ մեռաքանչ հատուածները եւ փքուն դրպանները երեւի կախարդել էին նրա պզտիկ աչքերը, եւ խորհեց մի կերպ ձեռք բերել Տիգրանակերտի առաջնորդական պաշտօնը, տապալելով ամէնն սրբելի Փիլիպոս Եպիսկոպոսին: Թուրքիոյ մէջ հայ ժողովուրդն էր որ ընտրում էր իւր կրօնական առաջնորդը որ միանգամայն դվխաւորն էր իւր թեմի ազգային եւ քաղաքական գործոց, եւ կ. Պոլսի կենտրոնական Վարչութիւնը վաւերացնում էր ընտրութիւնը, եւ ոչ Ռուսիոյ Հայոց նման, ուր ժողովուրդը չունէր իրաւունք ընտրութեան, այլ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պարտաւոր էր երկու թեկնածուներ ներկայացնել Ռուսիոյ ցարին, եւ ցարը ընտրէր նրանցից մէկը որպէս կրօնական առաջնորդ, որ կրօնական գործերից դուրս ուրիշ ազգային գործերի վրայ չունէր իրաւունք:

Ուստի Սրուանձտեան միայն ժողովրդական ուժով կարող էր հասնել իւր ցանկութեան: Մշակեց իւր հողը, եւ իւր պաշտօնի քննական պատճառները եւ գուցէ պաշտօնը լրանալուց, կամ ոչ լիովին լրանալուց յետոյ երեւի յարմար պատճառ գտաւ վերադառնալ Տիգրանակերտ, եւ իւր յետպատաւ աշակիցների ռազմագիտութեամբ բանալ պատերազմը եւ գրաւել առաջնորդական աթոռը: Այս հայրենակիցս պատմեց ինձ թէ դժգոհութիւնը այնքան դառնա-

ցաւ որ Փիլիպոս եպիսկոպոսի անձնուէր բանակը զաւազանի հարուածներով, բերա ծեծելով քշեցին քրիստոսի այդ պաշտօնեան իրենց քաղաքի պարիսպներից դուրս։ Բայց Գաբրիէլին վարդապետ Սրուանձտեան այս դէպքից յետոյ հետզհետէ եղաւ ուելի անուանի որպէս ընտիր եկեղեցական, նաեւ հեղինակ, եւ ես բաղդ ունեցայ ծանօթանալ նրա հետ Ք[ր]իմեան Հայրիկի մէջոցաւ կարծեմ 1888ին Կ. Պոլսում երբ նոր վերադարձած էր Տրապիզոնի առաջնորդութիւնից հրաժարուած։ Բուսական լաւ ծանօթացանք մեմեանց հետ որ եթէ պիտենալի նա էր այն երեւելի մարդը պիտի ինդրէի որ նա պատմէր իւր զանազանութիւնն պատմութիւնը, եւ պիտի ասէի իրեն թէ ես էի այն փոքրիկից մէկը որոց ուսման բաղդի վիճակը վիճակահանուում էր երբ նա փոքր ինչ անդին թափառիկ վրայ թևքուած, արմուկը յենած բարձին եւ երեսը դրած իւր ձեռքի վրայ, զուարճօրէն նայում էր մեր ճակատագրի տեսարանին, եւ վայելում էր Փիլիպոս եպիսկոպոսի արտարուխ հիւրընկալութիւնը։

Բայց որքան կրօնը համարուի երկնային, նրա պաշտօնեայ կրօնաւորը, այնուամենայնիւ, մնում է աշխարհային, եւ աշխարհային վատթարը եւ վատը մնում են վատ եւ անբաժան նրա արատից եւ պղտորումներից։ Բնականաբար Սրուանձտեան եւս չէր կարող դերծ լինել մարդկային այս թևքուածքից ինչպէս եւ նրա-

նից ուելի բարձր հայ եկեղեցականներ որոնք իրենց անկրօնական արարքներուն համար ենթարկուել են կամ զանհիներուն դատարաններուն հարուածներուն եւ անարգանքին, եւ կամ արգարահոն դրիչներուն դատապարտութեան:

Մեր բազդի վիճակահանութենից յետոյ, Ղամբրիկեան եւ ես խնամքոտաբար զբաղեցանք երկու եկեղեցականներուն, եւ երկայնապղեսա պատկառազդեցիկ աշխարհական մեծերուն, եւ ինքնագահ եւ հարստութեամբ զարդ եղանք:

Տիրութեան եւ ուրախութեան խառն զգացումներով եւ մտածումներով էր որ մենք, եւ հօրս հայրենակից ընտանիքներ, թողնելով վարպետարանը, որ մեզ համար լի էր անուշ յիշատակներով, եւ հեռացանք, ատ մեր երազից ուեռնաց երկիրը ուր բազդաւորութիւնը եւ հարստութիւնը սպասում էր մեզ: Եւ այժմ տիրութեան եւ ուրախութեան խառն զգացումներով մխաբ եւ սիրտս զարճաւ դէպի Մուֆարղին ողիտակատեսիլ քաղաքը, պատկած ծովածաւալ դաշտի վրայ, եւ իւր մէջքը տուած մի բարձրահասկաց լեռնաշղթայի որի վերջը վերջանում էր կապուտակ օդի թանձրութեան մէջ, եւ իւր ձախ կողմում, իւր բարձր մինարէներ տաներով տատջով, Բաթմանը հեղեղատատ իջնելով Մարտատի թէ Մատունի հեռաւոր սրածայր սարերից, հանդարտատաբար տահում էր Բչերիկի ալիքատար հովիտներով, ուր եւ կարծում էի յաւիտենական բնակիչը լինել,

ուր Հայր, մայր, եղբայրներ եւ քոյր, եւ ան-
համար ազգականներ Հանդչում էին նահապե-
տական կեանքի անխռովանքութեան մէջ:
Ճակատագրերը վիճակում էր ինձ հեռանալ այս
ամէնից, եւ նրա հեռանալով Մուֆթրդինից, որ
քոյս ամանց խոհական Տիգրանակերան էր, եւ
Թոզալ Լրսական Տիգրանակերաց, եւ ինչ որ
նրա մէջ էին ինձ համար նոր, կենդանի եւ սի-
րելի, եւ լքիլ եւ առանալ ուման եւ կրքու-
թեան լոյսը նոյն Վարպետապետում որանից
հեռացել էինք, կարծելով առ յաւէտ:

Արդեօք փառքո՞վ թէ անխռով հեռացանք
Տիգրանակերաից, ո՞վ ժողից կամ ո՞վ սիրից,
կամ արդեօք կայ՞ն մարդիկ որ սեղմեցին մեր
ձեռները, եւ չարժեցին ձեռները եւ թաչիքնակ-
ները մնաս բարեւի ողջոյններով: Ամէն ինչ
խաւար է եւ աչինչ եմ լիշում այդ տեսարանից:
Միայն լիշում եմ որ Դամբրիկեան եւ ես Ջրբե-
ների վրայ նստած, ուրիշ բազմաթիւ Ջրբիններ
բրենց մէջքերի վրայ կրելով կիներ եւ մարդիկ,
եւ խաշար բեռներ: Ամէն Ջրբի իր վրից կախ-
ուած ունէր զանգուլաիններ եւ բժժոցներ: Մեր
բազմութեան Ջրբինները քայլում էին միմեանց
յետից, եւ ոչ միմեանց հետ: Եւ առաջից եւ
յետից եւ մօտից նրանց զանգերի հնչիւնները
հնչում էին օդի մէջ, եւ արձագանգ տալիս ձո-
րերում: Եւ այս աննկարագրելի նուագահանդէ-
սը գազրում չունէր որքան ժամանակ որ Ջր-
բինների ոտները քառատրակ կամ զանգազա-

քայլ չարժման մէջ էին: Եւ երաժշտութիւնը դադարում էր երբ հնձեալները իջնում էին լ-բենց բարձրութիւնից, եւ ծանր բեռները բեր-ւում էին վայր դնանք վրայ, եւ յաղնախանջ նուագածուները նախ ծնրադրում էին, եւ ապա ամբողջ մարմնով տարածւում կախուղ խոտերի մէջ, հովանաւորող ծառերի ներքեւ, եւ վերբա-սին սկսել ցերեկուայ կերակուրից եւ երա-դումներից յետոյ:

Երբ հասանք Լճէ մեծ գիւղը Երեւանեան սրբատաշ տան կառուցանոցները տարու մեզ նշանաւոր քրէրդ ցեղապետի մօտ, եւ յանձնեց նրան Տիգրանակերտի երեւելիներից Թոմաս Մամճեանի նամակը: Ցեղապետը ընդունեց մեզ իր քիօշքի մէջ երբեւ հիւրը նոյն գիշեր: Եւ յանձնարարեցինք տուեց յաջորդ տեղերի քրէրդ բէկերին: Առաջնորդից ունէինք յանձ-նարարական կարեւոր վաճառական Տիգրանեա-նին, բնիկ Տիգրանակերտցի, եւ եղբայր Հրա-շատրդ Մկրտիչ եպիսկոպոսին, նաեւ Կարսի առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսին: Ո՞վ էր ծախսում մեր կերակուրների համար եւ ո՞վ էր կերակուր եփում մեզ համար, եւ արդեօք դրամ կա՞ր մեր գրպաններում, այդ մոռի՛ կ իմ մըտ-քում: Բայց գիտեմ որ մեր ճանապարհորդու-թիւնը շատ երկար էր, եւ օրեր էին անցնում, եւ մեր ճանապարհորդութեան վերջը չկար:

Մեր ձախ կողմի վրայ, եւ մեր ճանապար-հին զուգընթաց երբեմն մեզ քանի մի քանի մղոն

ցած, երբեմն անդնդախոր, ընթանում էր ալբրընթաց մի մեծ ջուր, որ գալիս էր կարնոյ կողմից եւ արշաւում էր դէպի Տիգրանակերտ։ Եւ ջուրի միւս կողմի վրայ նոյնպէս բարձրացած էին լեռնային պատեր, որպէս էր մեր կողմի վրայ։ Եւ հովիտները, եւ սարերն եւ ձորերը, տեղ տեղ մերկ, եւ տեղ տեղ խիտ կամ ցանցառ, ծածկուած էին բազմատեսակ կանաչազարդ ծառերով։ Մեր նեղ եւ ոլորուն ճանապարհի վրայ տատ անդ տեսնում էինք կորատուած ապրիւրներ բարակ եւ բիւրեղանման ջրեր որ վազում էին վերից, եւ հոսելով մեր տակից թափւում էին ցած եւ թաղւում էին հսկայ ջրի ափմկայոյզ հեղեղի խորքը։ Տիգրիան էր այդ որ սահիծի նման մռնչում էր, եւ մեր ջրբինների դանդակները ձայնակցում էին իրենց մեծահնչիւն զօդանչիւններով։

Մենք բարձրանում էինք չարունակ։ Երբեմն հանդիպում էինք քիւրդ ձիաւորների, ձիերը զարդարուած փնջունքներով, եւ իրենց հետեւները կողերից կախ ընկած սուրերով, եւ ձեռներում խիզախօրէն բռնած սրածայր ակռներ։ Ծառերը հետզհետէ չքանում էին, եւ սեւանում էինք տարածութիւններ։ Զգում էինք թէ մեր քայլած հողի վրայից աւելի բարձր հող չկար այդ տեղերում այլեւս, բացի ինչ ինչ սրածայր վոքր բլուրներից, որ հետաւոյանի ցածութիւնից հետանօրէն երեւում էին որպէս երկնագոյց կառոյցները։ Երկնքին մօտացած

այս հոգւային բարձրութեան վրայ նրա առանձնասեռ օդը վայելում էր իմ թարմ այսօրը այրող չօշափումներով: Բնութեան այս գմայլելի համաչափութեան մէջ զուգ ամենաուշադրութիւն էր նայողութեան կամ ուշադրութեան մի լինը որ երկուսակը ընդարձակօրէն տարածել էր նրա անչափ թևերը ջոջանման երեսյթով, եւ նրա հոգեկէն վիճակները մեղմօրէն թևքուած էին դէպի վայր, դէպի նրա անտեսանելի առնները: Եւ անդունդը բաժանում էր մեզ այդ կախարդական հոգի վրայ առաջ կոխելու կարելիութիւնից:

Մեր կրծանքի անզամները դրկիչ ամէնը հայեր էին: Եկաւ մի ակռ, ուր ամէն ոք իրենց երեսները դէպի աջ, այդ պատկառազդեցիկ դրութիւնը, խաչակնքելին ճակատները եւ կուրծքերը, եւ մեծապարծութեամբ աչք ածելով այդ պանծալի տեսարանի վրայ, մխածին երկիրին, եւ նրանց երգը արձագանգեց Թաղեոս Հովհաննէսի եւ Բարեի խորքերում.

Հայաստան երկիր դրախտավայր,
Դու մարդկայնոյ ցեղիս որբան:

Բնութեան լեռները էին, որի ծոցերից բղխում են առկուն Ազամի դժբախտութիւնը դրախտի հոգս տեսարանը պետերը:

Ուրիշն այս էր այն հանդուցեալ դրախտի տեղը, որ մեր նիկոլեցիկաններս դրել են, մեր նիկոլեցուհիները պաշտել եւ մեր բանաստեղծները երգել:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Մինչ մեր կարաւանը ընթանում էր, եւ նրա ջորիների վզերից կախուած զանգուլակները զնգզնգում էին օդի մէջ, մենք տակաւին տեսնում էինք Բիւրահնեան լեռները եւ նրանց մեզմաթիք պատխալը, ուր երբեմն էր Աղամի դրախտը, եւ մինչ ես մտածում էի արդեօք ո՞ւր էին դնացել նրա հրաշալի ծառերը, կամ ի՞նչ են պատահել նրանց, երբ դէմքս դարձրի դէպի երկինք, եւ այնտեղ լուսաշող սեղանի վրայ բացուած տեսայ Աբարչի արձանագրութեան այն էջը, որի վերնագիրն էր «Դրախտ Կորուսեալ» գրուած ամենամեծ, ամենամեծ գրերով։ Այնտեղ կարդացի այն տողերը որ յառաջ բերի վերը ինչ վերեւում, եւ որ գրուած էին Աստուծոյ ձեռքով եւ հայերէն լեզուով։

Ամենակարողը յայտնապէս որոշել էր կորցնել տալ դրախտի տեղը եւ դարձնել անգըտանելի, բայց հայ գրիչները դուրս եկան ուելի հնարագէտ, եւ գտան։

Այդ Կորուսեալ Դրախտը, որ հայ գրիչներ գտել էին իրենց նրբատեսութեամբ, սկսել էր կորնչիլ մեր տեսութիւնից։

Փալան Թէօքան լեռների ահռելի գագաթայր ճանապարհի վրայ էինք քայլում, երբ մեր առնների չարժումները կարող էին անուանել քայլը։ Փալան Թէօքան, այսինքն թամբ թափող, կամ վայր նետող։ Ուստի այդ ճանապարհի վրայ ոչ ոք կարող էր համարձակիլ նստել ջորիի, էշի կամ ձիու վրայ, ոչ Յունաց

Հերկուչքը, եւ ոչ Հայ հակաթուրք յեղափոխական կուսակցութեանց ամենատանգաւոր դէմքերը: Եթէ նահէրնք մեր բարեկամ Ջոբինեբի վրայ, անտարակոյս պիտի թաւալէինք յանդունդս անդնդոց մինչեւ որ մեր անմիս կտրատուած ոսկորները հասնէին Հայաստեան սիրելեաց Կարին քաղաքի արուարը: Ջոբինները անձամբ բարեբաղդաբար ազատ էին այդպիսի դժբախտութենից, չնորհիւ իրենց ճկուն եւ հասարակաց առնելին, բայց նրանց անշուշտ հասարակաց վտանգները որպէսզի թափահար չթաւալէին Թուշկով դէպի Կարին, կապկապուած էին Ջոբինեբի մէջքերի վրայ ոչ միայն նրանց վորերից, այլ եւ վզերից երկու դոյզ արուանքների միջով եւ պչերից: Նրանք չատ դոհ չէին այդպիսի պարտադրութենից, բայց հանդուրժում էին համբերութեամբ իրենց սիրելեաց վտանգների սիրոյն համար: Ահա այդպէս էր ճակատագիրն այն ամէն Ջոբինեբի, որոց վիճակուում էր իջնել կամ բարձրանալ աշխարհահռչակ Փարան Թէօքանի այս դահավէժ ճանապարհով: Ջոբինները իջնում էին ատաջից, եւ մենք խոհեմամտութեամբ յետից, լի սրտաչարժ երկիւղածութեամբ, եւ հետեւակայեաց անվհատ ակնածութեամբ: Մեր խոր նկատմամբ հարկ նշմարելի է ուսումնասիրել յեղափոխականների Կարին քաղաքը, չանասած պաշտելի Կարին քաղաքը, որպէս վկայուած չանասած մարդկութիւնը պաշտում է

զԱստուած: Կարնոյ մօտից, եւ Կարնոյ համահաւատար հարեւանեամբ ընդլայնուում էր, եւ երկայնանում էր Հայաստանի այդ երեսի դաշտը, ուր քանիցս ասանիակ հազարաւոր ուս հնոխան զինուորներ քայլերով, եւ հեծեալ զինուորներ իրենց ձիերով, զբօշակներով, թնդանօթակիր կառքերով, եւ իրենց թնդանօթների եւ հրացանների թնդիւններով, եւ սուրերի շաչիւններով, դէմ առ դէմ եղան Օսմանեան զինուորների, որոց նախորդների զօրութիւնը սկսուեց մինչեւ Վիեննա եւ Թունիզ, եւ որք այժմ իրենց վառքի արեւի թեքման հետ թեքում էին դէպի անկասութիւն: Եւ սակայն սակաւին չատ ժամանակ չէր անցել, երբ մենք նայում էինք այդ դաշտի վրայ, որ այդ տեղ հողը զուրկ էր կանաչից, եւ ամենուրեք կարմրած արդէն թուրք նոյնպէս ուս զինուորների արիւնով: Եւ զրկիչ սուրն անգամ ուսի թուխած արիւնը այդ տեղ, եւ նրա յաղթական սերազանութիւնը կարնոյ վրայ ի զուր:

Ռուսիա նախ յաղթուելու զրկի մէջ էր այդ կողմում, բայց բաղդը փոխուեց: Թրքական բանակը զուրս եկաւ կարինից, զուցէ քաղաքը կրծանուելի չենթարկելու համար, եւ ուս բանակը ներս մտաւ առանց կռւի: Եւ այս առաջին անգամը չէր որ Յարի զօրքը յաղթական դրաւում էր Կարինը: Եւրոպայի կառավար մեծ պետութիւնները միմեանց հետ զարձել են մի շատ անհամեմատ եւ անհամապատ-

կից եւ հակընդէմ, երբ հարկ է եղել մի բարի գործ գործադրել Թուրք կառավարութեան բարեփոխութեան մէջ, յօգուտ Թուրքիոյ եւ նրա քրիստոնեայ հպատակների: Բայց միշտ եղել են համերաշխ, համախորհուրդ եւ համագործակից, երբ կարդը եկել է պաշտպանել Սուլթանի հողը Յարի ախրապետութեան դէմ: Եւ այս երբորդ անգամն էր որ Ռուսիոյ ամենազօր Ցարը հարիպրուած էր հնազանդել Երապայի հրամանին, եւ դէմ-դիմաց դուրս գալ կարինից, եւ հեռանալ նրա դաշտից, ներկուած իւր զինուորների արիւնով:

Եւ ինչ որ Ցարը իւր ահեղ բանակներով չէր յաջողից ունենալ, ռուսահայ յեղափոխական վէպերի եւ բանաստեղծութիւնների տպերով զինուորական կրթութիւն առած եւ նրանց գործչացող ոգիի ներշնչումներով զրահաւորուած եւ սպառազինուած քաջերի տղայներ Հայկազուններ զգացին թէ իրենք ունէին դիւրաւ պիտի կարենային պարտութեան մատնել Թուրքիան քան Ռուսիա կարողացաւ կամ գուցէ խելքով անդիտակ էին պատահած պատերազմին, եւ կամ հաւանօրէն լիովին վստահ էին թէ Երապա որպէս մէկ մարդ, միանամ վռնտից Ցարին էրզրումից, նոյնպէս պիտի չարունակէ լինել որպէս մէկ մարդ եւ գործէր միանամ, երբ խնդիրը դար Հայ ազգին որի համբաւը լսուել էր պատմութիւնից, եւ որի աչքարհաճըս-

չակ հանճարի եւ արժանիքներուն համար ունէր մեծ յարգանք, եւ թէ անշուշտ նրա հետ պիտի չվարուէր այնպէս որպէս նա վարուեց Ռուսիոյ դէմ, եւ պիտի թոյլատրէր որ յաղթական հայ յեղափոխականները մնային իրենց գրաւած էրզրումի մէջ, եւ այնտեղ հաստատէին անկախ Հայաստանի մայրաքաղաքը:

Ես չէի կարող ունենալ այս փառաւոր մրցումները այդ ժամանակի ուղեղիս մէջ, որովհետեւ նա դեռ խակ էր, եւ մտաբերիկ, երբ իմ ջրբին ոտք կոխեց Կարնոյ վոզոցները մէջ, եւ նամանաւանդ երբ ռուսահայոց մէջ այդպիսի մանուկները տակաւին չէին ծնած: Եւ երբ ծնան, նրանք մնացին մտախակ եւ մտաբերիկ մինչեւ եւ մինչեւ այսօր:

ԿԱՐԻՆ ԵՒ ԿԱՐՍ

Երբ իրիկնադէմին հասանք էրզրում, մեր կառաւանապետը տարաւ մեզ Տիգրան ազայի պարծանքին, յանձնեց մեզ նրան յանձնարարականի նամակով միասին, եւ խնդրեց նրանից մի յանձնարարական նամակ Տիգրանակերտի առաջնորդին, մեր ոչ եւ առոչ ժամանման համար:

Մեր հիւրընկալը հետաքրքրուեց մեր ուղեւորութեան եւ պրպտութեան մասին հայրական բարի հետաքրքրութեան դրացումով, մինչ պրպին, սեւ մօրուքով մօտ երեսունամեայ կարճահասակ մի երիտասարդ, մի քանի րոպէ մեր մօտ կանգնած մնալուց եւ առանց մի բառ փոխանակելուց յետոյ, արագօրէն հեռացաւ, եւ անկիւնի նման յարաշարժ քայլերով սկսեց հրահանգներ տալ երկու երիտ բեռնակիրների, որ ապրանքի խոշոր բեռներ էին չարժում դրսից իւր հօր պրոտեզանին կից մթերանոցի մէջ: Ախրէն երեկոան մօտեցել էր: Գործատէրն վտակաց, եւ ես եւ Ղումրիկեան պարիկեչտա-

դէմ սկսեցինք յառաջանալ մեր երկու մեծատուններուն քայլերուն հետ համընթաց: Տունը ուր կանգ առանք խեղդուած եւ վսեմ չէր նոյն փողոցով եւ հանդիսակաց բարձր տուներով, բայց էր բաց եւ արձակ բաւական լայն եւ երկայն տարածութեամբ, եւ հետաքրքրանքի առարկաները անարգել էին մեր աչքերուն առաջ, եւ ցած առնիքներուն վրայով եւ պարտէզներուն միջով:

Մտանք մի ընդարձակ սենեակ, երկու կողմից լուսաւորուած լուսամուտներով: Գետինը ծածկուած էր ընդարձակ գորգով, մի երկու դիւանների պատերի երկայնքով զարդարուած գեղեցիկ գորգերով եւ բարձերով, եւ տեղ տեղ պատերից կախուած դունապնդ գորգիկներով:

Երբ ժամը հասաւ, մենք նստեցինք ընթրելու: Ամէն ոք արդէն նստած էր լայն եւ բոլորակ սեղանի շուրջ ծալապատիկ: Սեղանը երկու կամ երեք թզից աւելի բարձր չէր: Տան անդամների մէջ կարծեմ կային մէկ երկու տղիկ եւ մեզ տարեկից մի աղայ: Մայրը եւ աղջիկները կրում էին այն զոյնզոյն, գեղատեսիլ հրապուրիչ եւ հետաքրքրական տարազը, որ յատկապէս պատկանում է Կարնոյ Հայ կանանց գեղարուեստական առեղծագործութեան, եւ հասանօքին չատ եւ չատ հին դարերից մնացած, եւ տակաւին չարունակուղ եւ ապրող հայկական կանոցի հագուստների ձեւեր: Ինձ

աւելի հետաքրքրում էին այդ նորաոես տաբաղնները, ուստի իմ աչքերը աւելի գարձել էին այդ զարդասպառ դլուխներին եւ մարմիններին վրայ քան ուսելիքներով սեղանի վրայ, երբ տանտիկին տարիքոտ մայրը լուր մատներով երկարից դէպի Ինձ մի թերթանման պատառ, Աբարատեան աշխարհի լաւաչի նըմանն, բայց աւելի հաստ, եւ ոչ ցորենագոյն, բայց քնքոյշ սրպէս թարմ կարագի գոյն, եւ վերեւն սրպէս պաղպաղակ: Եւ ասեց· «Որդիք, կերէք, էրզրումի մածունի երեսին կապուտած սերն է այս: Այն չինուած է Ադամայ դրախտի եւ նրա տարերի սերուն ծաղիկներից հաւաքելից, որ մեր աշխարհները ուտում են տրածելիս: Աշխարհի երեսին չկայ ուրիշ երկիր ուր նրա աշխարհներին կաթից այսպիսի սքանչելի սեր առնեն: Մենք չորացնում ենք այն լաւաչի նման, եւ դրկում ենք Կ. Պոլիս եւ ուրիշ քաղաքներ, մեր բարեկամներին, որ ուտեն վայելեն այս աստուածային կերակուրը»:

Այս երկնային դովասանքի վրայ հետմունքս այնքան մեծացաւ, որ բերանս լայնաբաձակ բացուեց, դլխիկան պատառի վերնամասը դլխաստուերով անհամբեր ատամներիս սրտութեան ներքեւ, ընկաւ երկարած թերթաւոն լեզուիս վրայ, եւ ժայթքող լորձունքի յորձանքի հետ թաւալելով կանգ առաւ խառատակուռ յաւերժական հայրապանի մէջ: Սեղանի կարմիր սփռոցի վրայ միւս հրապուրիչ ուտելիքներն

էին պահիր, որի սպիտակ մարմնի ատամների մէջ ապի սխորժելի համը դեռ չէր յաջողել ծծուիլ, եւ կարապը իւր ամենաթարմ երեւոյթով թեւեր էր էկ բոլորովին նոր էր բաժանուել իւր ծնողական կաթից, եւ նրա մօտ մեծ-ատարած եւ ճուտճեւ թզաչափ մի խոր սիրուն ամանում երեւում էր մեղրը, կարապի նման թանձր, եւ գոյնով նման գոհարի, իւր քաղցրութեամբ նմանում էր քաղցրահամ ծապիկներին, եւ իւր անուշահոտութեամբ բուրումնալից ծապիկների բուրաստանի: Ընթրիքի ընթացքին երբ կերածս մսի մէջ պատռի ծապիկների համ եւ հոտ, եւ չկարողացայ զսպել զարմանքս, բարեսիրտ մայրիկը բացատրեց էկ էրզրումի դաշտի եւ սարերի ուշխարների մեծ չինուած էր ծապիկներից, ուստի եւ նա տալիս էր ծապիկի համ եւ ծապիկի հոտ: Եւ մէջ ընդ մէջ բերելով տեղ բաժակի կաթնախառն, շաքարախառն չինական տաք թէյի սխորժելի ըմպումով մեր կոկորդից վայր էինք վանում մեր կերածների դանդաղընթաց մնացորդները հանապարհ բանալու սերի, պանրի, կարպի եւ մեղրի հատակից յաջորդական պատառների համար:

Մօտ մի չարաթ մնացինք այս քաղաքում, որ չէր երեւում առատական թնդանօթների աւերիչ սեւ հետք, ինչպէս որ այլեւս չէր մնացել եւ առատական զրաման հետքը, եւ քրքա-

կան գրօշակը ծածանուած էր շատ չէնքերի ճակատներին, որպէս թէ պատերազմի յաղթողը եղել էր Թուրքը եւ ոչ թէ ռուսը:

Մի օր վազ առաւօտեան մի հրապարակի վրայ Կարապետ եւ ես, Տիգրան ազգի զեկավարութեամբ, մտանք բազմութեան մէջ. մարդոց հետ կայլին կիներ եւ մեզ հատատար վոքրեր, ձիեր, ջորիներ եւ էշեր, ամանք զոտոզացած անկողնի եւ զգեստի ուռած բեռներով կրոդութեամբ իրենց մէջքերի վրայ, եւ ամանք ճկատ իրենց քաշ ընկած ծանրակշիռ բեռներ անտանելութեան ապտեղութենից: Մարդերից մէկը յարդանքով յառաջացաւ դէպի Տիգրան ազան, եւ ասեց նրան թէ ձիերը պատրաստ էին: Կարաւանի գլխաւորն էր: Եւ հրապարակի վրայ հաւաքուղները ուղեւորներ էին դէպի Կարս, իւրաքանչիւր ոք նստած իւր քառոտանի եկիպաժի վրայ: Տիգրան ազա Տիգրանեան՝ Տիգրանակերտցի՝ ներկայացրեց երկու Տիգրանակերտցի ազաներին այդ կարաւանապետին եւ տալով նրան մի նամակ, յանձնարարեց որ նամակով մխաին յանձնէր մեզ Կարսի առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսին, ազա համբուրեց մեզ, մաղթեց որ մենք լինէինք լաւ ուսումնականներ, եւ լաւ մարդիկ, եւ հեռացաւ: Կարաւանապետը օգնեց մեզ վեր բարձրանալ մեր բեռնատարդ ձիերի վրայ: Յաջորդաբար ուրիշ ձիեր, էշեր, եւ ջորիներ սրժտանանում էին նամանօրինակ պատիւներին, եւ ընդ-

հանուր կարաւանը սկսաւ իւր հանդիսաւոր քալուքը մարզկային գոչիւններով, եւ անասնային խրխնջիւններով եւ զոռոցներով ներքաշնակ երաժշտութեան մէջ։ Մեր բազմապիսի բազմութեան տեսարանին ի տես, փողոցներով երթեւեկողներ հետաքրքրաբար կանգ էին առնում, հանում իրենց դունաւոր խոշոր քաշկինակները իրենց գլխաններից, կամ չալաւար գօտիներից, կամ ծոցերից եւ շարժելով օդի մէջ երթած բարեւի շարժուձեւերով, բացատրում էին կառաւարներով։

Մահոփ Գրալի (առաջ քաղաւորի) բանակը իւր քոչ ու քֆանդներով վախչում է մեր Օսմանլի մեծ վտախչահի ձեռքերից։

Ինչպէս նրանք զուարճանում էին մեր տեսարանից, նոյնպէս եւ մենք նրանց տեսարանից, մինչեւ որ մարզիկ, փողոցներ եւ տուներ վերջացան տեսնուելուց, եւ բոլոր գաշտի վրայ քաղաքը պաշտպանող ամրութեանց շարքեր սկսան երեւիլ՝ բարձրացած համեստօրէն եւ ծածկուած անմեղ երեւոյթով հողով, եւ որոց խակաւան զօրութիւնները քօղարկուած էին հպարձին չքաւորի նեղքեւ, եւ ոչ որպէս Մեծն Տիգրանի Տիգրիսի բարձրագոյր ափերի վրայ վեհօրէն դէպի երկինք բարձրացած արքայական քարերից ամրակուռ պարիսպները եւ ուռուցեալ բուրգաձեւ աշտարակները, որոնք իրենց ցուցանէին զօրութեամբ ապրում էին ամէն եւ ամբ-

ասէ ամենահեռաւոր հեռաւորութիւնից ունկն թշնամիների աչքերին եւ սրտերին, Աստուածանէն թագաւորներին, եւ Յուլիոս Կեսարի նախորդ եւ յաջորդ Հռոմէացի աշխարհակալներին: Այս ժամանակի ամրութիւնները իրենց տեսքերով թզուկներ էին հին զարերի հսկայական ամրութիւնների համեմատութեամբ: Բայց այս անհրապոյր թզուկները, իրենց անհաշուելի զօրութեամբ, հարիւր եւ թեւեւս հազար անգամ աւելի զօրաւոր էին սպանողաբար զօրութեամբ քան այն հին մեծատիպ հսկաները, եւ նրանց նմանները, որոց մահաբեր կապարեայ գնդակները աւելի վտանգ էին քան ոսկի կամ արճճի հատիկները, մինչ այս թզուկների վտանգ դուրս պայթող կապարեայ մահաբեր գնդակները մեծ էին որպէս Հրեզգանի ափերում եւ Վազարշապատի բոստաններում բուսնող դանդաւ ու կլոր մեծ եւ միջակ ձմերուկները:

Եւ մինչ այսպէս անցնում էինք, եւ հեռանում այս մահատիպ դամբարաններից, եւ ընթանում ընդարձակ տարածութեան մէջով որ ամէն կողմերից կարծես վերջանում էին հեռաւոր լեռների կապուտակ գծերով, տարածութեան վրայ աստ անդ եւ մէկ մէկ երեւում էին լքուած անասէր եւ մութ կեղեւով ձմերուկներ, որոց միջուկները, սակայն, կակուղ եւ կարմիր չէին, երջանկացնելու համար ճաշակողի բերանի համը, եւ ջրելու նրա անջրդի սառած քրտինքը: Բայց նրանք անմիջուկ, միապա-

պատ կեղեւներ էին, կազմուած մխածոյլ երկաթից, եւ որոնցից իւրաքանչիւրը թեւերուս տակն եւ թեւերս հարիւր պատերազմող պինուորի կեանք էր տալիս եւ անշնչօրէն թաւալցրել հողի վրայ իւր կայծակնային արընթացութեան մէջ:

Այդ սպառնալից դնդակներից բացի, ուրիշ ոչինչ կար, ոչ թնդանօթակիր կառք, ոչ պինուրի հրացան, ոչ պինուրի դիակ կամ հագուստի կտոր, եւ նրանց արեան հեղեղները որ թափուել էին այդ հողերի վրայ, չէին երեւում ոչ իրենց կարմիր գոյներով, եւ ոչ իրենց լիրպացեալ կերպարանքով: Գոյները ծծուել էին հողի մէջ, եւ լիարդացեալ բեկորները փշրուել էին հողի հետ: Նրանց վիրապատ եւ արեան բծերով լի մարմինները անարտասուք աչքերով, եւ անձանօթ ձեւերով, մէկը միւսի վրայ ձգուեցան անձանօթ խոր փոսերի մէջ, եւ ծածկուեցան սեւ հողով: Եւ նրանց աննիւթական հոգիները վերացան, եւ գրուեցան երկնային անյայտութեան մէջ: Եւ այդտեղ ուր առաջ օդը թնդում էր ռուսական եւ թրքական թնդանօթների թնդիւններով եւ սուրերի արտասարսուռ շաչիւններով, այժմ այնտեղ լսում էին երկայնաձիգ կարաւանի էշերի, ձիերի եւ ջորիների խառնիխուռն արոտները, եւ նրանց վզերից կախուած զանգուլակների խառնիճաղանճ զնգոցները:

Յառաջանում էինք մենք, եւ մեր յառա-

ջացման հետ աստիճանաբար անհետանում էին թարմ պատերազմի վերջին նշանները:

Թէ արդեօք քանի՞ օր տեւեց մեր ճանապարհորդութիւնը Թիւրքիային վերաբերեալ մեր ցաւած քաղաքից մինչեւ նրանից անջատուած բերդաքաղաքը, չեմ յիշում: Նոյնպէս չեմ յիշում թէ արդեօք այդ ընթացքին դէթ մի գիշեր քնեցի՞նք խանրատատ եւ դերանահատ առաստաղի ներքոյ, եթէ ոչ չարուճառ ապատ երկնքի համայիչ եւ ահնատարար աստղերի դեղեցկատեսլ, վսեմաշուք լոյսերով:

Մի երեկոյ, արեւի մատաքից յետոյ, մեր կարաւանը դադար առաւ հանդստանալու գիւղակային երկարաձիգ ճանապարհորդութեան յոգնութիւնից մի հարթ կլեսակոնաչ ատրաճութեան վրայ, մի բաւական լայն ջրի մօտին, որ աւելի նման էր մի դեսակի, քան մեծ առուի: Իրենց բեռներից փրկուած յուէտ բազպակից քաղաքանի բարեկամները ցանկութեամբ քիթերը ցցած, ականջները չարժելով եւ արբատագոհ երկելով ակատն վազել դէպի արտաւազ ջուրը, թրջելու երենց չորացած կոկորդները, նախ քան ուղղելու երենց քայլերը դէպի անապատ եւ անճատկուն անապահման անդանատաւանը, ուր բնութեան յաւերժական խոհարարը միշտ եփում է նրանց համար կանաչութեան համեղահամ կերակուրը իւր երկնային կրակով, եւ հոգատանդ կաթսայով: Եւ մինչ արանք այսպէս էին կատարում երենց հանդիս-

ալ եւ հաճոյքը, նրանց հնձեալները եւ վարդ-
նելը հաւաքում էին փայտի կտորներ եւ կոճ-
ղեր, չինում էին վառարաններ քարի յարմար
կտորներից, կրակը տալիս էին փայտերին, եւ
բարձրացած մուխ եւ ծուխի միջից սկսում էին
երկարել կրակեայ լեզուներ: Ծուլչիններից
դուրս հանուած եփելիք պաշարները խմուում
էին պղնձեայ կաթսաների մէջ, եւ անօթիները
անհամբեր սպասում էին ցանկալի ուտելիքնե-
րի սխորժօրէն ուտելու երջանիկ ժամին: Մինչ
այս արարողութիւնը չարունակւում էր իւր
կարգին, մեզանից սմանք ման էին գալիս խո-
տերի եւ վուշերի վրայ եւ կախարդւում դէպի
դաշտ, լսում գովացման վսեմաքաղ մեր երգե-
ները, կայտառացնել կօշիկներում բազմակաշ-
կանդ ապառասէր մեր ոտները: Եւ երբ այս
ձգտումներով մեր ձեռները մխուեցան ծանրա-
հաս ջրի մէջ, մեծ եղաւ իմ զարմանքս: Նման
էր ջերմ ջրի, տաքացած կրակի վրայ: Զարհ-
պաններից մէկը, որ ընկերանում էր մեզ, բա-
ցատրեց թէ բուսական հեղուն, տաք ջրեր գե-
ղի տակից դուրս գալով միանում էին եւ վա-
զում միասին:

Մի ուրիշ օր, կէսօրին, մեր կարճ հանգըս-
տարանը եղաւ մի թէթեւօրէն բարձրադիր տ-
լեծածան տարածութեան վրայ, ուր բարձրա-
նում էր մի առանձնացեալ բայց ուշագրաւ հո-
պածեալ չէնք: Որպէս մի հետաքրքրական տեղ
մենք տարուեցանք նախ, ուր կարծեմ առանց

մարդկային ձեռքի բայց բնութեան ձեռքի աբհետաւով եղերաւած էր մի լճակ, որից յայտնապէս գոլորշիներ էին բարձրանում եւ ամբերը թեթեւօրէն ժապաւենաւած գեղնագոյն գոմոլով։ Նոյնպէս էին մի սահուն ապրիւրի պատերը։ Պատմեցին թէ ծծումբի հանքեր էին այդ ջուրերը եւ կարծրացեալ շերտերները էին բուժշիչ ծծումբ։

Կարճենց ի կարս ուղեւորութեանս տեսարաններից մեկն այս երկուքն են մնացել աչքերին տեսանելի եւ ամպամած երեւակայութեան մթնշաղ հորիզոնի վրայ։

Այնուհետեւ ես տեսնում եմ ինձ Կարսի աւազանոցարանի պատշգամում։ Այդ բարձրահայեաց դիրքից երեւում էր գետը, որ ծռւում է ոլորաձեւ, եւ գետի երկու կողմերի վրայ, եմ առաջ ներքեւում փռւում են քաղաքի տուները եւ կանաչութիւն խառնիխուռն երեւոյթներով։ Ղամբիկեան եւս ես ամօթխած կանգնած ինձ, եւ պատկառելի կերպարանքով, երկար սեւ վերարկուով, եւ կռնաձեւ սրածայր վեղարը գլխին, մէկը ուշադրութեամբ կարդում էր երկու նամակներ, որ ես տուել էի նրան, մէկը Տիգրանակերտի առաջնորդից, միւսը Տիգրանակերտցի Տիգրան ազգայից։ Գրիգորեան եպիսկոպոսն էր նա։ Կարդալուց յետոյ դարձեալ օրհնեց մեզ, եւ փայտեայ մեր գեղեցիկ բայց գլուխները, եւ մենք դարձեալ

համբուրելինք նրա երկարած սուրբ ձեռքը ամենայն երկիւղածութեամբ: Այցելուներ գալիս էին, եւ գնում էին, եւ նրանց Սրբազան Հայրը շարժման եւ ոգեւորութեան մէջ էր իւր այցելուների պէս:

Առաջնորդարանի պաշտօնեաներից մէկը մեզ տարաւ մանաձել քաղաքում: Նայելով վաղոցներում երթեւեկողների ուրախ երեսներին, նա ասեց թէ ուրախ են ամէնը, որ այլեւս մահմեդական թուրք թագաւորի ձեռքի տակ չեն, բայց մեծ Ռուսաստանի քրիստոնեայ թագաւորի ողորմած ձեռքի տակ: Թէեւ արդէն բաւական ժամանակ անցել էր Հարսանիքի օրից, բայց հարսանիքի բերկրութեան զգացումը տակաւին չէր կորցրել իւր երջանկարար զօրութիւնը: Եւ ոչ ոք էր մտքից անցընում թէ որպիսի վտանգաւոր հակառակորդներ կար պահուած այդ քաղաքի ապագայ կեանքի համար:

Մենք հեռացանք այս հարսանեկան տունից, եւ կարս իւր այդ անցողակի ցնծալից կեանքով, եւ իւր մնայուն բնական դիրքով չզարթնէր իմ յիշողութեան մէջ, եթէ մի քանի տարի յետոյ Հայոց պատմութեան մէջ չզտաւահէի «Թագաւորութիւն Կարսոյ» բառերին, ուր կարսը տեսայ որ յորինակի է եղել, եւ ոչ ելակի: Ի զուր աշխատեցի իմանալ այս գաղտնիքի լուծումը, բայց չզտայ ոչ մէկ հայկական ուղեգի բանալի որ կարողանար լուծել: 1901ին երբ Արմենիա չքնաղ գործի պատուական հեղի-

նակի հետ ուղղում էինք հայկական յատուկ անուններըը Աբգարեանան կամ գաւառական ուղղագրութեան, այնպիսիք որ եւրոպական հնչեղնակներում գրուած էին թրքահայոց ազատագնալ արտասանութեամբ, թօսք բացուելց կարս բառի մասին: Լինչ բացատրեց թէ այդ բառի յաղնակի լինելու պատճառն այն էր, որ Կարս գնում բաժանուած էր երկու մասերի, եւ երկու կողմերի մասերը կրնով մեկնանդն անուններ, որանից առաջացել էր նրա յաղնակի լինելու յատկութիւնը: Արդ, այս գիւտից քաոն եւ երկք տարիներ առաջ, Կարսեցի ատուածաշունչ ուխտաւորների ընկերակցութեամբ, մի կիրակուան ուշ ժամին մատոյ Աբշակունեաց թագաւորութեան հիմնած մայրաքաղաքը, եւ Գրիգոր Լուսաւորչի յաւիտենական սիոնական նեատը, որքան յաւիտեան որ քրիստոնէութիւնը շաբաթնակէ յաջողել տպրել իւր հոգեմոլոր կնճիթին, եւ մատեաց նախատպաշարմունքի կախարդական գինքերով: Իմ հոգին եւ մեքը էին բոլորովին այս գինքերի զօրութեան տակ, երբ բարեպաշտ ուխտաւորների հետ կէս մութին մտանք Սուրբ Էջմիածնի ուխտաւորաց Տունը, Ղազարապատը, մեր տոպրակներով:

ՎԵՀԱՐԱՆ ԵՒ ՋԵՄԱՐԱՆ

Հետեւեալ առաւօտ հիւրընկալ վարպետիսի եւ ուրախ սրտատրոփ քայլերով հետեւեցինք նըրան դէպի Վեհարան, ուր Հայ Եկեղեցւոյ վեհապետն էր բնակում: Մեզ ընդունեց մի հոգեւորական, որի երեսի գոյնը քնքոյշ էր սպիտակագոյն դիւթական մարմարիոնի նման, մազերը սեւ էին սեւ սաթի նման, եւ աչքերը լի ժպիտով եւ քաղցրութեամբ: Եւ ձայնը հնչում էր որպէս մի դիւթական հոգեշունչ երաժշտութիւն: Նա առաւ իմ ձեռքից մեր ինքնութեան նամակը: Մէկ ձեռքով բռնեց իմ ձեռքը, եւ մեւս ձեռքով Դամբիկեանի ձեռքը, եւ առաջնորդեց մեզ ուր Վեհն էր բազմած: Եւ նա իւր բազմած դիրքով պատկերացնում էր մի կատարեալ վեհափառութիւն: Դէմքը լուրջ էր եւ պատկառազդեցիկ, թեթեւօրէն սպիտակաթել սեւ մօրուքը իւր բազմատառ, վարքմամբ, եւ երկայնաձիգ թեւերով չքնաղօրէն ափռուած ծածկում էր նրա լայնարձակ կուրծքը, եւ համայում էր իմ աչքերը այնպիսի զմայլումով, որպէս սիրահեմ սիրամարգի բոլորակի լայնատարած

բազմապատկեան չքնաղաձեւ վիճակները պիտի ներկայանան հիացումով թէ մանուկի եւ թէ չափահաս մարդի զարմացած աչքերը:

Դա էր Գէորգ Դ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, եւ հիմնադիրը այն ճեմարանին, ուր Տիգրանակերտ քաղաքի հայ հասարակութիւնը դրկեց մեզ ուսման, յոյսով լուսաւորելու նրանց ներսը սերունդի լուսաւորութեան համար:

Մինչ եկեղեցականն էր Վահրամ Եպիսկոպոս Մանկունի, կաթողիկոսի աջ բազուկը, խորհրդականը, եւ հոգատարը, յետոյ հետ կաթողիկոսը, տակաւին Պատրիարք էր Կ. Պոլսի եւ դեռ եւս առաջնորդ Բրուսայի Հայոց:

Ձեռագրին հաւատով եւ արտագրին սիրով մօտեցայ Աստուծոյ Օծեալին, եւ համբուրելի նրա սուրբ աջը, որի մատանեցոյցին գոհեւորող վեհախոհական մատանիի ադամանդը շողշողում էր մութ դիշերային երկնափայլ աստղի փողփողուն ճառագայթիկների նման: Այդ իմ կեանքի այն չքնաղն էր, երբ եկեղեցականները համարում էին ինձ համար որպէս աստուածային սուրբներ, եւ իրենց մաքրութեամբ անարատ, եւ փայլուն, որպէս կաթողիկոսական մատանիի այդ մաքրափայլ ադամանդը:

«Ջատակնեցա, իմ օրհնութիւնը անպակաս լինի ձեր վրայէն, բարի կրթութիւն առանաք

այս ուսումնարանի մէջ, որ ևս հաստատեցի ձեզ նման հայ ազգի զաւակաց համար: Ձեզմով է որ ևս պիտի մխիթարուիմ, եւ իմ հոգին պարծենայ»:

Ներա խօսքերից եւ ձայնից յուզուեց իմ սիրտը, եւ նա ուզի ևս վերհասուցաւ իմ ըզգայմանց մէջ, եւ իմ երեւակայութեան առաջ:

Վահրամ եպիսկոպոս յանձնեց մեզ Անդրէաս եպիսկոպոսին, ընկեր Կ. Պոլսեցի, եւ անուշ ձեմարանի: Նա քննեց մեր ուսման աստիճանաչափը: Նա բարձրահասակ էր, վայելուչ եւ յարմանալի: Եւ բարեսրտութիւնը երեւում էր նրա երեսի վրայ: Իւր քննութեան արդիւնքից նա տեսաւ թէ ևս կարողութիւն ունէի ընդունելու երկրորդ դասարանի մէջ: Բնականաբար չատ մեծ եղաւ ուրախութիւնս, եւ հպարտ զգացի իմ այդ աստիճանի դիւրութեամբ: Բայց տեսուչից բացի կար ուսումնարանիս, Վահան վարդապետ Բաստամեան, որ երեւի բացակայ էր այդ խիզ օրերին, եւ եկր երեւեց, իւր հարցումի մէջ զուտ որ ևս իւր մի ծանօթի եղբայրն էի, եւ այս իւր պիտոր իւր ձայնից եւ բացատրութենից նկատեցի որ չատ հաճելի տպաւորութիւն չարեց նրա վրայ: Բազդս փոխուեց, նրա հետ եւ ուսման կարողութիւնը դէպի յետ գնաց, ուստի եւ վիճակուեցայ առաջին դասարանի համար: Տխրութիւնս այնպէս աստիճի էր եւ տեսանելի, որ բարեսիրտ տեսուչը հարկ տեսաւ ինձ մխիթարել ասելով. «Վնաս

չունի, որպիսի, ասկէ յառ է պիտի մէջ լինել առաջին մարդը, քան քարաքի մէջ լինել երկրորդ մարդը»:

Ուստի ակամայ կամօք հարկադրուեցայ մտնել պիտի մէջ, եւ դառնալ առաջին մարդը:

Եւ նա ճեմարանի ուսումնապետութեան առաջին մարդը, թէ ի՞նչ էր անդի ունեցել նրա եւ իմ ուսանել եղբօր միջեւ երեք չորս տարի առաջ երբ տակաւին չուած չէինք Ռուսիայից ի Թուրքիա, անյայտ էր ինձ, եւ մնաց անյայտ, բայց այնքան եղաւ յայտնի, որ նա դառաւ առիթ մեծ եղբօր վրէժը լուծել փոքր եղբօրից: Այդ ժամանակ չանցաւ մտքովս, բայց չեմ կարող արդիլել իմ միտքը խորհելուց թէ կղերականն տարաղը արքան եւ փառասէր է մի մարդի համար, եւ Քրիստոսի Յաչը արքան եւ լինի նրա կուրծքի վրայ, այնուամենայնիւ նրանք անընդունակ են բարեշրջել էութիւնը, աւելացընել նրա առաքինութիւնը, եւ նուազեցնել նրա թերութիւնը: Ներսոպամիա Քրիստոսի պաշտօնեանները մնում են արատաւոր ոգով, ինչ որ էին առաջ երբ պաշտօնավարում էին առատանային, կամ աշխարհական հագուստով երկրպագում էին Քրիստոսի պատկերի առաջ:

Այդ ուսումնական տարեշրջանը չվերջացած ուսումնապետը անհետացաւ ճեմարանի մթնոլորտից, եւ նրա հետքը չերեւեց այլեւս: Բայց նրա արտրքի հետքը վնասեց իմ աշխա-

տասերորդ ճշմարիտ ճանապարհին: Հարկաւոր հոգածութեամբ չէի սերտում դասերս, նրանք մօտաւորապէս ծանօթ լինելով ինձ, ուստի դասերիս վրայ նայում էի անցողակի եւ կարողանում ինձ պատրաստ համարել յաջող լինելու համարձակութեան հետեւեալ առաւօտ ուսուցչներիս առաջ: Ուստի ժամանակս տալիս էի ուրիշ գործ կարդալու: Թէեւ բոլոր առարկաներն մէջ միշտ առաջնակարգ էի, բայց թատրոնասիրութեանից, թէեւ նոյնպէս լաւ, բայց ոչ նոյն հաւատարմութեամբ: Այս ընթացքը աստիճանաբար յառաջ բերից իմ մէջ մտայնութիւն ուսուցչի դասատուութեանց, եւ գործաւ իմ կեանքում ընդհանուր թերութիւն, որ ընկերային խօսակցութեանց, հանրային ատենաբանութեանց, եւ թատերական ներկայացումներն ժամանակ մտածումներս յաճախ զառնում էին ամենահին եւ ամենահետաքրքիր նրանց վրայ, եւ երբեմն այնպիսի երեւակայութեան վրայ որ երբէք չէի երեւակայել նախապէս:

ԾԵՐՈՒՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
(ՊՈՊԼՈՋԱՆԵԱՆ)

Մեր դասարանը հետաքրքրական ուղեղներ եւ անուններ հաւաքած էր: Մէկի անունն էր Ծերունի, եւ Ծերունին էր հասել 12 կամ 13 տարեկան, երեսների նորքի բարձր ժայռերի

վրայ ծնած: Երեսը թէեւ չէր հոտ, բայց արտայայտութեամբ բարի, եւ հայեացքով ժպտալից: Նրա մէջ չկար բարկասրտութիւն, : Անշարժ էր միայն դասերի ժամերին: Դասերից դուրս, դասարանի մէջ, եւ մանաւանդ դուրսը, պարապում էր մշտաշարժ եւ ազմկայոյզ: Մեր բոլոր ղեկասիղէնը վայելում էինք էջմիածնի դանձից, եւ ունէինք տարեկան երկու նոր հագուստներ, ամառնային եւ ձմեռնային: Ծերունիի նոր հագուստները ծերանում էին մի քանի օրից յետոյ, կամ փանթալոնն էր պատռտում կօշիկների մօտերքում կամ վերի մասում, եւ կամ բլուզի մէկ կամ այլ մասը, եւ կօշիկները բարեբաղդաբար փոքր լինչ աւելի երկար էին դերծ պատռտուելու վտանգից:

Վէպ, թոփ, եւ գերի խաղերից անբաժան էր, եւ ոգեւորութեամբ լի: Այս բոլոր ֆիզիքական չափազանցութեանց առաջ, նրա ուղեղի ըմբռնողութիւնը իւր դասերը սորվելու մասին չափազանց զուրկ էր այն զարմանալի զօրութիւնից, որ հարկ էր լինել դերազանցօրէն աշխոյժ կեանքի մէջից: Նրա աշխատասիրութիւնը ուսանելու համար, հաւասար էր իւր խաղալու աշխուժութեան: Կարդում էր եւ կարդում իւր դասագրքերը, բայց նրանց նիւթերը չէին յաջողում պատշաճօրէն մուտք գործել նրա ոսկրապատ գլուխից ներս, եւ արտայայտուել նրա մտքի միջով, իբրեն հարցաքննող դասատուի առաջ:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

ԵՒԿ մաշտոց յիշողութիւնս չէ սխալում, 1890ի ամառնային մի արեւածիկ օր էր, եւ ես կ. Պոլսից գանում էի Թիֆլիսում, Գալուստ Ալթունեանի, Հայ Յեղափոխութեան դիւցազնական վիճակագիծի գագաթնի վիճակագծատրանից հրացաններ հնազհնակ փոխադրում էին այլուրիք, եւ այնտեղից անառնկնելով, որպէս տարրեր տպրանք Թիֆլիսի բարձրահայեաց կայարանը: Կոստանդին Խատիսեան եւ ես կանգնած էինք գնացքի լուսամուտի առաջ դրած, եւ նկատում մեր դիմաց մի երիտասարդ մխայնակ լի վառվռուն ոգեւորութեամբ: Խոհրդատար անառնկնելի դիկողը եւ ընդունողն էր որ իւր տպրանքի հետ մեկնում էր դէպի Կարզուան: Նա էր Նորքի Ծերունի Յարութիւնեանը, որ այժմ փոխուած Պոլոզանեանի, դարձած էր մոլեռանդ յեղափոխական, պատրաստ ձերբակալուելու ցարի ոստիկանութենից, բանտարկուելու եւ պատուհասուելու երկ տպրանքի ինչ լինելն եւ նպատակը ի յայտ գար: Նա տանում էր Կարզուան Հայ Յեղափոխութեան ամենազօր հրացանները, զինելու քաջամարտիկ հայ հերոսները, որոնք Մշեցի Սարիւաղի եւ Ռուէսացի Սարգիս Կուկունեանի հրամանատարութեամբ, պիտի կոչէին ռուսական սահմանը, վշջէին ռուս սահմանապահ զօրքերը, եւ արշաւէին Թրքահայաստանի սուրբ հողի վրայ, ի փախուստ արկանել Սուլթանի բանակը ճանճի պէս ճկռտալ անփախչե-

լի պինտրներին եւ նրանց պետիներին վրայ հիմնել երջանկութիւնը Հայաստան բազմաչարչար յոյժ սիրելեալ Թրքահայ եղբայրներին համար: Բայց ի փոխարէն այդ մեծ վտանգին ի տես, նա խրատիններով մխիթարել, տեսաւ Ծայրագոյն Սիրելիայի ձիւնապատ հողը Քամչատկա կղզիի վրայ: Եւ ահաւասիկ, այսուամենայնիւ, այդ առաւելեալ բեւեռի յաւիտենական սառոյցները չկարողացան առնելոյ աղջատիքութեան կրակով բոցավառ նրա կարմրած սիրտը, եւ ոչ եւս անհուն տարածութիւնը կարողացաւ բաժանել նրա Թրքաստան հոգին իւր սղոյին սէրից: Եւ տարիներ յետոյ նա ցաւակից տարածութեանց անդունդների վրայից, եւ լեզու, ուր էին իւր երեւակայութեան պաշտելի Թուրքիոյ Հայերը: Թէ ի՞նչ տեղերում նա թափառեց, եւ ինչե՞ր նա տրեց, այդ մնում է անգիր իմ գրչի ներքեւ: Բայց ըստ իմ լսածի, նա էր Եդեսիոյ շրջանում, երբ ընկաւ հերոսական նահատակների շարքերում, ինչպէս ընկան բոլոր Թուրքիոյ Հայերը Թրքական բահի եւ բրիչի, կամ երկաթակուռ գաւազանների եւ կացիններին, եւ կամ պինտրական սուրերի եւ հրացանների հարուածների տակ եւ այսպէս անհետացան այն երկրի երեսից, ուր ապրում էին անհուն գթերից ի վեր եւ մեկնեցան անյաւիտենական մէջ տեանելու օգտին Հայաստանը:

Դեռ մինչեւ այսօր տեսնում եմ իմ Շերուենին իւր նորածիլ պատանեկութեան մէջ, երբ

ընդունակ էր պատրաստվելիս եւ ոգեւորությամբ անհամբեր կատարելիսը, բայց անընդունակ էր դասերին ուշադիր մէջ- եւ անանում եմ նրան կանգնած, Թիֆլիսի կայարանից մեկնելու պատրաստ գնացքի լուսամուտին նեբատիզմամբ յուզված եւ յոգնելով, անկախ Հայաստանի ստեղծման համար:

ՍԱՐԳԻՍ ԱԻԵՏԻՍԵԱՆ

(ԿՈՒԿՈՒՆԵԱՆ)

Մեր ճեմարանում, որպէս Հաւտնօրէն ամենուրէք, աշակերտները նստում էին դասարաններում իրենց մականուններով այլուրենական կարգով: Մեր դասարանի առաջին գծի երրորդ տեղում նստած էր սպիտակ կամքիր նազը մազիով, ճուտաձեւ դէմքով, սեւատես եւ նշաձեւ աչքերով մի պատանի: Գիւղացիական ապակի կոշտ գոյն, երես, մարմնի ձեւ, կամ շէշտ եւ հնչիւն չկար նրանում, բայց մարմնի ընդհանուր երեւոյթը վայելչաձեւ էր նրա երեսի, ճակատի եւ ատամնոցի գլուխի նման: Զայնը թևթևօրէն անպային էր երաժշտական նրբութեամբ: Իւր խօսակցութեան եղանակի մէջ կարծես մի շէշտ կար որ թեւում էր ասել. «Հանգիստ թող ինձ, մի ձանձրացնիր ինձ»: Եւ կար նոյն հեգնութեան ժպտախառն ժպիտ, երբ նշան իւր անհատանութեան խօսակցութեան առարկայի նկատմամբ: Նա իւր դասերի մէջ բնաւ վայրկեան չէր, բայց եւ ոչ կարող էր համարուել երբեւ վատ: Տեւական աշխատասի-

բութեան եռանդը պահում էր նրան, որպէս մէջնաւարդ կարողութեան ընդունակ մի աշակերտ։ Կեցակերպ ուսելու մէջ նա-այնքան ընդունակ էր, որքան մի ոք կարող է ընդունակ լինել։ Հայ հոգեւորականները դիտեն տաճարի յարդը եւ պահանջը։ Մեր ճեմարանը անուանապէս լինելով հոգեւոր դպրոց, նրա հոգածու հոգեւոր իշխանութիւնը երբէք հոգ էր տանում որ այնտեղ մտաւոր կրթութիւն առնող ապագայ վարպետացուները յետ չմնային նաեւ տաճարի դիտարուեստական դործունէութեան կողմից։ Ուսոմն օրը երկու անդամ վարժւում էինք, եւ երկու անդամ տատա եւ համեղ կերակուր, ամէն անդամ երկու տեսակ, եւ նրանցից մէկը մսից։

Սեղանատունը երկար էր, երկու հատատարակս երկար սեղաններով։ Իւրաքանչիւր սեղանի տակ դէմ առ դէմ չորուած նստում էին մօտ երկու հարիւր եւ աւելի աշակերտներ, ամօթի պայքարի նման դպրոցով կամ դանակով եւ պատառաքաղով բաժին դալիք կերակուրը։ Երկու սպասաւորներ աշտղին թարախներ տիսկներ երկոց աջ ձեռքի վրայ բարձր բռնած ներս էին մանում սեղանատան դռնից, վրան ծածկուած լի պնակներով, որոց պարունակութեան ի՞նչ լինելու մասին անհամբեր էինք իմանալ։ Սպասաւորներն երկուսը մտտակարարում էին մէկին եւ միւս երկուսը միւսին, ամէն մի անդամին դնելով երկոց երկայն քառակուսի վայ-

առաջին ամսէն սկսան վրայ, երկու աշակերտներուն միջեւ, որոնք ուրախութեամբ սկսէ էին քայ անում իրենց կոխոլդներուն հաճելի հնչիւնին: Գնահներուն բաշխման արարողութեան միջոցին առաջնահարկ որկրամոլներուն ամանք ճարտարութեամբ յաջողում էին մանկէնով լի ամանը անառանելիօրէն կոխել սեղանի ներքեւ եւ չրռնուելու վտանգը անցնելուց յետոյ վեր հանել եւ ամբողջը իւր համար, կամ վերհանձնարար բաժին հանել կողքի ընկերոջ: Այսպիսիք բացառութիւն էին, որովհետեւ արուած կերակուրը լիովին բաւական էր սեւ բարեխիղճ ստամոքսի համար: Նա որի մասին պրում էի այս մէջբանկնալ պատմութիւնից առաջ, շատ քիչ անգամ էր յաջողում այսպիսի ճարպկութեան մէջ: Յաճախ չէր վերջացնում իւր մանկէնը: Հոգածութեամբ չերտաւոր կըտրատում էր մէկ մասը, վռում էր տափակ կըտրած երկու հացի միջեւ, վտիտիում էր թղթի մէջ, եւ կոխում իւր գրպանը, եւ գաղտուկ երթալով խնամքով ծածկում էր գաւազրքերի եւ տետրակների միջեւ եւ գալագոզի կծել եւ ծամել, երբ ախորժակը գաւնար անզսպելի: Այս պաշարից գուրս իւր ախորժակը երբեմն յագեցնում էր գրքերով, որոնք կարծ չունէին գաւազրքերի հետ, նրանք լինում էին այնպիսի գրքեր, որ մեր ժամանակի ըմբռնողութեամբ եւ նրբերով կոչւում էին անտաստած-հան գրքեր, Դարվին, Սպենսեր եւ այլն: Բար-

ձրագոյն պատարանի աշակերտներից ամենք հպարտ էին այն դպրախաղով, թէ երբեք այնքան բարձրօրէն զարգացած էին որ դեռևին թէ առաւած չկար, եւ նոյն դեռաւթիւնը պարծանքով թափառում էին մեր ախանջնեռում: Եւ նա աւելի ապուռպնեից մէկն էր: Նա խաղերի մէջ այնպէս չնմանառնդ չէր որպէս Ծերուներն, մանաւանդ վազելու խաղերի մէջ, որոնքներ չէին չարժուում դէպի առաջ, բայց մոռնակի բացուում էին աջ եւ ձախ, եւ այս բնականաբար արգիլում էր նրա արագ վազելու կարողութիւնը: Բայց վէգ խաղալու մէջ առաջնակարգ էր, եւ գրպանը խաղի ժամանակ յաճախ նման էր ուռած փուչիկի, լինելով լի չոհած վէգերով: Բայց ինչպէս այս, նմանապէս ամէն խաղերի մէջ գանկութիւնը սկսեց գանգատանալ, եւ խաղամիջոցներուն, վոխանակ զբօսք ընդարձակ բակերում եւ պարակներում գրօսնելու, կամ ճեմելու երկար նրբանցքում, խօսակցելով ընկերների հետ, ընդհակառակը, նա կուչ էր գալիս իր դասակի առաջ, դասարկ դասարանում, եւ գլուխը ձեռների մէջ պահած կարդում էր լռելեայն մի խորհրդաւոր գիրք, որ կարծես աշխատում էր ծածկել մեր հայեացքներից: Բայց մենք դասնք: Մէկն էր Եվրեմ Խաբի, եւ այնուհետեւ առաքելի պատմութիւններ, եւ այլ կրօնական գրքեր: Նա գարձել էր մի կատարեալ մանուանդ, ճգնաւոր լինելու արամադրեալ եւ ապրելու լեռների քարանձաւների մէջ, հե-

ուս մեզաւոր մարդկութեան աչքերից: Ես բաղդ չունեցայ շատ երկար կենակից մնալ, որ տեսնէի թէ այնուհետեւ նա ինչ ազնիւթիւն կրեց: Բայց տարիներ յետոյ լսեցի թէ Ռուսիոյ կայսերական վայելուն մայրաքաղաքի ուսուցչական հասարակութեան մէջ էր կնոջ ազգատրէզ ընտրելով պատուիներ կրթելու ազնիւ գործը:

Պետերբուրգի հայազէտ եւ ոչ-հայախօս հայ ուսանողները նոյնչափ տաք էին Թուրքիոյ հայերին թուրքի ճանկերից ազատելու ծրագիրներով, որչափ հայաշատ Թիֆլիսի հայութեան զանազան տեսակի մեծ ու փոքր տարիքի եւ հասակի դրագէտ եւ ոչ-դրագէտ ազգասէրները: Կոստանդին Խատիսեան այս չարժման գլխաւոր առաջնորդից մէկն էր, եթէ ոչ գլխաւորը, թէ Պետերբուրգում որպէս ուսանող, եւ թէ Թիֆլիսում ամառնային արձակուրդի հանգստի չրջանում: «Պետէ էֆ» արշաւել Թրքահայաստանի վրայ, խորհում էին ոգեւորեալ ուսանողները եւ հարցնում էին, թէ ո՞վ էր յաժար անցնել այդ արշաւանքի գլուխը: Խորին լռութեան մէջ Եփրեմ Խուրխի նախկին ընթերցողը, ոտքի կանգնելով, բացատրեց.

— Ես պատրաստ եմ այդ սուրբ նպատակի համար:

Մի քանիերը սրան թերթեւութիւն պատճին, որ երիտասարդական այդպիսի վառնգաւոր գործ առանձնելու կոչումից:

Անդին, Թիֆլիսում, մինչ պաշտելի Յեղափոխութեան Հինապատմութեան Ջինապանը, մեր Գալուստ Ակոյեանի դինապիտութեան հնարհիւ, ռուսական բնդդանդի կամ այլ տեսակի հրացաններ կերպարանափոխում էին, եւ դառնում էին նոր տեսակի հրացաններ մեծ արշաւանքի համար; մի այլ տեղում ապստամբական դպացման, եւ ապստամբեան գաղափարի ախոյեաններըը ըղթափում էին պղեւորեալ ժողովներում վասն ձեռնարկի խորհրդակցութեան գործով: Շարժման ամենաշարժուն ոգին էր Կոստանդին Խաչիկեան, որի հայրը, Յովհաննէս, Կովկասեան կայսերական կալուածների տնօրէնն էր, եւ ժողովները դիւանատունը տեղի էր ունենում նրա բնակարանում: Վերջին ժողովին այնտեղ էր Եփրեմ Խաչիկ հին սիրահարը եւ յառաջիկայ արշաւանքի երկու պետերից մէկը: Ժողովից յետոյ անդամները մէկ մէկ կամ երկու երկու դուրս էլան տունից, որպէսզի ուշադրութիւն չդրաւեյու համար: Մնացինք նա, Կոստին եւ ես: Ելանք դուրս, զարձանք դէպի ձախ, եւ փոքր քայլերով մտանք Սոլոլակի մեծ փողոցը որ տանում էր Երեւանեան հրապարակը: Այստեղ անկիւնում կանգ առանք: Թիֆլիսի մեակ եւ մեծ հրապարակն էր, ոչ կոմուսն էր քաղաքապետութիւնը, մէջտեղում Թամամշեանի մեծ չինքը բազմաթիւ խանութներով, գործատեղիներով եւ արկրամոլների ամենաերեւելի հնամաշակի ճաշարանը: Շրջապատի չինքերը,

դրամատուններըը, հիւրանոցներըը մեծ մասամբ հայկական էին: Մարդիկ զանազան կերպարանքներով եւ տարազներով չարժուում էին զանազան ուղղութեամբ: Թիֆլիսի կեանքի ամենահետաքրքրական չարժման տեսարանը այս տարածութեան վրայ էր: Բայց մենք աւելի հետաքրքրուած էինք մեր զազախարի մտածումներով եւ խօսքերով: Ղամխեան թևքից եւ համբուրեց նրան. «Երթաս բարով, եթէ չտեսնուենք, մնաս բարով»: Կրկին չերմացաւ համբուրեց եւ ես հետեւեցի նրա օրինակին եւ բաժանուեցանք: Այսպէս, եւ այսպիսի մի տեղում յաւիտենական տեսակի հրաժեշտ տալը, որ յանկարծակիի բերից ինձ հարցրի պատճառը տարօրինակութիւն սերտ սիրելի բարեկամիս:

— Որպէսզի չմոռանանք այս օրը: Եւ որպէսզի եթէ ոտիկանութիւնը հակում էր մեր հետքերին, վտարուէ իւր կասկածը, թէ տասակցութեանց եւ ժողովների մէջ ոչինչ կայ խորհրդաւոր, եւ թէ ամէն ինչ բաց է, ինչպէս այս բաց հրաժեշտը: Մեր բաժնուած ընկերը հետեւեալ օր առանց ճանապարհ դնողների ներկայութեան նստեց երիվարների կառախումբի մէջ, երթալու ուր երիտասարդ Ծերունին դնաց մի քանի օր առաջ իւր գործերով: Բայց տակաւին մնում էր բան խորհրդաւոր մարդը, Մշեցի Սարիասպը: Սա տակաւին սարիասպ չէր ոչ եկեղեցական վերարկուով եւ ոչ կրօնական ոգով: Նա վազոցում քայլում էր

կուրծքը դուրս ցցած եւ գլուխը բռնած գոռոզարար, որպէս թէ լինէր մի Ալեքսանդր Մակեդոնացի, արշաւած եւ աշխարհակալած աշխարհի կէսը: Նա ունէր քան հազար մշեցի ամեհի քաջեր, ոտից գլուխ սպառազինուած, եւ կազմ եւ պատրաստ Մշոյ դաշտերի վրայ եւ ձորերի մէջ սասանացնելու Թրքական բանակը, եւ սոսկահարելու Թուրք Սուլթանի սիրտը: Թիֆլիսում ոչ միայն դաղտիարի երիտասարդ պաշտպաններն որ հաւատքով հաւատում էին այս մշեցի հերոսին, բայց նրանց ապդեցութեան տակ նոյնպէս հաշուպէտ պիրեկդար բանկի, որպէս Թամադեան, կառավարիչ առեւտրական դրամատան, Ալեքսանդր Մելիք Ազարեան, մի հարուստ եւ ազնիւ մարդ, ամուսին վիպասան Ծերենցի դստեր եւ մօրեղբայր Աւետիս Նազարբէկեանի՝ գլխաւոր հիմնադիր Հնչակեան առաջին յեղափոխական կուսակցութեան, եւ ուրիշ դրամատէրներ Թիֆլիսից եւ Բագուից իրենց դրպաններըը փոքր ինչ բացին այս խորհրդաւոր հերոսի առաջ, եւ սա ծանրաբեռնուած ռուբլիով, որպէս չէր եղած իւր բոլոր կեանքում, երջանիկ դոհունակութեամբ եւ հպարտ մտածմունքով, թէ ինքն է քան հազար քաջերի գլխաւորը, եւ ինքն էր մեծ ձեռնարկի դրամի մեծագոյն մասի տէրը, ուստի եւ ունեմ անպարման իրաւունք համարել ինձ ընդհանուր հրամանատար մեր արշաւանքին, եւ բանի տեղ չդնել Պետերբուրգից եկած մեծա-

մեծ վարժապետութեան որ ամբողջ իր կեանքում հրացան չէ արձակել եւ չգիտէ հրացանի ո՞ր ծայրից բռնելը:

Այս մեծամտութեան մտածումով եղաւ նա մտաւ կարզուան, ուր նրա ախոյեանը իւր կարգին մտածում էր այն իւր համար, ինչ որ էր մտածում մշեցին իւր համար ճանապարհորդութեան ընթացքին: Հետեւաբար նա բնականոն իւր նոթեկ զորձակիցը թէեւ սիրալիր երեւոյթով, բայց մի այնպիսի ձեւով որ զգացնէր բանակին թէ ինքն, Կուկունեանն էր արշաւանքի բարձրագոյն հրամանատարը: Եւ նրկայ բանակը ներկայացնում էր 20 թէ 30 անպատեհ հայկազուններ, որոց բազդը վիճակել էր լսանելդել Թուրքիայում Բաֆիլի Խնիքի եղած Հայաստանը:

Յեղափոխութեան զինադադարի առնչ ծագրծութեան հրացանները տակաւին զարնուած քնում էին իրենց մթին անտառներում մէջ, որպէսզի մնային անտեսանելի ցարի ոստիկանութեան վտանգաւոր աչքերից: Եւ պատրաստութիւններ տեսնում էին, եւ խորհրդակցութիւններ լինում, թէ ի՞նչ զորագոյն հնարքով անցնելու էին ռուսական սահմանից, որ նախ չտեսնուէին ռուս սահմանապահ զինուորներից, եւ ապա թուրք սահմանի զինուորներից չնկատուէին: Սրա համար հարկաւոր էր հնարել մի ճարպարութիւն: Եւ այս ճարպարութիւ-

նը Եփրեմ Խուբի կարդացող դասընկերս սպասում էր Մշոյ Սուրբ Կարապետի կեղծ սարկաւագից։

Յովհաննու Սուրբ Կարապետը ամէն գիշեր երազում երեւում էր իւր սիրեցեալ սարկաւագին խորհուրդ տալով թէ դեռ ժամանակը չէր արշաւելու եւ թէ քանի հազարի բանակը պիտի գար ընդ առաջ երբ հնչէր ոսկի կանդնելու ժամը։ Եւ այսպէս անցնում էին օրեր, շաբթիներ, եւ ամիսներ, եւ նոյն խորհուրդն էր կրկնւում Սարկաւագի երազում, որ յաճախ երազներ տեսնելու վիճակին ենթարկուելուց առաջ, իւր երկիւղած ժամերը անց էր կացնում Բագրեւանդ Տաճարում կամ Կաղզուանի մէկ կամ մեւս ապրատէրների գիշերային զինեզուարճ հաւկիերոյթներում։

Մեւս կոմանէ Սուրբն Եփրեմ Խուբի, երբ թախտադէտ իւր նախկին ընթերցողին եւ յարգողին, երազում երեւում էր Սարգիս Աւետիսեան Կուկունեանին ամէն գիշեր եւ ասում.

— Սարգիս, բաւ է որ հաւատաս եւ համբերես մշեցի խաբեբային, ժամանակ է որ ոսկի կանդնես եւ ապստամբիւնուես, հեծնես հրեղէն ձիով վրայ, որպէս Սուրբ Սարգիս գօրավար անուանակիցդ, եւ նրա նման կարես եւ ջախջախես վիշապի եօթն գլուխները ով քաջարի որդի յերկրէն Ուռհայոց, քեզ է սպասում ազատ Մայր Հայաստանը, որ երկայրի սուրովդ,

մէկ հարուածով կարելս Հայ ազգի արիւնաբղուս դաշան Սուլթանի դլուխը, ազատես նրա հպատակ բազմաչարչար Հայ ժողովուրդը, եւ նրա աւերակ տուներին, խոպանացած հողերի վրայ հիմնես ազատ Հայաստանը բայց այս անկարող ես անել որքան ողջ է այս սուտ աշխարհը եւ չարունակում է խարել քեզ, եւ յուսադրել արշաւանքդ, որ վերջ ի վերջոյ չյաջողիս եւ դրկուես Հայաստանի անկախութեան փառաց պսակով բոլորելու անմահական ճակատդ:

Կուկունեան սկսում էր երեւել մտատանջ: Կնճիռի սկռաններ սկսում էին զծուել նրա ճակատի վրայ, եւ զայրոյթի սկնարկներ նրա աչքերից: Այսպէս էր նրա երեսը, բարկաճայթ եւ չանթալից, որպէս Սրամարդ:

Նա ձայն տուեց իւր երկու հաւատարիմ թիկնապահներին, եւ ասեց.

— Տղայք, Վարդան, Վահան, էլ բաւական եղաւ կարեւորութիւն տալ այդ անզգամ արհեստին: Ես վճռել եմ, կամենում եմ ձեզանից, որ այս դիշեր իսկ չան սատակ անէք այդ շունը, եւ այնպէս անհետացնէք նրա անարգ դիակը, որ նրա գոյութեան նշանը չմնայ երկրի երեսին, եւ նրա ո՞ւր կորչիլը չիմացուի մարդկից:

Հետեւեալ օր, առաւօտեան թէյից յետոյ բանակի բոցարծակ պետը ոտքի կանգնելով ոտքացած վորով հերոսների մէջտեղ յայտա-

բարեկ հանդարտ, բայց ծանր ձայնով, ամէն մի բառը կշռելով լրջօրէն.

— Դուք, իմ անվախ եւ անձնուէր հերոսներ, ինչպէս տեսնում էք Սարկաւագը մեր մէջ չէ, նա գնաց Մշոյ Սուրբ Կարապետ վանքը պատնեշու վարպետներ: Բայց մենք մնում ենք նոյնը ինչի համար որ եկանք մինչ այստեղ: Հասել է մեր սուրբ պարտականութեան ժամը: Ամէնանից անդին անկեալ հայրենիքը մեզ է սպասում որ կանգնէ: Մեր առնների թնդիւնը պիտի զարթնեցնէ նրան թմրութիւնից եւ լցնէ նրա կեանքը անմահական կենդանութեամբ: Բայց մենք բաժանուած ենք նրանից երկու անանցանելի սահմանագիծերով, աւելի դիւրին է անցնել դժոխքի անդունդներից քան այս դժուրից, ուր երկու այլացեղ զարհուրելի գազաններ, իրենց դժերի վրայ շարքով հսկում են դիշեր ցերեկ, եւ երկնի թռչուններն իսկ վտանգի են նրանց սարսափից: Այստեղ է որ դուք ձեր քաջասրտութիւնը պէտք է պահէք եւ ձեր քաջութիւնը երեւան հանէք: Այս դիշերը պիտի լինի մեզ համար այդ ընթացքի հանդիսաւոր սպասոյցը: Երբ մօտենանք սահմանապլխին ձեր առնների քայլերը լինելու են այնպէս թեթեւ որպէս ամենանուրբ փետուրի շարժումը օդի մէջ, որպէսզի ոչ ոտս եւ ոչ թուրք սահմանապահ ահռելի պայլերը չլսեն եւ դուրս չցատկեն իրենց որջերից, այլապէս կորած ենք, եւ մեզ հետ միասին կորած է եւ մեր առեղծելիք ան-

կախ Հայաստանը: Մի վհատուէք իմ վհատեցնող նկարագրութիւնից: Եղէք ամուր Ժայռի նման, եւ անվհատ արդէն ապրեց:

«Օ՛ն, այսպէս եղէք այս պիշեր, յաւիտենապէս փառաւոր այս մեր արշաւանքի մէջ: Ինչպէս Սամսան իւր բազուկներով սարսեց եւ կործանեց Սոդոմայի Տաճարի սիւները, այնպէս եւ դուք ձեր ամենազօր բազուկներով պիտի շարժէք եւ կործանէք Օսմանեան կայսրութեան սիւները»:

Ռուս սահմանապահների ակռանջները մնացին խուլ եւ աչքերը կոյր, նմանապէս եւ թուրք սահմանապահների ակռանջներն եւ աչքերը: Եւ արշաւախումբը անցաւ երկու գծերից անբռնելի եւ անտեսանելի: Բայց ուրիշ անդին ընդ յառաջ երեւեց դիմնալ քիւրդ ձիաւորներ, սկսեցին հրթացանել իրենց կապարեայ գնդակները հայ արշաւողների առաջ եւ դիխաւերը: Դէպքը այնքան յանկարծական էր, որ մի րոպէ մնացին տպշահարեալ, թէեւ բնազդաբար կրակեցին:

Բայց ազդուած նետքին խոհեմութիւնից, կամ խմաստութիւնից դարձրին իրենց դէմքերը դէպի արեւելք, եւ արշաւեցին յետագարձ արշաւանօք այն ուղղութեամբ, որտեղից սկսել էին, եւ երբ գտնուում էին արդէն թրքական սահմանապահի եւ ռուսականի մէջեւ, եւ մոտոզոյն էին ռուսականին, գնդակները երկուսակք սկսեցին անդալ սարսափահարուած հայ

քաջերի վրայ, նրանց ուխի ոգի բանելու նպատակու քան ոպանելու վերաբերմով, բայց սակայն մի փոքր մասը ընկան զնդակների հարուածներից, եւ միւնները կամ առաւել կամ պակաս, վերի բանուեցան առաջ պահակների ձեռքով: Ռուս զօրավարի վճռով աքսորուեցան ամէնակիր աշխատութեան ի Սիբերիա, Սախալին կղզին, ճապոնական ծովերի մօտ, ամենեակ հազար մղոն հեռու այն հայրենիքից, որի ազատութեան կարօտով վերցաղներ զօրանալու լիակոյս վստահութեամբ ձեռնարկեցին իրենց աբշառանքը երկու երիք ամենեակ անձերի անհրեւակայելի մի բանակով:

Այս ապրելակերպի զէպքից արդէն շատ ամիսներ առաջ ես Թիֆլիսից վերադարձել էի Սուլթանի մայրաքաղաքը: Եւ այնպէս պատահեց որ մի օր Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանի հետ զնացինք այցելել Թուրքիոյ Հայոց պատրիարք Աշըղեան Խորէն արքեպիսկոպոսին ի Մաքրիքէօյ, Բիւզանդիոնի ԵօԹն Աշտարակների եւ Սան Ստեֆանոյի միջեւ մի վիլլ ուր նա ամառութեան պատճառաւ կենում էր ժամանակաւորապէս: Նա յայտնեց մեզ Թէ մի քանի օր առաջ Մեծ Եպարքոսը, այն է նախարարապետը, կանչեց իրեն ի Բաբ-Ալի եւ ասաց Թէ նոյն օրը հեռագիր է ստացել էրզրումի նահանգապետից, հաղորդելով Թէ ութն հարիւր դիւնալ հայեր անցնելով ռուսական սահմանից ի Թուրքիա, ուստ եւ Թուրք սահմա-

նապահ պինուորնեբի մէջ բանուելով, նրանց հրացաններբի հարուածներով չատեր սպաննըւել են եւ մեծ մասը զերբի բանուած առւս պինուորներից: Թէ նախարարապետը յայտնեց թէ ինչ յիմարութիւն է որ հայ եբեսաւորչները սկսել էին անել վնասելով իրենց կեանքին եւ Թուրքիոյ հայերին, առանց մտածելու թէ ոչ թէ ութ հարիւր, բայց նոյնիսկ ութ հարիւր հազար հայ պինելով պիտի անկարող լինէին դիմանալ Թուրք զօրութեան եւ ոչնչացնել իրենց ուզած Հայաստանը: Նա վերջացրեց իւր խօսքը ասելով որ ինքն, պատրիարքը, եւ ուրիշ խելոյի հայեր թրատէին հայ անհեռքներին հրաժարիլ իրենց կառնակարար ընթացքից:

Երբ լսեցի պատրիարքի պատմութիւնը նախարարապետից, անշուշտ հասկացայ թէ ի՞նչ էր դէպքը եւ իսկապէս քանի՞ անձինք էին ընդամէնը, բայց ձայն չհանեցի: Փոքրութեան, Տիգրանակերտում տեսել էի ազգային կեանքի մոռածման եւ չարժման ազատութիւնը, եւ մեծապէս աւելին կ. Պոլսում, ուսոի իմ եւ իմ նմաններբի յեղափոխական հակումներն եւ գաղափարները չէին ծնել մեր մէջ հայ ժողովրդի մեր չատեսած հալածանքներբի ազդեցութիւնից եւ զայրոյթից, բայց մեր այդ ազգասիրութիւնը եւ յեղափոխութիւնը պարզ ազգասիրական արհեստի ցուցահանդէս էր եւ ցուցամոլութիւն, զոհացում տալու մեր անձնական զգացումներբի եւ անատարծութեան:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Մայր Հակոմենեն եւ դաղափարները ազգասիրութեան ժամանակի զուարճալիքներ եւ խաղալիքներ էին, որոնցից դէթ ես չէի զգում ինձանից ազգային մնաս, եւ եւս երեւակայում էի թէ նրա արդիւնքից կարող է ծնել մի Հայաստան, եւ ծիծաղում էի այնպիսիների վրայ, որոնք հաւատում էին այդ կարելիութեան, եւ այնուամենայնիւ մնում էի նրանց հետ, եւ գործակցութեան մէջ երբեմն կամովին եւ երբեմն անգիտակից, այսինքն գործը անում էր իմ անունով, եւ առանց իմ կատարեալ գիտութեան: Եւ այս վերջինը եղաւ իմ մշտապորպք ընկերը Կոստանդին Խատիսեանի գործունէութեամբ որի հետեւանքով ես վիճակուեցայ մօտ հինգ տարիների չարաչար բանտարկութեան եւ աքսորի, որպէս մեծ եղեռնագործ: 1891ին էր երբ վերջին անգամ եկաւ Կ. Պոլիս իբր Հակոբեանի ծրագրով, եւ այդ ժամանակ էր որ նա պատմեց ինձ Կուկունեան խումբի ազգալի վախճանը, եւ ուշադրեց թէ Կուկունեան Սարկաւագի ապանութեան համար արժանի էր այդ պատժին եւ աքսորին: Նա մոռացել էր Թիֆլիսի Երեւանեան հրապարակում հրաժեշտի ջերմ համբոյրները: 1908ին էր կամ 1909ին այցելութիւններիս ժամանակ ի Վոլկաս, երբ Խատիսեան այժմ ինժինեներական ժողովի նախագահ էր Բագուում եւ նաեւ Թաւէրը, պատմեց ինձ Կուկունեանի սոսկալի վերջը, բանուած մաշկի անբաժանելի եւ բազմաչարչար տխուր,

այլեւս կոմկաւոմ էր, մտքերը ապխտակել, երկայն ապխտակ մխրճով մի ծերունի էր եղել Թշուառ դասընկերս, եւ մնաս անմոռանալի, եւ մարմնական անհանդուրժելի ցաւերի մէջ:

Ահա այսպէս վերջացան ճեմարանի դասընկերներիս երկուսը, Ծերունի եւ Սարգիս, գոհեր յեղափոխական պետութեան:

Մեր դասարանից ուրիշ ո՞վքեր յետապատճին մկրտուեցան յեղափոխութեան աւազանի մէջ, ինձ յայտնի չէ: Բայց այդ մի չքնաղ սկզբնաւորութիւն էր առաւօտեայ մէջ ուր ուսնալ եւ անուս մտքերը գառնում էին մօխռանոց կուսակցականներ Թերթերի չահախնդիր ձրդուումներին եւ զրպարտութեանց հետեւանօք: Կար Մշակ Թերթը որ ինքն իրեն մկրտել էր յուսամիտ ժամանակներում, Միջոց Հայաստանի, Նոր Դար եւ Արձագանգ Թերթերը եւ հետեւողները տիտղոսաւորել էր խաւարամիտ: Յառաջդիմութիւն, ազատամիտ զարգացումներ, ազգասիրութիւն, յեղափոխական զգացմանց սերմեր, այս ամէնը յղանում եւ ծնում էին Մշակի համբարբառան մէջ եւ Մշակականների միջով: Եւ եթէ ունէ Մշակական մի քաղ իրեն ազգասիրական պատճառաւ գառնար հակառակը, նա անմիջապէս նախատուում էր այդ Թերթի կողմից, եթէ նոյնիսկ լինէր նա բարձր կրթութեան տէր եւ համալսարանական: Նոյնիսկ Բաֆֆի, Մշակի ահագին ժողովրդականու-

թեան դէմառաջ առեղծուղը այդ թերթի թերթողներում, իբր Հաւատք Պետրոսի զաւակներուն եւ սրտանուէրների, իբր Դաւիթ Բէկի հայրենասիրական հերոսութեամբ, եւ իբր Կայծերի երեւակայութեամբ նա զարձել էր այդ թերթի եւ նրա ամբողջ կուսակցութեան երկրպագուների զրական կուռքը, եւ սակայն երբ այս համբերատար համեստ մարդը հասաւ համբերութիւնից, եւ ազգայ պայքարից թողել կարճ եւ կուզիկ խմբագրին, եւ սկսել Արձագանգի մէջ, նա խարանել սրակէս խաւարամիտ, յետադիմական եւ հերետիկոս: Եւ այս դատապարտելի կերպարանքը ստացաւ իբր այդ դասի վաւերագրողների եւ պաշտպանների աչքերում:

ՋԵՄԱՐԱՆԻ ԱՅԼ ԴԱՍԸՆԿԵՐՆԵՐ

ԲԱՐԱՂԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ

Մենք երբ զպրոցումն էինք, կամ երբ այս մտքնանդ չխմաբութիւնը չէր սկսել հայոց սրտերում, եւ կամ տակաւին հետու էր մթնոլորտից, եւ մեզի դասերը եւ խաղերն էին մեր մտքի զբաղումները, եւ մեր դասընկերների եւ բնանների եւ առանձնատակութիւնները: Նրանց մէջ հետաքրքրականներից մէկին էր Բարաղամ Ամատունի, Օշականցի: Նա պարծենում էր թէ ինք Ամատունեաց իշխանների ցեղից էր: Եթէ երբէք ճիշտ լինէր այդ ցեղակցութիւնն կամը, ապա ուրեմն, վա՛յ այդ Համբուսուր պատմական Ամատունեաց իշխանների խելքին, եւ չը-նորհքին: Մեր Բարաղամը մի դունտ ու կլոր հսկայ էր, արտևքները կարճ էին, եւ մարմինը երկար, մէջտեղ գաճաճի հասակից փոքր աւելի ցածր: Նա քայլում էր գաճաճի նման, մարմնի ցնցումով եւ տարուբերումով աջ ու ձախ: Գլուխի եւ ուսքերի մէջնի անմատ տարածութիւնը այնպէս նեղ էր որ հազիւ թէ արժանի էր կոչուելու ճակատ: Եւ ուսքերը երկնից սեւաթոյր երկտարտոյս խիտ առ խիտ թելերով

լինում էին եւ հովանաւորում նրա պապղուն կիսաբոլոր աչքերը: Կարծես ծնած օրից ի վեր ամառնային գաշտի մշակի նման, նա անցրել էր իւր կեանքը յուլիսի այրող արեւի ներքեւ, եւ երեսի եղերքներում երեւում էին մազի թելը, եւ մենք միշտ ապառում էինք մօրուքի բուսնելուն, որը սակայն մեզ միշտ յուսախաբութեան մէջ էր թողում, որովհետեւ անձկանօք ապառում էինք այն օրին որ հաճոյք ունենայինք քաշքաշել մեր սիրելի Բարաղամի հնամաքրքրական մխուրը:

Հայելի չունէր որ տեսնէր ինքնիրեն, ուստի կարծում էր թէ ինքն միւսներից աւելի գեղեցկագէմ եւ վայելչակազմ էր: Նա իրաւունք ունէր որ այդպէս էր երեւակայում ինքն իրեն եւ ապառում էր որ մենք եւս երեւակայէինք համամտօն, եւ արդարեւ նրա ծագրաշարժ շարժուձեւերը եւ կատակարան բնաւորը նկարում էին նրա հաւթիւնը այնպիսի քաղցրաստեղծ գոյներով, որ ամէն մարմնական տգեղութիւն ուշքը չանում էր եւ դառնում էր անտեսանելի նրանց հրապոյրի ազդեցութեան տակ:


Ցամաս ջորիի նման Բարաղամի միտքը մնում էր կանգնած իւր կեցած տեղում, առանց դանելու մի բան իսկ յառաջ երթալու: Ուսուցիչները վարժուել էին հասկանալ թէ Բարաղամը պիտէր իւր դասը լայց մի բնական թեւթեւանքով միտքը կանգ էր առնում չարժուժից մի միայն թուաբանութեան թոքախտաւոր ու-

աւագիչը կոչնում էր համբերութիւնը, թէև առանց պայծառի, բայց հնդնաբար եւ կրկնում էր միևնոյնը.

— Դէհ, դնա քրդի չան պէս վեր ընկիր անպատճ:

Անարգելը հանդարտամտօրէն մաքրում էր կաւիճից ապխտակացած մատները սպունգով, դնում էր սպունգը մեծ գրատախտակի մէկ անկնի վրայ, եւ կաւիճը մեւս անկնի վրայ, եւ առանց վշտանալու անարգիչի յարձակումներին դիմադրութիւնից, քմծ ատկ ծիծաղելով, ուղղում էր իւր առնները դէպի ամենամօտ նստատեղին: Այս նստատ վիճակից նրան ազատելու համար ես կարծում էի հարկաւոր էր հարցնել Բարապամի խորհուրդը դանիը:

Ինձ համար Բարապամի մէջ ամենահրապուրիչն էր նրա դրութը, ուր հետախուզական ուսումնասիրութիւնից գալ էի որ մարդկի ներքին դանիի մակերեւոյթը ներկայացնում էր մանրամասնակար խորութիւններ եւ բարձրութիւններ, որպէս սարեր եւ ձորեր, եւ այդպիսի դանիի մէջ բնակող ուղեղը բնականաբար նոյնպէս ծամածռուած լինելու էր իւր խոհական ձեւակերպութիւնից, եւ թէպետ այդ էր պատճառը, որ թէև նա աշխատասէր էր եւ ամէն ջանք թափում էր սերտել իւր դասերը, բայց ի զուր: Դասի ընթացքին, կէս ճանապարհին մոռանում էր պատմածը, եւ կորչնում թելը: Ուսոմ դասի ժամերից զատ, դասարանի մէջ սերտո-



ԳԵՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ

դուքեան ժամերին եւ դուրսը մահ պարու կամ խաղի ժամանակ ատիճ էի փնտռում, եւ ոչ բժամառաս ամբացնելով իմ ցուցամատի եւ մեջամատի մէջեւ, գարձնում էի որպէս մուրճ, եւ երբեմն թնեթև եւ երբեմն խիստ մրճահարում էի խելօ Բարարամի բերաչար գլուխը, եւ բացատրում էի պատճառը: Նա սկզբում գայթնում էր, ապա սկսեց գիմանալ ինձ հանգիստ չնկնի նման, եւ ի վերջոյ կարծես ախորժում էր: Բայց վրէժը լուծելու համար, ես նստարն ասան արամիս եւ ծաղրելի ածականներ էր գրել իմ վրայ, եւ բոլոր ածականները մէկ չունչով արտասանում էր երբ բարկանում էր իմ դէմ, կամ ուզում էր դոհացումն տալ իւր հաճոյքին կամ վրէժին: Բայց մօտ հարիւր ծաղրելի ածականներ էր ասելոնել իմ կողքին նստող Ալեքսեացի Յարութիւն Տէր Մկրտիչեանի համար: Այս անձը ոչ մի մեղք չէր գործել նրա դէմ, բացի այն որ հասակով գրեթէ կրկնապատիկ բարձր էր, եւ քթից մինչ ականջատուիեան ճակատը էին լուսում, եւ վէպ խաղալու մէջ գերապանցում էր իւր կարճահասակ մրցակցին: Եւ սա իւր այս յանցանքների համար անպատմ իւր վրայ անպատարան եւ յաճախակի ընդունում էր հարիւր հանճարեղ ծաղրելի ածականները: Եւ նա ընդունում էր այդ անդոյական անպատիները խաղաղարարոյ հոգւով եւ անվրէժխնդիր ժպիտով:

ՊԱՊ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Իմ մանկուան տարի յանցանքի պատճառաւ, ես նահապաններէն դրկեալ վերջին անգամ էի, մինչ Բարագամ Ամատունի փայլում էր առաջին անգլ վրայ եւ ուսուցիչներին դէմ առ դէմ: Նրա եւ իմ միջեւ, եւ աւելի մօտ դէպի ինձ, կար Պապ Վարդանեանը: Եւ զարմանալի էր որ Պապ կոչուող մէկը պէտք է լինէր եօթանասուն կամ ութսուն տարեկան մի մարդ, մինչ մեր այս Պապը հազիւ տասն եւ երեք կամ տասն եւ չորս տարեկան էր, բայց նրա բարակ դլուխի սեւ մազերի մէջ վայլում էին սպիտակ թելեր, ձայնը նոյնպէս բարակ էր, ծեր մարդկերից ոմանց բարակհնչիւն ձայնի նման, բարակ եւ երկար էր նաեւ դէմքը եւ հասակը: Սա եւս Բարագամի նման սիրահար էր գաւեշտական սիրոյ պատմութիւնով զարդարել անվնաս եւ մեղմաթարոյ Յարութիւնին, որ մեր դասարանի տղաների մէջ ամենամերկինն էր, որ արժանանար անարգանքի ածականների: 1911ին նոր եղայ էջմիածնում Գէորգ Ե. Կաթողիկոսի ընարութեան դէպքում, այնտեղ էին բնականաբար Ռուսաստանի վեց թեմերի առաջնորդ եպիսկոպոսները: Մանկութեանս օրերից Աստրխանի թեմը եւ առաջնորդը իմ մտքում ապաւորուած էին որպէս ամենամեծը, միւսների համեմատութեամբ: Ուստի ես հարցրի պատգամաւորներից մէկին, վիպասան Վրթանէս Փափազեանին, ճեմարանի ընկերը·

— Վա՜հ, մինչ չդիտես, քո դասընկեր, եւ կաղքիդ նստող Յարութիւն Տէր Մկրտիչեանն է, այժմ կոչուած է Մինթաթ եպիսկոպոս եւ ապաւած է նրա գալը:

Ես մտքումս զղջացի որ ես եւս չէի եղել վարդապետ եւ եպիսկոպոս, եւ զուգ այժմ այդ հանդիսաւոր դէպքում բաղդ ունենայի ընտրուել Կաթողիկոս Ամենայն Հայոց, եւ անուն անմահանալ մեր եկեղեցական պատմութեան մէջ, թէեւ ոչ մէկ արժանաւոր գործ կատարած չլինէի ուրիշ շատ մը ապարդիւն եւ անարժան եկեղեցականների պէս: Մարդկային էր որ սիրտս ցաւ զգար եւ միտքս նախանձ, երբ տեսայ զարհուրական ընկերներ որ այժմ եղել էին Հայաստանեայց Եկեղեցւոյ Գերագ. Խորհուրդի անդամ, կամ համբաւաւոր թեմի առաջնորդ եւ յատակից հաւանականութեամբ եւ յատկինութեամբ ապագայ Վեհափառ Կաթողիկոսներ Ամենայն Հայոց եւ յաջորդներ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի:

ՆԻԿՈՂՈՍ ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ (Ներսէս Արք.)

Այս նիւթի վրայ կինք խօսում զարհուրակից հետ, որ նոյնպէս պատգամաւոր էր եւ ինձ նման աշխարհական, ուստի եւ անյոյս կաթողիկոս դառնալու հնարաւորութիւնից: Մենք կանգնած կինք կաթողիկոսական բնակարանից մի քիչ հեռու, ծառերի տակ, եւ նայում կինք

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Հայաստանի Մայր Եկեղեցւոյ շուրջ ծառայող պարտէզի մէջ, ասա անդ երկու կամ երեք պատգամաւորներէն կազմուած խմբակներ մխաին արձակում էին կաթողիկոսական ընտրելիներուն անձերուն մասին, ճիշտ ինչպէս որ դասներ եւ այծեր կանաչ արտերում ցիր ու ցան, բայց փոքր խումբերով, դլուխ դլխի տըւած արածում են փնտռելով իրենց հաճելի խոտերը: Եւ մինչ նայում էինք զուարճանալով այս բազմախօսող ժողովներին, հեռուից դէպի մեզ էին գալիս մի վեղարաւոր արբազան եւ անաւրէն աշխարհական: Բարեկամս ասեց.

— Տես, ո՞վ է պոպոզաւորը: Խաղերի մէջ արագավազ, եւ վէգի մէջ անմրցելի մեր Մելքիանգեանն է, այժմ առաջնորդ Ատրպատականի, իրեն աթոռանիստ ունենալով «Դա - է - վրէժ Աբասաչրի»:

Չերմօրէն ողջունեցի նրան, ինչպէս պիտի ողջունէի մի աշխարհականի, առանց դլուխ ծռելու, եւ առանց համբուրելու նրա օծեալ ձեռքը: Չեմ կարծեր թէ պիտի համբուրէի նոյնիսկ եղած լինէր կաթողիկոս: Նրա վարդապետական կերպարանքը նուազ հաճելի տըպաւորութիւն թողեց իմ վրայ քան նրա պատանեկական կեանքի երկարաթիթ եւ երկարաճիղ կարմրաթիւիկ երեսը: Բայց նա երեւում էր շարժուն եւ եռանդուն, բայց ինձ համար անյայտ էր ո՞ր աստիճանի արդիւնաւոր էր կարո-

դանում գործածել իւր Դավթեժական թեմի հայութեան համար:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՐ ՄԿՐՏՉԵԱՆ

(Մխիթար Արքեպ.)

Ինձ աւելի հետաքրքրում էր տեսնել մեռը, գաւառանիս կոզակները, մինձ Աստրախանի սեռնալ գաղութները Հայոց առաջնորդը: Շարժումով, ձայնով եւ խօսակցութեամբ նոյն խաղաղ, մեղմ եւ հանդարտասիրտ էարութիւնն էր: Մարմնի ձեւը եւ դէմքի գծերը մեռոյն տարրեր էին, եւ պիտի մնային անհանգչելի, եթէ չտեսնէին ինձ թէ նա, այդ Մխիթար եպիսկոպոսը, մեր բազմածանուն լսելով Յարութիւնն էր:

Այժմ ես մի մեծ անձնաւորութեան առաջ էի կանգնած: Նախ կանգնած, ապա նստած: Նրա հոգեւոր իշխանութիւնը տարածւում էր Վոլգայի արեւելեան ափերից մինչեւ Դոն գետի արեւմտեան ափերը, Կասպից Ծովից մինչեւ Ազով եւ Սեւ Ծովերը, եւ Կրիմ թերակղզին եւ հեռու մինչեւ Մոսկուա, եւ ցարի մայրաքաղաքը, Նեվսկի Պրոսպեկտը,, ուր բարձրանում էր հայոց հարուստ եկեղեցին: Ռուսիոյ ցարից յետոյ չեմ կարծում թէ կար մի այլ ոք այդ հսկայ կայսրութեան մէջ, որ իւր հոգեւոր իշխանութեան տակ ունենար այնքան մեծածաւալ տարածութիւն, որքան որ իմ այս նախկին գա-

սարանակից եւ մերձակից ընկերը, այժմ Մխիթար եպիսկոպոսը:

Եթէ նա եղած լինէր մի աշխարհական իւր այս վատաւոր մեծութեամբ, անշուշտ պիտի նախանձէի նրա այս դէրքին, բայց ոչ, քանի նա վեղարաւոր էր, երկայնապռնեան եւ երկայնամիտք: Ինձ կատարեալ զարմանք պատճառելով նա զուարճաբար ասեց թէ Բարսղամը եւ Պապը պաշտօնեաներ էին իւր թեմում, եւ կարծեմ ասեց թէ Բարսղամը մնացել էր պարզ սիրտցու եւ եկեղեցւոյ երաժշտապետ Տարանտոպում, եւ իւր ճարտար արուեստի համար ըստանում էր տարեկան 2000 ռուբլի, ինչ որ մի քահանայ չէր կարող ստանալ, եւ թէ Պապը եկամէնոգարում էր իրը քահանայ: Գլխի մազերը ձիւնի պէս սպիտակ, մէրուքը սակաւ ինչ դեղնած իւր սիրած քթախոտի դեղին գոյնից, թէ նա ըստ սովորոյն նմանում էր եւ դառել էր մի խոհական պապ, թէ ծերութեամբ եւ թէ մեծ հայրութեամբ:

— Սրտիօք ի՞նչ է անցնում ձեր վոխադարձ մարդկից երբ տեսնում էք միմեանց:

— Երբ այցելութեան եմ դուրս գալիս իմ թեմի մէջ, եւ լինում այդ քաղաքներում, ծիծաղելով ասեց Մխիթար եպիսկոպոսը, Պապը եւ Բարսղամը մեւս այցելուների նման, գալիս են իմ առաջ խոնարհաբար ծռում են գլուխները եւ համբուրում են ձեռքս:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

— Եւ անառարկելի է, ասեցի, այդ հանդէսաւոր ժամերին դու մտաբերում ես այն վսեմաւոր ածականները որոնցմով զարդարում էին քեզ եւ նրանք իրենց մտքերում յիշում այն շքեղայլ ծպտյալից ակտիսանները, որ կպցնում էին քո վրայ եւ մատծում թէ ամենատղմած Աստուածը որքան անտղմ էր որ իրենց պատանեկան ժամանակի այդ անմեղ մեղքերի համար քո պէտ, այժմ իրենց հասուն տարիքում այսպէս իրենց ծխծուխի դէրքի մէջ էր զրկել քո առաջ։

Եւ արդարեւ, որպիսի անբնաւակայելի այլակերպութիւններ են կատարում մարդկային կեանքի հասանքում, ուր յաճախ ծպտյալը դառնում է ծպտեալ, եւ ծպտեալը դառնում է ծպտյալ։ Բռնակալը լինում է գերի եւ ստրուկ, եւ գերին եւ ստրուկը լինում է բռնակալ։

ՂՈՒԿԱՍ ԷՎՃԻԼԱՐՑԻ

Մեսրոբեան Օշականի որդի մեր Բաբադամ Ամատունին իւր ախտաստահոդ հանճարի հրաշակերտը ստատարել էր մեր դասընկերներից Ղուկաս Էվճիլարցիի վրայ։ Ղուկասի երեսի գոյնը նմանում էր թաց կարմիր բդղի կիզեւի գոյնին, եւ նրա գլուխի մազերը նման էին չկլպած դաստրի գոյնին։ Մազերը միատեսի պէս քնքոյշ եւ գեղանի, բայց էին բիզ բիզ գուբս բուսած ոզնիի մազերի նման։ Եւ զարմանալի չէր որ Բաբադամը զրկել էր Ղուկասի

վրայ յարմարագոյն ախտորոշը՝ քուռակ, եւ իւր այս պիտոյն համար արժանացել էր ճեմարանի մեծ ու փոքր աշակերտների հետաքրքիր ուշադրութեան: Ղուկաս չատ ուրախ էր իւր նոր անուան համար, եւ իւր յատկութիւններով մարմնի եւ դէմքի չարժումներով խաղերի ժամանակ ուսումնասիրում էր եւ աշխատում էր նմանիլ քուռակին: Բայց անտարակոյս ոչ մենք ապրում էինք, եւ պիտի փոխուէինք որ նա իւր քուռակային չքնաղիկ յետոյ գառնար եւ անուանուէր այնպէս, ինչպէս քուռակները գառնում եւ անուանուում են իրենց հասուն հասակում:

Լիահասուն տարիքի մէջ էր նա երբ 1914ին միանգամ եւս հետացած Թէմալի տիեզերից, երեւանի ձորի վերից իմ առաջ անդնդում տեսնում էի Հրազդանի ոսկեստափերիտուր հոսանքը, եւ հորիզոնում Արագած արծաթաշող տիեզերը, եւ այնտեղ առաջնորդարանի դեղատեսիլ պատըշգամում նստած մի քանի բարեկամներ նայում էինք մեր առաջ փռուած Արարատեան դաշտի ծառապարզ այգիների դիւղերը, եւ խօսակցում էինք մեր գաղթական կեանքի օրերից եւ անձերից, երբ մեզանից մէկը մատները ուղղելով դէպի արեւմուտք, հետու գիւղերից մէկը, բացագանչեց ծիծաղելով.

— Ահա Էիվէլըրը, մեր հին Քուռակի ծննդավայրը, նա այլեւս քուռակ չէ, բայց օծեալ քահանայ սուրբ եկեղեցւոյ Քրիստոսի, եւ

ամէն մարդ անուանում է նրան Տէր Ղուկաս, եւ խոնարհւում եւ համբուրում նրա ձեռքը: Պետրոս, թէ քեզ եւ թէ նրա համար մեծ հետաքրքրութիւն եւ հետացումն պիտի լինի տեսնել միմեանց երեսուն եւ կամ աւելի տարիների անտեսութիւնից յետոյ:

Այդ օր եւ դիշեր, արթնութեանս ժամերի եւ քնածութեանս երազների մեծագոյն մասը զբաղուած էին մեր Ղուկասի հին կեանքի յետզոզութեան քայլը եւ զուարճալի դէպքերի տեսարաններով: Եւ հետեւեալ օր մի ուղեւոր ձիապանի առաջնորդութեամբ, բանեցի էվէլլոյի ճանապարհը: Ճանապարհին զարմար առանք մի քանի դիւղեր, եւ մութ դիշեր էր երբ մենք հասանք էվէլլոյ:

Բացի երկնքի վառվռուն աստղերից, այդ երկրի վրայ եւ այդ խաւար փողոցներում չկար ոեւէ լապտեր որ լուսաւորէր մեր քայլերի ընթացքը, եւ անշուշտ այդպէս էր եղել Աբշալումենոց պանծալի եւ վառաւոր թագաւորութեան օրերում: Ուստի մենք խարխափելով յառաջանում էինք նեղ եւ քնած փողոցներով, եւ ծեծում էինք դռներ, եւ հարցնում տէրտէրի տունը եւ գտանք: Դուռը բաւական ծանր հարուածներ կրելուց յետոյ բացուեց կիսովին եւ մի կին հարցրեց թէ ո՞վ էինք եւ ի՞նչ էինք ուզում: Ուղեցոյցս պատասխանեց թէ նա Տէր Հօր ճեմարանի հին դասընկերն էր եւ եկել էր նրան տեսնել: Այս ասելով նա մեռաս բարեւ ա-

սեց եւ գնաց իւր գլխի ճարը գտնել այդ գիշեր: Ես չուարած էի, չուարած էր երեւում եւ կինը, եւ ես արդէն հազար անգամ զղջացել էի իմ այս քաղաքասիրական ուխտադնացութեան համար: Տիրուհին փոքր ինչ սթափելով չուարումից, նեղս հրաւիրեց ինձ, ասելով թէ ախրակը քնացել է, եւ թէ պիտի չկամար արթնցնել նրան, եւ նա առաջնորդեց ինձ մի սենեակ, ուր ճրագուի մոմը մի ապօտ լոյս էր սփռում սենեակում: Առաստաղը պատուած էր մթագնեալ խոխրով եւ պաշտպանուած սեւացած կերտաններով, պատերը ծեփուած էին ցեխայինն չորախով, եւ յատակը բնութեան ստեղծած հողով եւ ծածկուած խոխրով: Սենեակը մօտ 17 ոտք կամ աւելի երկար էր եւ փոքր ինչ պակաս լայն: Սենեակի աջում եւ ձախում կային երկու թախտեր, իւրաքանչիւրը 7—8 ոտք երկար, եւ 6—7 ոտք լայն: Ա՛ջ կողմի թախտի վրայ անկողնի տակ պատկած էին կարծեմ երկու երեք երեխաները, որոց դլուխները երեւում էին դուրս եկած անկողնից, եւ ձախ թախտի վրայ լսւում էր խոմրոց, հռնչոց եւ խռնչոց, կարծես քնացողը կռւում էր իւր կոկորդի թևերի, իւր ստամոքսի գաղտնիների եւ հրդեհի եւ իւր թոքերի անդուլ ընչաւութեան հետ:

— Ամէն գիշեր այսպէս է, ասեց կինը ամօթահար:

Յայտնի էր որ Քրիստոսի քահանան վաստակաւոր կոնծած վիճակի մէջ էր:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Երիտ. Հակապատակեր արբազան առաքեալի թուղթերէն երկրորդին չէր գտած դառնալուց երբեմն իւր աչքի, ապա իւր վրայ, յետոյ իւր ձախի, եւ գրձնալ իւր մէջքի վրայ, եւ ոչ եւ մէկի վրայ յաջողում էր գանել իւր խնդրած հանգամանութիւնը, եւ շարունակում էր մոնչել։

— Տէրտէ՛ր, ախրախ՛ր, քեզ եմ ասում, չի՞ս լսում։ Ձեմարանի քո հին մի ընկերը նկել է, բառնդ է, ուզում ա խօսել հետդ, վեր կա՛ց, խօսի՛, կրկնում էր կինը յուսահատ արտասուքների ազաչանքով։ Եւ վերջին անգամ այնպէս ազդու կերպով չհաջող իւր բառերը, որ պինդը կարծես ցնցուեց գայթյթով.

— Ի՞նչ ինձ հանգիստ չես թողնում, չան ապչիկ։ Էդ որ քոխոզի (չան որդի) ընկերն է որ ասում ես։

Ապա, դլուխը փոքր ինչ բարձրացնելով եւ կիսախուփ աչքերը ուղղելով իմ վրայ, ասեց.

— Տօ ո՞վ ես, ձեմարանի ո՞ր ընկերն ես։ Ես չեմ ճանաչում այդ անշնորհք երեսը։ Աամ՛ առնունդ։

— Դու դաբը, ես պիտի չասեմ, լաւ նայիր։

Նա աւելի լարեց աչքերը եւ ուշադրութիւնը, եւ դլուխը թափ առաւ, ասեց.

— Սատանէն էլ չի ճանաչի քեզ, ես ի՞նչպէս ճանաչեմ։ Հա՛, մեր լոլոզ Յարութիւնը չես։

— Ո՛չ։

— Հա՛, կարծեմ մեր ապուհա Աբմենակ

Հայկուհին ևս, որ չհաննամ եղաւ դնաց Սաամբոլ։

— Ո՛չ։

— Աչքերս լաւ չեն տեսնում քո մանր աչքերը, եւ նրանց անկիւններին մանր ծակիկը որ դուշակէի թէ արդեօք մեր քառասանի Յովհաննէսն ես թէ չէ։

Եւ այսպէս նա անյաջողօրէն չարունակէց ուրիշ անուններ, մինչ բացատական աչքը բռատանալով։

— Մի չան արդի Պետրոս Տօնապետեան ունէինք, բայց դու նա չես անշուշտ։ Լսեցինք թէ Թուրքի Սուլթանը նրան Պոլսից քշեց Աքքերայի բերդը, եւ ընտէղ նա սպանուեց թէ մեռաւ։ յետոյ լսեցինք նա ընկել էր Լոնդոն, եւ քէֆ էր անում լորդերի հետ։

— Հիմա, ձիշտ դուար թէ ո՞վ եմ։

— Դրո՞ւսա, դո՞ւ ես, Պետրոս Ջան։ Տօ՛, հէր օրհնած, էդ ո՞ր երկնքից հասէս յանկարծ մեր ընկաբ բռանէդ։ Տօ՛, տէրտէր, մի չիշ դինի բեր, Պետրոսի կենացը, աթո ի՞նչ ուտելու բան կայ, ինչ որ կայ, ամէնը բե՛ր, որ ուտենք եւ քէֆ անենք մեր հերի հետ...։

Տէր Ղուկասը բաւական սթափել էր, եւ ինչպէս տեսում էր այս սերնդի խօսքերը, անուսանելոյս յիշում էր նախկին հայհոյանքները։ Տիրուհին հասաբել եւ տարել էր երախաններըը, եւ նրանց անկողիններըը մօտակայ թոնրատունը։ Ես մնացի միայնակ Տէր Հօր հետ, բայց իմ

հետ միացել էին բազմաթիւ թուչիառղ լուեր, եւ թեւերուս ծանրացայ ոչխարներ, եւ մարմնիս ամէն մասերում զգում էի նրանց սրածայր խայթոցները: Անկարելի եղաւ քնել այս անտեսանելի եւ անձերբակալելի թշնամիների թունաւոր նետերից, եւ անկողնից բուռդ հընացած քրտինքի հոտից:

Հետեւեալ օրը ակրաէրը սարսուռ ինձ պատուիրեց գրել բնութեան տեսարանը ցոյց տալու, միանգամայն պատմելով իւր քահանայական պաշտօնավարութեան արարքները, եւ նա պատմում էր ամենայն պարզութեամբ եւ ըստ ճշմարտութեամբ: Ես կարգացել էի կղերականութեան սուրբ հայրերի մասին Անապատ Ծրանի եւ նրանց կեանքի գաղտնիքները վեր հանող այլ եւեւէլի հեղինակների գրքերը, բայց նրանցում չէի պատահել այն ինչ որ մեր երեսների քուռակը գտնել էր իւր քահանայական կեանքի մէջտեղին եւ որ այնքան պարզամտութեամբ պատմեց ինձ: Ես յառաջ եմ բերում նրա տեսութիւնը, որպէս նախկինն, նոյնպէս հետեւեալն, թեեւս ոչ նրա խոսկական բառերով, սակայն խոսկական նշանակութիւններով:

— Պետրոս Ջան, գիտի ակրաէր լինելուն պէս լաւ բան չկայ, բոլոր պատանները եւ ջահելները գալիս են ժամ մէկ մէկ տատանձին, եւ խոստովանում են իրենց մեղքերը, եւ ես տեսայ եմ որ ծածուկ բան չպահեն, բայց ամէնը խոստովանեն, որ կարենան արքայութիւն երթալ:

Այսպէս նրանք թոռ են տալիս իրենց մեղքերը իմ առաջ, եւ ես թողութիւն եմ տալիս նրանց, եւ արքայութեան արժանացնում այդ առաքինիներին մինչեւ յաջորդ խոստովանութեան օրը: Ջահել դեղեցիկ կնիկներին բոլի բոլի վոխ-ձեւում եմ նրանց մեղքերին թողութիւն տուած ժամանակ, ուրիշ մի լաւ մեղքի մէջ եմ ձգում, եւ նրանք էլ ինձ պէս սիրում են դառնալ մեղաւոր: Եւ այնուհանդերձ սիրում են ունկն յաճախ ժամը գալ խոստովանելու համար, եւ ամէն անգամ իրենց հետ բերում ինձ համար տատրակած գաթա եւ տուճուխ:

Նա իրենց իւր ձախ ձեռքը իւր երկար վիրաբկուի երկար գլխանի խորը, եւ դուրս հանեց մի բաւական բարակ ոսկրնիկ, որոնցից մէկի կամ երկուսի վրայ տակաւին երեւում էին կպած մսի կտորնիկ:

— Ահա՛, էս երկուսյ տատրակած հաւի ոսկրնիկն են, արժանաւոր չնորհակալութիւն խոստովանող հարցին: Մխը կերայ եւ ոսկրնիկը դեռ պահում եմ ի յիշատակ:

— Արդեօք ի՞նչ է մտածում Բրխատս-Ատուած, տեսնելով այդ արածնիկը:

— Ապա, գի՞ծ ես: Ատուած ուրիշ գործ չունի՞, որ դայ էմ էքլեալը, որ տեսնէ թէ ես ի՞նչ եմ անում: Անում եմ ինչ որ ամէն մարդ է անում:

Եթէ մարդկային հաւատքը մաքրուած լինէր խաւար նախապաշարումներից եւ կոյր մո-

լեռանդութիւնից եթէ այս հին զարդասիրից ընկերքը այցելելու բաղդը ունեցած չլինէք, պէտք երբէք չպիտենայի այսպիսի կրօնաւորների դոյութեան կարելիութիւնը Քրիստոսի եկեղեցւոյ մէջ, որ արտաքուստ է սրբութիւն սբրոց, եւ ներքուստ ունի այս տեսակ պաշտօնեաներ, սուրբ հայրեր եւ սրբատան նախակարապետներ: Եւ մեր Ղուկասը իւր տեսակի մէջ հաւանօրէն միակը չէր Հայ Եկեղեցւոյ եւ հայ գիւղերի մէջ:

Բաժանուելուցս ուզեցի բաժանուել եւ յաւելից եւ թեւեւս նրանց հետեւող աշխներից, որոց խայթոցից ներփոյթութիւնը տակաւին ըզգում էի մարմնոյս վրայ: Տիրուհին վառեց ծոնելը եւ բոցերի հանդիսելուց յետոյ բոլորովին հանուեցաւ հագուստներից, որոնք ակռաբակինը մէկ մէկ վեր առնելով սկսաց ծուխ տալ ամբարշիկ ծոնների վրայ, եւ ծչուտս յաւերն եւ նրանց գարշահոտելի ընկերները անդօրանալով պահել իրենց հանկերը պղտոնների անջատուելով ծախուսմ էին, հատած ծուխի նման, կրակոտ ծոնների մէջ, եւ նրանց պայթիւնների կճիճոտ ձայները բարձրանում վեր, եւ հասնում մեր ականջներին: Երբ այս ողբերգական արարողութիւնը աւարտեց, եւ ես կարծուս հաղնում էի պղտոնները, եւ բոլորովին պատրաստ, գուցա նրանք այդ մարբառանից, եւ վերստանգաւոր համարելով առ կոխել հիւրընկալս ննջարան-ընդունարանը, հրաժեշտ ուղեց-

նը վոխանակելով Թոնըսաան դրսում, եւ նա դուրս ելաւ ինձ հետ մինչեւ ուր վարձու ձին սպասում էր տանելու ինձ Երեւան:

Այսպէս, աս յաւէտ բաժանուեցայ Ղուկասից, որին տեսայ առաջին անգամ Սուրբ Էջմիածնի ճեմարանում, երբ պարզամիտ եւ անմեղ պատանի էր, եւ պարում ու ցատկռտում էր խաղերի ժամերին, եւ գլուխը կախ էր տալիս դասերի միջոցին, եւ անուանի էր Բարսղամի մկրտութեան աւազանի անուանակոչութեամբ, եւ այժմ վերջին անգամ տեսնում էի նրան մկրտուած Քրիստոսի սուրբ եկեղեցւոյ սուրբ միւռոնով որպէս քահանայ Աստուծոյ, որ Հոգեւորապէս հովուէր կրօնապաշտութեան երկարականջ եւ հաստակաշի ոչխարներին, որոց այսպիսի ոչխարներ մնալը պիտի չարունակէ մարդ արարածների մէջ, որքան ժամանակ որ նրանք չարունակեն արածել հոգեւոր հովիւների կրօնական ցուպերի ներքոյ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

Ամէն մի դասընկերի անուան յիշատակութիւնը տանում է ինձ նրա կեանքի յետագայ երեւոյթներն եւ իրականութիւնները, հեռացընում ինձ այն կեանքից որ դպրոցականն է եւ անձերից որ պատանիներ էին: Այսպիսիներից մէկն էր Յովհաննէս Աստուածատրեան, Կ. Պոլսեցի, որին Բարսղամը մկրտել էր քառասնեան անունով, որովհետեւ նրա աչքերի ան-

կիւնեներում կային որոշակի անուանելի մէկ մէկ ծակիկը, որոնցից ցոգոմման կաթիլներ երբեմն վայրում էին եւ ցոգում նրա ոտներից վայր: Նրա դպրոցական կեանքից չատ բան չեմ մոռացել, բայց ահռելատես եղայ նրա մայրասիրական զգացումների անսահմանների, որոնք երբեմն երբեմն անուանելի են դառնում իմ մտքի առաջ: Հին ժամանակի նկարիչների պատկերներում անել եմ մանուկներ ինչպէս երկնային սիրով զրկած են երեւում իրենց մայրերին, եւ վաթսաթուած նրանց վզերին եւ կուրծքերին. բայց երբէք չեմ անել պատկերներում կամ իրականութեան մէջ, որ 18 կամ 20 տարեկան երիտասարդ ցոյց տար այսպիսի անսահման սիրոյ վայելիանք դէպի իւր մայրը: Քառասունին անոյշ կ. Պոլսում: Նրա մայրը ունէր մի համեստ տուն Սուլթան Համիտի բարձրաչքեղ պալատի յարկից բարձունքի ամենացածր վայրէջքի վրայ մի բաւական լայն պարտէզով, ուր բարձրանում էին պտղատու ծառեր եւ ուր գնանի մակերեւոյթը զարդարուած էր կանաչ բանջարեղէնով եւ դառնագոյն ծաղիկներով:

Պարտէզի բազմատեսակ բանջարեղէնները, ծիծաղուն ծաղիկները, գեւարթմականաչ տերեւների միջով երեւցող կարմիր զնկած հասուն պեղոտային տանձերը, կարմրաթմուշ խնձորները եւ անուրջ տարրները լցնում էին նրա սիրտը ցընծութեամբ, եւ երեխայի նման ցատկռտում էր աջ եւ ձախ, եւ իւր մօր վրայ տարծում իւր թև-

ւերը եւ առնում նրան կապած իւր սրտում եւ կամ թռչունի նման թռչում էր նրա շուրջ եւ ջերմ համբոյրներով կարմրացնում էր նրա սրդէն կարմրած այտերը:

Այս մի սեսարան էր որ ես չէի սեսել ոչ մարմնական աչքերով, ոչ մտաւորական երեւակայութեամբ: Բայց այժմ սեսնում եմ մի մայր հոգին յի գերբնականութեամբ, որ անքուն դիշերային սանջանքները, եւ արթուն ցերեկային անձկութիւնները եւ սրանեղութիւնները վարձատրում էին զգացումների սրատրութ երախտապիսութեամբ:

Ա՛հա րանեան, որի մասին սատնձին պիտի գրեմ յետագային, ինձ պատմեց հետեւեալը:

«Մի օր լողանում, քաղաքից դուրս հանրակառքի էի սպասում, մի քիչ դէն էլ մի հասատիք հարուստ հագնուած մարդ իւր կնոջ եւ զաւակների հետ: Հետաքրքրութիւնս չարժուեց երբ լսեցի որ հայերէն էին խօսում: Մօսեցայ, եւ սկսեցի խօսել նրա հետ: Նա ասեց որ ինք ապրում էր Հապէչխատանի մայրաքաղաքում, եւ իւր ուսմունքը սուել էր Էջմիածնի Գէորգեան ճեմարանում:

— Գէորգեան ճեմարանո՞ւմ: Ե՞րբ, եւ ո՞վ էին ձեր ընկերները, հարցրի ես յանկարծական զարմանքով:

— Ես ամենաւէն չեմ մոռանում մեր ընկերներից Տօնապետեանի ճակատագիրը երբ վերջին անգամ մեր տանը նստած, մայրս կերակուրի սեղանը զարդարել էր իւր պատրաստած

վարպէտ ասբեւեղով եւ ուրիշ պատուական առնուշներով քաղցրացնելու մեր բնթանքը: Տօնապետականը ամենից ասելի սիրից դպումի ընթերով չինուած քաղցրասէնին: Այդ դասարձալի օրից մի երկու շաբաթ յետոյ Կ. Պոլսում հռչակը տարածուեց թէ նա ձերբակալուել էր, մերթութիւնը պատից ինձ եւ իմ վտիտիասիրտ մօրս, որ այլեւս պիտի չտեսնէինք նրան: Մի երեւելի դրագէտ գաղծած գասընկերը էլ ունէի, Աւետիս Ահարոնեան, որի դէմից չէի ազատում թէ մի դրագէտ կարող էր դուրս գալ: Այս առարպանքի վրայ, ես արդէն բոլորովին ապշած անձանօթի վերաւած այս ծանօթի անհիմնական յայտնութիւնից, աչքերս չտեսի նրա մթին երեսի վրայ, եւ ասելի գարմացած, բացատրեցի.

— Տօ, էդ դո՞ւ ես Գառակոնի, որ էդպէս անպատում եմ իմ պատուական դրուելը. ես ինքս Աւետիս Ահարոնեանն եմ:

Գառակոնին ինձանից ասելի գարմացաւ, ցնծութիւնով ցատկից իմ վրայ, երկու ձեռներով գրկից ինձ, եւ համբուրից երկու աչերս եւ ճակատս, ասելով.

— Կեանքիս ուրախալի օրերից մէկն է որ բազդ եմ ունենում այս պէսիսկի Զուիցերիայում հանդիպելու մի սիրելի գասընկերիս, բայց դրուելը դէմ արած անարպանքը չետ չեմ տանում մինչեւ որ մի օր հրաշքով տեսնեմ գրածներիդ մէկը, եւ համոզուեմ ուղիղով պատուա-

կանութեան, վերջացրեց իւր գասատուութիւնը իւր պատանեկութեան օրերի բարձրաձայն ծիծաղով։ Տեսնելու էիր նրա երկինքը։ Երանգ խօսում էին հայերէն այնպէս լաւ, որ կարծես թէ ծնած էին ոչ թէ խաւարակուռ Ափրիկէի սեւամորթների միջեւ, բայց Գրիգոր Լուսաւորչի Հայաստան աշխարհում։ Կնոջ Քառականին, երեսով դարձել էր Հարէշ, սրտով մնացել էր Հայ։ Իսկ ես ասեցի.

— Այս քո Գրիգոր Լուսաւորչի Հայաստանում էլ անցնում ապրի, ուր տեսայ Երեւանի Հանրապետութեան պարտէզում եւ Արովեան փողոցում ուսանող եւ ուսում հայ դպրոցում էին, եւ պանծալով լեզուատրանում էին ուսուցչին, ուսուի կովկասի ազգասէրները փոխադրութեան են այս տեսակ ուսուհայերին խաւարակուռ Ափրիկէ եւ այնտեղ հաստատել Հայաստանը, նրա չեն ուզում որ այդ հայերը խաւարին լեզուով եւ ազգութեամբ։ Բայց ուսուհայութիւնը միտքը չէ այդպէս։ Այստեղ Լոնդոնում կան հայեր, որ նրա թոյլ տալու լինեն անընդհատ կը խօսին ազգասիրութիւնից եւ յաւիտենական հայկական խնդրի վրայ, որը երբէք չեն հասկացել, եւ այդպիսի զրուխով երբէք պիտի չհասկանան եւ հակառակ այս անտանելի ազգասիրութեան, հոգածութիւն ցոյց չեն տուել եւ չեն տալիս որ իրենց զաւակները սովորին մօրը լինչ հայերէն գրել կարդալ, եւ հայերէն խօսել։ Հայ ազգը այն ժամանակ կարող է մար-

պահպանել ապրի դառնալ երբ նրա մէջից ջնջուի «ազգասիրութիւն»ը եւ ազգային պաշտպանութեան զէնքակատար դաստիարակութիւնը: Եթէ մեր ժողովուրդը դառնայ կոմունիստ, այն ժամանակ միայն ազգասիրութեան վրայ խօսելը կը վերջանայ մեզանում, եւ ազգային դատի թշուառ եւ հակայ գերատեաններն էլ ի՛նչ նշանակութիւն կունենան:

— Այդ հաշւում, Տօնապետ, դու պիտի կամենայիր որ մեր ազգը դառնար կոմունիստ: Բայց ես պիտի փափաքիմ որ ազգասիրութեան դաստիարակութիւններով, եւ ազգը ազատելու պատանեկական գերատանութեամբ:

ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻ (Զամանիան)

Իմ նահապետիս երեք հարիւր տարի առաջ նահատակ էր Թուրքիոյ Շապին Գարահիսար քաղաքից Արմենակ Հայկունի անունով մեծահնչիւն ձայնով, մարմնով ամրակազմ, եւ բարձրութեամբ կարճահասակ տղայ: Նրա քիթը երկայն էր, բերանը լայն, աչքերը արծուային եւ երեսը գեղնագոյն պղնձային: Երբ տարիներ յետոյ բազդը նետեց ինձ ի Լանդան, նրա ամենամօտ եւ բազմատեսակ թանգարաններում տեսայ ամէն մարդկային ցեղերի եւ տեսակների դէմքեր եւ արձաններ, Բրիտանական թանգարանի եգիպտական բաժնի մոմիաների եւ արձանների դէմքերից եւ գոյներից նկայ այն նըմանակցու-

Թեան թէ մեր Ամենակ Հայկունիի նախնիքները Եգիպտոսի վարաւոններուն եւ նրանց բարձր պաշտօնականներուն ցեղից լինելու էին: Այդ ժամանակ ոչ նա գիտէր, եւ ոչ մենք կարող էինք գուշակել նրա այս վիհափառ ծագումը: Բայց ինչ որ մենք գիտէինք, եւ էր հետաքրքրական մեզ համար, նրա քսան քառնեհինգ տարի երկայն եւ նոյնքան լայն կառաչեղէնի պարտէզը եւ նրա կողքին Թագնուած առորեզրեայ Թանգարանը: Երբ մենք տարուում էինք դուրս պրոտոյտի կիրակի եւ տօն օրերում, դէպի Հանգած Եկեղեցու տակ Զուարթնոց Եկեղեցւոյ ահեռաւոնների չրջակայ ալիծուի բլուրները, կամ Նեբտէսեան լճի չրջակայքը եւ ծառազարդ անտառը, Ամենակ Հայկունի յաճախ գլուխը ծռած, իր երկար քթի վրայի արծաթային աչքերը կիսւում էին ուղղուած իր առաջ տարածուած գետնի վրայ, կարծես փնտռելով մի հետաքրքրքիր հնութիւն: Եւ նա բացատրելիս հատաքում էր փտած եւ կտրած ոսկորի կտորներ, ձիի կամ էշի նալի բեկորներ, ժանգոտած ծամածուռ դամեր եւ գեղեցկագոյն իրերան անթատամ ծաղիկներ: Արանցով զարդարում էր իր գլխարանը: Եւ երբ աչ ու ձախ նայելով տեսնում էր թէ ոչ ոք կամ թէ լրտեսող չկար, բաց էր անում իր Թանգարանի հոդերէն դուռը եւ իր հազուագիւտ հնութիւնները տեղաւորում այնտեղ: Ամենակի քաղաքավարի անունն էր հնախոյզ, բայց նա ունէր երկու երեք ուրիշ անուն-

ներ, որոց կնքահայրը սակայն մեր Բարապամը չէր, բայց բարձրագոյն դասարանի Սահեան Կանայեանն էր, դրաբառի սերտաբար, եւ մեզ փոքրերիս Թևադրում էր կարդալ Եղիշէ, եւ բնականացի սորվիլ «Տիկնայք վարիկասունք Հայոց աշխարհի»ն, ինչ որ կրկնում էի եւ կըրկնում,, առանց կշռանալու այդ քաղցր լեզուից որ սակայն նկարագրում էր հայ սիրնանց գառնագոյն կեանքի ողբալի տեսարանը:

Չեմ յիշում թէ ի՞նչ էին այն անուններըը, որոցմով նա պատուել էր մեր տարօրինակ հնոտիքսդին, բայց չեմ կարողացել մոռանալ որ դըրկել էր իւր աւելի ցած դասարանի Մանուկ Աբեղեանի վրայ, որ երեսին նա ծաղրելով կոչում էր Մանիկ, եւ նուիրից անունը կնքել էր «Ամսարաթի էշ»: Մանուկը, լուրջ մի ազգայ, այդ տարիքից երեւի բանուած էր հայ բառերի արտասանութեան հետազոտութեամբ, եւ այդ պատճառու Կանայեան կոչում էր նրան «Մանիկ»: Ցաւալի է որ այս հետազոտութիւնը վարակուեց այդ լրջաբարոյ Մանուկի ուղեղի մէջ, որ երբ ծնաւ Նոր Հայաստանը, եւ ինքն եղաւ այդ Հայաստանի հեղինակաւոր, եթէ ոչ ամենահեղինակաւոր դրագէտը, իւր լեզուագիտութեան ապիտութիւնը հզօրապէս գործածեց արգասպծելու Սահակ–Մեսրոբեան ամենասուրբ ուղղագրութիւնը եւ այսպէս այլափոխելով բոլոր դէմասուր եւ կաթեւոր բառերն իրենց դրաւոր կեանքով ծնած կերպարանքներով:

եթէ նա մեղսակից չէր հայ ուղղափառութեան դէմ գործուած այդ մեծ մեղքին, իւր պարտականութիւնը պիտի լինէր ոչ թէ արժանանալ Կանայեանի երեն չնորհած ախտոսին, թայց ասել չարաչուք լեզուպէտներին.

«Ես գործ չունեմ ձեզ հետ, Աբելն ձեր է պրեխ ձեր»:

Մոռացութիւնը սակայն արմատացաւ Հայաստանի գրագիտութեան մէջ, եւ նրանց գլխաւոր մեղաւորներից մէկը եղաւ պրօֆէսօր եւ ակադեմիկոս Հայաստանի Գիտութեան Կոճառին մէջ:

Իսկ Կանայեանի մեւս սանը Ամենակ, մեր այս անդուզական դասընկերը եկեղեցական թէ տարրական կեղտարանքը վերջին անգամ տեսնելուցս յետոյ, նա եւ մի ուրիշ բարձր դասարանի ընկերը, Մինաս Աւետիսեան, Ղզլարցի, մի վայրկեան օր մեռանին եւ բնութեան Սուլթանի մայրաքաղաքում, «Աբելեանի» օրաթերթի խմբագրատան մէջ, իմ պաշտօնատեղին: Նրանց ցանկութիւնն էր երթալ Հայաստան ուսուցչութեան պաշտօնով, հոդ չէր թէ քաղաքի կամ գիւղի մէջ, բաւ էր որ նուիրուէին հայ մանուկների կրթութեան սուրբ գործին: Թուրքիոյ հայ գաւառացիները, որ գաղթել էին ի Կ. Պոլիս, եւ եղել առաւել կամ նուազ բարեկեցիկ դերքի մարդիկ, ամանք ունեցել էին բարի սովորութիւն, կազմել գպրոցասիրական ընկերութիւններ, եւ երենց նը-

պատանեաց պղծացնեը պահել իրենց հայրենի-
քի պիտիքան:

Այսպէս, կոչ Խիզանի պղծացասիրաց ընկերութիւնը: Հին դարերուն Խիզանը եղեր է հայ կրօնական կրթութեան գարեւոր կեդրոններէն մէկին էր, եւ պատապրել է հայ ձեռագրեր, թէ մանրանկարներով, եւ ձեռագրերի գրութեան եւ պատեհան ոճը տարբեր էր Կիլիկիոյ ոճէն, եւ կոչուած էր Խիզանի դպրոց, բայց ժամանակի ընթացքին Խիզանը ընկել է գրական խաւարի մէջ, եւ այդ մէջոցին Կ. Պոլսոյ կոչ Խիզանի պղծացասիրաց ընկերութիւն որի Խիզանցի հիմնադիրները երեւի կամենուած էին իրենց հայրենի լեռնային հովիտներէն դիտիքան վերակենդանացնել իրենց նախնեաց գրասիրութեան վառքը: Ընկերութեան գլխաւորը Գրիգոր Մարգարեան, ազգասիրտ էր, մի եռանդուն եւ համակրելի անձ էր, եւ յաճախ էինք միասին: Երիտ ուսուցիչներէ պէտք ունէր, եւ իմ երիտ նորեկ ընկերները բանեցին Վանայ ծովի ճանապարհը եւ Խիզանի լեռները:

Մեծ պատերազմէն յետոյ Հայկ Հասանի արդի կայարը եկած էր ի Լոնդոն, նրա հետ իր արքայական վոգեբանոցասիրաը, մի հայ Բազդասարեան անունով. միասին էր եւ իր որդին: Մի երեկոյ ծանօթացայ երիտասի հետ իմ մի բարեկամի հիւրանոցում: Որդին բոլորովին նմանում էր հարէշի, կարծեմ մայրը այդ ցեղից էր, բայց ազան խօսում էր պատուական

հայելին: Հայրը ասեց թէ ինք ընկեր Խլպանցի էր եւ ես անմիջապէս յիշեցի Աբմենակին: Որպէն ծիծաղելով ասեց թէ Աբմենակը իւր հօր ուսուցիչն էր Խլպանում, եւ ինքս չի մոռանում որ այն ժամանակ մի լաւ ապտակ կերաւ Աբմենակից, եւ այժմ յանկարծ յիշում ինքն Աբմենակն էլ այդ ապտակը: Աբդէն պիտէի որ ընկերս նոյնպէս գանւում էր այդ հետաքրքիր աշխարհում բայց Բագդասարեանից իմացայ թէ Աբմենակ ամուսնացած էր մի ԵՒոպկիացի կնոջ հետ եւ ունէր երկու ուսար եւ մի դուստր, եւ երէքն էլ սկսած վարժուած էին խօսել եւ գրել լաւ հայերէն եւ դուստրը բանաստեղծուհի էր եւ գրում էր հայերէն ստանաւորներ: Բայց ինչ որ դէս ասէլ երեւելին էր, նրա հարէչ կինը սորվել էր եւ խօսում էր սահուն հայերէն:

Ահա մի հայ որ իւր ազգասիրութեան համբ գործունէութիւնը եւ տաքութիւնը հազար եւ տաք պահելու համբ կարող էր ցոյց տալ նոյնիսկ սառուցեալ բեւեռներում: Եւ իւր ազգային լեզուի սիրով ասելի նախանձախնդիր քան մի քանի գլխաւոր հայ յեղափոխականներ, որ իրենց ազգասիրութեան խօսակցութիւնը Եւրոպայում եւ Ռուսաստանում յանախ վարում էին ռուսերէն:

ԱԶԱՏ ՄՏՔԵՐ

ՍՊԱՆՈՒՄՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ Բ. Ի

Ա.ՀԼԼԻ բարձր պատաբաններէն աշակերտներ յայտնում էին մեզ խորհրդաւոր զգայնութիւններ թէ կրօնը կեղծիք էր, եւ Աստուած չկայ ոչ երկնքում, ոչ եկեղեցում, բայց վարդապետները հնարել են նրան, որ նրա վախով իրենք թալանեն մարդոց հոգիների վրայ: Եւ թէ Պետերբուրգի եւ Մոսկուայի համալսարաններում քաջալերուել էին Նիհիլիստներ եւ ունէին անդամներ Ուսանողների ամէն կոմմիտեում որ պիտի մխրճեին ապստամբութիւն եւ նրա չհնազանդներին եւ վերջացնեն կառավարութիւն եւ իշխանութիւն, եւ մարդիկ ապրէին ու խօսէին ազատ առանց բռնութեան, բանտարկութեան եւ աքսորութեան ի Սիբիր, կամ կախուելու եւ սպանուելու ցարի հրամանով:

Օրին մէկը այս Ռուսաստրիչ գազափարների սերմնացանը յանձնեց ինձ մի գիրք եւ ասեց.

— Առ այս գիրքը եւ կարդա, կարդա ծածուկ, մարդի ցոյց չը տար եւ պարտականութիւնը ոչ աքի չասես: Եթէ ձայնը հասնի ատելիա-

նուիրեան կը բանեն քեզ էլ ինձ էլ, մեզ կը կոխեն բանտը եւ կը քշեն մեզ Սիբիր, այս դրքի պատմութեան պէս եւ այնտեղ ցրտից սառոյց կը պառնանք: Դրքի անունն էր Շահէնճ ի Սիբիր:

Շահէն բազմաթիւ վանեցի ընտանիքներով խոշեցին Սուլթանի կրկիրը եւ դնացին քրիստոնեայ ցարի իշխանութեան տակ, բայց այնտեղ իրենց ազատ մտածութեան եւ ազատ խոստակցութեան յանցանքով աքսորուեցան Սիբիր ծանր նեղութիւններով եւ չարչարանքներով: Ջանեւհինդ տարի յետ այս ընթերցումից Լանդոնում բարեկամացայ այդ դրքի հեղինակ վանեցի Սեդրակ Դեւկանցի հետ եւ ասեցի նրան թէ ինքն տասնիններորդ դարն էր որ ներչնչեց ինձ տանել այս բանակալութիւնը: Շահէնի կեանքի պատմութիւնը արդէն մի ամենազաւեշտ եւ ախտաբուրախութիւն, լցրեց սիրտս պատնութեամբ, հոգիս զայրոյթով եւ միտքս ապատամբութեամբ, ընդդէմ բանակալութեան:

Երկար ժամանակ երեւակայութեանս առջեւ անդամ էր Շահէնին իր վանեցի հայրենակիցների դէմքը անցած երկերով եւ ուրախութեամբ քայլում էին մահմեդական թուրքի հողի վրայով եւ ընթանում էին քրիստոնեայ ցարի Հայաստան երկիրը, ապրիլ երջանիկ եւ ազատ, եւ ինչպէս իրենց ազատասիրութեան յանցանքի համար տասիկանական մարտիներով հարուածներով տակ չարչարանքի քայլերով քայլում էին ամբանելով դէպի անհիւրընկալ

Սիրիոյ ուր ցուրտ եւ կարեւոր էր ապաստան իրենց: Այդ օրից իմ մտաւոր զբաղումներդ վերածուեցան ազատութեան սիրոյ շուրջ, եւ խորշեցան բռնակալութիւնից, լինէր այն պետական իշխանութեանց բռնակալութիւն կամ կուսակցական պատասխանների բռնակալութիւն: Թէ մէկը եւ թէ մեւսը պարտաւորւում են ճշմարիտ ազատութեան մասին համար: Այս մտայնի թէ հոգեկան յեղաշրջումը յառաջ եկաւ իմ մէջ 1879ին ասելի քան մէկ տարի յետոյ մի առաւօտ երբ առնում էինք մեր առաջին դասը, որ էր պատմութիւն Հայոց, որի մէջի հայ թագաւորների վարքերը եւ պատերազմական քաջութիւնները ազդային պարծանքով լուսաւորում էին մեր հին նիւաթակայութիւնները, մեր դասարանի դուռը բացուեց, եւ բարձրագոյն դասարանի աշակերտներից Իպղիրցի Սահակ կոնտյեան, բարձր եւ հանդիսաւոր ձայնով, եւ ամէն մի բառ առանձին շեշտելով ասեց, կէս գրաբառ կէս աշխարհաբառ. «Ձեզ՝ աստղ Մեծին Ռուսիոյ, ոչ եւս է ամենազօր եւ ազդմած կայսրն Ռուսաստանի: Գազանաբարոյ նիհիլիստներ իրենց դիւամիտով ոչնչացրին Նորին Կայսերական Վեհափառութեան թանկագին կեանքը»:

Եւ նա դարձ դնաց: Անթօս չշուկ տիրից դասարանում:

Ճեմարանի երկայն երթանցքի պանդը արդարեց մեզ դասերի դադարուելը: Բոլոր ա-

չակերտները դուրս կան իրենց պատասխանելից, գնացին հարան իրենց երկար կրօնաւորական վերարկուները եւ կարգով շարունեցան ճանապարհ բռնելու համար դէպի Հայ ազգի Մայր Եկեղեցին, որուն դարձը օգում արբեցուցին հնչում էր Էջմիածնի կաթողիկէի մեծ զանգը։ Հայ ազգը եւ Եկեղեցին համայն Ռուսիոյ Օրթոտոքս քրիստոնեայ Եկեղեցիներուն, մահմեդական մզկիթներուն եւ հրէական սինագոգներուն հետ միասին աւազի մէջ էին ցարի ողբերգական մահուան տեղիւ եւ գնում էինք որպէսզի ծնրադիր աղօթէինք բարեգութ ազատեալ Թագաւորի սուրբ հոգւոյ համար, եւ անէծէինք նզովեալ նիհիլիստներին։

Ես մեացի անհոգորդ եւ անհամակիր այս բնդհանրական հոգեհանգստեան մոլեռանդներին. իմ սիրտը չը ցաւեց եւ չը ոգաց նրա վհատական մարմնի անվերականգնելի կորստեան համար, եւ իմ հոգին չաղօթեց նրա անմահանալի հոգւոյ օրհնութեան համար, զի նրա ինձ համար անհետանալի անձնաւորութիւնը արձանանում էր իմ աչքի առաջ որպէս մարմնացումն բռնակալութեան, որի իշխանութեան օրէնքի հարուածներով ազատուածէր Շահէն եւ անմեղ իբրայինք արտահանում էին իրենց հայրենի երկրից, ծննդավայր Հայաստանի արենակիցներից եւ ի կրուստ էին քշում բնութիւնամբ եւ մարդկութիւնամբ անձանօթ մի օտար աշխարհ եւ քշում էին համարուելով արտէս

անբան անասուններ: Եւ այդ հանդիսաւոր ա-
րարողութեան ժամերին մտածում էի թէ արդ-
եօք պիտի դա՞ր ժամանակ երբ մարդիկ այսպէս
բազմաթիւ ժողովուած ցնծագին հանդէսներով
ոճնէին այսպէս մարդասպան նիհիլիստների
ապաստութեան պահպի յարձանակը:

Կարծեմ երեք օրեր կամ աւելի մեր ժամա-
նակը անցաւ էջմիածնի Մայր Եկեղեցւոյ մէջ
լսելով երգելով կամ անանելով հանդիսաւոր ա-
րարողութիւնները, կրօնական ծիսակատարու-
թիւնները, եւ բարձրարարբառ ժամերգութիւն-
ները, որոց ազդակից անձերգաշնակութեան
արձագանգները թնդում էին մինչեւ խորանն-
երի խորերը եւ առաստաղները եւ էջ առաստաղները
եւ անհանգստացնում նոյնիսկ աւնկնդիր Ա-
ստուծոյ հոգին, թէեւ այս ամէնը կատարւում
էր ցարի հոգւոյ երկնային հանգստութեան հա-
մար, եւ մարմանդի այս բոլոր մեծահնչիւն
ձայները դուրս էին գալիս Ամենայն Հայոց Կա-
թողիկոսի եւ նրան չբջապատող արքեպիսկո-
պոսների, եպիսկոպոսների եւ վարդապետների
բերաններից, վեգարները վիր հանած գլուխն-
երից եւ ձախ ձեռներով բռնած ուսերի վրայ,
գլուխները խոնարհած խոնարհարար, աչքերը
յառած գետնին, եւ սարսուռներ նման էջած լ-
ուռնց ծունկերի վրայ: Եւ կեցած այսպիսի դիր-
քերի մէջ, նրանք ապօթում եւ միաձայն երգում
էին մեծ ցարի հոգեհանգստեան համար: Եւ
Գէորգ Դ. Կաթողիկոսի վեհափառ ձայնը ճա-
նաչելի էր բոլոր ձայների մէջից:

Այս ամէն արբանեակ ծէսերն եւ խոնարհա-
պլուխ ձեւակերպութիւնները բարձրագոյն
բանակաւորութեան հրամաններ էին, որ Հայ ե-
կեղեցւոյ պետից մինչեւ փոքրագոյն սերա-
ցուն պարտ էին կատարել անպայման: Ցարի
համար այս յարդանքը միայն նրանց բերաննե-
րից էր վկայւում, բայց ոչ նրանց սրտերից եւ
հոգիներից, նամանաւանդ, ոչ երբէք Գէորգ Դ.
Կաթողիկոսի սրտից եւ հոգուց: Զի նրա հոգին
եւ սիրտը լի էր դառնութեամբ Մեծ Բրիտան-
նայ Ցարի եւ նրա իշխանութեան դէմ: Մահմե-
դական Սուլթանի իշխանութեան տակ նրա ան-
ձը ազատ էր իւր Բրուսայի առաջնորդական
թեմի սահմանից դուրս գալ եւ երթալ ուրիշ
հայ առաջնորդական թեմեր կամ Կ. Պոլիս ա-
ռանց խնդրելու Թոյլտուութիւն Սուլթանի իշ-
խանութիւնից, եւս առաւել երբ նա եղաւ պատ-
րիարք Թուրքիոյ Հայոց, բայց երբ նա եղաւ
Կաթողիկոս Ամենայն Հայոց, նա բնականաբար
համարից իւր անձնաւորութիւնը մի մեծ մարդ
եւ իւր չարժմանց մէջ ազատ, որպէս ունէ հա-
սարակ մարդ: Իւր հայրապետական աթոռը
բազմելուց յետոյ վախաքից, որպէս հոգեւոր
հայր այցելել իւր Կովկասի հայ ժողովրդեան:
Իւր գործունքը եւ պատարկութիւնը եղաւ չատ
դառն երբ յայտարարուեց իրեն թէ ինք ազատ
էր առանց հրամանի այցելել Երեւան եւ Երեւան
նահանգի չրջանը, որ իւր առաջնորդական թե-
մըն էր, բայց իւր թեմից դուրս գալու եւ Թիֆ-

լիս եւ այլ թեմեր այցելելու համար նա պարտ էր դիմել Կովկասի փոխարքային եւ նրա միջոցաւ Պետերբուրգ վեհափառ Յարին եւ խնդրել արտօնութիւն։ Դէպի Դ. վրդովուեց այս բռնակալութեան դէմ իւր սաստուածատուր եւ երկնաշնորհ եւ բնական իրաւունքի համեմատ, եւ վճռեց չը դիջանել այդպիսի մի բռնութեան առաջ, եւ դրա համար նուաստացնել իւր անձն եւ ազատութեան իրաւունքը, եւ նախամեծար համարեց մինչեւ ի մահ ինքն իրեն բանտարկեալ պահել Էջմիածնի պարիսպների միջեւ, եւ ամառները անցնել Էջմիածնից մի քանի վերստ հեռու Բիւրականի ամարանոցում։ Նա ատք չէր դրեց մինչեւ իսկ Երեւան քաղաքը, որ իւր առաջնորդական քաղաքն էր, չուզելով այցելել կամ ընդունել այցելութիւնն Յարի տեղական իշխանաւորին, այն էր Երեւանի նահանգապետը։ Մի մարդ, որ այսպէս հասկանում եւ պաշտում ազատութեան գաղափարի արբութիւնը, արդեօք կարո՞ղ էր ցաւել Յարի ապտանման համար, հակառակել մի նիհիլիստի ապտնարար ձեռքով։ Իսկ մենք, ճեմարանի աշակերտներս, նայում էինք այս եղեռնական դէպքի վրայ տարբեր զգացումներով. բազմաթեսակ արարողութիւններով իրենց հանդիսաւորութեամբ եւ չարականներով, հրապուրում էին մեր հոգին եւ յուզում էին մեր կրօնական զգացումները, բայց մենք չէինք զգում մեծա-

ղօր կայսեր կորուսած կարեւորութիւնը: Ոչ ցաւ, եւ ոչ զոհութիւն:

Բայց մեր զգացումները տարբեր էին երբ մենք այլեւս ներկեցւոյ պատերից դուրս էինք եւ ժամերգութիւնները իրենց հետաքրքրաշարժ ծէսերով վերջանում էին եւ մենք ազատ շնչում էինք մեր ճեմարանի սիրած մթնոլորտում, ճաշակում էինք մեր միշտ լիառատ ճաշերը եւ խաղում եւ զբօսնում սովորականից, ոչ պակից օրերից շատ աւելի: Եւ մեր մէջ աւելի ծոյլերը մտքում էին, որ նիհիլիստները պատրաստ աւելի յաճախ դիմամիտահարելու ամենատարօրինակ տարերին:

Տակաւին յիշում եմ այդ խակ օրերի մեր ուսումական շարժումների տեսարանները եւ դպրոցականների դէմքերը, որոնցից ոմանք որպէս պատկերացրի, կեանքի մէջ եղան երեւելի հանրային անձեր, եւ ոմանք իրենց երեւելիութեամբ եղան անուանի Հայ ժողովրդեան ընդհանրական կեանքի շարժման հոսանքների մէջ, եւ տարուեցան ուր բաղդը տարաւ նրանց, եւ այնպէս եւս տարաւ ինձ, երբ չէի պատասում, եւ ուր չէի երեւակայում:

ՓԱՐԱՄԱԶ ԵՒ ՓԱՐԻԱՆԵԱՆ

Մի երանելի օր, վազ առաւօտեան, մեր երիտասարդ ընդհանրական անթատրանի աշակերտական դրասենեակներից մէկի դարակի վրայ կպած գտնուեց մի ձեռագիր ամբաստանելով բարձրագոյն դատարանի մի Շամախեցի աշակերտը, վերջապէս դատարանի մի Թաւրիզեցի աշակերտի հետ: Երեւի մեծ չվճռաւորութիւն յառաջացաւ այս դրուագից, եւ հետաքրքրութիւնն կար գտնել գրողի ինքնութիւնը: Երկրորդ թէ երրորդ օրը մի անաւոր ժամին գտնդը հնչուեց եւ բոլոր աշակերտներին յայտարարուեցաւ երեւ կոչմի վրայ շարուիլ անգանաւոն երթալու համար: Ամէն ոք զարմանում էր թէ արդեօք ի՞նչ էր պատահել: Իմ առաջ կանգնած երիտ. աշակերտներից մէկն Փարամազեան, միւսը Փարեանեան: Երիտասն եւս շատ յուզուած էին եւ ասացին ինձ.

«Այդ Թուրքի համար մեզ են կասկածում, եւ դուրս պիտի հանեն մեզ ճեմարանից արտաքսեան: Մեզ բան չեն անի երթէ ասես թէ դու ես գրել: Աստուծոյ սիրոյն համար գնա եւ ասա թէ դու ես գրողը եւ ազատիր մեզ»:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Դուրս ելայ չարքից անմիջապէս, եւ ուղղեցի քայլերս արտօրէն դէպի տեսուչ Նահապետեանի սենեակը: Նա այնտեղ չէր, բայց ատոր վերակացուն Սուքիասեան, որի պզտիկութեան տակ էր տեսուչը, եւ որ առաւած էր աշակերտներից, եւ որ առանց հիմնական պատճառի չատ անբարեացակամ աչքով էր նայում ինձ համար, այնտեղ էր: Առանց ապաստելու որ հարցնի ինձ թէ ինչո՞ւ եկայ, ես յայտնեցի թէ ես էի դրել անտառաթղթի թուղթը: Նա լայն բացաւ իւր խոր ընկած անհաճելի աչքերը, եւ զարմանքով նայեց ինձ:

«Այո, չեմ զարմանում, որովհետեւ կասկածում էի թէ կարելի է դու էիր յանցաւորը: Շատ լաւ, գնա՛ տեղդ»:

Ես դուրս ելայ եւ գնացի եւ կանգնեցի չարքումս եւ պատմեցի երիւ Փ.-երին: Երանց վրայ ծագեց ախտանք եւ դառնութիւն: Սեղանատունն կանչուելը բնաւ կապ չունէր թուղթի հետ: Տեսուչը յայտնապէս չհաւատաց առաջիս, եւ նշանակեց ուսուցչական աշակերտներից Սահակեան Կանայեանին որ քննէր ինձ առանձնապէս եւ առաջը:

Կանայեան, ապագայ լաւագոյն հայ գրաբառագէտը, որ ձեռքում ունէր ձեռագիրը, չէր ուզում համոզուել որ ես էի այդ ձեռագրի հեղինակը, եւ պնդում էր թէ ես չէի գրողը, եւ ինչո՞ւ իմ վրայ էի առնում յանցանքը: Ես յամառեցի մնալ առաջներիս վրայ, եւ ի զարմանս

իմ եւ ամէնէն արտաքսուելուս ճեմարանից: Ա-պա լսածիս նայելով ուրիշ ուսուցիչներ եւս մնացել էին զարմացած: Հայկաբանութեան ուսուցիչս կիւրեղ վարպետիս յայտնեց ինձ թէ լրւնք ամէնքն գժգոհ էին եւ զարմացած թէ, նթէ նոյնիսկ յանցաւոր էի, խնդիրը չէին էր եւ անարժան այդպիսի խստութեան: Սուքիասեան պնդել էր եւ ստիպել տեսուչին այդպէս ո-րոշելու: Այս 1882ի նոյեմբերի վերջերին էր: Հետեւեալ ամառ Թիֆլիսի քաղաքային պար-տէզի մոտ հասայ տեսուչ Ներսիսեանն տես-նում ինձ. ես չանացի խոյս տալ եւ չտեսնել ձե-ւացնել, բայց նա բռնեց իմ թեւից եւ ասեց.

«Շատ եմ ցաւում եղածին համար: Լինը լեռան չի հանդիպում բայց մարդ մարդին հան-դիպում է, եւ ես գոհ եմ որ այժմ հանդիպեցայ քեզ եւ յայտնել կարողացա: Ո՛վ դիտէ, այդ դժբաղդութիւնը քո ապագայի բաղդատար ճա-կատագրի համար էր որ տեղի ունեցաւ»:

Երեսունմէկ տարի յետոյ երբ մի տաժա-նակ աշխարհի այդ մտաւորն էի մի քանի շա-բաթ, էջմիածնից գնացի Աշտարակ դառնալ Յով-հաննէս Փարեանեանին, որ մեր ճեմարանի լինելի ընթացքին երկու տասնեակ տրձա-կուրդներին իւր հօր տունը հիւրասիրեց ինձ, վայելելով Աշտարակի հիանալի կեանքը, լո-ղալով խոր ձորի մէջով արբենաց Քասախ գետի երփնի բլուրների նման մաքուր եւ երփնի պըղ-տոր ջրերում, եւ երբեմն ձկնորսութեամբ ըղ-

բօնելով մի քանի զուարթ եւ երջանիկ մեզ նման ազանների հետ միասին: Եւ նրա բարի հայրն ու մայրը նայում էին իմ վրայ որպէս իրենց ընտանիքի մէկ անդամը: Եւ յաճախ տեսնում էինք, Աշտարակցի ժողովրդական վիպասան Գևրգ Գաւշեանին որի տեսակցութիւնն եւ խօսակցութիւնը այնքան սիրելի էր մեզ իւր վէպերի կենդանի կեանքի դէմքեր ունենալուն համար, եւ տեղացիները ցոյց էին տալիս ո՞ր կինն էր Վարդիթիկը, կամ վէպի մի այլ կենդանի անձը:

Այս անգամ որ Աշտարակումն էի, թէ Գաւշեան եւ թէ նրա զրուածքների Աշտարակցի իրական անձերը այլեւս չկային աշխարհիս երեսին, եւ ոչ Փարամանեանի հայրն եւ մայրը, բայց գոյ նրանց անդրանիկ որդին այնպէս խաղաղ եւ հանդարտախօս, որպէս էր երեսուն եւ մէկ տարի առաջ, եւ ոչ Յովհաննէսի նման կրակ ու բոց: Իմ զաւառանական ընկերը աղջ էր, բայց փախառական, նա հետեւել էր կայէնի օրինակին, բայց չէր կարմրացրել իւր ձեռքը հարազատ եղբօր արիւնով, այլ իւր մի ընկերի, եւ այժմ փախառական եւ թափառական էր իւր ծննդավայրից հեռու եւ Պարսից Շահի Աբշահուանում: Գալով Փարամազին, նա ոչ կարմրացրել իւր ձեռները իւր բարեկամի անմեղ արիւնով, եւ ոչ իւր Թուխաւոր Թշնամի մեղաւոր արիւնով, եւ փոխանակ քաղցրացնելու իւր մարմինը, իւր ծննդավայր Մեղրի մեղաւորի

մեղրով կամ եղջանկացնելու իւր հոգին մատաղ կարաթելով իւր մաքի ուսման անունդը իւր գիւղի ուսումնասանէչ մանուկ սերունդի ուսումնակարօտ մաքերին, նա լսա իւր ժամանակի ազգասիրական հետանդութեան, ձեռք առաւ թրքահայերին Սուլթանի բռնակալութիւնից վերկելու եւ նրանց համար ազատ եւ անկախ Հայաստան ստեղծելու հրաշալի ծրհեսը, եւ դառնալով Հնչակեան յեղափոխական կուսակցութեան եառնդապէն դինուր, եւ ուրիշ Հնչակեանների հետ քսան հոգի մխառնարար կախուեցան 1915ի ապրիլը Սուլթանի չինած կախաղաններից Կ. Պոլի պատերազմական նախարարութեան հրապարակի վրայ եւ նա վայր առնուց անշնչացեալ մարմնով եւ առանց մարդասպանութիւն գործելու:

Եթէ Փարան եւ Փարամազ արտաքուստ չլինէին ճեմարանից, եւ ոչ ես, յայնժամ հաւանօրէն նրանք ապրէին բնական կեանքով, եւ ոչ թէ մէկը դառնար մարդասպան եւ միւսը պատկերը իւր մահուան պատճառից կախաղանից կախուած: Եւ ես գուցէ նախ դժրախտութիւնը չունենայի ընկնել Սուլթանի չարչարանաց բանտերի եւ բերդերի մէջ, եւ ապա բարերարդութիւն խուսափելու եւ ընկնելու մի հետաւոր պետութեան մէջ, ուր ազատասէր մաքերի արդարախօս լեզուները չունեն արգելք եւ կապանք, իրենց կսկծոտ ձայնների, եւ մեղանաթափ

պրիչնելի ապատաչունչ չարժումներին դէմ, եւ ուր սրտերի պատճառները չունէին ուժէ պատուիրեալ երկիւղի կամ անձնական վտանգի դէմ ուժէ քաղաքացից կամ ուժէ իշխանական այժից։

Ճեմարանից յետոյ այլեւս չտեսայ այս երկու չարտարտպ գործնկերներին։

ՄԱՀ ԳԷՈՐԳ Դ. Ի

ԵՒ ՍԿԻԶԲՆ ԻՄ ԹԱՓԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Իմ վրայ լքած անհատաստալի հարուածէ հետեւեալ օրը իւր հոգին ուռնդից ճեմարանի հիմնադիրը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Դ., որ իւր լուրջ ակնարկներով, վեհախոհ մօտեցմամբ եւ յոյնասիրտ թրթռուն ձայնով այնքան խոր ազատութիւն էր պարծել իմ վրայ, ամէն կիրակի անանում էի նրան Հայ ազգի Մայր Եկեղեցւոյ մէջ, ամէն անգամ որ անանում էի նրան լուսաւոր կաթողիկոսական աթոռի վրայ, եւ վեհացած ամպհովանիով, եւ արարողութեան վերջերում երջանկաբեր երաժշտական հնչումով լեցնում էր եկեղեցին «Մեզ պաղատութիւն ամենեցուն» օրհնաբանութեամբ:

Այդ օր նրա ձայնը դադարել էր ընդմիշտ, եւ նրա հոգին հանդչում էր յաւիտենական խաղաղութեան մէջ: Բայց ես ազէ էի զուրկ ամէն խաղաղութիւնից: Ուսման կրթատաք գառնակիւծ մտաոանջութեան յուսահատութիւնը անդադար կոծում էին իմ վոհմոկալից հոգւոյ անձիր եւ անյատակ անդունդները անհանգիստութիւնը եւ ընդհարում էին ուղեղիս ոսկրևղէն գմբէթին, եւ խուժում էին կատաղած արիւնաքամ խորշերի մէջ: Թէեւ այսպէս, այնուամենայնիւ մխաքս դեռ դպչուն էր

մտածել եւ ցաւիլ Հայ Եկեղեցւոյ եւ հայ պատանիներուն կրթութեան խնամատարը մեծ Հայրապետի մտահոգութեան մասին: Ներս թափման օրը երկինքը պղտորուելէ էր երկիրը, գետինը եւ ծառերը ձիւնկէն սպիտակ թուէին: Լուսաւորչի Եկեղեցւոյ սիւնազարդ հիւսիսակողմեան մուտքի դրսում նստիկոզաններ, վարդապետներ, սարկաւագներ եւ սիրացուներ սեւ տպիսա չրջապատած գազգզը եւ փորուած հողը երդում էին մտհոգութեան չարաքաններ կամ ուխտապաններ, նրանց եռեւից ձեմարանի աշակերտները լրենց երկայն եւ սեւ վերարկուներով, եւ ես ուրկէ հեռուն կանգնած թագուած էի ազատ ժողովրդեան մէջ անհետանալէ յուզմամբ աչքերից: Կաթողիկոսը հողի տակ էր: Եկեղեցականներ եւ աշխարհականներ թողին սեւ հողաթումբը, եւ այլեւս ոչ ոք կար չուրջանակի: Ես դուրս եկայ մեծ սրճնի եռեւից, ծունկի եկայ թաց եւ ցեխոտ սարայատակի վրայ, երկարեցի երեսս խոնաւ հողին, որի ամուր յատակում յստակ յստակութիւնից յստակութիւնից հանդչում էր Գէորգ Դ. հիմնադիր ձեմարանի, համբուրեցի հողը, եւ համբուրեցի հողով նրա օրհնեալ աչքը, եւ երեսուն քայլերով հեռացայ, արտասուքի կաթիլներ թափելով հետքերիս առաջ, դլուխս ծռած, գետնին նայելով համառապարհս բանեցի դէպի տուն: Նոյն աշնան հայրս, մայրս, քոյրս եւ կրտսեր եղբայրս մի անգամ եւս վարդապետ-

պատուհան էին։ Էջմիածնի Կաթողիկէի երկնաբարձ փշաւոր սուրբ խաչը քաշել էր նրանց Տիգրանակերտի հովիտներից մինչեւ Արարատեան դաշտը։ Մեծ եղբօրս սիրտը մնացել էին այնտեղ, ուր նա այնքան փափաքից էր թռել, երկրորդ եղբայրս անպատանեկութիւնն անհետացել էր վերադարձի ճանապարհին, էրզրումի նահանգի մի տեղում, ուր նրանք իջեւանել էին, եւ հետեւեալ առաւօտ անհետացած էր եւ նրա կորուստը մնաց յաւիտենական զաղտնիք, եւ ես դժբաղդաբար չէի վիճակուել մխիթարանք եւ ուրախութիւն տալու նրանց խոնարհող կեանքի տարիներում։

Ոդիս անհանգիստ էր, եւ մղում էր ինձ շարժուել, եւ հետանալ։ Երիք մարդոց հետ նաւեցի մի առհնակում, եւ ակամայ առհել թանձր ձիւնի վրայով դէպի Երեւան։ Զուարթնոց եկեղեցիի յայնժամ դեռ անպեղեալ աւերակներից մի քանի վերստ հազիւ հեռու էինք, երբ ծեր աչքերի առաջ պարզուեց մի առկայլի տեսարան։ Յան եւ ցիր երթալուց հետու ձիւների վրայ փռուած էին երկու ձիերի եւ երիք մարդոց մարմիններ հազուստներըը պատառ պատառ եւ մարմիններըը պատառ պատառ, միսերը մատամբ կերուած պատառոտուն կտաւդի ժանիքների կատարութեամբ, թեւեր, ոտներ եւ գլուխներ տարածուած եւ միմեանցից հետու բացուած։ Սարսափելի պայքար եւ փախուստ էին երեւում տեղի ունեցած լինել այդ վտքր

տարածութեան վրայ, ուր տեղը նշաններով խորապէս պրոշմուած էր ամբողջ տեղը: Եւ արիւն եւ ձիւն եւ հոգ խառնուած էին միմեանց: Եւ մի երկու տեղ, ուր ոտքերի կոխաններ շատ փոչ էին եւ ձիւնի մակերեւոյթը մնացել էր անվրդով, երեւում էին կարմիր նկրուած արիւնով, եւ արիւնի տաք հոսանքը նոյնիսկ հալեցրել էր սառն ձիւնը եւ փորել մինչեւ սեւ գետինը: Զարհուրելիօրէն պատառոտուած ձին պոկուած եւ կտրատուած էր սահնակից եւ ընկած բաւական հեռուն: Մենք տարտախոհար այս տեսարանից, սահնակից վայր իջած նայում էինք եւ աչխատում ճանաչել տեղ մէկին, բայց դէմքերի վրայ միս չէր մնացել որ հնար ունենայինք ճանաչել: Գայլերը լինելու էին շատ, եւ տասնեակ տաճած, այսպէս սահնակիօրէն բոլոր բոլոր անելով իրենց գոհերին, եւ պայքարու տասիճան պիտի կշտացած լինէին, որ պատառոտած մարմիններին վրայ դեռ թողած էին մի մասեր: Մենք նայում էինք էջմիածնի ուղղութեամբ, եւ երեւանի կողմը յուսալով տեսնել ճանապարհորդներ, որ նրանց նկրկատութեամբ փոքր ինչ սիրտ տանէինք, բայց ոչինչ էր երեւում մեր աչքերին բացի ձիւնային համատարած սպիտակութիւնը: Ի վերջոյ իմ ուղեկիցները որոշեցին շարունակել դէպի յառաջ, դէպի Փարաքար դիւղը, յուսալով տալ Աստուած մեր կեանքի ապահովութեան համար եւ մխիթարական մտածութեամբ թէ նրանք պա-

տահէքնաք պայլերի խառմբին, նրանք այնքան կուշտ էին, որ պէտք պիտի չուտէնային մեր ցուրտից կիսատատ, եւ սոսկումից կիսամեռ մարմիններին:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

ԵՐԵՒԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Կէս օրը բաւական անց էր, երբ մենք անցնելով կանաչազարդ, ակրեւաթափ եւ ձիւնապարզ այգիների մէջով, դուրս եկանք աւելի ապատ մի հորիզոնի առաջ։ Մեր առաջին նկատելուն բացւում էր արագահաս Հրազդանը, որ դուրս էր գալիս ձախակողմեան խոր ձորերից, եւ մեր առաջում անխոր ձորի միջով ընթանում էր խոնարհաբար դէպի լայնացող դաշտերը, անհամբերութեամբ վազել սիրակաթոյ Մայր Արաքսին, եւ հանդչել նրա զորավազուխ գրկի մէջ, եւ հովիտի հանդիպակաց բարձրութեան վրայ Երեւանը համեստաբար երեւում էր չինքերով։ Իջանք խորդուբորդ ճանապարհով, անցանք ոզորմելի կամուրջով, եւ դանդաղօրէն բարձրացանք մեզմաթեք զառիվերով, եւ հասանք Երեւանի Մէյդանը, որի ձախակողմից սկսում էր ճակատի պիծը, որ ներկայացնում էր դամբ՝ գլուխներից եկողների եւ նրանց ձիերի, էշերի եւ ջորիների հիւրընկալութեան համար, եւ չինքերով լայն բակեր սայլերի, ֆուրգոնների եւ կառքերի տեղաւորման համար, եւ նրանց ձիերի եւ եղների ճաշարաններ եւ նրանց կառապանների համար։ Այս չքեղ չինքերի պանծալի երեւոյթով վառուռոր ճակատը նայում էր իւր առաջ վառուած քաղաքային մեծ հրապարակին, որ երկարում էր հեռուն մինչեւ

հանրապետութիւնը եւ Ազատաֆիա մեծապոյն վողոյի սկզբնաւորութիւնը: Այդ կողմը եւեւի նեղկապացնում էին խառնիխուռն անձնական հոգսերն ու, որ չեմ կշռում նրա խոհական արդիւնքները, բայց ձախ կողմը այդտեղից մինչեւ Ազատաֆիա վողոյի բնթացքը, համարակ կրծոտիների մի անընդհատ շարան էր, մի երկու տեղ միայն բաժանուած նեղ վողոյներով վերջաւորութիւններով: Սկզբում նախ հացադրծի խանութներ էին, եաեւում փուռեր, որ եկեում էր Զանգու համբաւաւոր հատու լաւաշը, որի հաճոյալի հոտը տարածւում էր խանութներից դուրս, եւ որի խանութի առաջում փռուած էին կարմրորակ հացերի տափակ մարմինները, որ զրգռում էին անցորդների սոված փորերը: Այս հացի անունը ես լսել էի այն օրից երբ կշռում էի թէ պետակ էի հաց ծամելու արհեստին եւ ճանաչում էի բաների անուններն, զրեթէ այն ժամանակից նաեւ ծանօթ էի Երեւանի Զանգու հացի անունին: Ուրիշ վաղաբշտպատուհանների նման իմ հայրն էլ սովորութիւն ունէր երբեմն երեւան դնել դռնապան պէտքեր, որպեսզի կամ երեւի չկային վաղաբշտպատում, կամ թերեւս ունէի ծանոթ էին, եւ ամէն վերտարձին բերում էր այդ հացից, որի հատուածները կէս եղունդից փոքր ինչ ունէի եւ մակերեւոյթը տեղ տեղ ուռուցիկ փամփուշտի նման եւ մեր սովորական բարակաթեթի լաւաշից ունէի համով եւ հոտով էր:

Այժմ տեսնում էի մանկութեանս կեանքի այդ կախարդական հայը իւր բոլորովին թարմ եւ տաք վիճակով, դուրս հանուած վտանգներից, եւ ցուցադրուած իրենց հոգաչէն սեղանների վրայ:

Կեանքի այս դիմաւոր աննպատակ տեսքից յետոյ սկսում էր տեսնել մի այլ տարբերակ տեսարան. փոքր եւ ցածր համամանման խանութների եւանդուն պարսիկ թէ թուրք թեւերը կշտած եւ մաքուր ձեռներով կամ մաքի կտորներ անցնում շամփուրի վրայ եւ կամ ծեծած մսի բարակ քէֆտաներ էր կպցնում եւ որոշում շամփուրի շուրջ եւ դարձնելով եփում եւ տապակում կրակի վրայ եւ համն ու հոտը տարածում օդի մէջ, կախարդելով միմեանց տարբեր տարիքի անհատներին, ամանք որոնք սկսում էին ճաշակել ոչ սակայն պնակի մէջից, եւ դանակով եւ պատառաքաղով, այլ ղանդու հացի վրայից, եւ երկու ձեռներով, մէկ ձեռքը դարձնելով որպէս դանակ, եւ մեծ իրրեւ պատառաքաղ: Այնուհետեւ դանդաղ տեսակի խանութներ, եւ ամենավերջինը տեսիլ հնարհալի կուսակ խանութներ:

Այս տեսարանների առաջ տարածուած հրապարակը, հակառակ ձմեռնամային եղանակին, բաւական լի էր կենդանութեամբ, մարդոց եւ անասունների խառնիճաղանճ շարժումներով, որոց հետեւանքով ցեխ եւ ձիւն միասին շաղախուած սառցել էին անմաքուր հալուկի

պան, եւ խորտիրաշմուած անասնոց եւ մարդոց ոտնանշաններով, եւ պղտոր ջրախոյտերով: Հրապարակին ամբողջ գետինը կակուղ էր նոր գրուած բամբակով վերմակի նման, բայց այդ գետնի կակուղ վերմակը չինուած էր ձիւնից եւ ցեխից, եւ մարդոց ոտները խրւում էին գետնի մէջ կէս եւ նոյնիսկ մէկ բթաչափ խոտրւթեամբ: Եւ մարդիկ ծիծաղում, քրքմբնջում կամ հայհոյում էին երբ քայլերի հարուածներից ցեխ կամ ցեխապարփ ջուր ցայտում էր նրանց դէմոտներին եւ երբեմն մինչեւ երեսները վրայ:

Երբ խորտիրած խոտրւթեների մօտ կանգնած դիտում էի Աբրահամեան աշխարհի մայրաքաղաքի այս գարշելուն տեսարանը, ուսից վրայ դպաց մի բարեհամակեան ձեռքի փափուկ հարուածը: Յետ նայեցայ, իմ դասընկերը Փարեանեանի եղբայրն էր:

— Տօ, Պետրոս, ի՞նչ ես անում բանդ. Օհանէսը գրից մեզ քեզ պատահածը: Հերս ու մերս չատ են մտածում քեզ համար. ասի էղուց քեզ տանեմ Աչտարակ, մի ոտքս ձի ունեմ, կը նստես վրէն, եւ մխաին կ'երթանք. ծնողքս չատ պիտի ուրախանան քեզ տեսնելով:

Նմանում էի նորատունկ ծառի, թեքուղ հովերից: Եկել էի Երեւան արդ դիտաւորութեամբ, բայց հետեւեալ օր կէս օրից բաւական յետոյ Փարեանեանի բարի պատճառից մղուած, նրա հետ բանեցի Աչտարակի ճանապարհը, ուր նախատէս ոչ մէկ մտածում ունէի երթալ:

ԴԷՊԻ ԱՇՏԱՐԱԿ

(Գետն Քասախ եւ լեռն Արագած)

Փալանով ձիւերի վրայ նստած անցանք ապիկալից Հրազդանը, եւ մտանք անապատ եւ անպտուղ այդիներէն քարքարոտ եւ նեղ եւ երկար ճանապարհով, պարապատատած կանաչամերկ բլուրէն եւ ծերպանի ծառերով, եւ երբեմն ալ եւ ահեակ դեղահայեաց ոսկեսակաւիւս անտառաններով:

Երբ այդիները վերջացան, մեր առաջ բացուեց մի ոսկեսակաւոտ եւ անծառ համայնապատակը, ամենուրէք հողեր եւ ժայռեր հաղնուած բամբակագոյն կակուղ ձիւնով: Ալ կողմէ վրայ դեմները երբեմն մեղմօրէն, եւ երբեմն պարուրուր պառիվեր երթում էր դէպի վեր մինչեւ հեռուր բարձրահայեաց Արագ լեռան կոնաձեւ գլուխը, կամ նրա կողերից մէկը. եւ հարաւային կողմում ամենուրէք խոնարհում էր դէպի Մասիս եւ աւազան Արաքսի սրընթաց հոսանքը եւ կողմերու Արարատեան երկրի պաշտային դեղեցկութիւնը, ուր մեր թագաւորները, պետականները եւ ժողովուրդը երբեմն եւ անհաւօրէն ապրում էին հին հին դարերում, եւ ուր հայ դուստրներ երգում էին նրա վառքը:

Գնում էինք մեր դանդաղընթաց ձիերը քարոտ եւ ձիւնապատ հողիս նշմարելի հետքերով. կարծես մի չոր ուելի բարձրանում էինք, եւ երեկոյ էր, բայց դեռ մթութիւնը ցոյց չէր տուել իւր գոյութեան նշաններըը, այնուամե-

նայնիւ, կարծես չաո հետաւ չէր, իւր սեւ թեւերը տարածելուց օդի մէջ, եւ գետնի վրայ: Ձիերը չարժւում էին անհոգ քայլերով, եւ մենք անցընում էինք ժամանակը երբեմն խօսակցութեամբ եւ երբեմն մտածութեամբ, երբ յանկարծ դպցինք որ ձիերը սկսան սաստիկօրէն դողալ ցնցումով եւ խրտչել աջ ու ձախ եւ դբլսւթեները դարձնել դէպի բարձրացող պատվայրերը: Եւ մենք նայեցինք նոյն ուղղութեամբ բաւական հետաւ, բարձրացած կոպրում սեւասանք վեց կամ եօթն մթագոյն անասուններ, որ երկու կամ երեք մխմանց յետեւից, որպէս թէ բարձրանում էին դէպի վեր, եւ այդ մէջտեղն երեւի զդալով մեր ներկայութիւնը, ծռել էին իրենց դլսւթները եւ նայում էին դէպի մեր կողմը: Նախ կարծեցինք թէ դրանք ոչխարներ էին, ապա չուներ: Փարւանը ձայնը փորում, հազիւ լսելի, ասեց. «Գայլեր են, վա՛յ մեզ եթէ դան մեր վրայ: Լաւ է ձիերը չը քշենք, եւ ցոյց չը տանք թէ վախենում եւ փախչում ենք նրանցից»: Գայլերը ոչ բարձրանում էին, եւ ոչ իջնում, բայց մնացած նոյն դիրքում, շարունակում էին նայել մեր ուղղութեամբ, եւ մենք հետզհետէ հետանում էինք գայլերի բնաւրանիներից: Երկար մտածութիւնից յետոյ, նրանք չակեցին իրենց դլսւթները, եւ ուղղեցին իրենց քայլերը դէպի վեր: Երեւի այնքան կուշտ էին, որ ի զուր համարեցին յոդնութիւն կրել դալով վայր իրենց ճանկերով եւ ճիրան-

նեղով եւ ժանիքներով լցնել մեր դաղդուչուն մարմիններըը առանց մի կաթ իսկ կաբենալ հաշակիլ մեր արիւնաներկ մանրից, այնքան որ իրենց փորերը կուշտ ու կուռ էին, եւ իրենց ատներըը անարամադիր յետաքայլելու: Այդպէս մեր կեանքի կորուստը պիտի լինէր անխուսափելի: Եւ երբ նրանք անհետացան լերներուն հետեւում, եւ մեր մթագնած աչքերը պարզուեցան, եւ մեր սարսափահար սրտերը խաղաղեցան, սկսեցի մտածել թէ արդեօք նոյն գազանն[6]ն էին, որոց գոհերը տեսել էի մի օր առաջ, եւ այժմ վերադառնում էին մի նմանօրինակ արիւնահեղ արարածի ոչնչացման տեսարանից:

Մեր բարձրադիրք հանապարհը հետզհետէ խոնարհում էր, եւ մեր աչ կողմի հեռում սուր եւ խորախոր ձորում երեւում էր ջուսպղ գետը իւր բուռն ընթացքին հարուածելով իւր առաջում ընկած ժայռաձեւ քարերին, եւ նրա հարուածներից արձագանգը բարձրանալով ձորից վեր: Ես նայում էի խորախոր ձորին, որպէս նա երեւում էր ինձ յայնժամ, եւ վազվզան ջրերին եւ նրանց վերիվրայարդ ժայռերին, որպէս նրանք երեւում էին ինձ յայնժամ: Բայց էր ժամանակ երբ այս գետի անկողինը չէր այսպէս սարսափելական, եւ ոչ այս ձորը ունէր գոյութիւն, եւ նրա յատակը հաւասար էր գետնի մակերեւոյթի հետ: Եւ անհաշուելի եւ անիմանալի ժամանակներից ի վեր յաւիտենապէս

ձիւնապատ Ալպատծի ապիտակ կատարներէն կաթող եւ նրա թեւատարած կողերէն բղխող ականակիտ ապրիւրները խոխոջելով խաղում էին դէպի վայր, եւ ազատ անարգել սիւռում այդ մակերեւոյթի վրայ: Բայց նրանց մշտապնաց եւ չարաչարական քայլերի զօրութեան ներքեւ հողերը մաշեցան, քարերը փշրեցան, եւ ժայռերը հալեցան մինչեւ որ ատան կամ հարիւր հազար տարիների հոլովումից յետոյ այդ ջուրերը բոլոր երկնից ժայռալից ճանապարհը այդ խորութեանց մէջ որ ես էի տեսնում: Հայեացքս դարձրի դէպի ձախ, թէ արդեօք պիտի տեսնէի՞ այն նշանաւոր տեղը, որտեղից իմ երկու ամառնային արձակուրդներին, Յովհաննէս Փարեանի եւ ուրիշ զուարթ ընկերների հետ խնդրանքս վառնդից դերծ ցառկում էինք երջանկօրէն խոր ջրերի մէջ, եւ սուզուած, եւ մի րոպէ յետոյ բուռն հոսանքից մղուում էինք յառաջ եւ մեր երեսները երեւում էին ջրի երեսին, եւ մեր ոտները կպչում յատակին: Տեսայ այդ տեղը, եւ դեռ աչակոզմում, ձորի բարձրութեանց վրայ տեսնում էի Աշտարակի այղինների կողերը որ երանելի այն օրերում երկնից քաղցրատոյր դեղձերով եւ անմահ խաղողների կախարդական ոտկոխ փունջերով երանութեամբ լցնում էին մեր հոգիները, եւ քաղցրութեամբ ոգոգում էին մեր բերաններըը, բայց այժմ թողուած ձիւնի համատարած ծածկոցի ներքեւ: Անցանք դեռը որ տեսերեւութանում էր

ինձ համար, եւ դնում մինչ դէպի վայր, դէպի Աբրահամ, խնդրելու Աբրահամ յորձանքների մէջ: Եւ ես բարձրանում էի դէպի վեր, Նեբ-ակով եւ Պերջ Պառչանի ծննդավայրը, որ ամ-ենաճանապարհ անանելի էր դառնում մեր ակն-դէտ աչքերին:

Հաւանօրէն ոչ մի հայի մտքից է անցել անցեալում, եւ ոչ եւս իմ մտքից մինչեւ այժմ երբ գրում եմ այս տողերը, թէ Մեծն Հայաս-տանի մէջ չէ եղել մի վայր որ այնքան իրաւունք անունայ պարծենալ իւր ազգաւորութեամբ, որպէս վերամբարձ եռապլուխ Արարատը, եւ նրա ծոցից բղխած բիւրեղանման ապրիւրներից յօրինուած այս Քաղաք գեաղը, որի չրերով մա-նուկն վարդվէս, Արշակունեաց թագաւորներն եւ իշխաններն եւ հայ ժողովուրդը զուարճանում էին երկնից պատակը, եւ հայ թագուհիները եւ Տիկնայք Հայոց լուանում էին երկնից մարմա-րապոյն մարմիններըը եւ Հայ կրօնի կաթողի-կոսները եւ էջմիածնի վարդապետները ողո-դում էին երկնից բերանները կուշտ կերակուրից յետոյ, եւ առպնով լուանում երկնից իւղոտած երկայն մօրուքները, եւ մայրաքաղաք Վաղար-շապատի եւ չրջակայ աւաններն եւ ամարանոց-ներն բուրամանուից ծաղկազարդ պարտէզներն այգիները եւ արտերը սատանում էին երկնից կեանքը եւ կանաչութիւնը նրա կենսատար զօ-րութիւնից եւ աւելի հաղորդութիւնից: Քաղաք գեաղը նոյն յաւիտենական գերն էր կատարում

այդ ժամանակ ինչ որ կատարում էր Հայաստանի մեծութեան ժամանակ, միայն թէ այն ժամանակ Հայ ազգը ազատ էր եւ հարուստ եւ այս ժամանակ ազատազրկի եւ հպատակ: Եւ սակայն նա մնում է անբռնաբարելի իւր ազատութեան մէջ, ամենամեծ բռնակալներն անգամ անկարող են եղել բռնակալել նրա հոգւոյ ազատութիւնը: Աբրահամի ատենի վերից սկսեալ մինչեւ Վարդանանց եւ ատենի հարուստ եւ չուքնանակի մօտաւոր եւ հեռաւոր դիտող իւր հանգամանքներ են փորել նրա բարձրագոյն կոպերի մօտ եւ նրա ջրից մի մաս առանում իրենց պարտէզների, այգիների եւ արտերի վերջութեան համար:

Գարնանային եւ ամառնային եղանակներին, շաբաթ կամ կիրակի կէս օրերից յետոյ մենք պրօսնելով գնում էինք դեղին ցորենի կամ սպիտակ բամբակի արտերի, եւ կամ մեր աչքերը կախարդող եւ սիրտ ժակը գրգռող ձմերուկի բոստաններին մէջով դէպի Քասապ գետը, ուր նրա աշնանային եւ ձմեռնային լիաբերան եւ արագահոս ջրերի տեղ տեղ առնում էինք արեւից չորացած հագարաւոր այլայլուն եւ այլազեւ յղկուն քարեր, աւազ եւ գետի անկողինը կամ բոլորովին չոր, եւ երբեմն մի չնչին տեսի քանակութեամբ հեղուկով գրեթէ գուրկ ընթանալու այժից, որովհետեւ բարեգործ Քասապը իւր վտառաւոր ջուրերը բաշխել էր իւր հայրենիքի կենսաւնակութեան համար:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Ա.յսպէսի նրա չնորհնեբից մէկը տեսայ, երբ հասայ Աշտարակի մուտքը, ալ կոպմից ափեն տալով, կամ լավեն տալով խոր լայն հզօրապէս եւ արագօրէն չարժւում էր Աշտարակի Առուն՝ Քասախի առատաձեռնութեան նուէրը, Աշտարակի երախտապէտ ազգաս եւ հարուստ բնակիչներին: Անցանք պետակը եւ մտանք դըլխաւոր փողոցը, եւ մեր ձախի վրայ վազ էր տալիս հաստաւոր ջուրը: Փողոցը խոբխուրոտ էր, եւ աւելի նեղ էր եւ անարժան կոչուելու լայն: Պատերը, տան թէ բակի, էին հզօրչէն եւ չնորհազուրկ, գոները իրենց հաստ եւ անտաշ, եւ կոչտ ու կոպիտ տախտակներով, կարծես չինուած էին այն դարերում, երբ հիւանութեան արհեստը դեռ չէր ծնել: Այս մեծ փողոցի ձախատում կանգնում էր Փարւանեանի երկյարկանի բալիւնատուն տունը: Ա.յտեղ ջրի մեծագոյն մասը դառնում էր դէպի հարաւ եւ մտնում իրեն սպասող անհամար այդիների մէջ իսկ միւսը աւելի նեղացած փողոցով շարունակում էր իւր ուղիղ ընթացքը եւ անցնելով Պաղչանի տան առաջով, գնում էր կատարել իւր պարտականութիւնը ուրիշ մասի այգիների եւ արտերի համար, եւ ղղացնել նրանց՝ յաւէտ ծերունի եւ յաւէտ երիտասարդ Արտաժի մշտապատրաստ բարերարութեան մեծութիւնը:

Երբ մտանք դասընկերոջս ծնողաց տան նեբսը, նրանց զարմանքի հետ մեծ եղաւ նրանց

ուրախութիւնն եւ ախորժութիւնն պատճառմէ ար-
ատոյտոյթիւնը:

Այս երեք այլայլուած զգացումները չարժ-
ուեմ էին եւ իմ մէջ: Զարմանք, որ կարուեց
ուսմանս պաշտելի ճանապարհը այսպէս անե-
լութեամբ, եւ այսպէս անապատեալ. ախորժ-
թիւն, թէ ի՞նչ պիտի լինի ապագայ, որի հա-
մար վանիմ յոյսեր էի երազում, եւ այժմ ամէն
ինչ երեւում էր կործանուած. եւ ուրախու-
թիւն, որ պահում էի մի ազնուասիրտ ընտա-
նիքի մէջ որ ցաւում էր իմ ցաւերի համար, եւ
ուրախանում առնելով ինձ:

Առաւ սուճախով եւ պանիով ներանք քա-
ղցրացրին ախորժութիւնս: Երբ վերապարձայ վա-
զրշապատ, չգտայ մայրս մահահոգ: Բայց
նրա բարի դէմքը նկարուած էր մեզմաժպիտ
գոհունակութեամբ: Նա ասեց թէ՝ Ֆալս բաց
անել առեց, թէ բաղդապուշակ գնչուհին
յայտնեց երեն թէ նա ապրելու էի օտարութեան
մէջ, թէ ինք ախորժու չէր դրա համար, որով-
հետեւ նա ծնել իմ բաղդաւոր աստղի տակը, եւ
բաղդը անօրինել է որ ապրէի օտար երկրնե-
րում, ուր նոյն մեծ դժբաղդութեան պիտի են-
թարկուէի, բայց աստղս բարձր էր պիտի ա-
զատէր ինձ, եւ պիտի վայելէի երկար կեանք,
եւ մի հանդիսաւոր բաղմութեան մէջ պիտի
լինէի յանկարծամահ լինելուն եւ վեց տարե-
կան հասակումս:

Ծննդեանս տարին լաւ չեմ յիշում, որովհե-

ան. Երբէք վրան չեմ մտածել, այն օրից որ 1892ին Թուրք ոստիկանութիւնը ձերբակալելով ինձ, առաւ բոլոր Թուղթերս, եւ ապառաժուրկ եւ Էրզուրումի արտաքսեալների դրախտի մէջ դրեց ինձ եւ ճշդօրէն կամ անճշդօրէն անդլիական հպատակութեանս վիճակագրի մէջ արձանագրեցի 29 սեպտեմբեր 1867: Այս հաշուով մինչեւ 1962 կամ 1963 ես պիտի չառնեմ աշխարհը, բայց աշխարհը պիտի առնէ ինձ, իսկ այնուհետեւ աշխարհն էլ պիտի չառնէ ինձ:

Գնչուի դուշակութիւնը ոտիս ընկճուած ատես, եւ յոյսի լոյսը վերատին վառուեց իմ մէջ, եւ յուսաւորեց իմ ապագայ կեանքի ճանապարհը, եւ այն վայրկեան երազները որոշմամբ դարպասուած էր այդ ցանկալի ճանապարհը:

Երկիրը ծածկուած էր ձիւնով, ասկայն ոչ ձիւն եւ ոչ կարկուտ կարող էին կասեցնել ինձ այդ ճանապարհից: Մայրս առեց ինձ 29 օսմանեան ոսկի, որ առատաձեռնից առիլի բարձրաժէք էր, եւ արտասուքներով խառնուրդի մէջ յաժանութեցաւ եւ մի մեծ Փարդոնի մէջ նստած մի քանի այլ ուղեւորների հետ, դանդաղօրէն երանք Վարդերատապատից դուրս, ես իմ սխրագործութեանս նեսիլով նախ դէպի Հայաստանի դարաւոր Մայր Տաճարը, եւ ապա Հայաստանի ուսումնասէր պատանեների կրթութեան նպատակայ ճեմարանը: Անցանք Զուարթնոց հօվն տակեցան երկրաշարժի զարթի եկեղեցին, իսկ այժմ հազար տարիներից ի վեր թաղուած հողի

տակ, եւ մեզի խոնարհուած թեւերի ծայրերը տեսանելի, եւ ձախի վրայ Վարդապետական ծայրածիր այդինների տեղեաթոռի եւ մեռելակերպ տեսարանները դիտելով, եւ անցանք այն տեղից, ուր հարիւր մէկ չարաթի առաջ տեսել էի պայլերի կառապետների տարբեր կարմրաչափ սպիտակավայրը: Փարթաքարի մէջով անցնելիս հանդիպեցինք տնօթի պայլերի հաւատար կառապի չուներին, որ մեզի գոհացան մոլեգին հաչոցներով մեր վրայ, առանց ցատկելու եւ պատառոտելու մեզ: Այս մեռած պայլերն էին որ պատահեցան մեզ մեր հանդարտարհարպութեան երկու կէտերի մէջեւ:

ՅԵՂԱՓՈԽԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԵՐԵԻԱՆՈՒՄ

Երեւանում գնացի ուր նախապէս պիտի գնայի եթէ չպատահէի Աշտարակցի Փաւստանին, այն է Աշտարակցի Մատթէոս Շահապիվի մօտ, եղբօրորդի կամ հօրեղբօրորդի բանաստեղծ Սմբատ Շահազիզի, որի հետ չկարմրէն ծանօթացած էի մեր Աշտարակեան արձակուրդների օրերին: Նա յայտնած դիմնապիոնի ուսանող էր Երեւանում եւ ուզում էր փոխադրուել Թիֆլիս: Նա ապրում էր մի ոսկեչէն պարտէզապատ բնակարանում: Տանտիկինոջ եղբայրներն էին Արշակ եւ Երկրորդը Վաղարշակ կամ Բաղրատ, որքան յիշում եմ: Արշակը յետագային եղաւ փոխտոտիան ի կ. Պոլիս, ուր ապա պատիւ եւ բարդ ունեցաւ Հնչակեան Մայր Յեղափոխական Կոմատկոմութեան կ. Պոլսի մասնաճիւղի առաջին կնիքը փոխադրել, մի կնիք որի չարաշար գործածութիւնը նախ առիթ տուեց անմեղ Հայերի ոսպանութիւնը, որովհետեւ մեքենային դրամ տալ եւ ապա առիթ տուեց բանտարկութեանց եւ կռուո-

թանձնելէ, գործադրելիններէ, որոց մէջ առաջինն Ազգային ունեցաւ ոչ մատա եւ ոչ մեղք: Իսկ Վարդապետական, առիթի նման սեւ եւ մեռաքոն պէս վայելուն ատաս չքնդ մարելով այս գեղագիր պատանին աւելի հասուն հատակամ եղեւ կատարելատած վարպետներէ երիտ սեւ մօտաքով, խորհրդաւոր աչքերով եւ վեցարներէ բարերատիաճեւ ծայրերով, եւ կամ գայլ սքանչացած աստր էջմիածնի բրդաճեւ հետաքրքիր դիրքի երկնամերձ մեծ խաչի տեսարանով, նաեւրնց իւր անձր եւ կեանքր այդ սրբատեղի մարդոց բնակարգութեան եւ նրանց աստր խաչի ծառայութեան: Այսպէս հետեւարար, Վարդապետը եղաւ Մատթէոս վարպետս, եւ հետզհետէ Հայ Եկեղեցւոյ մեծերից մէկը: 1932ին ես տեսայ նրան արքեպիսկոպոս, եւ Խրէն եւ Մեսրոպ արքեպիսկոպոսներից յետոյ երրորդ կաթողիկոսական ընտրելին, եւ անատրակոյս Խրէն կաթողիկոս նրան պիտի նշանակէր կաթողիկոսական տեղապահ, եւ ամենահաւանական կաթողիկոսը դառնար, եթէ հանատարար պահէր իւր բարեկամութիւնը Խրէնի հետ: Այս երիտ եղրայրներր տասջին անձերն էին, որ տեսայ Եռհատիկի մօտ, ապա Լիան ուրիշ հատակակից գործակիցներ մեռ երեկոյեան:

«Այս պիշեր ժողով անենք, խնդիրը մեր հատուած Թրքահայ եղրայրների մասին է, եթէ ի՞նչպէս պէտք է վերին նրանց Սուլթանի յա-

ծից, եւ առնդհել մի նոր ազատ Հայաստան» ասել չնկերս ոչ իւր սովորական զուարճասիրական շնչառով, բայց աւելի քաղաքագէտ մարդի լրջախոհութեամբ։

Ես լսել էի Բաֆֆիի անունով մի վիպասան կար, գրել էր Խենթ անունով մի վիպասանութիւն, եւ իմ երեսատարդներ Ներսէսեան լճի եզերքներում նստած լսելով կարդում էին նրա այդ վէպը, եւ իրարու ցոյց էին տալիս էջերի գլխատով եւ դաշտնը գոհից կապած մի պարթեւական մարդ, ասելով. «Տեսէք, տեսէք, էս մարդն է Բաֆֆիի հերոս Խենթը, բուն անունը Սամսոն»։ Կարծեմ մինչեւ այդ ժամանակ դեռ Խերթ չէի կարդացել, եւ հասկացողութիւնս տակաւին բոլորովին ազէտ էր այն նորութեան մասին որ լսեցի Շահապիցից։

Հայաստան եւ ազգասիրութիւն բառերը քաջածանօթ էին ինձ, որպէս նաեւ Հայոց պատմութիւնը իւր Թագաւորներով, եւ քաջ եւ դաւաճան նախարարներով, եւ դիտէի թէ այժմ Հայը չունէր Թագաւոր եւ Հայաստան երկիրը գտնւում էր երեք պետութեանց միջեւ։

Եթէ մի ոք հարցնէր ինձ, «ուր են այն նախարարքն որ անունել մի նոր Հայաստան առնեն, առանց երկաթութեան պետի պատասխանէի. «Անշուշտ այն տեղում, ուր երեսը դարձրից ի վեր տպրում է ցարի Հպատակացեալ Հայ ժողովուրդը։ Եթէ երբէք Հայ ժողովուրդը ունենայ է պարծանքի վտառքը, այդ պարծանքի

վտաքերը եկել են այդ տեղում: Այդ տեղում են կանգնել Հայոց տաճարի մայրաքարաքները, Աբեմատեր, Աբամաշատ, Երատանգատիկրա, Վաղարշապատ, Դվին եւ Անի: Այդ տեղերում են վայելել Հայ ազգի մեծ թագաւորները, Աբշակ, Աբամաշէս, Տիգրան, Մեծն Տրդատ: Նրա դրամատունների տաղերն հայերէն, եւ նրա ազգային անմոռանալի եւ մշտայոյզ մեծ հերոսները: Իսկ Սուլթանի հպատակ հայ ժողովրդեան ապրած հողի վրայ ոչ մի պատմական վտաքեր չէ մնացել Հայոց պատմութեան էջերում, մեայն թէ Տիգրան տաճարի հիմնից Տիգրանակերտ քաղաքը, Վասպուրականում իշխել էին Արծրունները, եւ մեծատարած կիլիկիա երկրի մի վոքրիկ մասում Հայ վոքր թագաւորութիւն պոյտոս Խաչակիրների միջոցով, որի վերջին թագաւորները նոյնիսկ հայեր չէին, եւ ազգութիւնը պրիմէ բոլորովին յատնական:

Երեկոյեան ժողովը սկսեց, նախքան մէջ յիշում եմ երկու անձեր, մէկին էլ պիմնազիստ Գրիգոր Ազարեանով, որ ցարական իշխանութեան անկումի հետեւանքով ծնունդ առած Դաշնակցութեան Հանրապետութեան օրով, իր առաջին ոտքը վոտնից հանի, եւ որի մասին այս դրութեան մէջ յետագային պիտի գրեմ:

Մեր ընկերութեան մէջ խնդրին բազմակողմանի քաղաքականութեամբ կար մէկը, որի անունն էր կարծեմ Ամրոսս Խաչատրեան, հասարակ նոյնը, որի հետ մանրամասն բարեկամա-

ցայ քան տարի յետոյ, փառատարան, նաև-դուն երեւելի դաշնակցական, եւ Երեւանի քա-ղաքապետութիւնը դարձ-ընց այդ վաշխատաւ եւ ցնծագործ քաղաքը մայ-րաքաղաք Ազգային Անկախ Հանրապետու-թեան, եւ երբ այդ հանրապետութիւնը կախ-ուեց հիւսիսից աբշաւող բոլշեւիկեան պարա-նով, Մարտաւ բոլշեւիկներուն ձեռքով օդափո-խութեան համար տեղափոխուեց Մոսկվա, նախ պահուելով անդորձ թշուառութեան մէջ, եւ 1932ին երբ Երեւանում էի, մեր փոխադարձ բանդապին բարեկամ բժշկապետ Յովհաննէս-եանից առաջարով նրա հասցէն, Մոսկվայում դրեցի իրեն որ դար հիւրանոցս: Եկաւ անհապ եւ ուզեցի որ երթայինք հիւրանոցի ճաշարա-նը, պի դիտէի Մուրեհան քաղաքացիների ըս-տամոքների ճակատագիրը ինչպէս էր այդ ժամանակներում: Նա մերժեց, չէր ուզում որ այնտեղ կամ դրսում մխասին տեսնուէինք, ա-սելով թէ կարող էինք տեսնուել, եւ առաջարա դրուիլ իւր մասին: Ձեմ կարծում որ իւր երկիւղը արդարացի էր այդ առիճանի, բայց իւր աքսորականի հանդամանքը ծնեցրել էր նրանում կասկածի եւ երկիւղի զգացումը, թէ ամենուրեք լրտես եւ ոստիկանութիւն հետե-ւէին իր շարժումներին: Այսպէս, Մարտաւ Խա-չատրեան Մոսկվայի մթնոլորտում զգում էր թէ ձերբակալութեան սպառնագրեցիկ ուրուա-կանը իւր անձայն քայլերով եւ անտեսանելի

մարմնով հետեւում էր նրա եռանդից, պատրաստ իւր ճանկերով վերցնելու նրան: Որքա՞ն տարբեր էր նրա այս տարատեսակութեամբ հանճարեղ գործերից, երջանկապատ կեանքին որ նա վարում էր կարծանեալ ցարկոմի երեւան աննշան քաղաքում, աննշան՝ իշխող ուսս ազգի համար, նշանաւոր՝ իշխուղ հայ ժողովրդի համար, եւ Սմբատ անուանի էր թէ երեւանում եւ թէ երեւանից դուրս: Իմ երեք տարի այցելութեանս ընթացքին Սմբատ հանրութեան մէջ անուանի էր իւր փառասիրութեամբ, եւ իւր մանրիմունքին իւր ուրիշասիրութեամբ: 1935ին կամ 1936ին երբ Փարիզում անանուն էի իմ բարեկամ, պատուական բանասէրդ Աւետիք Իսահակեանի հետ, ցաւալի դէպքումով յայտնեց մեր վերադարձ բարեկամ բժիշկապետ Յովհաննէս Յովհաննէսեանի մահը, որի տան հիւրն էինք լինում նա եւ ես, երբ այցելում էինք Երեւան: Եւ բժիշկի առատաձեռնութեան մէջ նկատում էին լինում Երեւանի լուսատուն մտաւորականները, Սմբատ անպակաս էր այդ հանդիսալի ընկերութիւնից: Եւ Սմբատի ոչ ձեւերը երբէք անդորձ չէր. կամ կարմիր գինին իւր բնականին մօտ բռնած զրուցարկում էր մի ուրիշի կենաց, եւ կամ խոշոր դդալը լեցուած համեղ հարիսայով, եւ կամ իւղալի պաշտելի վրայով տանում էր բերանին եւ զուարթ բերում էր վրայի կամ հարիսայի լաթերան ամանի մէջ, եւ ընկերները զուար-

ճաճանչն պաչում էին. «Տօ, Մարաա, եթէ քոյ Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամպարքն չենն»: Իսկ բժիշկը ծիծաղելով ասում էր. «Մարաա, ականջ մի կախիր, քէֆիդ նայիր, իմ Շիրակայ ամպարները չեն դատարկուի, որքան էլ որ լցնես որկորդ»:

Անդանից քիչ յետոյ, Շարան բոլոր երկաթեթիամբ պատկում էր թախտի վրայ, եւ փորը բանում էր յաւել, եւ չկարենալով ծածկել իր յաւը, իր յաւադին ձայնով, եւ բժիշկի մայրը ասում էր. «Տօ, Մարաա ջան, ախր ինչի՞ ես էսքան շատ ուտում, քանի որ պետես թէ յետոյ հոպկս պիտի տանջես»: «Մեղքը քունն է, մայրիկ, որ այդպէս համով կերակուրներ են եփում, որ ես չեմ կարողանում ինձ բռնել» պատասխանում էր Մարաան:

Բայց այժմ, քանի տարի յետոյ Մոսկվայում, որտի տարտափից նրա փորը կուչ էր եկել եւ կծկուել, մերժելով ընդունել ինչ որ իր համար պատրաստի էր նախապէս, եւ հաւանօրէն եւս պատրաստի այդ ժամանակ երբ նրա նմանները իրենց տպրած պատմաններում անկարող էին ունենալ, եւ երանի էին տալիս նրանց, որոնք բաղդատուր էին ունենալով: Անբաղդ բարեկամը պատմեց թէ շատ թշուառ կեանք ունեցաւ տարիներով ուժէ զորձ չէր տրւում, որ փորը ինչ մի լաւ կեանք տանդիէր իր համար, եւ թէ վերջերս իր հին համատարածական երկու ոտս ընկերների շնորհիւ մի զորձ էր տրուել

մի ծխախոտի գործարանում, դրպրական պաշտօնով, թէ նա ամէն առաւօտ ժամը հինգին վեր էր կենում, փայտի կտորների վրայ ջուր եւացնում իւր թէյի համար եւ տաքով մի ժամ քաղցուց յետոյ հանում էր իւր գործատեղին: Ճնշուած սրտով եւ հոգով անենակիս գրան մօտից բաժանուեցայ, կամ բաժանուեց: Նա չուզեց որ ես ընկերանայի իրեն հիւրանոցի ներանցքով եւ սրահով մինչեւ սրտաքին դուռը, որովհետեւ ձերբակալութեան անգոյ ուրուականը երեւում էր նրա մտքում եւ աչքերի առաջ, ամենուրէք: Ես տեսել էի եւ ուրիշ ծանօթներ, որ համանման երկիւղահարութեամբ էին ապրում, եւ երբ առում էի թէ իրենց կասկածները եւ երկիւղները ասելի երեւակայական էին քան իրական, նրանք պատասխանում էին թէ ես էի որ սխալւում էի իմ կարծիքում եւ ոչ իրենք: Եւ երբ Լոնդոնից հառայ Լենինգրատ, ոչ ոչնոնց եւ ոչ էլ Մոսկվայում, եւ ոչ երեւանում, իմ բոլոր օրերի չքջատարութեանց ընթացքում չնկատեցի ոչ մէկ հետեւող իմ քայլերին:

Երբ բաժանուեց, տխուր մտածումներ յաջորդեցին միմեանց իմ մտքում: Սա էր այն ընկերներից մէկը, որ որպէս մի թարմ պատանի, մեր այն խակամիտ ազգասիրական ժողովում, երեւակայում էր ջարդել Սուլթանի թախտը, եւ նրա թախտի տակից ազատել Թուրքիոյ հայերին, եւ նրանց համար տեղծել մի նոր Հա-

յատուկն, քանզի այդպէս էր այդ ժողովի նիւթը բերանացի եւ գրաւոր: Ոմանք անվատահ լինից անդիր բանախօսութեան կարողութեան վրայ, պատրաստում էին լինից ճարտարարանութիւնը գրաւոր, որոնք երեւի ամէնը առնուած էին այդ ժամանակի ազգասիրական վէպերից եւ լրագրական յօդուածներից: Այդ ժամանակի Թրքահայոց հալածեալ վիճակի, հայ ժողովրդի հնձին ու տառապանքը առակալ տուրքերի տակ, հայ կանանց բռնաբարումը, քրիստերի աւազակութիւններն եւ աւարառութիւնները դիւղերի վրայ, հայ կրօնի եւ լեզուի հալածանքը կառավարութեան բարբարոսութեամբ, եւ այլն առասպելնե՞ր էին պատմում թէ իրականութիւններ էին, կամ թէ ինչպէ՞ս այս բաներին ես չէի պատահել կամ չէի կարողացել նկատել եւ զգալ ազգայութեանս մէջս ցին ճանապարհորդելիս եւ ապրելիս այդ երկրում: Երբ վերջացաւ, Մատթէոս Շահապիւնեանը չարժումով ինձ ասեց.

— Սարգսի, ի՞նչ սուս ու փուս կեցել ես, հիմայ դու պատմիր այդ անիծուած աէրութեան մասին, դու կէս տաճկատառանցի ես, էնպէս եղել ես, ի՞նչ ես տալիս այս գազանութիւնների մասին մեր խեղճ Թրքահայերի դէմ: Դէ՛, խօսի՛ր:

Քառասուն տեսի մէջ երբ լոզանում էինք Աէտարակում, նա այս տիտղոսը չնորհել էր ինձ, եւ այսպէս էր կոչում այդ տեղ եւ տպա Թիֆլի-

առաջ: Ես յայտնեցի թէ Վատիքանի հետ ընտանիքներս, յուսախաբուած Թուրանական պատճէնուն համար, վերադառնում էին իրենց երկիրը, Բշերիկ՝ Տիգրանակերտի նահանգը, թէ մեր երկար ճանապարհորդութեան օրերում շատ պիտի նեղուեանք լճերում քարշ տալով, թէ ոչ այդ անկերում, ոչ ճանապարհորդութեան ընթացքում չհանդիպելիք գողերի եւ աւազակների, պատմեցի մեր Տիգրանակերտի պարոցի մասին, ուր ամբողջ պատերը զարդարուած էին հայ թագաւորների եւ մեծերի պատկերներով, եւ թուրք նահանգապետը նկատ մեր հանդէպին, անոնց այդ ամէնը եւ լսեց մեր հայրենասիրական երգերը, եւ ինչպէս մեր ուսուցիչները, բոլոր պարանների պարոցական անուններով պիտի էին հայ թագաւորների անուններով, եւ աւելացրի.

— Մենք պարում ենք այս երկրում, եւ ոչ Տաճկաստանում. եթէ Սուլթանի հպատակ հայերը պրկանքի մէջ են, թող իրենք ազգի կանոնին եւ պատանի իրենց թուրքի եւքիւրդի բռնակալութիւնից եւ աոնգծեն իրենց համար մի անկախ Հայաստան: Եւ մենք էլ քանի որ ուրում ենք Հայաստան աոնգծենք մեր այս երկրի վրայ, դուք էլ ինձ պէս պիտի թէ այս մեր երկրում են եղել մեր ազգի թագաւորական մայրաքաղաքները եւ թագաւորները, եւ դուք շատ լաւ պիտի որ այսօր բոլոր ճեմարանից եւ հինգ ճեմական պարոցներից, միւս բոլոր առա-

սահայ զպրոցները փակ են: Կառավարութիւնը ուզում է մեր զպրոցները, լեզուն եւ կրօնը ուսուցնել: Եթէ ազգասիրութիւն ենք փընտռում եւ ունենք մեր սրտերում, այստեղ է որ պէտք է դաներ, եւ այստեղ զործադրենք, եւ ոչ թէ մի ժողովրդի համար որին չենք տեսել, եւ մի երկրի մէջ ուր չենք եղել:

— Տօ, Սարգսա, էդ ի՞նչ վատնդաւոր բաներ ես խօսում, մէկ էլ էդ տեսակի խօսքեր բերանից դուրս չհանես. եթէ պոլիցիան իմանայ, քեզ կը կոխէ բանտը եւ կը քշէ Սիբիրի տասցատունը, տանելով եւ ձեռներով կապկապուած երկաթի չղթաներով: Ուրիշն այդպիսի բան ոչ մտածես պլխումդ, եւ ոչ խօսես բերանովդ այսուհետեւ, ոչ էլ Հայաստան տանելու զազափարը մտածես մեր ամենազօր ցարի հողի վրայ: Թագաւորական տօներին օրերում, մինչ տեսնում ենք մեր կաթողիկոսը, վարդապետները եւ տէրտէրները մեր եկեղեցիներում ծնկաչոք փառաբանում են Ամենայն Ռուսաց կայսեր ամենազօր լինելը, մտքում են որ նրա գահը լինի անտասան, նրա սուրը անխորտակելի, նրա մէկ պինտորը ապանի տասն հազար Թշնամի պինտոր, եւ նրա տասն պինտորը բիւրաւոր եւ բիւրաւոր Թշնամի պինտոր ոչընչացնէ: Աստուած անտարակոյս լսում է մեր սուրբ հայրերի աղօթքները, եւ նրանց աղօթքների չնորհիւ մեր ամենազորմած ցարի ամենազօրութիւնը զտնում է ուրէք մեծ ամենա-

զօրութիւն: Եւ մեր վրաց յեղափոխական այժը որտեղի՞ց կարող է առնել այս երկիրը եւ նրանից մի Հայաստան չինել: Բայց Բաֆֆին մեզ ցոյց է տալիս ճանապարհը, եւ մեր մեծ բանաստեղծը գոռում է մեր արաբերին. «Մեր բահերն էլ կ'անեն նրանց չան սատակ»: Ուստի այնտեղ, Սուլթանի հողի վրայ է որ պիտի կատարենք մեր յեղափոխութիւնը, եւ բարձրացնենք ապստամբ Հայաստանի չէնքը: Երբ երթաս Թիֆլիս, գնա եւ տես մեր Գալուստ Ալոյեանին, եւ նա քեզ կը տրվեցնէ ապստամբութեան ճանապարհը Թրքահայաստանի համար:

Արդեօք ի՞նչ եղան այս երանելի ժողովի ազատագրական հարցի յուսալից եւ ոգեւորեալ ախոյեանները: Եւ որքա՞ն նրանք հաւատարիմ մնացին եւ հետեւեցին երբեմն պաշտելի դաշտերի երակոցման: Մէկը եղաւ վտարարան, միամիտանոկ կպցնելով նրան յեղափոխութեան արուեստը Երեւանում, եւ աքսոր Մոսկվայում: Թէ ողջ է կամ ոչ ուրուականներից հալածուած Սմբատը, Մոսկվայի ասեկանութիւնը դիտէ:

Մի երկրորդը ժառանգեց իւր հօրից երկու երեք այգիներ եւ դարձաւ գինեվի վաճառական, եւ իւր տան ներքնայարկում չարուած էին գինով լիցուն հսկայ կարասներ: 1909ին երբ 1903ից յետոյ եղայ Երեւանում, գնացի տեսնել նրան: Աղջիկը ընդունեց ինձ իւր հօր տեղակը: Նա պառկած էր անկողնում, չարժուելով

եւ մրթմրթալով եւ հասկանալու եւ պատասխանելու անընդունակ, խելքը կորցրած դինովութիւնից: «Ամէն օր էապէս է խնդճ հայրիկս, տառջքը չեմ կարողանում առնել, ճար չկայ: Մայրս մեռաւ ու ես չգիտեմ ի՞նչ անեմ այս վիճակով» ասկց տարաբաղդ ազջիկը արտաբնկ տխրութեամբ, գինովութիւնը տարաւ նրան հողի տակ:

Մի երրորդը ազգասիրութեան զազափարը փոխանակնց կրօնասիրութեան զազափարի հետ բարձրացաւ մինչեւ արքեպիսկոպոսութիւն, Մատթէոս Արքեպիսկոպոս, եւ մօտենում էր կաթողիկոսական Աթոռին, բայց Աստուած երեւի շատ արամադիր չէր արժանացնել նրան այդ պատուին, եւ զրկնց նրան հանդերձեալ աշխարհի էջմիածնական վարդապետանոցի մօտ, որց հոգինեըն տատանում են զրախտի եւ դժոխքի մէջեւ, որտեղից նրանցից շատեր վերջին դատաստանի դատավարութիւնից յետոյ, Գաբրիէլ Հրեշտակապետի կախարդական զաւազանով, հաւանօրէն պիտի էջնեն վար, եւ ոչ դէպի վեր:

Զորրորդը, Աբշակ Մատթէոսեան (Մուրատեան) երբ հատուածաւ, դնաց Կ· Պոլիս, դարձաւ նպաստավոճառ, վերադարձաւ, դնաց Բագու, եւ նախնական չահը քաշնց նրան իւր վնց զատկներով դէպի Հնռաւոր Թաշքինդ, եւ ի վերջոյ իւր զատկնրի օրհնութեամբ, վերացաւ ի վերին Երուսաղէմ:

Իսկ սիբելիս Մատթէոս Շահապիզ, զնաց ժընեվ իւր գժուար ընդունելի գլուխին աւելի խելք եւ ուսում ընդունել տալու, եւ այնտեղից յեղափոխական ոգի տարածելու իւր ընթերցողներին, եւ մի գժբաղդ օր վերց հարուածեցնով զնդանահարից իւր խեղճ գլուխը, եւ այսպէսով վերջ տուից Թրքահայերին Սուլթանի լուծից արձակելու իւր եռանդագին ջանքերին:

Եւ ես մեայն մնացել եմ ողջ որ կեանքիս պատմութեան մէջ արձանագրէի նրանց պատմանեկութեան յոյզերն եւ յոյսերը, եւ նրանց հառաչանութեան պատգներն եւ դառնութիւնները: Եթէ նրանցից յեռոյ եկած առաջնոյ պատմիչներ այսպէս ապրէին եւ այսպէս վերջանային, յայնժամ Թրքահայութիւնը պիտի չմեռնէր եւ այսօր ողջ եւ կենդանի ապրէր իւր հայրերի հողի վրայ:

Այդ անմոռանալի ժողովից ես սովրեցի մի նոր բան, թէ Ռուսահայաստանում անկարելի էր մի ազատ Հայաստանի գոյութիւնը, թէ Հայ ազգը ամէն ազգի նման իրաւունք ունէր ունենալ իւր ազատ եւ անկախ հայրենիքը, եւ թէ Թուրքիոյ Հայաստանը միակ վայրն էր ուրեմն ուր կարող էր ստեղծուել այդ հայրենիքը, քանզի չէր թէ Թրքահայերը ապրում էին պրկանքի տակ թէ հանդստութեան մէջ եւ այս մտածութեամբ ճանապարհ ընկայ դէպի Թիֆլիս, դանել խորհրդատուր Երեւանցի Գալուստ Ալոյեանին:

ԹԻՖԼԻՍ — ԳԱԼՈՒՍՏ ԱԼՈՅԵԱՆ

Երեւանի եւ Թիֆլիսի միջեւ այն ժամանակ չկար երկաթուղի, բայց անհանգըստանում էր թղթատարական կառապնացութիւնն երկձիանի կամ եռաձի, ունենալով կայարաններ, որոշ տարածութիւնանց միջեւ, ուր համբոյզպանները լծնում էին հանդիստառ եւ անունդի համար, եւ յոգնած ձիերի տեղ նոր ձիեր էին լծուում կառքերին: Միւս ճանապարհորդութեան միջոցներն էին փուռպոնները՝ խոշոր կառքեր, կամ բեռնակիր կառքեր, եւ շատ խոշոր ձիերով լծուած, եւ ունէի անհանգստութիւն եւ ունէի ժամն քան միւս տեսակը, եւ ճանապարհորդութիւնը եւս տասուել երկարատեւ, շատ օրեր: Իմ բաժինը այս վերջին տեսակն էր բնականաբար: Այդ համբոյզութիւնից մեկ բանը որ պատահեցաւ ի մոքս մս Սեւանայ լիճն է: Երբ հասանմարմին փուռպոնը յառաջանում էր դուշօրէն եւ ես արտասուք նայում էի ներքեւի չորժուն ջրային մակերեւոյթին, եւ անշարժ ցամաքային կղզեակին, եւ հոգեզբաղ վիտում էի հանդիստակաց տարերը որ բարձրանում էին ծովի կապուտակ ջրերի տակից, եւ երկարում էին ծովի ափերի հետ հետզհետէ տանելով զեզեկիկ կապոյտ երեւոյթ երկնքի ամպերի նման, եւ նահանում էին

հետաքրքրութեամբ, իսկ այն կողմ դէպի ուր մենք էինք գնում, կարծես Սեւանայ ծովակի գլուխն էր ոչ թէ բարձրացած սարերով, այլ ամէն ցած եւ տարածուած բարձրերով, ուր պարզանքով հանդիպում էին ոչ թէ հայ ազգի գիւղեր, այլ ուրիշ մահմետականների կամ հետաքրքրական պատմութիւնների հմայած գիւղերով: Հայ գիւղացին երբեք չէր մոռանել ունենալ գիւղակութեան ճաշակը վայելելու համար իւր երկնագոյն ծովի հետ հանդիպելու տեսարանը:

Իմ այս առաջին առնչութիւնը հանրապետութեան միւս բանը որ ապշեցրեալ մնում է իմ մտքում, այդ է Դիլիջանը, որի մարդկային ձեռքի անճաշակ հարստասիրութեան հպարտ տունները հեգնութիւն էին այն գիւղերին, որի վրայ նրանք կանգնած էին թզուկորէն եւ նայում էին հպարտօրէն բնութեան հարստացրած լեռներին, ձորերին եւ նրանց զարդարող բազմատեսակ ծառերի եւ ահագին ջրերի գմայլելի տեսարաններին եւ տեսնում էին նրբանց անտես աչքերով: Վաթսուն տարիներից է վեր այս տեղերը ընկել էին Ռուսիոյ սերտողութեան տակ, եւ տակայն այդ հանդիպարհը բոլորովին ապահով չէր: Կովկասեան թուրքերը դեռ ոտնկանութեան ծանօթ աւազակապետի առաջնորդութեամբ, կողոպտում էին, եւ երբեմն սպանում հանդիպարհորդներին. մի այսպիսի տեղ վատ դէպքից յետոյ Սեւանայ վարպետս, նշանաւոր Ներսէս պատրիարքի

յաջորդ Նիկոմիդիոյ առաջնորդութեան թեմին, դնում էր էջմիածին եպիսկոպոսացման, երբ նա դժբաղդութիւնն ունեցաւ պատահելու ուսպակապետին: Բոլոր ռուսահպատակները վտանգաւորակէս կոզոպատելուց յետոյ հայ վաբպապետը Թուրքիայն դիմեց բարեխիղճ ուսպակապետին թէ ինչ եւ իբրայինչ Օսմանեան Սուլթանի հայեր էին: Ասպակը ասեց. «Դուք հայրենակիցներ էք, ձեզ ձեռք չեմ պըպշնի, մեզ ձեր ժամացոյցները կը նուիրէք ինձ, իբրեւ յիշատակ»:

Իւր ժողովրդին անձնուէր եւ ճշմարիտ առաջնորդ այս անզուգական եկեղեցականը պատմեց ինձ այս դէպքը, երբ բաղդը բերեց ինձ ճանաչել նրան եւ նրա մեծ գործերը իւր թեմի գրեթէ բոլոր 30 հայ գիւղերում: Եթէ նրա տեղ մի ուսահպատակ հայ կրօնաւոր պատահէր այդ դէպքում, դժուար թէ արժանանար Թուրք ուսպակապետի այսպիսի քրիստոնէական վարմունքին:

Կայսրը հրամայում էր իւր կայսրութեան ռուս եւ մեռ ամէն այլացեղ հպատակներին որ իրենց եկեղեցիներում, մզկիթներում, սինագոգներում եւ կառաւարներում փառաբանէին իրեն ապառաժային տիտղոսներով՝ «ամենազօր», «ամենակարող» եւ այլն, եւ սակայն Նորին Վեհափառութեան ամենակարողութիւնը չէր գործում իւր հայ հպատակների պատմական հողի վրայ եւ Երեւանեան նահանգի

ասիկանութիւնը անկարգանում էր կամ ուզում էր լինել անկարգ՝ ձերբակալելու եւ պատժելու համար նրա հպատակների կեանքի եւ ապահովութեան այդ պատուհասներին, բայց նոյն ասիկանութիւնը միշտ կարգ էր եւ կարգադրում էր հետամտել, վնասել եւ դաւել, ձերբակալել եւ պատժել ոչխարով, բանտով կամ դնդակով, մաքի եւ խօսքի ազատութեան սերտհարներին, եւ ազատութեան պատասխանի քարոզիչներին, որոնք դուշանում էին ասիկանութեան աչքից՝ որպէս ապստամբներ եւ դոկեր պատրաստ էին լինել:

Այսպիսի դպրոցով ասիանաւորներից մէկն էր ընկճուած Վրաստանի հին մայրաքաղաքում Երեւանցի Գաբրուտ Ալոյեան, չնայելով որ նա իր մաքի եւ խօսքի ազատութեան ալաքներ, եւ ազատութեան դպրոցների գնդակներ չէր կուտ եւ կոխում իր կեանքի վրայ իշխող ակութեան դէմ: Ես դուս նրան ընչացէս ես յանձնարարուել էի Երեւանում:

Նա հասակով բարձր էր եւ սարիքով մեծ, եւ սեւութիւնը վազում էր նրա դլխի մազերի եւ աչքի բիբերի մէջ, երեսն էր ցորենագոյն, իր երեսոյթով համակրելի եւ բարի ազատասիրուած ազնուութեան ժպիտներ եւ մտքի նորութեան սեւ թելերը բոլորում էին նրա երեսի շուրջը մէկ սկանջից միւսը: Թէեւ ուսում եւ ոյժ էս երեսուսարով, սակայն ձայնի եւ ձեւի մէջ դնում էր հայրական հոգի, եւ իր խօսքերի

մէջ ժողովրդային մտածութեան արտայայտութիւն:

— Մենք հայերս շատ հին ազգ ենք, եւ իրաւունք ունենք պարծենալու շատ բաներում: Մեզանից աւելի բարձր ազգեր կորան անհետացան եւ նրանց քաղաքակրթութիւնն է միայն մնում: Մեր քաղաքակրթութիւնը չկայ, կամ կորաւ, բայց մեր Հայ ազգը չկորաւ, եւ մնում է կենդանի, հակառակ ամէն խիստ եւ զարհուրելի բարբարոսական արշաւանքների եւ աւերումների: Այս ամրութեան եւ դիմացկունութեան մէջ է մեր ազգի նկարագրի մեծութիւնը: Եւ ինչո՞ւ իրաւունքով մենք այս մեր ազգը մեայ առուկ օտար ազգերի ձեւափոխում, եւ նրա աւերը Հոդի օտարի անվախանութիւն: Մեր այսօրուայ բանաստեղծների բահերից եւ վիպասանների գրիչներից Հայաստան կարող չէ ծնիլ, բայց մեր ազգը իրաւունք ունի իւր ընկած անկախութեան, եւ չդիայակոյ Հայաստանի ազատութեան համար: Ես եւ դու, եւ մեզ նման թարմարիւն երիտասարդներս ենք, որ պարտական ենք, եւ պէտք ենք հաստատել հայ ազգի անկախութիւնը եւ վերջին այն աւերակութեան չդիանները, որոցմով կազատած է Հայաստանը շատ դարերից ի վեր: Այս, ես թոզի գիմնազիստ եւ համալսարան, որովհետեւ պիտի բանաստեղծի բահը եւ վիպասանի գրիչը չի կարող մեզ տալ մեր Հայաստանը, բայց հայ երիտասարդի կենքը եւ նրա կամքը արիւ-

նը կարող են: Այդ առաջին դէնքը պէտք է լինուած լինի հայի ձեռքով, ես պահում եմ մաքիս ուսումը, որպէսզի սովորեմ պինապրծութեան ուսումը եւ կռիւ եւ կռիւի վրիժութեան առաջին դէնքը, եւ վնասում եմ ուրիշներ որ մխանան ինձ:

Ես նայում էի նրա երեսին, եւ մանուկ առում նրա խօսքերին, եւ բառերի արտասանութեանց եւ դէպացումներով արտայայտութեանց հետ այլայլւում էին նրա աչքերն եւ այտերը: Հայ պինապրծի ձեռքով գործուած դրծիքը երկնային գօրութիւն պիտի բերէ խաւարի մէջ չքնոց մեր անձնուէր քաջերին, որ պիտի կարենան առակում ու ստրատի ապրել Թուրքերի արանքում, ակռաով ենթարկել նրանց վտանգները, եւ կենդանացնել ու վառել թըմրած Թրքահայերի քնած հոգին ազատութեան բոցերով:

Ազատասիրութեան այս դպրացունց հարստանութեան վրայ, մխաքս դարձեալ դարձաւ դէպի Թուրքիա, աչքիս առաջ պատկերացան ապագային կեանքի երկար ճանապարհորդութեան պիտերը եւ դիպացինները, քրդաւից Բէհրիկի հայոց կեանքը, Տիգրանակերտ իւր հայ ժողովրդով եւ հարուստ խանութներով, հայ թաղաւորների պատկերներով զարդարուած դպրոցներով, եւ ճանապարհորդութիւնը այնտեղից մինչեւ ռուսական սահմանը, ուր հայ, ատրպ, քիւրդ եւ Թուրք ապրում էին

միասին, ինչպէս Երեւանի կամ Վրաստանի հայերը միւս ցեղերի մէջ եւ հետ կովկասում Ռուսիոյ ներքեւ, եւ նրանք նոյնքան քիչ էին մտածում մի անկախ Հայաստան իրենց համար, որքան կովկասի հայերը անկախ մի Հայաստան իրենց ապրած հողի վրայ: Եւ ասեցի նորածանօթ բարեկամիս. «Անկախ Հայաստան ունենալու փափաքը սաստիկ զօրաւոր է երեւում մեր ուսահայ երիտասարդութեան սրտում եւ մտքում, ինչո՞ւ ուրեմն մենք այնքան ուզում ենք մի անկախ Հայաստան այն հայ ժողովուրդի եւ այն երկրի համար, ուր չենք եղել, չենք տեսել եւ չենք ճանաչում: Ինչո՞ւ չառնչվել ապատ Հայաստան այն երկրի վրայ, ուր եղել են պատմական Հայաստանի բոլոր փառքերը, ուր ուսաց սերից վաթսուն սարի առաջ:

— Շատ լաւ ես ասում, բայց հայրենիքի ազատութեան առհաւիրանները մեր գլուխը եւ սիրտը լեցրել են միայն խնդճ Թրքահայերի համար Հայաստան ստեղծելու պնեւրութեամբ, եւ այս պնեւրութիւնը այնքան զօրաւոր է եւ անզսպելի, որ չենք եա կենալ, եւ պիտի գնանք ամէն գնով, ինչ էլ լինի հետեւանքը: Ինչ վերաբերում է մեր այս ուսահայ Հայաստանին, հոգ մի անի, նրա ժամանակն էլ պիտի գայ: Ամբողջ Ռուսաստանի ազատախնդիր անձնուէր ոգիները երկաթեայ թելերով իրար հետ կապուած խորհրդաւոր մթութեան մէջ, պատրաստում են մեծ ուժերը որ պիտի քայքայէ եւ

կրծանէ այս աշխարհածաւալ կայսրութեան բանակապետութեան թաւնաւոր ցանցերը, որոց մէջ տառապած են ոչ միայն օտարացեղ հպատակները, այլ եւ բուն իսկ ազգը: Լսեցիր արդէն ինչպէս մէկ ցաւը դիտաւորեց, այլ մէկ հասն էր միայն: Պիտի հասնի օրը երբ բուն ցարութիւնը պիտի ցնդի իբր բանակապետութեան ցանցերի բազմատոհմ չարութեամբ եւ ազատութեան լոյսը ծագի նրա ազատապուրկ ազգերի վրայ, եւ դեկեմբրիստներ Թէֆլիսը, որ հարիւր տարիներից ի վեր սեւ քօղը երեսին արդած է իբր արքայական փառքի կարեւոր մի անդամ եւս պիտի պահէ իբր պահպանուրկ ճակատը «Մայրաքաղաք Վրաստանի» ազատազօծ տիտղոսով: Եւ մեր Հայաստանը, մեր Աբարատեան սիրելի Հայաստանը, իբր սահմանների մէջից պիտի վերակենդանացնէ իբր մեռեալ մայրաքաղաքներից լուսապսակը եւ Հայ ծերունին եւ պատանին, եւ Հայ ուսեալն եւ անուսը եւ Հայ մայրերն եւ կոյսերը, իրենց ձեռներով պիտի սահցնեն մի մայրաքաղաք չինքերով եւ հանճարներով, որպիսին Հայաստանը երբէք չէր ունեցել անցեալում, իբր փառքի մեծութեան դարերում: Ես եւ դու հաւատամեան չէ որ տեսնենք, բայց այդ օրը եւ այդ մեծութիւնը պիտի գայ ապահովապար, եւ Հայ ազգը պիտի ցնծայ մեծի ցնծութեամբ: Իսկ մենք պիտի ձեռք առնենք այն, ինչ որ վաստահ ենք թէ պիտի կարող լինենք տեսնել: Տուր ինձ

ձևոքդ, եւ իմ ձեռների հետ միասին կռնիք եւ կռիւնք Տաճկահայաստանի ազատութեան գործը։

— Ձեռքս տալիս եմ քեզ բոլորանուէր աոաջին դիւանագործ Հայաստանի. ես աքանչանում եմ քոյ հայրենասիրական զգացումներին եւ քոյ հզօր բարձրութեան վրայ։ Բոլոր հոգւով ես կրում եմ նոյն զգացումները եւ նոյն դաշտասիրի իրաւունացումը, սակայն իմ հայեացքները լաւատես չեն, իմ յոյսերը փայլուն չեն եւ ոչ իմ հաւատքը հաստատուն. իմ աչքերի, սրտի, եւ հոգւոյ մէջ զրանք չկան այնքան, որքան քոյ մէջ։ Բայց դու որ ունեւոր ես եւ քան ամենայնի հնարաւոր հասանելու համարատարանական կրթութեան, եւ գոհում ես այդ քոյ ազգի հայրենիքի վերականգնման համար, ես անկանգնելիօրէն կորցրի ուսմունքս, եւ համալսարանական կրթութիւն ի սպառ անհնար է իմ անուեւոր հանգամանքում, հետեւաբար վաստութիւն պիտի լինի իմ կողմից, առանց գոհելու աչքինչ չհետեւել քոյ վսեմ օրինակին. պիտի թողնեմ զերք եւ զրիչ, եւ քեզ նման պիտի բռնեմ մուրճ եւ երկաթ կռելու եւ կռիւելու համար Հայ Յեղափոխութեան գործը։

Այս հայեացքով, յոյսով եւ հաւատով մխացանք մխեանց հետ Գալուստ Աղբեան, Միքայէլ Յովհաննիսեան, Ալիքսանդր Շահազիզեան, ես եւ մի երիտ երեք տղաներ։ Առաջինը եղաւ անուանի Երեւանի, Ատրպատական-

նի եւ Վանայ եւ արեւելեան Թուրքիոյ ժողովրդային դասի պատանիներուն եւ երիտասարդներուն մէջ, որոնք հակամէտ էին յեղափոխականութեան ոգիով տոգորուելու պատրաստ։ Եւ ճանաչէր զանոնք։ Նա մէկտ տարիներ եւ մնաց այդ ոգեւորութեան մէջ, եւ եղաւ նրանց մէջից առաջինը ապառնալը 1914ի հայաջինջ կոտորածների մէջ։ Աշխարհասիրը ուսուցիչ յեղափոխականների մէջ ոչ ոք աւելի իրաւունք ունի եւ արժանի է կոչուելու ճըշմարիտ յեղափոխական քան այս ազնիւ մարդը, այս անշահախնդիր եւ անբիծախնդիր վանեցի հոգին։ Իւր կեցուածքի ձեւերով եւ չարժումներով, եւ իւր խօսելու մեղմաձիգ եղանակով, նա նման էր հայրապարտ զօրավարի։ Եւ նոյն դաղափարի համար լոկ զդացումով պինուած զօրավար եւ պինուորներ, եւ նրանց բոլոր ընտանիքները մահացան, իրենց արիւնով ծածկելով արդէն ազատ Հայաստանի հողը, որ դարերից ի վեր մխիթարում էր իւր երեսի վրայ ցանցառօրէն մնացեալ եւ ապրող հայ մարդոց եւ կանանց, ծերոց եւ տղայոց հատու եւ կսկծուղ առնաքայլերի երջանկատուր չոյացումով։

Երկրորդն՝ Մխքայէլ, հանդարտախօս, մեղմաժպիտ, կլոր փայլուն աչքերով, եղաւ փայլուն դրական ասպարէզի վրայ Նարդոս անուանափոխ համարով։ Երիս անդամ անուայ նրան յետագայ կեանքի ընթացքում։ Մէկ՝ երբ

նոր էր սկսել զգալ ինքն իւր մէջ թէ զառնալու էր ինքնասպառած զրպէտ, եւ կարծում էր թէ իւր ընթերցողները երեւում էին հիանալ իրեն: Եւ երկրորդ անգամ՝ 1913 նոյեմբեր 26ին մատչ մատուցած թերթի խմբագրական անեակը, ուր անպանի առաջ սեանել էի երկու ամիս առաջ բարեկամ խմբագիրը բազմայարգի եւ բազմարուա Էֆօին, վերստին սպասում էր սեանել նրան, բայց նրա սեղ նստած սեսայ մի ուրիշն, որ անմիջապէս ոտքի ելաւ, յուսալքուսպէս ինձ, համբուրեց ինձ: Ես չուարած էի թէ ո՞վ էր:

— Նարդոան եմ. անմիջապէս քեզ ճանաչեցի, երեսդ չատ չէ փոխուել, թէեւ երկար, չատ երկար սարիներ են անցել այն օրից որ սեսնելութեանդ վերջին անգամ: Զարմանալի է, ճիշդ ժամանակին եկար, այսօր հեռագիր սուացանք Լոնդոնից թէ Լինչը մեռել է, լաւ ճանաչում էիր նրան եւ փափաքելի է որ գրես մեզ նրա կեանքի մասին:

Ոչ մէկ մարդի համար այնքան սէր եւ յարգանք չեմ սեսնել կեանքումս, որքան «Ազմենոյ»ի հեղինակ՝ Լինչի համար: Շանթահար եղայ: Հեռագիրը նորէն եւ նորէն կարդացի, եւ չէի կարողանում հաւատալ: Դեռ երկու չարաթ առաջ թերթերում Լինչի ներկայացուցիչը բերից հիւրանոց լինձ նրանից մի նամակ, վերջին ձեռագիրը այդ պատուական ձեռքից:

Այդ վերջին անգամն է որ սեսայ Նարդոան:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Բաժանուեցայ հին ընկերներս, եւ Գալաթիայի Պրոպէկտի վրայ անհատական քայլերով, կոկորդս խեղդուած էր հեկեկանքից, եւ արտասուքը կաթում աչքերիցս: Ի՞նչ էին մըտածում արդեօք անանոցները իրենց անվրդով սրտով, եւ անտարբեր աչքերով: Նորդոս անուանի իր ընթերցողներին, ինձ համար մխանդամայն անմոռանալի իր ինձ առած ողբերգական լուրով, մի կեանքի մասին որ այնքան Թանգ էր եւ սիրելի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ—ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՁԻՆԱԳՈՐԾՆԵՐԸ

Մեր խառնիճաղանջ դէմքն էր Ալեքսանդր Ծառուրեան, Ազնանի եւ իմ խանդակաթ ախոյեան եւ արուագին համակրանաց մեզամատչելի անձնաւորութիւնը: Ինչ որ մենք զրուցեր էինք մեր ուելի սեթեւեթուքեան քան ուրախագիմ ընկերոջ վրայ, նրա մահից յետոյ, մանաւանդ Ֆ. Հայասանի մէջ, բանասանեղծութեան սիրահարները զրուցեր են Ալեքսանդր Ծառուրեանի անուան հանդէպ, եւ Խորհրդարին Միութեան հայ գրասէրների մէջ, գժուար թէ գանուի մէկը, որ չգիտենայ նրա անունը:

Երեք գաղափարական գինակիցներ, անուանի գանազան ուղղութեամբ, երեքն էլ մահացան, այլեւս չեն ունենում իրենց գրչի յարգանքի երեսները, եւ չեն լսում իրենց գովեստների խօսքերը, բայց իմ սիրոյ եւ համակրանքի այս տողերը պիտի կարդացուին նրանց հոգեկան աչքերով, եւ մարմնաւոր աչքերով նրանց, որոնք գիտեն յարգել մեկին վաստ անձնաւորութիւնը, եւ միւս երկուսի մտաւոր արուագործութիւնները:

Ի սորին յառաջ եմ բերում մի գրուածք որ գրեցի Խորհրդարին Հայասանի Թանգարանի կառավարիչներից Յովհն Սարգիսեանի խնդ-

թանօք 1934ին, թայց չդրկեցի լուսագրնը պրե-
լու վախտքոլ, որ չհրատարակուի, եւ թերացայ
գրածս դրկելու մէջ:

Սիրելի Յարէն Սարգսեան

*Եթէ երբ եւ իցէ ձեռնարկէի գրել իմ արկա-
ծալի կեանքի պատմութիւնը, ինչ որ ստիպեն
մեռայ մի անկատար նպատակ, Ալէքսանդր
Մատուրեան իւր պատանեկան կեանքի տեղե-
կոյցը դէմքով այդ պատմութեանս մէջ պիտի
վայելէր որպէս իմ առաջին ազգասիրական ոգե-
ւորութեան երազների առաջին հերոսներից մէ-
կը: Իսկ երբ այժմ ձեռք եմ առել գրիչս նորից
հետեւելու ազգերը բացատրելու նորա յիշատա-
կին, դրա համար պարտական եմ Ձեզ: Գաղա-
փարը եւ թելադրութիւնը պատկանում է Ձեզ:
Այս պարագան ինձ մղում է խորհրդածելու թէ
մարդկային կեանքի տարօրինակութիւններից
մէկն է որ իմ ընկերական պարտքի անակնկալ
դէպքման նկրչնչողը պիտի լինէիք դուք որ ան-
ծանօթ էիք ինձ եւ հաւանօրէն անծանօթ Մա-
տուրեանին եւ յամենայն դէպս ծանօթութեան
ոչէ դեր եւ կապ չէիք ունեցել մեր երկուսի
տեղատարած կեանքի մթնոլորտում: Բայց իմ
դիպուածական ծանօթութիւնը Ձեզ հետ 1932
նոյեմբեր 18ին Յորհրդային Հայաստանի Բան-
դարանում, եւ այդ Բանդարանին օգտակար լի-
նելու ցանկութեանս հետեւանօք թղթակցու-
թեան հաստատումը մեր մէջեւ, պատճառ եղաւ*

կապել մեզ իրարու հետ, եւ այդ կապը առեղծեայ առիթը որ յարգանքի այս նշանով յաւերժացնէ ազատամարտութեան կայծերով լի համառօտ բանաստեղծի յիշատակը:

«Ալեքսանդր Մատուրեանի արխիվը այժմ Խորհրդային Հայաստանի Թանգարանումն է: Նրանում դուռնք ձեր լուսանկարը: Ի՞նչ կապ է եղել ձեր եւ մեր բանաստեղծի մէջ: Ինքներդ պիտի գիտէք ինձ: Այս հարցը մեզ չափազանց հետաքրքրում է»:

Զարմանք եւ յուզմունք վոթմարկեցին հոգիս երբ կարդացի ձեր մի նամակի այս անսպասելի յայտնութիւնը: Երբ ապա լսեցիք ինձանից թէ ինչ կապ է եղել ձեր բանաստեղծի եւ իմ միջեւ, ձեր թախանձագին ցանկութիւնը եղաւ որ ձեր Թանգարանի համար պրէի այս անթարգ եւ բաղդատօր անհետացեալի կեանքի մասին: Կատարելապէս արտակից եմ ցանկութեան հետ: Բայց ամէն անգամ որ խորհում եմ իրականութիւն տալ այդ ցանկութեանս, միտքս կանգ է առնում թուչելուց դէպի առաջ, եւ չուտում եմ թէ ինչ կարող եմ պրել որ արժանի լինի կոչուելու կենսագրութիւն, կամ արժանի ուսումնասիրութեան իրը կենսագրական նիւթ: Որովհետեւ մեր կենակցութիւնը եղել է չատ կարճատեւ՝ 1883ից մինչեւ մայիս 1884: Բայց թերեւս սխալ չգիտեմ ասելով թէ մարդկային կեանքի բարեկամութեան մէջ պատահական կեանքի բարեկամութիւնը հաւասարչէն ամենա-

քաղցրն է իւր անջնջելիօրէն վայլուն, եւ անջնջելիօրէն վառ յուշերով, մանաւանդ երբ այդպիսի կեանքը զարդարուած է եղել ասահարազարդ գաղափարներով: Այսպէս է այդ կարճատեւ պատանեկան կեանքի դեղագոյն հեռանկարը, որի առաջակողմէ վրայ վայլուն է պատանի Մաուրը իւր դունեթափ երեսով: Այդ երանելի չքնաղիկ յեսոյ, միշտ ապրեցանք, անջառուած հազարաւոր մղոններով հեռու միմեանցից բայց մեր մտքերը, սրտերը եւ զգացումները մնացին անբաժան միմեանցից, եւ լի միմեանց տեսնելու փափաքով: Եւ այս բարեկամական կեանքը քաղցրանում էր երբեմնակի տեսակցութեամբ Մոսկվայում, ուր հաստատուել էր Մաուրը, եւ ուր առիթ ունեցայ այցելել նախ Կ. Պոլսից 1891ին եւ ապա ուրիշ յաճախ Լոնդոնից 1903ից մինչեւ 1914: Բայց տեսակցութիւններից ամէն մէկին էլ լինում էր կարճատեւ, այնպէս որ այսպիսի խիտապէս անկապ կենակցութեան եւ լուռ հոգեկան հաղորդակցութեան հանգամանքում ինչ որ չանում գրել պիտի լինի ուրիշ վերացական քան իրականն՝ այսինքն լոյսի չորեր նորա կեանքից եւ ընկերական զգացման ցոլքը իմ սրտից: Արդ, այսպիսի մի գրուած արքան լոյս կարող է սրսիռել բանաստեղծի կեանքի վրայ, եւ արքան դոհացուցիչ պիտի նկատուի նորա կեանքով հետաքրքրուողներին, այդ թողուած է նոցա խորհրդածութեան:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Զեր եւ Դրապալատի վարիչ Ա. Մարտիկեանի նամակներից տեղեակ եմ թէ Խորհրդային Հայաստանի մատուռական առաջնորդները պատմ են հանրային մարդոց կենսագրութիւնները հաւաքելու եւ հրատարակելու կարեւորութիւնը: Մատենագրների, արուեստագէտների եւ հանրային այլ մեծ մարդոց կենսագրութիւնները եւրոպական բարձր ազգերի մէջ եղել են անսպառ ուսումնասիրութեան առարկաներ, եւ հազարաւոր այդպիսի կենսագրութիւններ կան պրուած. յաճախ մի եւ նոյն անձի մասին գրուած են բազմաթիւ կենսագրութիւններ, զանազան ժամանակներում եւ զանազան գրագէտներից, ինչպէս նաեւ բազմաթիւ եւ այլազան ուսումնասիրութիւններ նոցա գործերի մասին: Գրականութեան այս բարձրարժէք ուղղութիւնն է որ բանել է ձեր թանգարանը եւ յատակագիծն մեծ ուշադրութեան արժանի: Հոբիզոնը բաց է այդ ուղղութեան իրականացման համար: Զերդ քաղաքական եւ ընկերային կաշկանդանքներից, բարոյական եւ նիւթական հարածանքներից, թշուառութիւնից եւ անձնական անապահովութիւնից եւ այլեւս կազմելով մեծագոյն Խորհրդային Միութեան մի համահաւասար միաւորը հայ ցեղը չնորհազարգացած չլինելու անհրաժեշտ ինքնագարգացման յատկութեան ամէն դիւրութիւններով եւ հնարաւորութիւններով:

Հին եւ նոր անցեալում, նոյնիսկ այսօր

Խորհրդային Միութենից դուրս, հայ թևրուս ուսանողների մէջ ազգային ինքնաճանաչողութիւնը ազգային ինքնագոհութիւնը եւ չարաշարած ու չունեցած մտաւորական մեծութիւնը հայ ազգին վերագրելը չարունակում է մնալ մի անբաժելի սխալ: Նոքա, ազգեալ հանդերձ Եւրոպայի, Ամերիկայի եւ շրջակայ քաղաքակիրթ մթնոլորտում, ոչինչ են ուսանում նոցա կեանքից եւ ոչինչ ուսումնասիրում եւ իւրացնում նոցա մտայնի եւ նոյնիսկ ընթացիկ գրականութենից, ուստի եւ չարաչարում են սիրել խորհուրդ եւ խորհել իրենց լսողների եւ կարդացողների ազգային անաչառութեան եւ պատասխանատուութեան հրաւիրակումներով եւ դիպուածներով: Հայ գրագէտների այս ինքնախաբէական հոգեբանութիւնն է թևրեւս մի դիմաւոր պատճառ որ իւր մէջից չէ կարողացել արտադրել ո եւ է անուանի տաղանդ որ աշխարհական գրականութեան եւ արուեստի տապարէզի վրայ գրաւած լինի ո եւ է տեղ:

Սկսեալ Բրխտոսից ուր դար առաջ յոյն, խոտորակ եւ մատամբ հրեայ ցեղը աշխարհին տուած են այնպիսի մեծ տաղանդներ որ նոցա գործերը չարունակարար եղան մտաւոր լոյսի ուղեցոյցներ եւ զարգացման անունդ մէջին եւ նեղիայ դարերի բոլոր մեծ գրողների եւ արուեստագէտների համար: Այս ազգութիւնը այնքան մեծ էր, եւ նորա պէտքը նկատուած էր այնքան անհրաժեշտ, որ ինչպէս ուրիշ եւրո-

պահան նայնպէս եւ անգլիական ազգի մէջ զբաղաքներըը մանկութիւնից կատարելագործւում էին յունարէն, եւ յատներէն լեզուի մէջ ինչպէս երենց մայրենի լեզուների մէջ, եւ ոմանք՝ ինչպէս բանաստեղծ Ալեքսանդր Փոփ իւր 10—11 տարեկան հասակում կատարելապէս իւրացրել էր Հոմեր, Վիրգիլ եւ այլն. 13 տարեկան հասակում եղաւ մաաենագիր եւ 15—16 տարեկան հասակում անուանի բանաստեղծ էր:

Մեջին գարերից ի վեր յատկապէս Անգլիա Ֆրանսա եւ Գերմանիա ուսած են աշխարհին տիեզերական համբաւի բարձրացած հեղինակներ: Նոցա զարծերը թարգմանուած են ամէն ուսումնասէր ազգի լեզուին, եւ գանւում են ամէն թանգարաններում եւ հանրային եւ մասնաւոր կարեւոր մատենադարաններում: Մեր հին պատմագիրներից եւ նոր գրողներից անարգուած պարսիկ ազգի գրականութիւնն եւ արուեստը ոչ նուազ ծանօթ են, հետեւման արժանի են գտնուած եւ վայելում են քաղաքակիրթ ազգերի վերայիշեալ տեսակի հաստատութիւններում:

Բացի կրօնական ձեռագրերի մէջ եղած գրեթէ միօրինակ եւ ընդօրինակուած մանրանկարներից, ոչ անցեալում եւ ոչ ներկայում հայկական մաքի վայել չէ երեւում այդ տեսակից եւ ոչ մէկում: Լոյսը գրուանի տակ չէ պահւում: Ինչպէս ուրիշ ազգերից ծնած տպագրութիւնը իրենց լոյսերը ընդունակ են եղել տարածել ընդհանուր քաղաքակրթի աշխարհի վրայ, այն-

պէս եւս հայ ազգից ծնած տպագրիչների յոյսեր պիտի տեսուէին Հայաբնակեալ գաւառս մարզպետութեան վրայ, եթէ հայ ցեղից տիեզերական արժանիք ունեցող տպագրիչներ ծնած լինէին: Բայց հայկական դրամատիրութիւնը եւ արուեստը, սկզբից ի վեր իբ արտադրութեամբ եղել է ազգատ եւ անվտանգ: Այս պատճառով հանգամանքը այնքան ուժգին պիտի լինի հայ ուսումնասիրողի մտքին, որքան ուժգին նա տեսնէ մեծ արուեստագէտների գործերի օրինակները եւ կարգայ մեծ հեղինակների մասին արտադրութիւնները: Այդ գործերի եռանդուն հետազօտութեամբ, խոհուն ուսումնասիրութեամբ եւ համառների խրատուցմամբ միայն գրականութեան եւ արուեստի սիրահար հայ ուսանողը կարող պիտի լինի վեր բարձրանալ իբ նախապաշարների անհետանձելի ազգատմոութիւնից եւ հասնել հարուստ իմացականութեան արտադրիչ կարողութեան: Այսպէս լինելով իմ համոզումը, այս յոյսով եւ նպատակակէտով էր որ խորհեցայ իմ անձնական միջոցներով համառօտ հարստացնել Ոսկիպտիին Հայաստանի թանգարանը այնպիսի անդրիներէն եւ ֆրանսերէն գրքերով որ պատկերացնում են աշխարհահռչակ մտքերի եւ նոցա երկրորդականների արտադրութիւնները, որոց հնարաւոր ընթերցումով եւ ուսումնասիրութեամբ հաւատում եմ կարելի պիտի լինի անանձնել նոր Հայաստանի մէջ իմ յաւատրեալ գաղափարի իրակա-

նայումը, եւ հայ ցեղից եւս ծնունդ առնեն այնպիսի առեղծագործիչ մարքեր, որ պարծանք լինեն ոչ միայն իրենց ազգին, այլ ընդհանուր մարդկութեան:

Ինձ առիթ ներկայացաւ յեսագայ տողերով կենսագրական մի յօդ անկատար պատկերը տալ մեր ժամանակի մի համեստ բանաստեղծին, մատնելով որ ապագայ հայ կենսագիրները դարձ ունենան կենսագրել այնպիսի հայ բանաստեղծներ որոց հանճարարան բանաստեղծութիւնները իրենց գրքերի միջոցով ճառագայթեն Հայաստանից դուրս հեռաւոր աշխարհների վրայ:

⁂

Մարդկային հոգիները մի անակնկալ անթիւ եւ անվերջ բազմութիւն զարմացնում է աշխարհ եւ անյայտանում է աշխարհից:

Նոցա մէջ առնչի խմացականները ապրում են բարձր զգայարանների երազներով: Մէկը երազում է լինել աշխարհակալ եւ մեծահամբաւ Նապոլէոնի նման, միւսը ցանկանում է յօրինել գրքեր որոց մէջ իւր հանճարը զառնայ աշխարհի հիացման առարկայ եւ մեծահռչակ որպէս Շէքսպիրը կամ Միլտան, մի երրորդը բորբոքուած ազգասիրութեան կրակով երազում է մի օր իւր ազգի համար զառնալ մի Գարիբալդի բայց առարիքի յառաջացման հետ այս վառվռուն երազները սկսում են ժժգունել եւ մահուան զարտեան հետ անհետանում են այս մե-

ծախախտք կրպակներըն եւ թողում են անհանգիստ մէջ իրենց բոլոր վաճառականութիւնները միասին:

Այսպէս կրպակների մէջտեղից հազիւ մէկին յաջողում է հասնել իւր վաճառականութեան տարբեր կամ մէջին տարեմտներին: Եւ շատ հազուագէպ են այնպիսիք որ իրենց գործերի մեծութեամբ իրենց ողջութեան ընթացքին ձեռք են բերում իրենց համար անհանգստութեան պատկը, եւ իրենց կեանքի մտահոգը սկսում են իրենց տեսան անհանգստութիւնը:

Բայց կան եւ ուրիշ հեղինակներ, որոց մտից յետոյ նոցա համակրողները ցանկանում են անդնդալին անհետացումից փրկել սիրելի մտացնալի կեանքի մանրամասնութիւնները եւ նորա կենսագրական գծերի նկարագրութեամբ յաւերժացնել նորա յիշատակը յետագայ սերունդի յիշողութեան մէջ:

Այսպէս է Ալեքսանդր Ծատուրեան, եւ այսպէս պիտի երեւի նա ապագայի հայ ուսումնասէրներին որպէս պատճառութիւն ունենան կարդալ իմ այս գրուածքը եւ ուրիշ կենսագրական նորա կեանքի եւ բանաստեղծութեան մասին:

Թէ ինչ հանգամանքներ ներքեւ Հանդիպակեցայ Ալեքսանդր Ծատուրեանին այդ մի մթին կէտ է իմ խառնրդ յիշողութեան մէջ, բայց անմոռանալի է թէ մենք հանդիպեցանք միմեանց 1883ի գարնանը Թիֆլիսում եւ մեր ծանօթութեան հեղինակն էր Գալուստ Աբգեան Երեւան-

յի՝ նորածիլ սրտայոյզ հայ յեղափոխութեան ոգեւորեալ զոյգափարի առաջին պինդարծը։ Ռափայէլ Պատկանեանի յեղափոխաշունչ եւ հակաթրքական ոգով լի բանաստեղծութիւնները պինդվցրել էին նորա զլուխը, Րաֆֆիի վէպերից «Խենթը» խենթացրել էր նորա երեւակայութիւնը, եւ «Կայծեր»ը կայծակել էր նորա սրտի թելերը։

Այդ դրականութեան ազդեցութեան տակ Սուլթանը եւ Օսմանեան կառավարութիւնը վերածուել էին այնպիսի մի թղուկային ոյժի որ ամենայն դիւրութեամբ կարող էին ջարդ ու վշտեր լինել Կովկասահայ երեսփոխանների մի արշաւախումբի հերոսական հարուածների տակ եւ թէ այդ արշաւախումբը պիտի կարողանար կոթծանուած Սուլթանի հողի վրայ բռնեղծել խենթի երազած անկախ եւ երջանիկ Հայաստանը։ Գարուստ Աբոյեանի համայն էութիւնը ծծուած էր այս մտածումներով։ Զնայած իւր լսած երեւոյթին կրակ ու բոց գաղափարներին, նա բնութեամբ էր հեզաբարոյ եւ խաղաղասէր. զայրոյթ եւ յոյզ բացակայ էին նորա հանդարտ սրտից, եւ իւր կերպարանքի վրայ տառապածուած երազային մտածութեան հետ նա կրում էր երջանկափառ ժպիտ իւր նորարոյս մօրուքի տակ թելերով բծաւորուած ցրեներագոյն երեսի վրայ, եւ մեղմաշարժ կայծեր իւր աչքերի մէջ։ Հանդարտամտութիւն եւ յեղափոխականութիւն, խաղաղասիրութիւն

եւ պատերազմ մխաձուլուած էին այս քաղցրաբարոյ անձնուիրութեան բնութեան մէջ: Իւր ժամանակի սահուն մարդուն յեղափոխութեան մթնոլորտի մէջ նա ամենատգնեբ եւ ամենանախատրտմ տիպերից մէկն էր: Նորա մօլեանդ քարտնեբի առաջին աշակերտներից մէկը ևս եղայ, բայց չեմ յիշում ո՞վ էր առաջինը, Ալէքսանդր Ծառուկեա՞ն թէ ևս: Նա յիմնադրած էր «առիւծ» դպրոցների խրախնամման կարելիութեան մասին: Նորա անդուլ փոփոխքն էր սովորել դիւանագործութիւն, նորա փոյթն էր դառնալ հայ յեղափոխութեան առաջին դիւանագէտը, հաստատել դպրոցներ դիւանագիտարան, դիւել դպրոցի յեղափոխական խումբերը, եւ նոցա դիւու զօրութեամբ դրաւել Թրքահայաստանը եւ Թրքահայոց այս դժոխքը դարձնել երջանկաւէտ դրախտ նեբկայ եւ ապագայ հայութեան համար:

«Ծառուկ»ը եւ ևս ուխտեցինք հետեւել նորա քայլերին, եւ նորա հետ միասին սովորել դիւանագործութիւն: Իրրեւ նախապայման այդ նպատակին, մտանք Թիֆլիսի Արհեստագիտական դպրոցը, երկաթը ձեւակերպելու արհեստին մէջ վարժուելու համար: Յետոյ մեզ հետեւողներ դտանք մի լուի մնջիկ քմծիծաղով ապագ որի անունն էր Միքայէլ Յովհաննէսեան՝ Ռուսահայ գրականութեան յետագայ նշանաւոր Նարդոսը, երկրորդն էր բանաստեղծ Սրինգը որ ուրիշներից առաջ ինքն էր գովում իւր առանձ-

սրնեըը եւ ուրիշներից առաջ ինքն էր հետեւում իւր առանաւորների վրայ, եւ երբոյը եղաւ իմ պատրիկը Մերուժան Յարութիւնեան՝ հայ յեղափոխութեան թէեւ անհամբաւ բայց սմենառիւածալից դէմքերից մէկը։ Այս խառնից ամէն մէկս, թէեւ նպատակով միացեալ, տարբեր էինք բնաւորութեամբ եւ տրամադրութեամբ։ Բայց բնաւորութեան մերձաւորութիւնը եւ փոխադարձ համակրութիւնը ուժեղ էր Աւետեանի, Ծառուկեանի եւ իմ միջեւ, եւ մենք երեքս ջերմ մտերմութեամբ կապուած էինք միմեանց ինչպէս դաշակիցով նոյնպէս եւ ընկերակցութեամբ։

Զգեստի ի՞նչ էր պատճառը որ մեր ձեռնարկի մէջ չհետեւեցինք՝ Թրքահայաստանը չառած, կարծեմ նաեւ Ռուսահայաստանի հողի վրայ ոտք չդրած եւ հայ ժողովրդի իրական կեանքին անկենակից հետեւորդ Պետերբուրգում եւ Նոր Նախիջեւանում ապրող երտպահած բանառաւեղծին, որ թնդացնում էր ազգասիրութեան ամպերով փոթորկուած մեր սրտերը իւր որոտալից ոտանաւորով.— «Մեր բահերն էլ կ՚անեն նրանց չանաստակ»։

Երեւի մեր ազգային պրոխնեըում աւելի խելք կար քան մեր ազգային մեծազոյն բանաստեղծի գլխում։ Հաւանօրէն համարձեցինք խելացնորութիւն հաւատալ թէ բահերով պիտի կարենայինք չանաստակ անել Թուրք ոչխարութիւնը, ուստի եւ խելացութիւն կամ խոհեմու-

թիւն համարելնիք բահաչինութեան տեղ տալու հրացանաչինութեան արհեստը:

Գազախաբի պին էր որ նեբչնչից մեզ հանգեցուց պետրութիւն երբ ակսեցինք մեր առաջին քար ինքնան հասարակ եւ անհրապոյր դործնական դասը: Գալուստ Ալտնան մէջտեղը, նորա մէկ կողմը կանդնած Ալեքսանդը Ծառուբնան եւ միւս կողմը նա եւ մեր դիմացի կողմը Նարդոս, Ծնբուհի եւ միւսները չարուած էինք մի երկար սեղանի առաջ, դոնացներ մեր կուրծքերից վայր կախուած, խարտոցները մեր ձեռքերում, եւ ամէն մէկի առաջ ունենալով անհարթ քառակուսի երկաթի կտորներ ամրացած սեղանին կցուած վերամբարձ երկաթեայ ժանիքների միջեւ: Միջահասակ, սեւամորուք եւ ծագիահաւ դէմքով բարեժպիտ առաջ վարպետը բացատրեց մեզ մեր առաջին դասը թէ ինչպէս պէտք է բանէինք խարտոցը եւ ինչպէս պէտք է խարտոցէինք, թէ մեր պարտականութիւնը պիտի լինէր նախ ողորկել մէկ մակերեսոյթը այնպէս որ կարկինի տակ ամէն անկիւնները համահաւասարօրէն հարթ երեւէին, եւ այսպէս երկաթի ութ երեսները եւ անկիւնները հաւասար թէ առանձնապէս եւ թէ մէկը միւսի հետ համեմատաբար: Փոխանակ նայելու պատուոյ վարպետին նայում էի առաջիս բարձրացած մամլակի միջեւ ամրացած քառակուսի երկաթի կտորին: Մինչեւ այդ օր կեանքիս ընթացքում տեսել էի այլ եւ այլ ձեւերի եւ մեծու-

թևան երիաթի կտորներ: Բայց ինչպէս դաշտերի մէջ ցանուցիր հողի կոշտերը կամ փողոցների մէջ քարի կտորները անտպատուրիչ հասարակ բաներ էին երեւում աչքումս, այնպէս էին երեւում եւ երիաթի կտորները: Բայց նայելով այդ երիաթի կտորի վրայ սկսա տրտմել եւ հոգիս վհատանալ. նորա համ վրայ արած նեղչըչումը այդ րոպէին այնպէս էր, ինչպէս անմեղ ոտքս թևանս ժամանակ զղում էի եկեղեցի մէջ երբ նայում էի սուրբ Հաղորդութեան սկիհին եւ խաչակնքում երեսս խոր երկիւղածութեամբ:

Երբ մեր առաւ վարպետը հետացաւ մեզանից գոհունակութեամբ տեսնելով թէ ինչպէս մեր գլուխները խոնարհած եռանդօրէն եւ ուշադիր էինք տանում մեր խարտոցները մեր երկաթի քաւտիւսների վրայ, Գալուստ Ալտչեան բարձրացրեց իւր գլուխը եւ ասեց.

«Տղէք, հիմա համ է ձեզ դաս տալու կարդը: Ցիշեցէք մեր առաջին հայրենասէր Գարեգին Մուրատեանի (Մելիքսեդէկ արքեպիսկոպոս) «Ա՛հ օդնեա ինձ»ը: Քրիստոսի խաչը թևից վեր էր, շալակած բարձրացաւ Golgotha դեռ եւ այնտեղից վերկից մարդկութիւնը իւր մեղքերից: Մեր ձեռնարկին օգնող խաչը էս երկաթը պիտի լինի. էս երկաթեայ ծանր խաչը շալակած պիտի բարձրանանք Յեղափոխութեան լեռան կատարը եւ էնտեղից մեր անձերի զոհողութիւնով պիտի վերկինք Թրքահայ եղ-

բայրնեբին իբենց պերաթեան չգիտնեբից»:

Ալեքսանդը Ծառուբեան ցցելով իւր խոր-տոցը օդի մէջ իւր անուժել ձայնով բացատան-չեց. «Կեցցէ մեր Գալուստը որ հայբենասիրու-թիւն, յեղափոխութիւն եւ ազատութիւն իր-բար հետ մխացնելու պատչելի չնարհքը ունի»:

Անհանգարտ Ծերուն Յարութիւնեան խորտոցը երիտի վրայ էր հարուածում եւ ոտ-քերը գետնին էր արտում, նայում, հեզ գառի պէս, յոնի մնջիկ նայում էր մեզ աչքերը պար-զամտութեամբ եւ ատամերը ժպիտով վայբուն: Իակ ես մոքովս խորհրդածում էի ինքնապար-ծօրէն թէ երէկ ես լինէի խօտորը կարող էի լինել ուելի լաւ ճարտարապան քան Գալուստը եւ ու-ելի լաւ արարան քան Ծառուբը: Բայց չունե-ցայ մոքիս կարողութիւնը ապացուցանել լեզ-ուիս կարողութեամբը: Այս երիչտ քաջութիւ-նըս այնուհետեւ կեանքիս բոլոր քայլերում յա-րատեւեց իւր ճնշումը իմ կամքի վրայ բռնապա-տելով իմ մտածումներին լեզուն եւ ճառա-պայթները անթափանցելիօրէն կաշկանդուած մնալ իմ ուղեղի մէջ, եւ դրկելով այն վտանգ կա-րողութիւնից որ մարդկային լեզուի ամենամեծ զարդը եւ ամենաարժէր չնարհքն է:

Մեր զուարթալի ազմուկից հետաքրքրուած մեր առաջ վարպետը քմծիծաղով մօտեցաւ եւ ուղեց իմանալ մեր ուրախութեան պատճա-ռը: «Ապրիք էինք անում Աստուծոյ որ չնարհք եւ կարողութիւն տայ որ յաջողակ երիտիա-

պոլծնեը պառնանք», պատասխանեց Մատուրը հիանալի անմեղութեամբ: Ես չէի կարծում թէ Մատուրը կարող էր ընդունակ լինել ձեւացնելու այսպիսի արուեստական անմեղութիւն:

Կարծեմ 13—14 տարեկան հասակից ես հրաժարական էի տուել Աստուծոյ ազօթք անելու բոլոր սովորութիւնները, եւ այդ օր շատ չանցած համոզուեցայ թէ ոչ ազօթքի խոկ յաջողակ կենդանութիւն պառնալու համար, Աստուած չպիտի կարենար տալ ինձ բոլոր ճշմարիտ ինարհքը, որովհետեւ անհնարին էր որ ձեռնհաս չէին տեղեակ երկրաբանութեան համար: Դասից ակզբում այնքան պաշտելի երեւոյթ քաղաքական երկրի կազմը, դասից վերջում կորցրել էր իւր բոլոր խորհրդաւոր համայքը եւ իմ աչքում պատել էր այնքան հասարակ որքան հասարակ էր վողոցում ընկած մի երկրի կտոր: Երբ մի երկու ժամ խաբտոցելուց յետոյ կարծեցի թէ այդ առաջին մակերեւոյթը համահատուածարապէս հարթ էր, կարկինով քննելուց անտես որ սխալ էի, եւ մինչ խաբտոցով աշխատում էի ճշդել սխալ կողմը, ուղիղ կողմն էր ծռւում դէպի վեր կամ դէպի վայր: Հակառակ բոլոր ջանքերս այդ օր չյաջողեցայ երկրիս նոյնիսկ առաջին մակերեւոյթը խաբտոցել այնպէս հարթ որ կարկինը վրան դրած մէջտեղն ամէն անկիւններից համահարթ երեւէր: Յուսահատութիւնը սկսել էր տիրել սրտիս եւ յուսախաբութիւնը կարծես սրտէն խորտակելու վրայ էր իմ քաղցր

երգչները եւ վանեմ խղճալները: Գազափարային ոգեւորութիւնը սառել էր իմ մէջ, եւ հիասթափութեամբ կատարեալ էր: Զգում էի թէ ի զուր պիտի լինէր ջանալ դառնալ այն ինչ որ անկարելի էր դառնալ: Բայց այս զգացումս զգուշացայ ցոյց տալ ուխտակիցներիս որպէսզի նոցա աչքում չերեւէի վատասիրտ կամ ուխտադրուժ: Թէ նամանաւանդ նոքին յեղափոխութիւն արդեօք տեղի ունեցա՞ւ ընկերներիցս ոմանց մէջ, չկարողացայ նշմարել: Բայց յիշում եմ Գալուստը նամանաւ էր յոյժ ծանր զօրավարի՝ աչքերը լի բերկրութեան փայլով եւ իւր երկաթի կտորը վեր բռնած պարծանքով ցոյց տուաւ ութ երեսներն էլ անթերի հաւասարութեամբ յղկուած: Ծառուի մէջ չկար նոյն ոգեւորութիւնը, որովհետեւ արդէն նորա բնաւորութեան մէջ չկար արտացոլացող աշխուժութիւն· բայց հանդարտ չարժումով, անոգեւորեալ ձայնով եւ ախորժոյշ աչքերով ցոյց տուաւ իւր առաջին երկաթագործական աշխատութեան վառքի պտուղը: Նարդոս եւ ես մեանգն էինք որ պարծենալու տեղ չունէինք, զգում էինք մեր նուաստութիւնը եւ նախանձի զրկում մեր ընկերներիս:

Բայց այս արտաբերութիւնը երկար չտեւեց· օրերի ընթացքին հետ ձեռներս սկսում էին վարժուել յաջողապէս խարտոց գործածելու արհեստին մէջ: Վհատութիւնս փոխւում էր վստահութեան եւ հաւատաք զօրանում էր դէպի

այն գազափարը, որի նկարչման տակ խոբատը գտել էր մեր պահանջի որոնումը: Ինչպէս երեխան հրճուանք է զգում իրեն նուիրուած մի հրապուրիչ խաղալիքի համար, այնպէս եւ նա հրճուանք էր զգում ամէն անգամ որ մեծ զբաղուածութիւնից յետոյ յաջողում էր երկաթը ուղղուել պահանջուած ճշդութեամբ: Բայց կարծեմ մենք ամէնքս մեր համեմատական յաւակնութեան համար պարտական էինք Գալուստ Ալոյեանին, որ մշտապատրաստ ժպիտը երեսին եւ մեղմաշարժ վայրը աչքերում խորհրդաւոր չնաւերով յեղյեղում էր այն քաջալերական նշանաբաններն որ մեր խորհրդաւոր նպատակի որոնողներն էին:

Մեզանից մի քիչ հեռու դրուած կախ, աչքերը խոբատոցին սեւեռած աշխատում էր Ինձ յաւածանօթ եւ ինձանից աւելի տարեց մի նիհար եւ դէմքերես հայ պատանի: Բայց նա անջատ էր մեզանից ինչպէս տարածութեամբ, նոյնպէս եւ գաղափարով: Այդ գաղափարային օրերում մեզանից ոչ ոք կարող էր երազել թէ Ալոյեանի շուրջը հաւաքուած գաղափարակիցներս պիտի գտնայինք ուխտապրուժներ, եւ տարածութեամբ անջատուած եւ գաղափարով անհատարդ այդ հայը միայն պիտի յաջորդէր մեզ քայլելու Ալոյեանի հետ դէպի նորա երազած նպատակակէտը- Ալէքսանդր Քաֆտանեան:

Գալուստի մտերիմ բարեկամութիւնը եւ գաղափարական միւս պինուրների հետ գաղա-

բաւ էր մեր աշխատանոցի անդանի առաջ։ Բայց Ծառուքեան եւ ես անբաժան էինք նորա հետ ընչցէս այդ դպրոցական անդանի նոյնպէս եւ նորա կեցուածքի առաջ։ Գալուստ անէր մի հօրեղբօրորդի, Ալեքսանդր Այդեան. երբ հանդէպ անեցած սէրը եւ անձնուիրութիւնը այնքան պարծանալի էր որ միայն կարող էր գոյութիւն ունենալ ամենաօրինաւոր եղբայրների մէջեւ, ոչ ոք կարող էր կարծել թէ նորա հօրեղբօրորդիներ էին եւ ոչ թէ եղբայրներ։ Այդ միջոցին նա յաջող ցուցնի վաճառական էր եւ սչնչ էր խնայում վաստակելու ունենալ ուրախ հիւրերով շրջապատուած լիառատ սեղան։ Ծառուքը եւ ես նկել էինք միասին անդամներ այդ առաւոտեան հիւրասէրի ախորժակաբեր սեղանին, մանաւանդ չարաթ եւ կիրակի օրերը։ Տեսարանը Ալծրունիի կարմանոտարայումն էր ուր էր Ալեքսանդրի գործատեղին եւ բնակարանը։ Մեզ համար, մինչ կեցուածքը պատրաստուում էր, ամենաժողովրդական անձն էր խոհարարը, Աբեսաակէս Ագուլեցի, չիլամօրուք, կարմրագէմ, նիհարահասակ եւ երիտասարդ մի երեսուսարդ որ պարծանք էր դնում իւր կատարած կերով եւ իւր դհունակութեան ծիծաղի հետ շրթունքները բացուում էին ցոյց տալով աւաջին խոշոր դուրս ցցուած ատամները։ Գալուստը խօսում էր նորա ետեւն գովասանական եւ խոսքնատիպ խօսքերով. «Դէհ, քեզ անանիմ, Ա-

բնաւակէս, զօր տուր չնորհքիդ եւ մի անհնման չխրթմամ եւ լռդպաթին վրաւ եկիր մեզ համար. եր ազատենք Հայաստանը անդրամ տաճկի ձեռքից քեզ կը դարձնենք մեր անկախ Հայաստանի խոհարարապետը»:

Ինչպէս մենք այդ միջոցին ազատամօրէն հաւատում էինք թէ մեր չինելիք գէնքերով պիտի կարողանայինք ազատել Թրքահայութիւնը Թուրք կառավարութեան լուծից եւ առնդել մի անկախ Հայաստան եւ կարծում Մայրաքաղաք, այնպէս եւ Աբխաստակէսը հաւատում էր Գալուստի խոստումին, եւ երազում էր այն վստաւոր օրը եր պիտի բարձրանար այդ նախանձելի գերքին:

Մենք մեակը չէինք այսպիսի գնորքներով օրօրուող, այսպիսի մտայնութեամբ ոգեւորուել էին ոչ միայն մեզ նման նորաթոյս ուսեալներ այլ եւ շատ նորահաս գրագներ, ուսուցիչներ եւ զանազան դասի երիտասարդներ: Թուրքիան կործանելու եւ նորա հողի վրայ նոր Հայաստան հիմնելու գաղափարը եղել էր մի խելացել գիւցազներգութիւն. եւ ապրում էինք մի խելահրաշ ազգասիրական գինուորութեան շրջանում. եւ գաղափարի գինուորութիւնը դառնում էր աւելի գլուխ պատճառ եւաւելի խելքը գլուխից թռցնող եր զուգընթանում էր կարմիր գինիից ծնած գինուորութեան հետ: Այն խնջոյքները որ վայելում էինք Ալեքսանդր Աւետեանի հիւրասիրական ոգեւ նեղքեւ միշտ լի

էին այս զուգընթաց դիմումութեան բնկերութեամբ: Այս կերտուածները ընթացքում մէջ ընդ մէջ մեր բերանները կանդ էին առնում կերակուրը ծամելուց եւ դիմին կուլ տալուց, եւ ի վերջոյն մեր յոգնած կոկորդներից դուրս էին ժայթքում բուռն ազգասիրական երգեր, որոց մէջ ամենասիրելին էր. «Մեր բահերն էլ կ'անեն նրանց չանասատակ»ը:

Այսպիսի երգերը վերապահուած էին ի պատիւ մեր խղճալացած մեծ ազգասէրների կնոջացներին. դրա էին Ներսէս պատրիարք Վարժապետեան, Թրխմեան Հայրիկ, Զամօտա Քաթիպա, Գրիգոր Արծրունի, Բաֆֆի եւ նոցա նմանապատիւ մոլորակները: Մեր սեղանից բացակայ ազգասիրութեան այս կուռքերի ներկայ սեռյեանն էր Գալուստ Սէյեան, եւ նա չէր կարող թոյլ տալ որ կարմիրը կանծուէր առանց այս պաշտելեալ մարդոց հոգեւոր մասնակցութեան: Սեղանի Թամադայն, այսինքն կառավարչի հրամանով դիմիով զեղուն բաժակները վեր բռնած եւ մեր աթոռներից ոտքի կանգնած պարա էինք մինչեւ վերջին կաթիլը խմել երբ կարդը Թրքահայոց փրկութեան այս գաղափարական գործիչների կենացն էր: Եւ ամէն մի կենացից յետոյ Թնդացնում էինք օդը մեր որոտաձայն երգերով:

Մեր այդ որոտալից երգեցողութեան դիւցազն էր Երեւանցի մեծահասակ չաշլիկ եւ մշտազուարթ Դարչոն: Բոլոր մխանների ձայները

կոչում էին նորա մեծահնչեղ ձայնի մէջ: Մեր մէջ բնութեամբ ամենահանդարտը եւ մտախոհը Ալեքսանդր Մատուբեանն էր: Բայց այդ խանդավառ կերտւածքի մթնոլորտին նորա տկար ոգին զօրանում էր, թախծալից դէմքը պայծառանում էր եւ երազուն խաշտր աչքերը շողում էին երջանկութեան կայծերով: Բայց այս առերեսից նշաններից չէին ծնում աշխուժութիւն եւ ոգեւորիչ չարժումներ, այլ միայն խաղաղ պահանջկութիւն. ոչ ոք միգանից զրաւում էր այնքան համակրութիւն իւր վրայ որքան նա: Մեր բոլոր խնջոյքների մէջ նա էր ձրդոգութեան կեդրոնը: Ես չէի նախանձում նորա երաւամբ նախանձելի այդ դերքին. զուտ էի թէ նորա մէջ կային առաւելութիւններ կամ յատկութիւններ որ տալիս էին նորան այդ գերապանցութիւնը: Ես զուրկ էի այն չնորհից որ նա ունէր. գինելից ոգեւորութեան առաջին րոպէներում յաճախ մեր ամէնի ձայները ուղղւում էին դէպի նա, մեր սեղանի առանձին կրպակը: «Դէհ, Մատուր ջան, կարդը քեզ է, ձայնիդ զուրգան»: Նորա ձայնը եւ յատուկ երգերը անհամեմատ էին մեր ուրախալից մթնոլորտին, նորա տխրութեան երգեր էին եւ առկայն մի չքա սիրում էինք լսել: Սեղանի վրայ ապտուկը զադարում էր, զուարթ դէմքերը առնում էին լուրջ արտայայտութիւն եւ խոր լռութեան մէջ մաքի էինք անում նորա մելամաղձոտ ձայնին: «Ձայն տուր ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես»ը նորա սր-

բաներ կրկն էր: Բաւան ծախերի միջով պտչում էինք. «Կեցցէս Ծառուբ, չատ ապրես»: Այդ բոպէներին նորա սիրտը կուրծքը կարծես ուռում էր հպարտութեան չափով եւ երջանկութիւնը ճառագայթում աչքերի մէջ:

Այդ ժամանակ Կովկասի եւ Ռուսիոյ այլ մասերի հայոց հարուստ եւ պէքատ, ուսեալ եւ անուս խաւերի մէջ Թուրքիոյ հայերը Թուրքիոյ իշխանութիւնից ազատելու գաղափարը եղել էր մի անսակ սարսափելի ախտ. ապրում էինք ապշասիրական դիմադրութեան մի չքնաղում: Իսկ մեր սեղաններում բնականաբար ուժեղ խանդ էր այդ գաղափարի դիմադրութիւնը, եւ դիմելից բաժակները մէկը մեսի հանելից, միջանկեալ երկերով, զառաջիւում էին Ներ-սէս Վարժապետեանին, Խրիմեան Հայրիկին, Բամբաս Քամխեպայի, Դրիդոր Արծրունիի, Բաֆֆիի եւ նմանների կենացներին եւ ամէն մի կենացի համար մեր երգիչը առիթուած էր իւր ձայնով գոհացում տալ իւր ազնուական ունկնդիրների կռչերին: Դրիդոր Արծրունիի եւ Բաֆֆիի միջեւ յատուկ եկած դժուութիւնը եւ պատահարով պատճառ եղան որ Բաֆֆիի անունը սկսենք նսեմանալ եւ նորա կենացները ընդունել ազգասիրական սեղաններից:

Գալուստ Աղոյեան մեր սեղանից բացակայ այդ ազգասիրութեան իգէալների ներկայ ախոյեանն էր եւ չէր կարող թոյլ տալ որ կարմիր գինին կոնծուէր առանց այդ նուիրական մարդոց հոգեւոր մասնակցութեան:

Ալեքսանդր Ծառուբեանի մէջ այդ զգացումը խանգարուած չէր: Իսկ ես զուրկ եմ եղել զգայարանական մօտեցողութենից եւ միակողմանի զատանքներից: Եւ դուցէ այդ է պատճառը որ կեանքի տարերքում չեմ կարող եղած լինել կատարեալ: Իմ կատարեալութիւնը եղել է իմ պատրաստութիւնը, եւ հետզհետէ որքան աւելի համոզուել եմ մեր կատարեալութեանց ներքին կեանքին եւ գործին այնքան աւելի եւ աւելի տարակոյսի եմ դաշել իմ ընտրած ուղղութիւնը:

Թէեւ հակառակ մեր փոքր տարիքին մեծ գործակիցներին նմանից էինք, բայց խոհակից շատ ապէս էինք այդ մեծ գործիչներին մէջ որոց նմանուել ուզում էինք:

Մինչ մի կողմից տրտում էինք թէ Թուրքիոյ հայոց կեանքը տարիական էր, անհանդուրժելի եւ դժոխային, միւս կողմից Կ. Պոլսի հայ թերթերից նոյնիսկ Գրիգոր Արծրունիի «Մշակ»ում տրատարակուած յօդուածից եւ թղթակցութիւններից տեսնում էի թէ Կ. Պոլսում կար Սահմանադրութեան Ազգային ժողով ուր նրանախոհականները ազատօրէն ճառում էին եւ քննադատում էին ազգային հարցեր, հայ թերթեր համարձակօրէն գրում եւ քննադատում էին մինչեւ իսկ Թուրք կառավարութիւնը եւ Պատրիարքը համարձակութիւն ունէր խնդիրքներ եւ բողոքներ մատուցանել Թուրք կառավարութեանը:

Այս իրականութիւնները անհամապատասխան էին «Մշակ»ի, Գամառ Գաթիպայի, Բաֆֆիի եւ մեր այլ ուսուցիչների քարոզներին: Եւ իմ հաւատքը անդիտակցաբար սկսում էր խախտուել դէպի իմ դիմադրածութեան զգալատրը, եւ թրքահայութիւնը թրքական դերութիւնից ազատելու ցնորքը:

Որոշեցի գրժել ուխտս, մէկդի նետել խաթաղը եւ երթալ Կ. Պոլիս աչքերով տեսնելու Սուլթանի յուժի տակ հնձող թրքահայութիւնը: Իմ որոշումը յայտնեցի Ծատուրեանին: Ներկաեցի որ նոքա մէջ եւս հաւատքը սկսել էր խախտուել, եւ զգում էր որ դիմադրածութիւնը իւր կոչումը չէր:

Աւելի տարբեր ուղղութեամբ էին թռչում նոքա իզձերը: Նոքա մէջ երեւում էր ձգտումն ծանօթանալ հայ նահւ վրացի յայտնի գրագէտներին հետ, ունէր համաթձակութիւն գործադրելու այդ ձգտումը, եւ արդէն կազմել էր մի քանի այդպիսի ծանօթութիւններ: Մի ուրիշ անդուստ իզձն էր թատրոնը. յաճախ ինքն երեն ինտայում էր իւր սենեակից եւ գնում էր տեսակ սենեակ թատերական ներկայացումներ եւ երաժշտական համերգներ: Եւ իւր հետացումը մեծ էր երբ հետեւեալ օր պատմում էր ինձ երաժշտութեան կամ դերերգութեան իր վրայ թողած քաղցր տպաւորութիւնը:

Այսպիսի գեղարուեստական ճաշակով էր

ապրեալ իմ անթաժան ընկերոջ բնութիւնը, երբ 1884ի մայիսին բաժանուեցայ նրանից եւ Գալուստից եւ ճանապարհ ընկայ դէպի Կ. Պոլիս, ուր շատ չանցած ընդունուեցայ նորահաստատ «Արեւելք» կրօնաւոր հայ օրաթերթի մէջ իբրեւ խմբագրութեան անդամ առաւօտեան յուրերի համար: Խոստմանս համաձայն Կ. Պոլիս հասնելուց գրեցի այդ երկու ընկերներիս, որոշհետեւ մեր երդումն էր որ մեր բաժանեալ կեանքում մեր ընկերական կապը անխզելի մնար: Մի ժամանակ Գալուստը գրեց Տուրյից մի պանծալի նամակ թէ վերջապէս գտնուում էր կինոպատրաստութեան մայրաքաղաքում իւր անհատան նպատակին հասնելու համար՝ պատնոյու կատարելագործուած կինոպրոյեկտոր: Իսկ Ծատուրից առաջայ նամակ Մոսկվայից՝ իւր յանկարծ հեռանալու նպատակակէտը:

Այսպէս ուրեմն թէեւ մեզանից երկուսը արդէն գարձած անհետացաբիմ մեր ուխտին, բայց այնուամենայնիւ մենք երբեք էլ չարուեստակեցինք մնալ հաւատարիմ մեր ընկերական պատգամի պահապանը մինչեւ ի մահ, եւ ես մնում եմ հաւատարիմ նոցա յիշատակին, նոցա մահից էլ յետոյ:

Գալուստը պարբերաբար գրում էր իւր յաջողութեան մասին կինոպրոյեկտութեան արհեստին մէջ ի նպաստ թրքահայութեան ազատագրութեան, համեմելով այդ նամակները իւր սիրային անթափանցութեանց տատասկներով Տուրյի առաւտհինների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Իսկ Ծառուբեանին վիճակուել էր դառնալ պաշտօնեայ ժամհարեան եղբօրց յայտնի բանիւմ: Վշտերի յիշատակները եւ թարմ երեսաստղպատական սիրոյ տանջանքները սկսել էին նորա մէջ ծնեցնել եւ երեւան հանել բանաստեղծութեան արմատները:

Այնպէս պատահեց որ 1891ի դեկտեմբերին գնացի Պետերբուրգ. Օրէօրից գրկածս հետապրին համաձայն Ծառուբեան ապրում էր ինձ Մոսկվայի կայարանում երբ հասայ այնտեղ: Այդ առաջին անգամն էր որ տեսնում էի նորան եօթ եւ կէս տարուայ բաժանումից յետոյ: Նախկին պատանեկական երեսը այժմ ծածկուած էր սեթեւեթոյն մօրուքով, դլուխը հրապուրիչ էր վար իջնող սեւափետ մազերով, հասակը երեւում էր աւելի բարձր, դէմքը աւելի առոյգ եւ կեցուածքը աւելի համարձակ եւ անձնավստահ: Այդպէս էր իմ առաջին ապտակութիւնը տեսնելով վարձքի ընկերս իւր երեսաստղպատութեան կերպարանքի մէջ: Տարու ինձ իւր բնակարանը, յայտնեց որ կարդացուած է որ նոյն երեկոյ պիտի ընթրէինք վաստատան Սահեան Մամիկոնեանի հետ, որ տեսնում ծանօթ էինք իրար հետ իրր Շէքսպիրեան պերսոան հանդուցեալ Պետրոս Ադամեանի վերապարձ բարեկամները, եւ թէ ընթրիքին ներկայ պիտի լինէր պրօֆէսօր Գրիգոր Խատիսեանց որ այդ ժամանակ առիւծին վերատեսուչ էր Լա-

պարեան ձեմարանի եւ որի հետ ծանօթացել էի Կ. Պոլսում: Նա վերադարձաւ իւր գործին բանկը եւ ես մնացի հանդամանալու գրաւչունչ ճանապարհորդութեան յոգնութիւնից: Երբ վերադարձաւ գործից յայտնեց թէ Մամիկոնեաններն երթալը յետաձգուած էր յաջորդ օրուան, որովհետեւ իւր մեծաւորը՝ Խոհակ Ժամհարեան՝ խմանալով որ իւր՝ Մառուբի՝ պատանեկութեան ընկերն էի, չատ փափաք էր յայտնել որ այդ երեկոյ իրեն երթայինք կերակուրի:

Մի բանկիրի այսպիսի վարմունքը, իւր պաշտօնեայի մի ընկերը տեսնելու եւ հրաւիրելու այսպիսի արտայայտիչ վարմունքը ինձ բաւական զարմանք պատճառեց, որովհետեւ դիտէի որ դրամատէրերը առհասարակ խելացի էին եւ իրենց ծանօթութեան արժանի էին համարում տալ կամ նուազ իրենց պէս դրամի տէր եղողներին:

Ժամհարեանը ինձ հետ չի վարուում որպէս իւր առաջադասին, այլ իրրեւ իւր հաւասարին, եւ ես էլ խօսում եմ նրա հետ իրրեւ իրեն հաւասար մարդ: Մենք սորվեցրել ենք մեր բուրժուազիային յարգանք զգալ մեր ազատութեան եւ ինտելիգենցիայի հանդէպ, ցանկութիւն են յայտնում մասնակցել մեր մտաւորական ամէն ձեռնարկներին: Այս կարեւորութիւնը եւ յարգանքը նրանք ցոյց են տալիս, թէկուզ իրենց գործում լինեն անկեղծ կամ կեղծ: Մեր բոլոր հարուստները սկսած Ժամհարեանից,

մեծ ոճներին, յատկապէս Ծնունդին իրենց անպատակից են հրաւիրում բոլոր ազգաս եւ անբնաւանիք հայ ուսանողներին:

Գաղափարի յեղափոխութեան ոգին է որ տեւնում էր Մասուրեանի այս պատմայաստութեանց մէջ: Թրքահայոց ազատութեան համար յեղափոխական գաղափարը մէկիկ գլուխ ինձ թուում էր թէ գտել էր բնիկ յային գաղափարի կուռ յեղափոխական: Յեղափոխական իր տեսած կեանքի համար եւ իր ապրած երկրի վրայ, եւ ոչ թէ յեղափոխական իր չտեսած կեանքի եւ իր չապրած հողի վրայ:

Առաջին անգամն էր որ պատիւ պիտի ունենայի վայելել մի բանիի տիրոջ ծանօթութիւնը եւ հիւրընկալութիւնը: Այդ կարգի մարդոց մասին իմ այդ տարիքում եղած անձնիք տհասարար պատասխանը գաղափար ունին, կարծում են սովորական յատկութիւններից վեր յատկութիւններով մարդիկ: Այս մտածումներով էր որ ձմեռնամուտի մթութեան մէջ նեղ մտանք ժամհարեանի լուսապարզ բնակարանը: Լայնաթաղի ընդունարանը իր սիրուն ատաղձով եւ մաքի պատերով հերոսական գրկեց ոչինչ կը նկատացնէր իր պարսնակութեամբ, դեռեւ վրայ վազած եւ պատերից կախուած գորգերը, պատերի կտրքերում մէկիկ ուրիշ սիմանները իրենց մատաքատպատ կլոր բարձերով զերազանցօրէն պատկերացնում էին պարսկական ընդունարանի երեւոյթ, եւ հիւրընկալը

ինքն էլ առաջին ապաւորութիւնից նկատեցի որ սրտատաց, անյաւակնոտ, քաղցրախօս եւ պարզասէր Ղարաբաղցի էր, Ղարաբաղցիի ձայնով եւ ոճով խօսող: Հարազատ Ղարաբաղցի էր դէմքով, լեզուով եւ խօսելու մանրմասան ձեւով: Այս մթնոլորտը բնականաբար ինձ նեղչընչից զգալ տրվէս թէ մանրմասան մի մարդի ընկերութեան մէջ: Իւր կնոջից եւ մէկ եղբօրից զատ ուրիշ հիւր չկար: Երկու նշանակալից խօսակցութիւն ունեցանք այդ երեկոյ, երկու խօսակցութիւններից եւս ապաւորուեցայ այդ հոյ մարդի մասին անմոռանալի յարգանքով եւ դնահատութեամբ իւր ազգասիրտ գաղափարութեան համար: Եւ երբ յիշում եմ այդ երեկոյեան իսահակ Ժամհարեանը եւ նորա ապանութիւնը Դաշնակցական կուսակցութեան ձեռքով գործուած յանուն ազգասիրութեան, եւ մինչ մտածում եմ թէ այդ ապանութիւնը ոչ թէ ազգասիրութիւն այլ ամենազազրելի եւ ամենապատասխանելի մի ոճրագործութիւն էր, պարզապէս զրամ չտրթնելու նպատակաւ:

Ես զգացի թէ ինչու ինձ տեսնելու մտանաւոր վտանգ էր ունեցել: Ընթրիքից յետոյ խօսքը դարձաւ Թրքահայոց վիճակի եւ նոցա ապահովութեան եւ հայ յեղափոխական կազմակերպութեանց մասին: Ոչ թէ իւր լեզուով այլ իմ լեզուով դրեթէ այսպէս էին իւր արտայայտած մտքերը.

«Ես հայ եմ, անձամբս չեմ կարող օգնել

Թրքահայոց ապաստաթեան գործին, բայց վերջով մէջտ պատրաստ եմ օգնել եթէ հաւատամ թէ արուած փողը կարող է օգնել այլ նպատակին: Բայց ինչպէս հաւատամ այդ նպատակը համար ինձ նկատ եւ փող ուղղնելին երբ այդ նկատները մէկը մեսին են չարաբանում ու պախարակում: Այսպէս թիֆլիզ Լօրիս Մելիքովը գալիս է եւ փող է ուզում իր կառավարութեան համար. ասում է իրենք են մեսակ կառավարութիւնը Թրքահայերին ապահովու համար եւ թէ Թրքահայասանի ամէն կոմիտեում ունեն կապ-մակերպութիւն կամիսէներ եւ ապստամբելու պատրաստ ուժեր, եւ ասում է որ ուրիշ փող ուղղնելին չհաւատամ: Ներսէս Վոսկ գալիս է կոստանդին Պատրիարքանը եւ ասում է իրենք են ճշմարիտ եւ օրտուր ներսէսեսական կառավարութիւնը, եւ թէ ուրիշ կառավարութիւնները սուտ են եւ թէ իրենց կառավարութիւնը քիչ ժամանակից պետի ցոյց տայ իր զօրութիւնը կ. Պոլսում: Փողը տալիս եմ թէ մէկին եւ թէ մեսին, բայց ասում եմ այդ մարդկանց. «Ամենէն թէ գուք հայ ազգի ապստաթեան եւ ներքայութեան համար էք գործում ինչո՞ւ նախ եւ առաջ արտով իրար հետ կապուած չէք այլ իրարու հակառակ էք եւ իրար էք վնասարանում»: Ես մենակ այս երկու անուններին եմ յիշում, բայց կան ուրիշներ էլ: Փողը տալիս եմ եւ գնում են: Ո՞ր խելքը գլուխը հայը կարող է արտանց հաւատալ թէ այսպիսի անմխարան մարդիկ ան-

կևղծօրէն գործում են հայ ազգի ազատութեան համար»:

Ժամհարեանց հետաքրքրուց իմանալ թնճանից թէ այդ յեղափոխականները ի՞նչ ուժ ունեն Թուրքիայում եւ ի՞նչպէս կարող են ազատել թրքահայ ազգին: Իմ հերքելով ապացուցանելով իբր կասկածը այդպիսի գործիչներին անկեղծութեան վրայ եւ փոխարէնով պահպանել իր հետաքրքրութեան, թնճանից էր ակնկալում իմանալ թէ այդպէս գրամ հաւաքողների կազմակերպիչները որքա՞ն գոյութիւն ունէին Կ. Պոլսում, ի՞նչ էին անում եւ իրենց գործունէութեան արդիւնքով կարո՞ղ էին ազատել թրքահայերին եւ տանգել անկախ Հայաստան:

Մտատանջութիւնը այս խօսակցութեան չմտանակից եւ չհակառակ, հանգստացրեց էր իւր բրնաւորութեան յատուկ հանգստութեամբը:

Խօսակցութեան երկրորդ նիւթը նոյնպէս ինքն ստծոյ, եւ այդ նիւթը նոյնպէս յայտնապէս յուզում էր իւր մխիթը եւ կոչում էր անում իմ ազգմատութեան արդար կարծիք յայտնելու: Ինդիրը բանտարկեալ Սմբատ Շահխաթլեան մասին էր. նորա կեանքին ծանօթները, պիտին թէ այդ բանտարկեալը իւր կեանքը անցրել է Մահկիայում, եւ ճիշդ այդ միջոցին Մահկիայի հայութիւնը պատրաստւում էր կատարել իրենց կենակից բանտարկեալի յոբելեանը: Ժամհարեանը բացատրեց թէ այս նպատակա-

կապուած էին, կամ կապուելու վրայ էին երկու կոմիտէները, մէկը դրամ հաւաքելու համար եւ միւսը զրահեան կամ յարձակման կարգադրութեան համար: Մասնաւորաբանները ազատ էին որ մէկն զրահեան մարզիկ անպատմակից էին այս վերջին կոմիտէին, իսկ վաճառականները կամ դրամատէրները իրաւունք չունենային մասնակցել զրան, այլ մասնակցել դրամահաւաք կոմիտէին: Ծասուրեան գործս էր նկած իր սովորական հանդարտութիւնից եւ յամառօրէն պաշտպանում էր ժամհարեանի չափած իշխանական ձեւը, եւ նկատելի որ ժամհարեանի կինն էլ որ մինչեւ այդ ժամանակ առաւել կամ նուազ լուռ էր, նոյնպէս անհամաձայն էր իր ամուսնի տեսակէտին:

«Բանասանդը պատկանում է մասնաւորականներիս եւ մեզ է վերաբերում կարգադրել եւ որոշել յարձակման հանդէսը եւ թէ ով ինչ պիտի բանախօսէ: Դուք, դրամատէրներդ տպաղնդի հետ գործ չունէք, այլ փողի հետ, ուստի ձեր գործը պէտք է լինի յարձակման ձեռնարկի դրամական մասին հետ»: Ծասուրեանի այս սուր դիտողութիւնները ինձ բնաւ դիւր չէկան, եւ նա տակաւին կարծիք չյայտնած, ժամհարեան նեղսրտմամբ եւ յանդիմբա մարդու ժպտուն համբերատարութեամբ ասեց.

«Բայց Ծասուր ջան, ինչո՞ւ բանասանդը մինակ ձեզ մասնաւորականներիդ է պատկանում եւ ոչ նոյնպէս մեզ: Ինչպէս որ դուք կը կար-

պում եւ երգում նրա առանաւորները, նոյնպէս մենք վանաւոականներս էլ կարդում եւ երգում ենք նրա առանաւորները: Խանասակիցը պատկանում է հաւատարմակս եւ մեր գաւակարդին եւ բոլոր հայ ժողովրդեան, եւ անկարաւորութիւն է որ երբ մենք վախով ենք գրում անդամակից պրսկան կարգադրիչ կոմիսէին դուք հակառակում էք մեր վախքներին»:

Իմ ամբողջ համոզմունքով ես համակարծիք էի ժամհարեանին: Բայց Ծառուկեան անառասան էր մնում իւր մոլեռանդ տեսակէտի մէջ: Եւ նորա դրկիչ յանդուգն հակաճառութիւնը իւր մեծարոի հետ սկսել էր բաւական զարմանք պատճառել ինձ:

Երբ դուրս եկանք մելիքոնատէրի տունից եւ ձիեռոս վազոցներից եւ ցրտաշունչ օդի մէջ քայլելով դնում էինք դէպի ընկերոջս անշուք սենեակը, ես ուզի ազատ կերպով սկսայ քննոպատել իր ընթացքը եւ արամաբանութիւնը եւ ասեցի թէ կ. Պոլսում եթէ երբէք մի պաշտօնեայ կրնի թոյլատրէ այդպիսի ոճով խօսել իւր գործատէրոջ հետ, հաւանօրէն երկրորդ օրը աքացի կուտի եւ դուրս կ'արտաքսուի պաշտօնից, մինչդեռ ժամհարեանը այնուամենայնիւ բարեմիտ հօր պէս էր վարուում հետը: Ես կարծում եմ որ այսպիսի մարդիկ երբ արամադրուում են հետաքրքրութիւն եւ սէր ցոյց տալ դէպի գրագէտները եւ գրական ձեռնարկները եւ վախքաւում են մտանակցել, մտաւորականնե-

քը պատրաստ գտնել եւ քաջալերել այդ գործակցութիւնը եւ ոչ թէ արհամարհանօք մերժել նոցա պատրաստակամութիւնը»:

«Զինաւոր, Գևորգ, այդ գործի մարդոց բոլոր ատաձեռները կիզձ են, գործ ցոյցի համար կ՚ար գործակցակից են ձեւանում, եւ ոչ թէ համոզմամբ: Գաշնում են մասնաւորականների բարեյաջող ուժից եւ նրա համար կ՚ար ուզում են հանձոյ լինել նրանց... Ձեռ կարծում որ միտք կ՚ար այնպիսի մի քնքոյշ կամ այդպիսի ազգ մարդի կնիկը լինի...»:

Կամաց կամաց անում էր որ միւս Ծառուի մէջ ոչ թէ միայն այլ սիրան էր արամարանում: Եւ տակաւին միւս ննջարաններն չհասած Ծառուին ինձ բացած էր արդէ գաղտնիքը: Խոսակցանց թէ խնդիր ազգ սիրահարած էր ժամհարնանի քնքոյշ հնոջ վրայ, եւ թէ իւր սիրային բանակցութիւնները նպաստում էին այն յուսակտ եւ անցյոյս երգնելից որ ցնծկուտ լոյսի եւ գիշերային մթութեան մէջ երգում էր այդ գեղուհի մանչն: Եւ մինչ միւս Ծառուը իւր գիշերային քունի մէջ երգում էր ժամհարնանի գեղեցիկ կնոջ մասին, ես միւս կողմը երկար ժամանակ արթուն էի եւ մտածում էի բուն իսկ ժամհարնանի մասին, նորա արտաքոյքում գտնուելութիւնները եւ գիտցուելութիւնները, եւ խորհելով ժամհարնանի խոսակցութեան երկու նիւթի մասին, այդ մարդը այդ երկոցից մաքս

մէջ ապաւորած մնաց իրը յարգանքի արժանի մի մարդ, որի պատուիրանն ամեն պատրաստ էինէին, այնքան ուշի պիտի բարձրանար հոյ ազգի ընդհանուր նկարագիրը:

Այդ եղելոյ ժամհարնեի հարցասիրութեան դէմացում տալու համար պատմեցի թէ Թուրքիոյ հայութեան գործ անունով գոյութիւն ունէր մեծն Հնչակեան Յեղափոխական կուսակցութիւնը, կիզրան ունենալով Ժընեվ եւ մասնաճիւղեր կ. Պոլսում, Տրապիզոնում եւ Թուրքիոյ մի երիս քաղաքներում, թէ նոցա ուժը սաստիկ կը կայանար մեծն անպատնէշ պրելով, պատանդէս «Հնչակ» սատնելով եւ պատանդէս կորպալով, թէ այդ կուսակցութիւնը անպատնէշ ունէր նաեւ Թիֆլիսում, եւ թէ Բժ. Լորիս Մելիքով գուցէ դրամ էր հաւաքում այդ մարդկանց անունով: Իսկ Խաւխանեան կուսակցութիւնը ոչ մէկ անգամ եւ գործունէութիւն չունէր Թրքահայաստանում, բացի երիս իր խորհրդակիցներից կ. Պոլսում, թէ այդ խումբը ունէր անպատնէշ Թիֆլիսում եւ Բաւղարիայում եւ մի ծրագիր որի գործադրութեան համար Բաւղարիայից գործիչները պիտի մանէին կ. Պոլիս: Ես չյայտնեցի երեն թէ ինչ էր այդ ծրագիրը, որը որ չիրականացաւ ինչպէս եւ իրականացածները ապացուցել են թէ յեղափոխութեան յոյսն էր թէ մի ցոյց բանկի վրայ, մի ցոյց Բ. Դրան առաջ, կամ Խաւխա-

Նանի ծրագրի համեմատ թագմաթիւ առաքելի ազգուկ հանելով Սուլթանի մայրաքաղաքի մէջ կարող էր առիթ տալ խառնակութեան եւ հայկական կոտորածի եւ այդ հետեւանօք մեծ պետութիւններէն իրենց նաւերը պիտի մտցնէին Կ. Պոլիս եւ մի հայատառան առնդէին Հայոց համար: Այլապէս չափազանց յանդգնած եւ ամենատգայամտական յիմարութիւն պիտի լինէր յուսահատել թէ ամբողջ Թրքահայ ժողովուրդն իսկ գոնէ իւրաքանչիւր եկեղեցական եւ կրօնական դէմք ընտրեցնել Թուրք իշխանութեան դէմ, պիտի կարենար ունենալ յաջողութիւն:

Հայոց Թրքահայ գոյ առնդելու համար առնդուած յեղափոխական կուսակցութիւնը գոնել էր, մանաւանդ ուսանողութեան մէջ, հարուստներից եւ հաստատուններից դրամ քաշելու մի նորաձեւութիւն: Ժամհարնան երեւի փորձառութեամբ համոզուած էր որ իրենից այդպէս պարբերաբար դրամ ուզող եւ իրաւասեալ ազգայիններն չէին կարող լինել իրենց քարոզած գաղափարին հաստատակամ մարդիկ: Եւ երեւի ուր որ երթար, Թրքահայոց ազատիչներն ազատ չէին ձգում նորա օձիքը:

Եւ մինչ այդելութեան էր գանւում իր մայրենի ծննդավայրը Շուշիում եւ այլեւս կատարեալ անվտանգութեամբ լցուած դէպի այդպիսի յեղափոխականները մերժից այլեւս դրամ ուղլ, ազատուեց նորա ոճրագործ ձեռքերից: Մոքիս ատաջ երեւելով այդ երեկոյ տեսած ժամհարնանը եւ խորհրդածելով նորա

ուղիղ պատուիրանաց եւ պիտուիրանաց մասին, զորս էի որ Հայկական ցեղասիրութեան պատերազմից դուրս զրամատաչա հրէշներ իրենց ձեռքերը նեղիցին իրենց ազգակիցներին սրբիւնով:

Սիրոյ նախանձից զատ, հաւանօրէն կեանքի նախանձն էլ էր վառւում քնացող բնակիչ պղտյան սրտում: Իւր ազգի հանդատասէր եւ չքնիզ բնաւորութենից յետոյ նա այժմ հանդչում էր մի նեղ եւ ոսկեւոլոյս համեստօրէն կահաւորուած աննշանակի նեղ եւ անխռովուկ անկոչնում, եւ զատ միւս կողմում ունենալով մի այլ անկոչին ուր նստում էր Մինաս Եերբերեան՝ ոսկեւոլն ուսանող: Եւ իւր անունդը, երբ ինքն իւր անձին էր հիւր, անսահմանօրէն զուրկ էր այն բոլոր ճոխութիւնից որ նայն երեկոյ վայելեցինք բազմաւոր զրամատէրի տան մէջ: Բնական մի բան է որ հակակապիտալիստական զգացումը միշտ արթուն լինի անկապկապ արտաձնելի սրտերում: Բայց իւր աշխատիւն զրկանքի հետեւանօք նա հոգւով ընկճուած՝ չէր զգում ինքնիրեն եւ իւր համոզումների արտայայտութիւններով եւ բանած վարմանքով ինքնիրեն հաւասար պիրքի մէջ էր պահում զրամով երեկոյ հարուստների տակ, զգալով թէ այլապէս վարուելը նուաստութիւն պիտի լինէր իւր ազնուազգաւութեան համար: Իմ կարճ կենակցութեան մէջոցին նկատեցի թէ նա այլ հաւասարութեան ոգին պահում էր

նոյնպէս մտաւորական ասպարէզի վրայ իրենից բարձրերի հետ:

Հետեւեալ երկոյ սկզբնական բայց յետաձգուած կարգադրութեան համաձայն հիւր պիտի լինէինք Մոսկուայում նշանաւոր հայ վաստատան Ստեփան Մամիկոնեանի մօտ. այնտեղ պիտի լինէին Լազարեան Հեմսարանի պրօֆէսօր Գրիգոր Խատիսեան, եւ երբոր անձը՝ կարծեմ ասպարանաւէր Մկրտիչ Բարխուդարեան: Անուղղակի մեզ ծանօթ էինք իրարու: Ինձ համար շատ փափաքելի էր անոնց Խատիսեանին խակ մեծապէս հետաքրքրուած էր անոնց Մամիկոնեանին որ հետ մեր վերադարձ բարեկամութիւնը երեւելի էր այն զուգադիպիչ բարեկամութեան պատճառաւ որ մենք երկուքս էլ ունեցել էինք Շէքսպիրեան վսեմ դերասան եւ այդ ատեն արդէն մեռած Պետրոս Ադամեանի հետ:

Թուականը լաւ չեմ յիշում. արդեօ՞ք էր 1888 կամ 1889. Ադամեան բռնադատուին մաշուած էր թոքախտից եւ երեսի մաշկի տակ գրեթէ միս չէր մնացել եւ ոսկորները դուրս էին ցցուած: Իւր այս գժբաղդութեան ծանրութիւնը աւելի խիստ ծանրացած էր դրամի իւր վրայ իւր զբաղմանական չբաւարութեան պատճառաւ: Սոված չէր, սպրում էր իւր երկու շատ պատուական ընկերներով եւ հետաստրատէս դառամեալ նոցա երկու կամ երեք եղեկատոս եղբայրներով ատենը ամէնքը մխսին: Բայց դրամական գրեթէ

պրամ չկար եւ անկարող էր անհրաժեշտ բժշկական դեղ եւ խնամք ունենալ իւր ցաւալի հիւանդութեան ախտման համար: Յաճախ անանուն էր նրան եւ արտայայտում էր ինձ իր ըղձացած վիշտը եւ տառապանքը: Կ. Պոլիս գնալուց յետոյ աշխատակցում էր Արտար Յովհաննէսեանի «Արձագանգ»ին ի Թիֆլիս Վաղիճակ ծածկանունով: Ագամեանի այդ վիճակի նկարագրութիւնը պրկեցի այդ թերթին: Շատ չանցած մի օր Մամիկոնեան առաջարկութեամբ հետպէր առաջայ Մոսկվայից ուր առաւած էր. «Առաջէք Մեծ Նոր Ման Գէորգովի կանդրկից 35 ոսկի եւ յանձնեցէք Ագամեանին»: Ո՞վ էր այս Մամիկոնեանը, ինչպէ՞ս պիտէր անուանս եւ պրամը ինձ էր պրկում: Այս անլուծելի հարցումնները մտքիս մէջ չաւպեցի Գէորգովի կանաւորը ուր նա նոյնպէս հետպէր ունէր այդ պրամարը ինձ տալու համար: Այդ թանկագին գանձը պրպտումս մեկնեցայ դէպի Բէօյիւք-Դէրէ մի միճ անակնկալով կենդանացնելու Ագամեանի յուսահատ եւ ընկճուած հոգին: Գրպանիցս հանելով 35 օսմանեան ոսկինները պրի նորա ոսկրացած ձեռների մէջ: Ապշած եւ պարմացած եւ ախտը աչքերը լրենց երեւմնի պերճասանական չարժումների ուժգնութեամբ ուղղելով իմ վրայ, դոչեց. «Որանկի՞ց է այս, ո՞վ տուաւ քեզ, Գեորգ', ասա՛, ասա՛»: Իր անհամբերութեան պատասխանելի թէ չէի ճանաչում պրկողը, թայց Մոսկվայից է եւ անունն է Մամիկոնեան:

— Մամիկոնեա՞ն, Մամիկոնեա՞ն. ա՛խ Սահեանա՛ն է, սիրելի Սահեանա՛ն է, ո՛վ պաշտելի Սահեանա՛ն»:

Աչքերը լցուեցան արտասուքով, ղլուխը խոնարհեց եւ սկսեց հեծկլտալ: Ես բոլորովին յուզուած էի այս յանկարծական տեսարանի առաջ, արտասուքը թաւխում էին իմ եւս աչքերից եւ դժուարաւ պահում էի հեծկլտանքս:

Մի չարաբաղ կնոջ Ծառուկից առացած մի նամակ յայտնելով թէ «Արծապանդ»ի մէջ հրատարակած յօդուածից Ալամեանի յարգողները յուզուելով, Մամիկոնեանի նախաձեռնութեամբ եւ շատ նուիրատուներ ունենալով, հաւաքեր ղրկեցին ինձ Ալամեանին յանձնելու:

Եւ այժմ այդ օրուայ մելոդրամատիկան տեսարանի յիշատակին էր որ ստիպում էի տեսնել իմ տարաբաղդ մեծ բարեկամի տունը մեծ բարեկամը:

Ցերեկը անցրի Մոսկուայի տեսարաններին նայելով: Եւ երեկոյեան Ծառուկ տարաւ այս անգամ ներկայացնելու ինձ իր Ծառուկեան բարեկամներին: Մամիկոնեանի բնակարանը կոպիտաւոր էր բառիսկան մեծ աննեահներից, բայց նոցա մէջ պահպանում էր չքեղութիւն եւ ներդաշնակութիւն: Այնտեղ հանդիպեցայ մի քանի անձերի: Իմ դիմաւորը հետաքրքրութեան առարկան ինքն էր իւր երկար անհոգ օրերն սրբուռած մազերով ձեռաձեւ գլխարկով եւ մերկաքով,

աւելի թուխ քան ապխտակ դէմքով եւ անսեթեւեթ չարժուձով աւելի նմանուած էր արուեստապէտ կամ դիանականի քան վաստակաւորի, իսկ դիանական Խալաթեան իւր կոկիկ արդուզարդով, խնամօքէն կտրուած ու սանդրուած մազերով, ածիլուած վայլուն երեսով եւ փափկիկ եւ լի ազատով նմանուած էր իւր կեանքի արժէքը իմացող եւ կուշտ ու կուռ ապրող մի բուրժուայի: Մի երբորդն էր տէրքան յիշում եմ, Մկրտիչ Բարխուդարեան: Դէմքը եւ գլուխը գաղտագուած մազերի հարստութեամբ: Կայծն ուրիշ մի երկու անձեր եւս արդ ով լինելն չեմ յիշում: Բայց այս ամէնի մէջ Ծառուրեանի գլուխը, ճակատը եւ աչքերը եւ ախորժուշ երեսը ամէնից աւելի ապաւորիչն էր: Մելամաղձոտութիւնը, քաղցրութիւնը, հեզութիւնը եւ պայծառութիւնը միախառնուած էին այնտեղ: Կարծես թէ Թոքատան էր որ տարիքի հետ իւր ուժը ծաւալում էր նորա ամբողջ պատկերի վրայ:

Մեր հիւրընկալը լի էր հետաքրքրութեամբ իմանալու ամէն մանրամասնութիւն Ագամեանի վերջին չրջանի կեանքի վերաբերմամբ: Իսկ ինքը առանձին ոգեւորութեամբ պատմում էր նորա կեանքի այն չրջանը ուր Կովկասից սկսած մինչեւ Օսեսա, Մոսկվա եւ Պետերբուրգ բեմի վրայ հիացման ծափահարութիւններ առաջում ինչպէս հայ նոյնպէս եւ ուրիշ թատերասէրներից իւր աքանչելի դերա-

կատարութեան համար Շէքսպիրեան խոպնրում: Ընդունարանի սենեակի վրայ յատկապէս պատրաստած դրուած էին Ազատեանի մեծադիր լուսանկարները այն ամէն դիրքերում որ նա խոպացել էր բեմի վրայ: Լուսանկարներից շատերի վրայ երեւում էին Ազատեանի ձեռագիրը, նաեւ իւր «պաշտելի Սահիանին», իսկ շատերը ինքը Մամիկոնեանը նկատել էր տուած տատնձին հատուցածոյ կազմելու համար:

Այդ երեկոյեան կերտխոսքի սենեակի ուսուիչների համերաշխութիւնը եւ ըմպելիքների պատուականութիւնը ես չէին մնում մէկ օր առաջ մեծատէր ժամհարեանի տան մէջ վայելուած սենեակի ճոխութիւնից: Իսկ ոգեւորութիւնը բնականապէս աւելի մեծ էր խօսակցութեան նիւթերի այլազանութեան եւ հետաքրքրութեան համար: Դիմին ազդել էր ամէնի դէմքերի վրայ, եւ դժուար էին հերթասիրութիւնը կատարեալ դարձնելու համար, քանի որ ակռաւոր քէֆը չարունակէինք քաղաքից դուրս նշանաւոր պիշերային երգեցիկ ճաշարաններից մէկում:

Արդէն պիշերուայ ժամը 11ն էր: Դրսում գետինը ծածկուած էր թանձր ձիւնով, եւ ցուրտ սաստիկ էր եւ սուր: Սահնակները յանձնարարուեցան եւ ամէն ոք սկսաւ հագնել իր վերարկուն եւ քնքոյշ մուշտակները: Ծառուբնանի մուշտակը թէ երեւոյթով եւ թէ յատկութեամբ նամանաւանդ էր մեզանից առաջ:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Դէպի հիւսիս ճանապարհորդութեան համար սովորականից մի քիչ աւելի հատու մուկ վերարկու էի դնել, այնուամենայնիւ Խալաթեանն էլը նշմարեց որ համարձակել էի այդպիսի բարակ վերարկուով ոտք կոխել իրենց սառնամանի աշխարհի մէջ, եւ թէ այդ դիչերուայ ար չաւանքին մի այդպիսի զգեստով ես կարող էի սառոյց կտրուել, եւ անհրաժեշտ էր որ իրենց նման պաշտպանուէի դուբակ ցուրտին դէմ: Մամիկոնեանը ունէր մի երկրորդ մուշտակ, բայց չատ մեծ եկաւ ինձ: Սահնակները նստած ուղղուեցանք Լազարեան ճեմարանը, Խալաթեանի բնակարանը ուր պրօֆէսօրի երկրորդ եւ ոտք մուշտակի մէջ մխանների նման գլխովին փաթաթուելուց յետոյ սահնակները սկսան սահել ամբողջած ձիւների վրայով քաղաքից դուրս դէպի Մոսկուայի դիչերային զուարճութեան վայրերը:

Ամէն մի չնչաւորութեան եւ խօսակցութեան միջոցին զոլորշիները արտաչնչւում էին բերանից եւ կազմում սառոյցի ուլունքներ թամբ մօրուքիս եւ բեխերիս վրայ: «Կ. Պոլսում այսպիսի սառուցացնող հաճոյք վայելելու բաղդը չունենք» ասեցի Ծառուրին, որ զուարճալի դիմադրութեամբ յարեց. «Պետրոս Ջան, վատ աուր Գրիգորի տոք մուշտակին, առանց նրան դու ինքդ էլ սառոյց պիտի կտրուէիր մեր բանաստեղծական մթնոլորտում»:

Հեռուից լսում էր նկեղեցւոյ զանգերը:

Մեր առհասարակը կանչ առան բայց առաքա-
քեան առաջ բարձրացած մի չինչի պէս բոլո-
րալին մթութեան մէջ եւ նեղսիրտ լայս չէր երե-
ւում եւ ոչ ոք կարճ չարչառակի։ Զարմացական
բացագանչութիւններ լսուեցան մեր առհասարա-
կից. «Վա՜յ, կս ինչ է պատահել. ինչո՞ւ փակ
է»։ Բայց չուռոյ սթափուեցան երկնչ զար-
մանքից։ Մեր ճօճից անցնող մէկը իր կոպտից
զարմանք յայտնեց որ չգիտէինք թէ Քրիստոսի
ծննդեան պիչերն էր, եւ այդ պիչեր զարթու-
թեան այդ վայրերը փակ էին։ Աչնաւամենայ-
նիւ պրօֆէսօր Կարապետեան, որ Ալեքսանդրա-
պօլցիի զարթճասիրութեան ապեն չէր կրցրել
իր մէջ, հրամայից կառապաններին երթալ այլ
նամանօրինակ զարթճարար վայրեր ուր նոյնպէս
յաւառատ եղանք։ «Տղէ՛ք, էլ հեմա մեզ ուրիչ
ճար չի մնում, բայց էթէ մեր մեղքերի քաւու-
թեան համար երթալ ևիևեցիք»։ Բայց իր այս
առաջարկին ամէնից պակաս հետեւողը ինքը
պիտի լինէր էթէ միւսներս համաձայնէինք։ Ա-
նիլի վտակաքիլի առաջարկը եղաւ Կարապետեանից
երթալ իր ճօճ եւ այս կերպարանքի համբոյրը որ
երկի եւ պարի մէջ պիտի անէինք Եարում, կա-
տարէինք առանց երկի ու պարուհիների իր բա-
նակարանում։ Գիշերուայ ժամը երկուսը անցել
էր երբ հրաժեշտ առինք մեր զարթմատէմ հիւ-
րընկալին, եւ ես Ծառուի հետ ուղղուեցանք
դէպի իր բնակարանը։ «Պետրոս, մի կարծի թէ
յաճախ այսպիսի քէֆերի մէջ եմ կամ այսպէս

ուրախ, ինչպէս որ սեռնում են ինձ երկիւղներից ի վեր»:

Մոքսվա խորհրդայ թէ այս քէֆերը որպէս ինքն էլ անուանում, հաւանօրէն յետոյ իր սըրտում յատաջ էին բերում ախորժելուն, մտածելով թէ ինչ ոչ երկիւղ երևիցեան փոխարէնն վարձատրանքը, հանդստութիւն բնակարանը եւ պետերի կինը ունէը, եւ ոչ իսկ այդ դիշերուայ իր բարեկամների զրամալից զբօսանները եւ տատասից տպերտակերպը: Ծառուբի սիրտը շատ պղտոյն էր, եւ անկարելի էր որ նա չզդար այս եւ չցաւէր վշտալից մտածումներով:

Եւ տակայն, նիւթական եւ ընկերային դիրքով եւ տպերքով իրենից բարձր իր այդ բարեկամները վարում էին նորա հետ որպէս իրենց քոյ ամենայնի հաւասար: Եւ նա եւս բնաւ իրենից ուելի կարեւորի նման չէր վարում նոցա հետ, եւ այս ոչ թէ զգուած անձնական հպարտութիւնից, այլ յայտնապէս ընկերական կեանքի ընտրութիւնից նոցա հետ: Նորա բնաւորութեան առաւելութիւններից մէկն էր ձգտել ծանօթութիւն կապել կրթութեամբ եւ զիրքով իրենից վեր մարդոց եւ յաջողել սիրելի, մտերիմ եւ հաւասար դառնալ նոցա հետ: Այս յատկութիւնը նորա մէջ կար երբ պատանի էր Թիֆլիսում, եւ շատ ուելի կատարելագործուած էր իր այս երիտասարդական կեանքում ի Մոսկվա: Մի յատկութիւն որին նախանձում էին Թիֆլիսում, եւ հիանում Մոսկվայում:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Հետեւեալ օր մեկնեցայ Պետերբուրգ, ճանապարհորդութեան նշանակէտը: Եւ մինչ այնտեղ էի Ծառուբից առացայ մի նամակ որով յայտնում էր թէ Պետերբուրգի հայ ուսուցչական ընկերութիւնը ինձ պիտի յանձնէր Թատերական պէտաներ ինձ հետ բերելու Մոսկվա, ուր այդ տեղի հայ ուսանողութիւնը պատրաստում էր իրենց տարեկան ներկայացումները տալ եւ պէտք ունէին այդ պէտաներին, եւ թէ ուսանողներից մէկը, Տէրեան անունով, Մոսկվայի կայսերանում պիտի դիմաւորէր ինձ ըստ պէտաների համար:

Կայսերանի պրոֆեսորի վրայ նկատելով թէ կարծես ոչ ոք էր ապառում ինձ բայց ապատակաղէմ եւ դէպին կամ չէկ մարելով մի երեւոյթից, որ մնացել էր կանգնած, կարծես ապառում էր մէկին, բայց չէր հետաքրքրում ինձմով եւ ես էլ քաջութիւն չունեցայ իրեն մօտենալու: Ուստի պատուակս կառքի մէջ դնելով մեկնեցայ: Հերթանոցից Թատերական ըստ պէտաները հանելով ուղղուեցայ Ծառուբի ինձ հաշտրուած Թատերատարահը որ քաղաքի պետական մէկի վրայ էր նայում: Կարծեմ առաջին յարկի վրայ էր. մտայ մի երկար սրահ ուր ուսանողները երաժանցումի մէջ էին կարծես մի մեծ պատրաստութեան վրայ էին:

Լուրը տարածուեցաւ թէ Թատերական ըստ պէտաները Պետերբուրգից բերողն էի. եւ սրահի հետեւը ծայրից տեսայ Ծառուբը ցնծութեան

ժպիտը ամբողջ երեսին չտարածուի էր դէպի ինձ իրեն հետ ունենալով ուրիշ մի քանի ուսանողներ, որոնցից մէկը այն անձը որ տեսել էի երկաթուղի կայարանում:

— Ես ձեզ առաւ կարծեցի, նրա համար չմոռնայ ձեզ, պատասխանեց նա:

— Ես էլ ձեզ Օռեստի հրեայ կարծեցի, ասացի իրեն:

Ընդհանուր քահ քահ բարձրացաւ ամէնի մէջ այս զուարճալի միջադէպի համար, ուր երկու հայեր իրար կարծել են առաւ եւ հրեայ եւ չեն կարողացել կարծել թէ կարող էին հայ լինել:

Ըստ երեւոյթին Ծատուրը ուսանողական այդ թատերական ներկայացման կազմակերպութեան եռանդուն դործիչներից եւ յաջողացման պլիներից մէկն էր: Նրան տեսայ դրամատէր Ժամհարեանի տանը իրր բանատուղծ Շահապիի յօբելեանի կազմակերպիչներից եւ մարտաւորականների իրաւունքի բարձր առաքելութեան վրայ պահպանի ախոյեան, նրան տեսայ վարսարանի տանը հասուն մարտաւորականութեան համակրելի քնկերային դէրքին մէջ, եւ այժմ տեսնում էի նրան ուսանողների խումբի մէջ իր եռանդը եւ պլին դրած նոցա ցանկալի հանդէսի յաջողութեան համար:

Մեկնումից օրը Լազարեան ճեմարանում, Պրոֆ. Ալպաքեանի մօտ չգնել եւ բաքոսեան հաշիւներից յետոյ, Ալպաքեան, Մամիկոն-

նան եւ Ծառուբեան ընկերացան ինձ Օտեսա տանող երկաթուղու կայարանը: Գնացքս երեւի դեռ չատ ժամանակ կաթ, ահագին քանակութեամբ պահուսականները չարուած էին բուֆէի առաջ, եւ բաւնկամներս փութաք զգացին որ այդտեղ եւս վառելյի բաժանելով եւ պահուկի կտրնելով ինձ զգալի զարձնեն իրենց մնաս բարեւի ամենաջերմ զգացումները, եւ բաժանեք բաժանելի վրայ զառարկուեցան փոխադարձարար մեր ամէնի կենացը, եւ երբ մեկնելու րոպէն եկաւ եւ ես մտայ գնացքս մէջ, բոլորուած մոքս լոյսը չատ լուսաւոր չէր երեւում մթագնելով աչքերս առաջ:

Պետրբուրգում ծանօթացել էի Գառապար Եպրաբեանին, որ Կայարութեան երկաթուղինների թարթիի վարչութեան փոխ նախագահն էր, Վերադն այն ժամանակ լինելով նախագահ, որ մի ամսից յետոյ եղաւ Հանրապարհների հաղորդակցութեան նախարար եւ չատ չանցած եղաւ երկաուկան նախարար: Եպրաբեան մանաւանդ համակրութիւն ցոյց տուեց ինձ այնտեղ անցրած կարճ ժամանակում եւ միշտ հրաւիրում էր ճաշի եւ ընթրիքի եւ երբ մեկնեցայ ինձ տուեց յատուկ տոմսակ Հանրապարհորդելու մինչեւ Օտեսա առաջին կարգից վեր յատուկ եւ թիկնաթոռներով կահաւորուած վագոնի մէջ, եւ ծիծաղելով տայց թէ՝ հասարակ մահկանացուները չեն Հանրապարհորդում այդ տոմսակով: Ահա բարեբաղդարար այսպիսի արքայա-

կան վտանգի մէջ էի երբ մթագնած ղլուխով եւ օդեվար սոսմոքսով ներս մտայ ու բաժանուեցայ բարեկամական զգացումներով այդ անձերից։ Թէեւ բաժանուած նոցանից բայց նոցա հետ վայելած օդին իւր զգլխէ ազդեցութեամբ մինչեւ անգամ երկու օր յետոյ սակաւին մը նում էր անբաժան ինձանից։

Գալիս գառնալուց եւ այս անսակցութիւնից մօտ երկու եւ կէս ամիս յետոյ ես ձերբակալուեցայ ծանր ամբաստանութեամբ, Սուլթանի վրայ ռումբ նետելու դաւադրութեան ամբաստանութեամբ։ Սննեակս խուզարկելով բոլոր թղթերս տարան ոստիկանատուն։ Երբ առաջին անգամ տարուեցայ ոստիկանութեան նախատաբ Նապըմ բէյի ներկայութեան, նա իւր սեղանի վրայ գրուած իմ գրքերի մէկից հանեց մի ծրար եւ ինձ երկարելով ասեց որ նամակը հանէի ծրարից եւ կարդայի։

Նախ նայեցի գրքին որ Ալէքսանդր Ծառուբեանի բանաստեղծութիւններն էին, նոր հրատարակուած եւ գրկուած ինձ, եւ ապա նայեցի ծրարի հասցէին, գիրը իմս էր, ուղղուած Գալուստ Ալոյեանի, կովկաս Զինապարծարան, Թիֆլիս։ Զարմանքս այնքան մեծ եղաւ որ բացագանչեցի. «Ո՞րտեղից գտաք այս նամակը»։ Նապըմ բէյ ժպտելով պատասխանեց. «Ատաուած ձեզ պատժելու համար ձեզ մոռցնել տալու վատառային յանձնելու այդ նամակը եւ այս գրքին մէջ դնել տուաւ որպէսզի ձեր խիղ վկա-

յուխտամբ ամբառամանուէք, բայց կարպացէք, կարպացէք պաբանակուխիանը»: Պաբանակուխիանը կարպալու պէտք չունէի քանի որ դրսէը ևս էի, բայց նամակը հանձնելէ եւ սիրայ վրան նայիլ: Բայց մխաքս ունէր պատուէր թէ ինչ գործանալի դուգադիպութիւն, որ այդ ձերբակալման ճակատագրի մէջ այժմ Ալտյեան, իրեն ուղղած վառնդուար նամակով, եւ Ծատուրեան, իւր բանտապետութեան դրքով, մխանում էին ինձ, որոց հետ ինը տարի առաջ ուխտել էինք տարօրինակ պինտպործութիւն, Թրքահայութիւնը վրկելու համար Սուլթանի լուծից:

Իմ այս ապէսից մօտ երեք տարի յետոյ մինչ Աբդիայի բերդի 70 հայ քաղաքական բանտարկեալներից 1895ի ընդհանուր նեղման հետեւանօք մեզանից երեք անձինք էինք մնացած աննեղելի, բայց վտքը ինչ պատուխիան կը վայելէինք բերդի մէջ, երբ մի քրիստոնեայ տարաբ Հայֆայի առատական հիւպատոսատան գործակալի հրահանգով դաղտնապէս ինձ յանձնեց մի նամակ գրամատան մի դուռարի հետ միասին: Նամակը Մոսկվայից՝ Ծատուրեանից էր: Աբատքին աշխարհից նամակ գրեթէ չէի տանում տարիներից ի վեր, եւ այդ նամակը ամենաքաղցր յիշատակներով լի մի ընկերից, երկնային մի գանձ թուեցաւ ինձ: Յայտնում էր թէ երեք ամէնքը մտածում էին իմ վրայ եւ ասում էր որ գրէի երեն եւ գրէի մեր վտխատարձ ծանօթ Մոսկվայի հայ ապաբանատէր Մկրտիչ Բար-

խուզարկանքի հասցէին: Մեծ եղբայնկութիւն եւ մխիթարութիւն էր ինձ համար խորհիլ թէ կայծն մատնանշեր իմ վրայ:

1897ին, Աբբեյայի բնդդէմ վախճեալ բառարան ամբաստանել վերջ Լանգան էի՝ երբ Հնչակեան կառավարութեան կեդրոնի անդամ ապրում էի մի անդրաւէտ տանը, մի մութ գիշեր դուռը պարնուելուց յետոյ տանտիկինը ներս մտաւ ընդունարանը եւ յայտնեց թէ մի օտարական ինձ էր հարցնում: Երբ դուռս ելայ օտարականը ինձ վախաթափուց եւ սկսաւ համբուրել, չէի կարող դադարեցնել թէ ո՞վ էր: Մինաս Բեզճեանն, Ծատուրի 1891 թուի անհետկիցը, որ այն ժամանակի անմատ երեսի վախարէն ունէր թարմ մտերմով պարպարուած ունկի զօրաւոր մի երես: Յայտնեց թէ ամուսնացած էր եւ մեկրաբանի համար եկել էին Փարիզ, թերթերի մէջ կարդացել էին Աբբեյայից վախաչեալ լուրը եւ Ծատուրի խնդրանքի վրայ եկել էր Լանգան ինձ գտնելու եւ Ծատուրի, Խալաթեանի, Մամիկոնեանի եւ Բարխուդարեանի կողմից: Միանգամայն պատմեց թէ մի քանի տարի առաջ ռուսերէն պաշտօնական «Պետական Համբաւարեր» «Պրավիտելսվի Վեսթնիք» թերթի մէջ կարդալով թէ մեռել էի Աբբեյայի բնդդէմ, վերադիշեալ բառերիամբները հանդիսաւոր հոգեհանդիսա էին կատարել առել ինձ համար Մոսկվայի եկեղեցում: Եւ այժմ իր աչքի առաջ տեսնում էր այդ անցեալի մեռելը ողջ վիճակի մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Մահուանս վրայ այդ ոլորտով ընկերքէս եւ մեա համակիրներուն երախտապիտութեանս պատճառը յայտնելու համար չունեցայ մինչեւ 1903ի սեպտեմբեր ամիսը, մեր վերջին տեսակցութենիս ի վեր 12 տարի յետոյ։ Ծառուբը այժմ ժամհարեան եղբայրներէն բանիսում էր, այլ հայերէնի դաս էր տալիս Ատրպատեանցի մի հարուստ ընտանիքի մէջ, բայց պահում էր իր բարեկամութիւնը իր նախկին ընկերներին հետ, եւ այն բոլոր դատաճախտան ճաշերն եւ ընթրիքները որ վայելել էր առաջ, զարձեալ վայելեցի այդ երեքի անդամական ընկերակցութեամբ։

Խրիմեան Հայրիկը, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, էջմիածնում ինձ առել էր մի ձեռագիրը առանձարը, «Թադաւորաց ժողով» վերնագրով։ «Այս մեր օրհնեալ Ռուսաստանում չէ կարելի հրատարակել այսպիսի գրուածք։ Հետզ տար ազատ Անգլիա, եւ մահիցս յետոյ մի օր կը հրատարակես» ասեց Հայրիկ մի երեկուն երբ իր մօտ էի։ Այս առանձարը կարգացի Խաչատեանի մօտ երբ անմէնքս այնտեղ էինք ընթրելի։

Հայրիկի այդ բանաստեղծութեան տպագրութիւնը այնքան դժուար չհամարուեցաւ Խաչատեանի կողմից, Ծառուբը իր կարծիքը չյայտնեց այդ մասին, Հայրիկի արժանիքի չափ հետացողներից էր, եւ նորա հետ միասնաբար էլ հետացան Հայրիկի երբեմն հասկացողու-

թեան վրայ որ ունէր եւրոպական պետութեանց անձնաբար քաղաքականութեան մասին:

Այս անգամ այցելութեանս ընթացքում նկատեցի թէ Ծառուբեանի գործունէութեան ձգտումը տարածուել էր դուս հայկական կեանքի շրջանակից դէպի համաընկերային քաղաքական յեղաշրջման գործունէութեան շրջանակը: Հակապետական զգացումը որ առանձակ տաբնելից ի վեր առաջնորդած զարգանում էր ընդհանուր Ռուսիոյ մէջ ունէր եղիչաս եւ զգացնել չարժումներով, այժմ լաս եղեւոյթին սկսել էր զգացուել ընդարձակ եւ նուազ վտանգաւոր չարժումներով. Ծառուբեանը գտնել էր անգամ այդպիսի գործեր կուսակցութիւններից մէկին, յայտնեց թէ չատ պիտի փափաքէր որ նեղիայ լինէի իրենց ժողովներից մէկին, բայց այդ գրեթէ անկարելի էր: Ես որ չափազանց զգուշաւոր եմ եղած հարցումներով գործերէ նկատուած բաներ ձեռք բերել ուրիշներից, չուզեցի հարցնել թէ ի՞նչ էր իրենց ընկերութեան ծրագիրը եւ նպատակը: Բայց այնքան անանում էի որ ոչեւորութիւնը մեծ էր իւր մէջ այդ նոր տարրերդի սերով: Ոչ մէկ պատանեկան ընկերոջ ես բաղդ եմ ունեցել այնքան ուժի պատահել օրքան այս օրուակից ընկերոջ:

1911ի Հոկտեմբերին ընտրուած լինելով պատգամաւոր ի դիմաց Եւրոպայի բոլոր Հայ գործիչներին, որ այն ժամանակ միայն մէկ պատգամաւոր դրկելու արտօնութիւն ունէին

կաթոլիկոսական ընտրութեան համար, իջ-միածին դնալիս եւ վերադարձիս անցայ Մոս կվայով, եւ երկու պատարագին կարծեմ վեր չին անպամ լինելով տպդ ունեցայ վայելել նո-րա ընկերութիւնը:

Խալթիանը ծանր հիւանդութեամբ բըռ-նուած գանուում էր քաղաքի կեդրոնից հեռու մի հիւանդանոցում: Ծառուբեանը հաւանու-թիւն չտուեց որ երթայի տեսնել նրան, ասած կելով թէ հին բարեկամներից տեսնելը եւ հին յիշատակների պարծենալը սաստիկ ազդում էին Խալթիանի վրայ եւ այդ վիճակին մէջ. եւ ինձ տեսնելը կարող էր շատ յուզել նրա սիրտը: Նա ապա մեռաւ, առանց վերտհանդնելու այդ հիւանդութիւնից: Մամիկոնեանի մէջ նուա-գել էր տրտաքին ինքնահոգածութեան նշանը, երեւում էր մաշուած եւ մսաժկոտ, թայց կար-ծես իւր հոգածութիւնը առաջուայ համեմա-տութեամբ այս անգամ աւելի էր աճել Ծա-ռուբեանի հանդէպ: Մամիկոնեան ինձ բան չա-սեց, թայց նկատում էի թէ թոքախտի նշանները պակաս էին նորա դեմագիծներից վրայ, երբեմ-նակի հազը թոքախտային էր հնչում, եւ տրթ-թախտան ժպիտով ինձ յայտնեց թէ երբեմն ա-րիւն էր թքում: Բանտաստեղծի կեանքն այս ող-բերգական չքնաղում, իր բազդից, տեսայ որ նա գանում էր կանացի գուրգուրանքի եւ սի-րոյ բազուկների մէջ, ինչպէս որ յաճախ բա-

բնաւորութեամբ եղել է չատ վշտահար յանուանէ նշանաւոր մխիթարեան բազմից։

Մի երեսուն տարի եւ աւելի առաջ ու բաւական կեանք կին, Տիկին Քանանեան, Լուսաբեան ճեմարանի անուշ հանդուցեալ Քանանեանի տիկնոջը, դաւել էր կեանքի տասնհինգերորդ տարի իշնող Ծաւուրենան պահապան հրեշտակը։ Աւել էր նրան իր տունը իր սիրոյ հոմանուանութեան տակ, նորա անկողինը նմանում էր նորահարսի զարդարուն եւ հրապուրիչ անկողնի, կամքիր մեռածքի վարդագոյնները դլխի, ոտների եւ պատի կողմից իջնում էին տարօրինակ անկողնին դիւթական երեւոյթ, զուրս ելնելու պատրաստին նա նայում էր թէ արդեօք Ծաւուրը լաւ եւ տաք հագնուա՞ծ էր, վերարտում եւ տալիս էր մաքուր թաշկինակ եւ իր ձեռքով բրդէ չարշիր խնամքով փաթաթում էր իր զգուշացած կակղի վզից եւ կուրծքին պահպանելու նրան ցուրտ առնելու դէմ։ Երբ նայում էր այդ բազմախնամ հոգածութեան, միտքս էր գալիս պատանի Ծաւուրը իր ապրուստի անհնարին մէջ ազգատ եւ տարիքոտ արբեւոյրի տանը՝ Թիֆլիսում։ Իր պատանեկական կեանքի արշալոյսում մոյրական զգուշութեանք գուռ մի ազգատ եւ պառաւ վրայի կնոջ փաթաթուած հոգածութեան մէջ, եւ իր կեանքի ոչ հեռաւոր վիճակներին անոյշ նրան կանացի սիրոյ նոյն անճնուէր հոգածու-

թեան մէջ, որպեսզի մը մարդ կարող է պահել մեծն ամենատաճնուկը ինոջ մէջ:

Երբ Մոսկվայից հեռացայ չէի կարծում թէ մի անգամ եւս պիտի հանդիպէինք իրարու:

Բայց այդ կանացի անճնութիւնեան խնդամքը յայտնապէս երիտասարդ պատանեկութենից ի վեր կուռծքով թոյլ եւ զգացումով շատ բանաստեղծի կեանքը: Նա տղեկ եւ անուս ցարիզմի բանակալութեան խորտակումը որպեսզի նպատակի համար անայ որ 1911ին եւ թեթեւ նրանից առաջ մանկ էր պատանի կազակութեան մէջ: Զրկեամ արդեօք ինքնատիպ վտակաքից մղուած մեծն թէ մեծագործն հրաւիրուելով էր որ մեկնեց Թիֆլիս, նա ոչ մեծն ծանօթ էր հայ մտաւորականութեան, այլ նոյնպէս վրացի մտաւորականութեան, որոց շեղան հայերէնի չափ լաւ պիտէր: Երբ մօտ 35 տարի առաջ Թիֆլիսից մեկնեց Մոսկուա նա մի տղայ, անծանօթ եւ աննշան կակ էր եւ երբ քաղաքական ազատագրութեան այդ շրջանին հասաւ Թիֆլիս, իւր քաղաքացիները յայտնելով եւ ոգեւորութեամբ դիմաւորեցին նորա մատաքը եւ ի նշան իրենց հիացման քաղաքի փողոցներից մէկի անունը դրին «Մաւուրեան փողոց»:

Այդ պատուին արժանացած ժամանակ երեւի մտածելից իւր պատանեկութեան կեանքը Թիֆլիսում եւ իւր համեստ դեռնատարկ անձ

նակը Կուրի ափերին մօտ տարածուած խարխուլ տուներով թաղամաս:

Վրաստանի մայրաքաղաքը իւր յարդանքը ցոյց տուեց հայ բանաստեղծին իւր կենդանութեան օրով: Բայց նա ամէն բանից առաջ հայ բանաստեղծ էր, ուստի ինչ էլ լինի կամ ինչպէս էլ համարուելու լինի նորա բանաստեղծական կարողութիւնը, նորա անունը եւ յիշատակը մնայուն եւ սիրելի պիտի մնայ Հայաստանի գրականութեան պատմութեան էջերում:

•••

Ամառը տակաւին չսկսած մեր խումբին միացաւ Ծերունի Յարութիւնեան, որի մասին նախապէս յիշած եմ, եւ որի յիշատակութեան կեանքը եւ ոգին մի լսէլ էր, որի անուան շուրջ արժանի է որ հայ բանաստեղծը հիւսէ պսակները, եւ հայ վիպասանը բարձրացնէ նրա համար հերոսութեան հոդևշունչ արձանը:

Ծերունի, ճեմարանի այս դասընկերս, ինչպէս էր եղել որ թողել էր ճեմարանը, չեմ յիշում, բայց այնքանը յիշողութեանս մէջ է թէ ճեմարանի մեր դասարանը բոլորովին փակուել էր, եւ աշակերտները ըմբոստացել՝ ճիւաղային աչքերով եւ անժպիտ երեսով վերակացու Սուքիասեանի պատճառաւ:

Անդիտութեանս մթութեան մէջից միայն Ծերունին է որ մնում է իմ մտքում, եւ նրա

պէմքը իւր չարժուն եւ ժպտալից կենդանութեամբ: Նա յեղափոխական էր ոչ թէ պարապ եւ անտպատճ խօսքերով, որպէս եղան եւ են ամենքին անդոյ Թրքահայոց ազատութեան ուսանահայ գրեթէ բոլոր յեղափոխականները, այլ նա յեղափոխական էր իրաւամբ: Նա վաղում էր ուր որ կար ազգասիրական գործունեութեան աւերը սեպան: Նա ապրեց ժողովրդի մէջ, ժողովրդի համար, եւ նահատակուեց ժողովրդի հետ, եւ ժողովրդի համար:

Այս կրակոտ հոգին եւ Արցախան մխակն էին անշեղ եւ անխախտ իրենց ձեռնարկի արդիւնեան մէջ: Մի իւս երեքս սկսել էինք ատտանել մեր հատատքի ամրութեան մէջ: Տարակուսում էինք մխիանց վրայ, բայց չէինք խոտովանում իրարու: Իմ սկանջում կարծես լսում եւ իմ մտածութեան մէջ պատում էին Երեւանի խօսակցութեան եւ Արցխանի բացատրութեան այն խօսքը թէ մեր Թրքահայերը չեն խակ հալածւում եւ հարստահարւում Սուլթանի կառավարութեան նեղքեւ, այնուամենայնիւ մենք պէտք է առնէինք մի ազատ Հայաստան մեր ազգի համար, որ պարծենանք ազգերի միջեւ, եւ թէ այդ միայն կարելի էր Թրքահայոց համար եւ նրանց ապրած հոգի վրայ:

Իմ յեղափոխական միտքը անանում էր եւ չէջում այս անուութեամբ եւ այս տրամարանութեամբ:

Այդ միջոցին ազգն կարդացել էր Բաֆ-

ֆիլի «Ջալալէդդին»ը, հայերի Ջարդերը քիւրդերի ձեռքով, հաւանօրէն այն քիւրդերի ձեռքով, որոց դիւղերում մենք անցկիւղ եւ անմիսա դիշերում էինք երբ ևս փոքր էի, եւ մեզ հետ հայ անուաներ մեկնում էինք Վանտաբշապատից դէպի Դիարբեքիր՝ Տիգրանակերտ, դերապատերով վերատին մտնել Թրքահայ մահիճի հովանաւորութեան տակ քան թէ մնալ առատական խաչի վերկութեան տակ: Միւս կողմից, մտածմունքս դառնում էր դէպի Կ. Պոլիս: Աբդէն սովորութիւն ունէի կարդալ թերթերը, ուր շատ էր գրւում Թուրքիոյ հայոց ազգային գործերի մասին, եւ միշտ յիշւում խորհրդաւոր մեծ եւ ազգու տառերներ, որ էին «Թրքահայոց Ազգային Երեսփոխանական ժողով», «Թրքահայոց Ազգ. Կեդրոնական Վարչութիւն» «Թրքահայ Քաղաքական ժողով», «Ներքին Պատրիարքի գնաց Բ. Դուռ եւ անդունդ Մեծ Եպարքոսի եւ ներքին գործոց նախարարի հետ» «Պատրիարքարանի առաջին թարգմանը կամ գործակալը ներկայացաւ ներքին գործոց նախարարի օգնականին» եւ այլ այսպիսի տառերներ, որ ապառւում էին ինձ որպէս թէ թրքահայերը մի առանձին իշխանութիւն էին ներկայացնում, դիւանագիտական յարաբերութիւններով մխիթարից հետ: Եւ մտածում էի թէ այդ ի՞նչ տարօրինակ բան է, հայածանքի, բռնակալութեան, քաղաքային եւ ազգային առհամարհարութեան իշխանութիւններ այսպէս

մեցած մեմեանց հետ Սուլթանի հայ հպատակ ժողովրդի մէջ, որին մենք առաւել պատանի երիտասարդներս այնքան բանախօսում էինք փրկել Սուլթանի լուծից:

Այսպէս, լուսաբեռակ երեւոյթներից Սուլթանի մութ բռնակալութեան մէջ անանում էի Թրքահայոց ցեղային անհատականութեան չնաւոր վկայութիւնները, մինչդեռ ցարի պատասդան բռնակալութեան մէջ այդ իսկ ժամանակ մեր պետական դպրոցների առաջադիմութեան ծրագրով դպրոցների վարիչների դպրոցական եւ նկնդեցական կառուածների եւ նկամուանների սերմուով եւ դրաւումներով ընդհշմարում էի առաւահայոց պետական, լեզուի եւ կրօնի, ուսոի եւ ցեղային զոյութեան ասպիճանաբար խաւարումը: Եւ սկսում էի ասել առաւ կառավարութիւնը:

ՀՐԱԺԵՇՏ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

Մի պարոնտային կիրակի մտերիմ ընկերոջս հետ մտն էինք գալիս Մուշտայիտի պարտէզի բազմաճիւղ ծառերի երգող տերևների տակով, երբ առեցի նրան.

— Ծառեր, այս երիտասարդ դեղեցիկ տերևները երգում են իրենց բանաստեղծութիւնը այս մաքուր մթնոլորտում, ինչպէս գու երգում ես մեր ազգասէրների բանաստեղծութիւնները մեր յաւէտ հիւրընկալ ազնիւ Ալեքսանդր Ալոյեանի երջանկալից տեղանի վրայ, բայց ես ուզում եմ կարդալ քեզ իմ ողբերգութեան երգը. ես վճռել եմ դրժել մեր ուխտը, թողել պիտապարծութիւնը ձեզ, որ ձեր երկաթի կտրներով կտրծանէք Սուլթանի կայսրութիւնը, եւ առնդձէք Հայաստան, եւ ես պիտի գնամ կռռանդնուպոլիս, տեսնել այն հայ մեծերին եւ փոքրերին որ բազդ պիտի ունենան այդ նոր Հայաստանի բնակիչներ դառնալ:

Մտաբերութիւնս յայտնեցի նաեւ մեր գա-

զոհաբարձեան, բացատրելով թէ անոնց կոչը եւ անպէտք էի այդ նպատակի ծառայութեան համար։

— Ես էլ եմ տեսնում, թայց լինել անկարող մի բանում, չի նշանակում լինել անպէտք մեր սուրբ նպատակի համար։ Ձեռքիդ արտասրելը նեղութեան մեջ է գցած դիր գլուխդ արտասրելը նեղութեան այն նպատակի համար որ մենք պաշտում ենք, եւ որին կոչուել ենք նուիրել մեր կեանքը։ Քու գլուխդ չնորհք ունի արտասրելի, այն ինչ որ անշօշափելի եւ անտեսանելի է մեր թշնամիների համար եւ ձեռնտու է մեր անձնուէրների համար։ Եւ այս տեսակ գլուխների պէտք ունեն Կ. Պոլսում։ Մենք այստեղ կը չինենք գէնքեր երկաթից, եւ դու եւ քեզ նմանները կը չինեն գէնքեր հանճարամիտ ուղեղներից, եւ Սուլթան Համիտ եւ նրա մեզի վտանգները թող գոյան մեր նուիրատուր եւ անսխալ զօրութեան առաջից։

Իւր գործի ամօթանքների անկեղծութիւնը արտայայտելու համար նա պատրաստակամութեան էր թէ լաւագոյն խնջոյքներից լաւագոյնը, ողջունելու համար իմ մեկնումը։ Գինիի սըրտամերձման հետ ապառնեան Ծառուի սրբած երեսը, որ այնքան լուռ էինք ամէն կերուխումի ժամանակ եւ մեչա սրտում էինք լալ։

— Տղէք դուէնց Ալեքսանդր Ալոյեան, բարձրացրէք ձեր կամքը պինու վերջին կենաց բաժակները եւ մինչեւ վերջին կաթիլը կանձնէք մեր Պետրոսի կենացը, որ բաժանուում է մեզանից, առնակոխ է անում իւր առած ուխտը մեր Գալուստին եւ վոխանակ իւր չինելիք պէնքով ապանելու Թուրքի Սուլթանին, գնում է նրա մայրաքաղաքը դրսից ծռելու նրա թախտը ոտաջ, եւ ոչ թէ վեր առնել նրան թախտի վրայից, չպատել նրան պետին, եւ չանուսուտակ անել: Ախթենք Աստուծուն որ պրիէք իւր սուրբ Հոգին մեր Գալուստին, եւ շնորհէք նրան խաստատութիւն, որ նա էլ բաժանուէք իւր պինապարծութիւնն խելքից, եւ օղնէք ինձ մեր ցօղենի վաճառականութիւնն գործին, որի սրտիկով է որ ես կարոպանում եմ այսպիսի հանճարի ընչացքներով հիւրասիրել եւ ուրախացնել ձեզ:

Այս խօսքերին յաջորդեցին ծիծաղ եւ կատակ, եւ Գալուստ առքի կանգնելով ասեց.

— Մենք կարող ենք ապրել առանց ընչացքների, բայց հայ ժողովուրդը կարող չէ ապրել եւ մնալ իբրեւ ազգ առանց ազատ հայրենիքի: Եղբայր Չան, դու քոյ հոգատար ցօղենով ուռնեցրու պրպանդ եւ սովածութիւնից ազատ պահիր Երեւանցինների փորերը, եւ ես հետեւիմ իմ պաշտելի նպատակին, կապարելէն ցօղենի հատիկներով ծակոտեմ Սուլթանի կառավարութեան նախատելից մարմինը եւ նրա պե-

բնդմանէ վրայ կառուցանենք մեր հայրենիքի անկախութեան կոթողը, եւ այն ժամանակ դուք եւ մենք եւ մեզ նման ամէն հայ երկեան երջանիկ պիտի համարէ ասնել իւր ինքնօյքը մինչեւ անդամ պարզ հացով եւ ապրիւքի առուն ջրով, ցնծալից երգերի եւ ճառերի միջով, եւ անսահման ուրախութեամբ եւ ուրախութեամբ քան հայ մարդը վայելել է իւր ապրի արբատան ազատութիւնը կորցնելուց է վեր:

Երեկոյեան ազօտ լոյսը նսեմանում էր մթութեան մէջ, եւ դիշերային խաւարը մօտենում էր երկաթուղիի դնացքի մեկնման ժամին: Տեղաւորուեցանք երկու կտրքերի մէջ եւ կառապետ ձիերի չարժուն ոտների ապմկաբար հարուածները կոչտ ու բորդ քարերով յատակուած վագոնների վրայ ասնում էին մեր կառքերը երկաթուղիի կայարանը, որի ճակատի հրապարակի վրայ ուրուականների նման չարժման մէջ էին բազմաթիւ մարդկային էակներ իրենց ձիաներից կախուած կապոցներով եւ իրենց մէջքերից կամ ուսերից տոպրակներով կամ խուրջիններով զբաղուած: Դառն մուսքին մարդիկ ճեղքում էին իրենց ճանապարհը, հրմշտկում միմեանց: Եւ կայարանի ներսի ուղիները եւ սրահները նման էին Բաբելոնի աշտարակաշինութեան ահռելանին իրենց բազմալեզու ազմուկներով, բազմատեսակ տարաձնութեամբ եւ այլակերպ կերպարանքներով, ամէնը բեռնաւորուած կապոցներով եւ խուրջին-

նեբով: Ի՞նչ ժամանակներ: Յայնժամ թէպէտ եւ լոյսերը արուեստական եւ անպօր, սակայն իմ աչքերի բնական լոյսը նրանց միջով անանում էր այդ ամէնն լրիւ խախուտնց երեւոյթներով եւ երանգներով: Բայց հիմա հազիւ կարողանում եմ ազօտ նշմարել անհատիս երեսը:

Այժմ անջատուած էի սիրելի բարեկամներից, նրանք կանդնած էին տաճառ, վեր բռնած լրիւ երեսները, եւ ես վերում՝ երկաթուղի գնացքի նեբսում կանդնած լուսամուտի առաջ նայում էի նրանց:

— Եթէ վերսին անանենք միմեանց, վերջսին կ՚ուրախանանք երջանկութեան լըցնջոյքներով: Եւ եթէ չտեսնենք միմեանց այլեւս յայնժամ մեռաք բարեաւ, մեռաք բարեաւ յաւիտեան, եւ միմեանց կը հանդիպենք երկնքում, անբարբառ ողջոյնների անչօշափելի համբոյրներով:

Գնացքը շարժուեց: Թիֆլիս իւր հազարապէտ լոյսերի հետ միասին անհետացաւ եւ գնացքը տահում էր խաւարային մթութեան մէջ:

Երբ զարթնեցի, վոզվոդան տասղերը լրիւ ձանձանչներով արդէն քաշուել էին երկնքի երեսից, եւ սեւերես մթութիւնը բոլորովին ոչխտակացել էր պայծառ արեգակի ցոլարձակ հառագայթների լուսերէն շողերից: Գնացքը վազում էր ծառերի միջով եւ ծառերով չրջա-

պատուած, եւ խիտ խիտ ծառերը ալ եւ ձախ առտածուած էին եւ ծածկուած էին մեր աչքերից ամէն կիսկեր եւ հիւղեր որ կային այդ ուղեղում եւ հետաքրքրում Կոմիտասեան բարձրացած լեռներից ալիքիք չքմաններից վրայից եւ մէկը մեծ եռանկիւն վերածուած էին սուր եւ անսուր գագաթներ, որ ընդհանուր երկրին տալիս էին այնպէս պետերիկ երեւոյթ որ մեռքս իւր խորքից գոչեց· «Երանի քեզ վրացի ապր»:

Այո, երանի վրաց ապրին, որի թագաւորութիւնը թէեւ թագուած նախապէս ցարական սուրերների կախարդութիւնով, եւ յետոյ ցարական պետութիւնների տիրեներով, սակայն նրա արքայատոհմի մայրաքաղաքը եղաւ ազգի միջնադարում եւ վրացուն, եւ նրա մայրաքաղաքը գարձաւ մայրաքաղաք համարյն Կոմիտասի:

Յարի եղբայրը բազմից այնտեղ արդէն վոխարքայ Կոմիտասի, եւ երեւանը Թիֆլիսի առաջ ոչ այլ ինչ էր եթէ ոչ մի վոքր եւ համեստ քաղաք, եւ երեւանն էր Ռուսահայաստանի գարձած մեծ քաղաքը: Եւ սակայն հայ բնակիչներ եւ գրիչներ պատկերացնում էին վրաց ապրին ծայրանգով եւ արհամարհանքով, եւ վրացիք եւս նմանօրինակ արժանիքներով վարձատրում էին երեւոյթ հարեւան հայ ապրին:

Ես անցայ Վրաստանի հողի միջով համաստակութիւնից բժշկուած եւ հասայ Բաքու ուր մեզ տարին առաջ-նորոգանոցի վրայ ծածանում էր թրքական կիսալուսինը, եւ այժմ

առատական յարմարական արծիւը: Հետեւեալ օրն իսկ նոտայ Ֆրանսական նաւը եւ ապակէս առաքեալ առ յաւէտ բաժանուեցան առատական հողից որպէս բնակարանք եւ քաղաքացի եւ ընկեր երկրից երկիր:

Փոքրաթեւանոց ժամանակ, երբ մեր նաւապետի խաւարը իրենց բնատարած եւ մարդաբնակ ձիւնով եւ ջրվէնով անցնում էին անծառ եւ կիսամերկ տարածութեան միջով, երբ մեզանից հնազոյնները երկարելով իրենց ձեռները դէպի ոչ դաչեցին ցնծալին. «Ծո՛վը, ծո՛վը»: Այդ մի ծով էր, ուր մարդիկ նրա ամէն ափերից կարող էին անանձ մթնանց առանց զբաղարութեան: Յետոյ, ոչ նոյն օրը, անառանձի եղաւ Շամբրամի ծովը, որի ափերից լեռներ մեզ կարող էինք անանձ, եւ մարդիկն աչքերը հանդիպակաց եւ կողմնակի կապուտակ լեռնաշղթաներ եւ նրանց մէջից անկուսած քարաստեղծ գլուխներ:

Այսպէս էին Հայաստանի դաճոճ եւ հսկայ ծովերը: Բայց այժմ պատահում էի մի ծովի վրայ, որի ծայրերը օրերի հանդարտհոգութիւնից լեռայ կարելի պիտի լինէր անանձ, եւ որի մակերեւոյթի վրայ հսկայ ալիքները, որպէս թեւաւոր վիշապներ մանչելով վազում էին մթնանց հետեւից, ոսկեգոյն փրփուրներ արձակելով իրենց բերանները եւ թեւերից:

Հասանք Տրապիզոն, հնազարաւոյ յոյների այս անուանի քաղաքը, որի վրայ պարերից ի

վեր բարձրանում է Թուրքի դրօշակը: Մեր նաւը խարխափ ձգից ցամաքից բաւական հեռու: Թուրք նաւաստիները բնականից նաւակներով բերում էին ապրանք նաւի համար, եւ նրանից առնում ապրանք ցամաքի վրայ: Նոյնպէս եւ մարդակից նաւակներ գալիս էին մի համբարձներով եւ ճամբայ դնողներով եւ առնում էին ծոլոփ մեհմանները եւ քաղաքն այցելողները: Եւ ես կեցած նաւի եղերքին, նայում էի կեանքի այս տեսարանին, եւ այս տեսարանը շարունակում էր զանազան ձեւերով:

Եկան ի մէջ այլոց մի շարք նաւակներ որոց մէջ էին հայ եկեղեցականներ, որոց դէմքերը ծանօթ էին հայ կրօնաւորների դէմքերին, բայց ծանօթ էին պատկերներից, եւ նրանց հետ խառն կային եւ աշխատաւորներ: Հայ եպիսկոպոսը մեհնում էր իւր թեմից ի Կ. Պոլիս, եւ Տրապիզոնի կրօնական եւ աշխարհական մեծաւորները եկել էին մեզանից նաւի վրայ վերջին յարգանքը տալու իրենց հոգեւոր առաջնորդին: Հոգեւոր հայրը առաջին կարգի ճանապարհորդ էր, եւ ես բաժանուած էի երկաթեայ վարագոյրով եւ մնայի միշտ բաժանուած նրա տեսքից եւ օրհնութիւնից, բայց յետոյ գոյ մխիթարութիւն երկու բուլղարների բարեհամութեամբ: Մէկը դնդապետ էր, միւսը հարիւրապետ, բայց քաղաքացիական տարազով: Երբ խմացան թէ ես հայ էի, պատմեցին թէ նրանք յեղափոխական-

նրբ էին բուլղար յեղափոխութեան չքնանում, եւ բանակով աքսորուել էին Դիարբեքիր, Տիգրանակերտ իրրեւ բնդոգրգիւներ, եւ ապրում էին հայ բնակութեանց մէջ։

Երբ ասեմ թէ ես այդ տեղացի էի, նրանց հետաքրքրութիւնը չափազանց, եւ պատմեցին թէ հայ բնակութեանց մէջ իրենք շատ նշանակի էին եւ հայ ժողովուրդը շատ համակրանքով էր նայում նրանց եւ ասելացրին թէ «Դիարբեքիրի հայերը հանգիստ, բարգաւաճ եւ բարեկեցիկ մարդիկ էին, միայն մեր բուլղար ժողովուրդը Դիարբեքիրի հայոց պէս նշանակի չինէին, մեր նկատմամբ զգուշութիւն եւ յեղափոխութիւն պիտի չձնէր, բայց այժմ ուրախ եմ որ ձնեց, որովհետեւ նրա շնորհիւ առանց ապստամբ ազգային ազատ ակտութիւն. բայց այս ազատութիւնը մենք ձեռք չէր բերինք մեր յեղափոխութեան ուժով, այլ Մեծն Ռուսիոյ բանակների ուժով»։

Եւ ես մտածում էի թէ Դիարբեքիրցիներ եւ ուրիշ տեղերի հայ ժողովուրդը որքան եւ բազդաւոր, սակայն եւ այնպէս մեր պատմութեան վրայ, եւ ո՞ր մեծագոր ակտութիւնն է որ իւր բանակների ուժով եւ արիւնով պիտի ձեռք բերէր մեր ազգի ազատութիւնն եւ անկախութիւնը։

Մեր նաւը խարխափ էր մի քաղաքի հանդիպ, քաղաքը գած էր եւ ամբողջովին անապատի նման վրայից։ Ներս չէջակայքում երե-

ւում էին տուներ ապխտակապոյտ եւ պարտիզա-
ւոր: Առաջին անգամն էր որ տեսնում էի տու-
ներ այսպիսի դիրքով, եւ ապշեցիկ համայքով:
Զը գիտեմ արդեօք Սամսոն, Սինոպ թէ կիբե-
սոն քաղաքն էր այդ: Բայց ցամաքից մինչեւ
նաեւ հետաւորութիւնը համանմանն էր, նոյն-
պէս եւ չարժումը այդ երիս կէտերի միջեւ:
Նաեւ միեւնոյնը մօտենում էր երբ երեք չորս
նաւակներ լի մարդկերով թիավարում էին դէպի
մեզ, եւ ամէնը բարձրացան նաեւ վրայ, խօ-
սակցութիւնն ձայնները հասնում էին ականջիս:
Մէկը երեւում էր լինել հրամայողի կենտրոնը,
երեւում էր ունելի քաղաքացի, եւ ունելի քաղա-
քակիրթ, ունելի պարթեւ կազմով եւ հագուս-
տով, դիմեն ունէր կարմիր ֆէս ունելի արհես-
տոյն քան վարպետոյն, եւ ունելի բարձր եւ վե-
հասեռել քան սովորական ֆէսերը, սեւ եւ խո-
շոր աչքերը պատկերանում էին նրա մտքերը եւ
նաեւ երեսի վրայ, որից շատ անգամ կրնում
էին դիտասեռել մօտալի անհամբոյր թիւերը:
Կարծեցը լայն էր եւ դէպի ուսեր, որպէս մի
զօրավար որ հրամայում է իւր բանակին եւ պա-
տերազմ, կամ որպէս մի քաջշամարտիկ որ
մրցման է հրաւիրում իւր հակառակորդին: Իւր
արուեստի վերնամասից մինչեւ իւր գլուխ գա-
գաթը նա ճոճում էր իւր մարմինը գետզօրէն
աջ ու ձախ, եւ իւր թիերը յետ առաջ, այն-
պէս, որպէս թէ նա ինքն էր մի Նապոլէոն Բո-
նապարթ, ինչպէս Նապոլէոն անշուշտ գրում

էր ինքն իրեն, եւ երեւում Օսաբլիցկի պատրաստմից չեսոյ: Այս պանծալի երիտասարդ մարդը Յովհաննէս Աբշակունեն էր, անգամ Թուրքիոյ Հայոց Ազգային Երեսփոխանական Ժողովոյ, եւ նա իր չքնաղ ժպտիլքեան այցելութիւնից վերադառնում էր Կ. Պոլիս, ձեռք առնելու իր հանգստական ճամարտնութեան պարտականութիւնը Հայ ազգի վառամնների մէջ: Հակառակ իր կնատրական չարժումներին ընտանութեամբ նա պարզ էր եւ բնիկ բայլին, եւ երբ իր մեծարողները մեծարանօք բաժնուեցան նրանից, եւ մեր նաւը հեռանում էր եւ քաղաքը անհետանում, Աբշակունի սկսեց չքնել ուղեւորների մէջ: Ես կարդում էի մի հայերէն գիրք երբ անցնում էր մօտիցս, կանգ առաւ եւ խօսք բացաւ, եւ հարցրեց թէ ո՞ւր էի գնում այդ տարիքում եւ զբոսայարկի հայտառում: Պատասխանեցի թէ գնում էի Կ. Պոլիս առնել Նեբահս Պատրիարքին եւ Ազգային Ժողովը:

— Արժանի է, գնացէք ուխտի մեր մեծ պատրիարքին, ասաք կեանքի օրերը համբառած են: Ոմանք կը գումն գայն եւ ոմանք կը պարտուեն, բայց դուք երիտասարդ տարիներդ միշտ յաջողանք պահեցէք առաք համար ձեր ազատուեան մէջ: Իմ անունը Յովհաննէս էֆէնտի Աբշակունի է եւ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ անգամ եմ: Երբ հան գաք, հարցուցէք ինձ, եւ ես կը ցուցնեմ ձեզ մեր վարժարանները, անուանի միայն նման Անգլիոյ եւ Ֆրանսայի երեսփո-

խանձարուր ժողովներուն, բայց փոխանակ Աստուածոյ տան ալ մեծ դան մըն է մեր ազգին համար, մինչեւ որ ունի մեծին արժանանանք օր մը:

Սեւ Ծովի ծայրը վերջանում էր, եւ Վաղարշը պետանիլ բերանը լայն բաց էր արել մեր առաջ իբր դեղեցկատոհմ երիտասարդ օձապատում կոկորդով: Ջմայլած նայում էի ու ձախ ուր Վաղարշի եւրոպական եւ ասիական ափերը երիտասարդում էին կազմելով երբեմն շեղակի եւ երբեմն ուղղակի չարաչար եւնէչ բլուրներ, որոց կողերը, ալեծուփ ափերից մինչեւ դեմերեսաշունչ կատարները ծածկուած էին մեծ ու համեստ տուներով, պարզ եւ չքեղ պարտէզներով, ցանցառ եւ կանոնաչափարդ ծառերով: Եւ որքան նայում էի այս տեսարանին, այնքան ունայնի մտածութիւնը տերում էր իմ վրայ: Մտածում էի թէ ինչո՞ւ ամենակարող Քրիստոս իւր սահմած աշխարհի դեղեցկութեան գոհարը եւ մարդաբազմաբնակի մարդաբազարը ինչո՞ւ տանէ իւր առաջին հաստատուած մեծ ազգի գարաւոր տիրապետութիւնից, եւ տար Մուհամեդին հաստատուլ, Քրիստոնեայ կրօնն անպատուել, եւ Քրիստոսի հաստատուածոյնները անարգել եւ համարձակ մի կիսագրկրտուած ազգին եւ նրա թագաւորին: Հոգիս գարմանում էր որ Քրիստոս Աստուած թոյլատրել էր մի այսպիսի սրտիկ եւ պարծանս եւ ի փառս մահմեդականներին, եւ ի նախատինս եւ ի նուաստութիւնս երկրի բնիկ Քրիստոնեաներին:

Այս քրիստոնէավաճել խորհրդածութիւնների մէջ էի, երբ ուսիս վրայ ղպացի մի ձեռքի բռնակալութիւնը: Աբշակունին էր նա:

— Կը տեսնեմ կը հիանաս Սուլթանի մայրաքաղաքի տեսարանով, թերեւս ոչ նուազ հիանաս կամ ուրախանաս, երբ ըսեմ քեզ թէ այս մայրաքաղաքի մէջ կան երկու հարիւր հազար հայ բնակիչներ, տարածուած քաղաքի ամէն մասերուն մէջ, եւ սկսեալ Սեւ Ծովի բերանի այս դիւղերէն, Վոսփորի ափերի վրայ այս դիւղերէն մինչեւ Գաւառ Գիւղ, հին Բագկեդոնը, ուր կը բացուի Մարմարա ծովը, եւ ալ կողմէն մինչեւ Ղալաթիա, ուր կըսկսի Ոսկեղջիւրը, եւ Մարմարայի ձախ եզերքէն մեր հայ ցեղի տուները ցանցառօրէն կը շարունակեն դէպի Նիկոմիդիոյ ծոցը եւ այս ծովի աջակողմեան ափերի վրայ, եւ բարձրութեանց խիտ առ խիտ կը զանուին Կէտիք Փաշայի, Ենի Քաւուղ, Սամաթիոյ եւ այլ հայաբնակ մասերը, մինչեւ քաղաքի վերջը Եաի Քուլէ, Հնադարեան Եօթն Աշտարակները, եւ դեռ քաղաքից աւելի դուրս: Բայց այս Վոսփորեան դիւղերն են, ուր մեր ազգի բաղդատուր հարուստները մինչեւ անցեալ դարու կէսը ունեցել են ճոխ բնակարաններ, եւ վարել են շռայլ կեանք, քանզի ատոնք էին պետութեան յումայափոխները, բանքերները, մինչեւ որ եւրոպական տէրութիւնները իրենց Ֆինանսական կազմութեամբ եւ հաստատութիւններով վերջ տուին մեր ամի-

բանների դրամական տիրապետութեան: Այսուամենայնիւ, այժմ ալ պակաս չեն մեծահարուստ հայերը որ թէ հասարակ տուներ ունեն բուն քաղաքի գանագան մասերուն մէջ, եւ թէ ամարանոցներ Վոսփորի այս ափերուն եւ բարձունքներուն վրայ եւ թէ Իշխանաց կղզիին մէջ Մարմարա ծովին վրայ: Ահա, նայէ հեռուն, այն սպիտակ մեծ շէնքը որ ծովափէն կը բարձրանայ վեր իւր պարտէզներով, ռուսական դեսպանատան ամարանոցն է ի Պէօյիւք Տէրէ· անոր եւ նոյն շարքի վրայ են քանի մը հարուստ հայերու ամառնային տուները: Վոսփորի ձախին վրայ անդադարապար տարածութիւնը բարձրադիպաբեւ Աբրահամ փաշային կը պատկանի, որը կ'ըսուի թէ Սուլթան Ազիզին այնքան մօտ էր որ մէսսին Թաղիու կը խաղային:

Մեր նաւը որքան յառաջանում էր, այնքան տեսարանը գառնում էր վիհատիս եւ կախարդական իմ ապշած աչքերին: Մեր դէմ դմբէթաձեւ կանգնում էր հին Բիւզանդիոնը: Անհամար մինարէներ ցցուած էին դէպի երկինք, որպէսզի նրանց գլուխների վրայից մոլլաների ձայները Մուհամեդին հաւատացողների աղօթքը աւելի լսելի դարձնէին անսահման Աստուծոյ ականջին: Ձախ կողմի վրայ բացւում էր Մարմարան, բաժանելով Բիւզանդիոնը հայաբնակ Գադիկեղանից, եւ աջի վրայ Ոսկեղջիւրը բաժանում էր Թրքաբնակ Ստամբուլը հայ եւ եւրոպացիաբնակ Պերայից եւ նրա մասերից:

Երբ մօտենում էր նաւից դուրս գալու ժամը, իմ բարի հարեւան բուլղարները հարցրին թէ ո՞ւր պիտի երթայի իջեւանել: Ես չգիտէի ո՞ւր, ուստի առաջարկեցին ընկերանալ Փիւչիւք Մուսթաֆա փաշա խան:

— Դիարբեքիրում հայերից վայելած ազնուութեան համար մենք միշտ իջեւանում ենք Նիկոմիդիացի հայերի այս հիւրանոցը. դու եւս մեզ հետ այնտեղ կգաս, ասեցին նրանք:

Նիկոմիդիացիների խանը երկու բառերը սիրտ եւ հոգի ուներ ինձ, որովհետեւ դնում էի կ. Պոլիս առանց ճանաչելու մէկը եւ առանց դիտենալու որտեղ: Ճեմարանում ունեցել էի Նիկոմիդիացի դասընկեր Միհրան Աթանասեանը, որի վրայ մենք միշտ ծիծաղում էինք, որովհետեւ նա միշտ պարծենում էր թէ իւր հայրը Նիկոմիդիոյ դաւառի կառավարական դանձապետն էր եւ չոգենաւային ընկերութեան գործակալը: Մեզնից ոչ մէկի հայրը ունէր այսպիսի դիրք, բնականաբար, մեզ ծիծաղելի էր թէ Միհրանի հայրը մեր հայրերից աւելի մեծ մի մարդ կարող էր լինել, եւ այժմ զոհ էի որ նրան պիտի տեսնէի, դի նա արդէն թողել էր ճեմարանը, եւ ես կամ նրա տուտը պիտի բռնէի եւ կամ խոնարհէի նրա ճշմարտախօսութեան առաջ:

Երկու բուլղարների հետ միասին սկսանք յառաջանալ հին Բիւզանդիոնի կայսրութեան ժամանակի փողոցներով, որոց գետինը ծած-

կուած էր անոտաչ եւ այլ ձեւերի եւ ցեխոտ այլաչափ քարերով, որոց վրայ քայլելը անսովոր էր ինձ համար, նման էր Տիգրանակերտի փողոցներին, բայց աննման Վաղարշապատի եւ Երեւանի փողոցներին, որոնք ցամաք օրերում ծածկուում էին մարդկանց կօշիկների երեսները փոշով, իսկ անձրեւային եղանակներում ապուռում ջրով եւ ցեխով: Երթեւեկող այլազգի մարդոց մէջեւ յաճախանալով եւ տեսնելով տեսակ տեսակ այլազգաչար կրպակներ, խանութներ, հասանք Քուչիւք Մուսթաֆա փաշա խանը, որ երկար անունով եւ մէջակ մեծութեամբ օթեւան մըն էր:

Սեբաստացուհէր վարձակալը, հայ Իգնատիոս Ներկարարեան, Ամասիացի, Նիկոմիդիոյ գլխաւոր քաղաքը, եւ իր եղբայրը մասնաւոր բարեացակամութիւն ցոյց տուին ինձ, երբ լսեցին թէ դալիս էի Կովկասից, եւ էջմիածնից, եւ տեսնի զոհ եղան լսելով Սուրբ էջմիածնի անունը, եւ յայտնեցին թէ իրենց մէկ եղբայրը եկեղեցական էր եւ անունը Գեւորգ եպիսկոպոս, եւ մխանգամայն ասեցին թէ Միհրան Աբեղեանեան բնակուած էր այդ տեղ, եւ ներկայեան կը տեսնէի նրան երբ վերադառնար իւր փայտի վաճառականութեան գործից:

Ի՞նչ սրբապղծութիւն, մտածեցի ես ինքնիրենս, տեսնել ուզում եւ մտնել փայտ ծախելու գոհարիկ գործի մէջ, գոհարիկ գործ, տեսնց որի սակայն կ. Գուլիս ոչ կարող էր կերակուր ե-

վել եւ ոչ տաքութիւն ունենալ տների մէջ:

Ճեմարանը մեր մէջ, կամ դէթ իմ մէջս, մոցրել էր արհամարհանք դէպի արհեստ եւ վաճառականութիւն եւ կրթել էր վերացական գաղափարների սիրով:

Յանի մուտքի աջակողմը սրճարանն էր, նստած խմում էին փոքրիկ գաւաթով սուրճ, կամ ծխում էին նարկիլէ եւ խօսակցում: Յանի բակը յատակուած էր տաշուած քառակուսի քարերով եւ ամէն կողմի վրայ դուռներ կային մէկ մէկ սենեակներով: Ամանք դրծատեղի էին եւ ամանք ննջարան: Ինձ տրեց առաջին յարկի վրայ մի սենեակ, ուր բնակում էին Նիկոմիդիացի եւ Աստրազարցի ընտանիքները, որոնք սկսեցին սիրալիր խօսակցել հետս:

Ուշ ժամանակ եկաւ Մխիթար Աբեղեանեան եւ զարմանքի եւ ուրախութեան զգացումով համբուրեց ինձ: Նա ասեց ինձ Ներսէս պատրիարքի տալիճանատունէր բնակարանի դիւղին անունը եւ ուղղութիւնը եւ մի քանի օր յետոյ ես քայլեցի Դալաթիոյ կամուրջը, որի վրայ էին Կ. Պոլսի եւ արուարձանների, Նիկոմիդիոյ եւ մօտակայ գաւառների միջեւ երթեւեկող նաւերի կայարանները: Գտայ իմ ճիշտ կայարանը, մտայ նաւի մէջ եւ նրա ազդակաւոր անձնները սկսեցին տանել ինձ դէպի սրբազան ուխտատեղին:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ
ԳՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ
ԵՒ
ՎԵՐՋԱԲԱՆ

ԱՌ ԳՐԱԳԷՏՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Թանկագին Հայրենակիցներ,

Դեռ եւս տարիներ յառաջ քան 1932, երբ այցելեցի ի Հայաստան, յաճախ մտածում էի նրա զուգընթացաբար նորածին Թանգարանի մասին, թէ արդեօք կարելի՞ էր, եւ ի՞նչպէս էր կարելի յաջողել նրա համար ստեղծել այնպիսի մի մատենադարան, որի դրքերը իրենց նիւթերի բազմազան պարունակութեամբ, իրենց ձեռագրերի արուեստներով, եւ իրենց կազմերի հրապուրիչ դեղեցկութեամբ նմանէին Բրիտանական Թանգարանի, եւ Ֆրանսայի Ազգային Մատենադարանի դրքերին, եւ Հայաստանի Մատենադարանը քան ամենայնի երեւէր որպէս նրանց մի մօտաւոր մանրանկարը: Այս, պարզ է, կարող չէր ոչ ամենեւաւ հայ հրատարակութիւններով, եւ ոչ թերեւս ռուսականով: Ես չը պիտեմ ուրիշ երկիր, եւ ոչ իսկ Ֆրանսա, արտատպած լինի այնպէս եւ այնքան այլանիւթ եւ զանազան հրատարակութիւններ յի չքեղութեամբ, որպիսին արտադրել է Անգլիա:

Եւ ես սկսեցի խորհիլ թէ ևթէ բազդ ունենայի գտնել այդ կարգի հրատարակութիւնն-

բից, պիտի կարենայի վճռքը ինչ ծառայութիւն անել հայրենիքին, այդ կարեւոր դաշափարի իրականացման համար:

Առաջին մտածումս եղաւ նուէր ղրկել Հայաստանի Թանգարանին Հարի Ծինիս Բոս Լինչի «Հայաստան» երկհատոր մեծ գործի ամբողջ ձեռագիրը զրուած նրա ձեռքով մէկ ծայրից միւսը զարմանալի միօրինակ չափերով եւ մաքրութեամբ, եւ այդ գործին վերաբերեալ զանազան թուղթեր եւ դնահատականներ Հնդկաստանի յայնժամ վոխարքայ Լորդ Քըրզընից, հռչակաւոր արեւելագէտ պրօֆէսոր Վամբերիից եւայլն: Այս ամէնը դասաւորուած էին 25 մեծ խաւաքարթ տուփերի մէջ, եւ իւրաքանչիւրի պարունակութիւնները գրուած անցնելու տուփի կողմի վրայ: Այս ձեռագրերը կը տատուկ ինձ մեծ հետքրքիրից, իմ անմահ եւ զերազնեւ բարեկամից, որի չնորհ եւ սիրալիր բարեկամութեան արժանացայ իւր գրքի հրատարակութիւնից մէկ տարի առաջ, 1901ին, եւ վայելեցի մինչեւ իւր մահը Նոյեմբեր 24, 1913: Այդ թուղթերի մէջ գտայ հարիւրաւոր թղթամոլ դասաւորուած նամակներ որ գրել էի նրան այդ տարիների ընթացքում: Ուրիշ ո եւ է քաղաքակիրթ երկրի համար հետքրքրական այդպիսի մի հսկայ գործ ապրելին մի գանձ պիտի համարուէր այդ երկրի ապրութեան համար: Եւ մտածեցի թէ ամենամեծ յարգանքը մատուցած պիտի լինէի նրան որոշելով նրա ձեռագրերի յաւէ-

անհատական հանդիսաւը Մորհրդային Հայաստանի յուսալից Թանգարանին մէջ:

Ուսաի դրկեցի Հայաստանի Թանգարանի կառավարիչ Մորէն Սարգսեանին, որ յայտնէր փափաքս ուր որ անկ էր, եւ անդնակայնէր ինձ ի՞նչպէս կարող էի դրկել այդ եւ մի շարք դրքեր միասին, եւ նոյնպէս յետադային հետզհետէ: Այդ ժամանակ Մորհրդային Միութիւնը նամանաւ էր չրջապատուած չինական բարձր պարիսպներով, որոնցից անմեղ թռչուններ անկարող էին թռչիլ դուրս, եւ թուղարներ սողուններ դրսից սողոսկիլ դէպի ներս:

Մորէն Սարգսեան դժուարութիւն արտայայտելով Թանգարանի կողմից, յայտնեց թէ հաղորդուած էր Հայաստանի Օդնութեան Կոմիտէին ի Փարիզ, որ սա ձեռք բերէր Փարիզի Մորհրդային կառավարութեան պաշտօնատնից հարիւրաւոր արտօնագիրը, եւ հրահանգ էր տըրուած նաեւ վճարել դրկուելիք դրքերի ամբողջ ծախքը, մի բան որ չէի կարող ապահել այդ կոմիտէից, որին կարծում էի եւ կըշռում էի Անձնահան Ինքնօդնութեան Կոմիտէ: Եւ մի քանի տարիներ յետոյ հասաւ ժամանակը, եւ Հայաստանի կառավարութիւնը արժանի դատեց ոչընչացնել այդ արտասահմանեան պատուանուն հաստատութեան ինքնօգուտ գոյութիւնը:

1933ից սկսեալ պարբերաբար դրկեցի Մորհրդային Հայաստանի կառավարութեան անուան, եւ Լոնդոնի Մորհրդային Պաշտօնատան միջոցով առ նուազն 1500 հատորներ, եւ 400 լիտ

Զայն Տառապելոց դրքից, ինչպէս նաեւ Խրիմեան Հայրիկի Թագաւորաց Ժողով անպլիերէն հայերէն դրքոյկից: Առաքեմնելի արուեստ դրելը առանալու դիւրութեան համար Հայաստանի կառավարութենից հրահանգ առացել էր Լազեան անուն մի եբիտատարտ որ Լոնդոնի Նորհրատարակչական Պաշտօնատան անդամներից մէկն էր: Եւ նա ևկաւ իմ մօտ գաղափար կազմելու դրքերից ամանց մասին: Իւր հետացումը մնծ էր ինչ որ տեսաւ բազմաթիւ դրքերի մէջ, մանաւանդ Շէքսպիրի հրատարակութիւնները լրենց գեղարուեստական փորագրեալ եւ գունաւորեալ պատկերներով, եւ չատ ուրախ էր որ Հայաստանի Թանգարանը պիտի զարդարուէր այդպիսի նմանօրինակ հրատարակութիւններով:

Սարգսեանից, այնուհետեւ Մարտիկեանից եւ յաջորդից պարբերաբար առացայ հետապրեր եւ նամակներ յաջորդաբար դրկուած դրքերի անկարուստ ժամանման մասին:

Բացի իմ հայերէն դրքերից միւս 1500 տեսլի կամ պակաս Թուով հատորները են ամենամեծ մասամբ անպլիերէն, ապա Ֆրանսերէն, Համերոս յունարէն, ապուած 1600ին, ինչպէս եւ այլ պատահան յոյն եւ լատին հեղինակներ, նոյնպէս ապուած մօտաւորապէս այլ Թուականներով:

Այս դրքերի մնծագոյն մասը լրենց Թուղթով եւ տպագրութեամբ, պատկերների համչէ դեղեցկութեամբ, արուեստի ոսկեզօծութեամբ, եւ կազմերի դիւթական հրապոյրներով, յարմարօրէն պատուրուած Թանգարանի դրադա-

բաններում, կարող պիտի լինեն ներկայացնել մի վայելուն տեսարան, արժանի երևելու որպէս Անգլիոյ կամ Ֆրանսայի մեծատարած ազգային մատենադարանի մի մանրանկարը:

Գեղարուեստական տեսակէտից Հայաստանի Թանգարանը պէտք ունի այս ճաշակի մի մատենադարանի: Այս նպատակի համար հայ հրատարակութիւնները բոլորովին բացակայ են եղել այդպիսի արուեստի եւ ճաշակի կարողութիւնից, մինակ հրատարակութիւնը որ մեր երիտասարդութեան օրերում դուխտանքի եւ հիացման առարկայ եղաւ մեր մամուլի մէջ, այդ էին Ալիշանի Սիսուանը, Սիսականը տպուած Վենետիկում: Այս երկու դրքերից եւս կան իմ գրկած դրքերի մէջ, եւ նայողները կարող են տեսնել մեծ տարբերութիւնը: Եւ ոչ հաւասարչն ռուսերէն հրատարակութիւնների մէջ: Անգլիերէն եւ ֆրանսերէններդ միակն են արուեստի եւ ճաշակի այսպիսի նրբութեամբ, մանաւանդ անգլիացիները որ ունեցել են ամենահարուստ հրատարակութիւններ, եւ հարուստ դնողներ, երբեմն չը զոհանալով սկզբնական կազմերով, ծախսում էին տուել կամ նուագ մեծ գումարներ՝ ունենալու համար գեղարուեստական կազմեր, որպէս չքեղութիւն իրենց մատենադարաններին: Անցեալ դարի երկրորդ կէսից սկսեցին հետզհետէ նուագել այդպիսի կազմերով եւ վայելերով դրքերի երեւումը: Նմանապէս պղպատի եւ պղնձի վրայ փորագրեալ պատկերների արուեստը, որ նախընթաց երկու երեք դարե-

բի պատկերազարդ դրքերի հրաշալի հրատարակչին է:

Իմ վերադառձ եւ ընտրածներդ պատկանում են այդ առաքին, ամենք հատանօրէն ոչ առաջնակարգ առաքի, որովհետեւ արանցից դուրս կան դեռ եւս աւելի ազանձելիները: Սակայն ինչ որ ես ունեցայ, աննշան բացառութեամբ, ամենը պատկերազարդ են վերազրուած պզտիկ, պղնձի եւ փայտի վրայ, եւ ամենք հին դանդաղրեալ ոճագրութիւն, դանդաղ վիմագրութիւն, լուսագրնկագրութիւն, եւ աւելի յետագայ դանդաղ եղանակի արուեստներով, որ կատարում էին երկար եւ բնամօտ աշխատութեամբ, եւ արուեստագործների տաղտկանալի մտահոգ դրծառնքի ժամանակը սկսեց դառնալ մեծագին: Ուստի անխուսափելի էր որ նորագոյն դրքերի մէջ անհետանային հին լուսագարձէ պատկերները, որոց միջոցով բնութիւնը, նրա տեսարանները, ծառերը, եւ ծաղիկները, ցամաքի եւ ընդծովեայ կենդանիները, մարդկային ամէն ցեղերի դէմքերն եւ նրանց լուսագոյն ձեւակերպները այնքան դիւթականօրէն վայելում են բազդատած անդիմադրելի հայ դրագէտների երեւակայութիւնից ելնելիք մեծահոգուստ դրքերի մէջ, որոց մեկն էլ ես ամենասիրտը մատն է որ կարող եմ եղել, եւ կարող պիտի լինեմ տեսանելի դարձնել Հայաստանի թանգարանի մէջ:

Անհարակուսելի է թէ հայ դրատէրները անկարող պիտի լինեն կարդալ եւ մարսել հատկա-

նալ նրանց պարտականութիւնները, քանի որ դէթ առ այժմ անդէտ են անգլիերէնի, բայց նրանց աչքերը, նայելով նիւթերին պատկանեալ պատկերների վրայ, այնքան կարող պիտի լինեն ազդուել եւ իմաստասնալ որ պիտի դառնան ընդունակ փոխանցել նիւթերը նրանց մըտքերի մէջ եւ տեսանելի անել նրանց հասկացողութեան համար:

Այս դաղափարով էր որ որոշեցի ընտրել լուսապարդեալ դրքեր իմ նպատակի համար:

Հայաստանը անհատանելիօրէն հեռու էր Եւրոպայից եւ ամէն պետական եւ անհատական փոստատոր գալըրիներից որոց պատերից կախուած են Անգլիոյ, Գերմանիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ, Հոլանտայի, Ֆլանդիայի մեծ նկարիչների ամենասիրելի գործերը, որպէս զի մեր նոր հայրենիքի զեղարուեստագէտները տեսնէին, եւ ուսումնասիրութեամբ հասկացողութիւն կազմէին նկարչական արուեստի որպիսութեան մասին, հայերէն բնաւ չը կան, եւ ուսանէրն եւս չը կային այնտեղ նկարչական արուեստին վերաբերեալ այն անթիւ եւ անհամար պատկերազարդ պատմական, ուսումնասիրական եւ քննադատական դրքեր, որոցմով առատ է որպէս անգլիական, նոյնպէս եւ ֆրանսական դրականութիւնը, եւ առանց որոց աշակերտութեան ոչ ոք կարող է բուն ինքեան կազմել ճիշդ ճանաչողութիւն նկարչական արուեստի արտադրած գործերի մասին:

Վերոյիշեալ երկիրների պետական եւ այլ

Գալըբինների, այն պատկերասրահների, համբնաւոր նկարների, փորագրուած պղպջաւոր վրայ եւ այլապէս, եւ կան հրատարակուած առանձին դրքերով աշխարհի գիտութեան համար, դրկուեցան նաեւ Հայաստան աշխարհի գիտութեան համար, ոչ նուազ քան ուրիշ համապատասխան մարդիկ նկարների վերարտադրութիւններ: Նրանց մէջ թերեւս ամենաուշադրաւներից մէկին է «Միւզէ Ժրանսէ» (Ֆրանսական Ժրանսալի) վառուած եւ մեծ հատորները, Գալըբի վերջալոյս մեծամասնալ եւ հպարտալուս գործը, Ժլորանսի Միւզէն, Լանգռնի Ազգային Գալըբիի մի քանի տեսակները, որոնցից մէկը՝ երեք հատորանի պարունակում է Գալըբիի 1600ից աւելի մանր եւ մէջտակ արտադրութիւնները, եւ այլ ուրիշ գալըբինների դրքեր, բացի այս, դրքամածներից մէջ կան տարբեր դրքեր ուր երեւում են յատկապէս Մեծ Վարպետների Ամենասուրբ գործերը որ գտնւում են զանազան երկիրների Թանգարաններում եւ մասնաւորների մօտ: Նրմանապէս Ռաֆայէլի բոլոր գործերը առանձին դրքերով երկհատոր, եւ մի քանի տարբեր հրատարակութիւններ, այսպէս Ռամբրանդ, Ռուբէնս, Ալբերտ Դիւրեր, Ռէյնոլդս, Գէյնզբրոյ, Մադամ Լըբրըն, եւ այլն եւ այլն մէկը միւսից մեծահատոր, հարիւրաւոր նկարներով եւ շքեղ հրատարակութիւններով:

Այս բոլոր դրքերը պարունակում են նկարների նկարագրութիւնները, եւ նկարիչների կենսագրութիւնները: Երեւանի Թանգարանից

այս դրքերի մէջ նայողները պիտի կարենան տեսնել վերջին հինգ հարիւր տարիների ընթացքում Եւրոպայի մէջ նկարուած ամենալաւ պատկերները, եւ հայ նկարիչները պիտի ունենան հնարաւորութիւն տեսնել այն անդունդը որ կայ տակաւին այս նկարների եւ Երեւանի Թանգարանի պատերից կախուած հայ նկարիչների նկարների միջեւ եւ թերեւս ձգտեն եւ յաջողեն փոքրիկ քայլերով փոքր ինչ փակել այդ անդունդը:

Այս դրքերին ընկերանում են այլ բազմաթիւ պատկերազարդ դրքեր յիշեալ երկիրների նկարչութեան տրուած պատմութեան մասին, նմանապէս լիառատօրէն պատկերազարդուած դրքեր Չինաստանի, Ճափոնի, Պարսկաստանի եւ Հնդկաստանի գեղարուեստը եւ նրա պատմութիւնը:

Եւրոպական քաղաքակրթութեան ընթացքին գեղարուեստ եւ գրականութիւն զարդացել են զուգընթաց, եւ ուր բարձրացել է վրձինի վայելչութիւնը, այնտեղ վայելել է գրչի վարպետութիւնը:

Ուստի իմ միտս նպատակն էր ոչ թէ նուազ քան հաւասարաչափ, բայց նոյն իսկ մեծագոյն աւելի, եւ բազմապիսի համայնագիտական օգտակարագոյն դրքերով հարստացնել Հայաստանի Թանգարանի գրական բաժինը.— Սկսած Համլերից մինչեւ Լորդ Թենիսոն. բանաստեղծութիւն, իմաստասիրութիւն, Համաշխարհային Ուղեւորութիւն, պատմութիւն, աստղագի-

տութիւն, թատերգութիւն, տիեզերագիտութիւն, բնագատմութիւն՝ բուսաբանութիւն եւ կենդանաբանութիւն, բժշկութիւն, վիպասանութիւն, ճարտարապետութիւն եւ այլն: Իւրաքանչիւր առարկայից բազմատեսակ դրքեր ընտիր եւ պատկերազարդ օրինակներով: Այսպիսի դրքերի թիւը 1000 կամ 1200ից աւելի է, առ հասարակ բազմահատոր, 10, 20, 30, 40 եւ 60 հատորներով, ինչպէս են բնագատմական գունաւոր պատկերներով, Ջորջ Բէլի պատկերազարդ Բրիտանական Թատրոնը, եւ Սըր Ջոն Լըբոքի 100 հատորներով «Ամենալաւ Դրքերը»:

Սրանց մէջ պատկերազարդ լինելու առաւելութիւնը նրանում է որ պատկերները կրկնապատիկ լոյս են սփռում դրքերի մէջ գրուած նիւթերի վրայ, դարձնելով նրանց աւելի տպաւորիչ մտքի մէջ եւ աւելի հրապուրիչ երեւակայութեան համար: Այսպէս են Ռոջըրսի Իտալիա երկհատոր բանաստեղծութիւնը, որի պատկերների նկարման, փորագրութեան եւ դրքի տպագրութեան համար մեծահարուստ բանաստեղծը ծախսեց 30,000 անգլիական ոսկի, որպիսի ահագին դումար ծախսուած չէ ոչ եւ է դրքի հրատարակութեան համար 1830ից առաջ եւ յետոյ: Նոյնպէս ի մէջ այլ բազմաթիւ գրական եւ գիտական առարկաների, դոր օրինակ աստղագիտութիւնը գուա ամենաճարտարանական լեզուով եւ ամենասիրելուն բառերով անկարող է տալ ճշմարտանման գաղափար երկինքի խորհրդաւոր խորութեան, եւ այդ խո-

բութեան մէջ խիտ առ խիտ անհունօրէն խորամխուած անհամար աստղերի հրաշափառ տեսարանի մասին, ինչպէս ցոյց են տալիս աստղագիտութեան դիտողների աչքերի առաջ, եւ ոչ բնապատմութիւնը, եւ տիեզերագրութիւնը չէին կարող լինել լի հմայքով եւ հետաքրքրութեամբ, եթէ չը լինէին դրեթէ կատարելապէս ճշդանման եւ կենդանի գոյներով ձկների, թռչունների, միջատների, անասունների, ծաղիկների եւ ամէն երկրային բոյսերի, մարդկային ցեղի ամէն սեռերի, նրանց հասարակական կեանքի, բնակարանների եւ երկրների այսպիսի պատկերը որ հազարներով սփռուած են այդ գրքերի դրեթէ ամէն էջերի վրայ:

«Տիեզերքի Հրաշալիքները» գրքի 1,660 պատկերների մի մեծ մասը ի վեր է հանում երկինքի հրաշափառ տեսարանը, եւ նրա միւս պատկերները միացած «Աչխարհի Հրաշալիքները» գրքի 1100 պատկերների հետ պատկերացնում են ընթերցողի աչքին ինչ որ կայ եւ հետաքրքրական է դիտելի երեսին եւ դիտելի տակ:

Ամէն ինչ որ ծանօթ է դիտութեան երկինքում, եւ ամէն ինչ որ գոյութիւն են ունեցել անցեալում, եւ գոյութիւն ունեն այժմ երկրի վրայ եւ երկրի ներքեւ, եւ կամ են մարդկային մտքի յղացումներ, ստեղծագործութիւններ եւ դիւաներ, այդ ամէնը կարելի է գտնել Հայաստանի Թանգարանի այդ հաւաքածոյի մէջ նկարագրուած բառերով եւ լուսաւորուած պատկերներով:

Վերջին դարերի եւրոպական մեծ ազգերի, յատկապէս անգլիական ազգի, մեծահանճար հեղինակները զարգացրել են, ընդարձակել են եւ վսեմացրել են իրենց բնածին իմաստութիւնը կարդալով եւ կարդալով, ուսումնասիրելով եւ մարսելով նախաքրիստոնէական չքնաղ յունական եւ հռոմէական մեծ գրողների ընտիր իմաստագրութիւնները:

Զկայ մէկը այս դարերի հանճարաւոր գրողներից, որի գրուածների մէջ չ'երեւին այն հին գրուածների ազդեցութեան հզօրութիւնը: Հոմերը, ողբերգութեան նախահայր Եսքիլոս, Սոփոկլէս, Եւրիպիդէս, Հէրոդոտ, Թուսիդիդէս, Սոկրատ, Պղատոն, Արիստոտէլ, Կիկերոն, Վերգիլ, Հորաս եւ այլն յայտնապէս եղել են վերջին դարերի գրողների իմաստութեան չռեմարանը: Այս գրողներից շատեր մանաւանդ Անգլիայում, արդէն պատանեկութեան տարիքից սորված էին եւ գրեթէ իրենց մայրենի լեզուի չափ հմուտ էին յունարէն եւ լատիներէն լեզուներին, եւ կարող էին կարդալ բնագիրները իրենց ուղիղ իմաստներով, եւ թարգմանել իրենց մայրենի լեզուին անթերի կատարելութեամբ. կարողութիւններ որոց երկուսից եւս զուրկ են եղել եւ են մեր ժամանակակից գրագէտները, իսկ նորատաշէն Հայաստանի նորահաս գրագէտները եւս աւելի զուրկ. եւ ճշմարտապէս տապանագաւոր գրող դառնալու գլխաւոր եւ ուղիղ ճանապարհն է հետեւել այդ անգլիական եւ ֆրանսական մեծ գրողներին որոնք թէեւ վաղուց մեռած, իրենց գրուածները մնում են

անմեռանելի: Եւ հաւանօրէն գայ ժամանակ, երբ Հայաստանի Մատենադարանում հանդիպող դրքերից ոմանց հրապուրիչ անուններից եւ միւսների լուսաւորող նկարներից ներշնչուած, դրականութեան ջերմ սիրահար նորաստեղծ Հայաստանի նորահաս գրողներ հաւանօրէն տիրանան այն լեզուներին որոցմով գրուած են այդ դրքերը, կարդալ, ուսումնասիրել եւ մարսել իմաստութեան եւ գիտութեան այն նիւթերը որոցմով մեծացան վերջին դարերի մեծ գրողները:

Բայց բոլոր ժամանակների ամէն գրողների մէջից ոչ մէկի անունը այնքան կախարդական է, ոչ մէկը կանգնում է այնքան բարձր մեր երեւակայութեան հորիզոնի վրայ որպէս Շէքսպիրի անունը եւ Շէքսպիրի դէմքը: Տոգորուած այս գաղափարով, իմ դիմաւոր փափաքներից մէկը եղաւ դարձնել Խորհրդային Հայաստանի մատենադարանը, Խորհրդային Միութեան մատենադարանների մէջում, այս ամենամեծ հանճարի գործերի բազմաթիւ եւ այլազան տպագրութիւնների ամենահարուստ հաւաքավայրը: Միայն անպիտերէն լեզուով եղել են հարիւրաւոր տեսակի հրատարակութիւններ, ի մէջ որոց իմ ջանքս եղաւ դանել ամենալաւերը միջակների հետ միասին:

Առաջին տպագրութիւնը երեւեց 1623ին, միանձալ, որից միայն 3—4 օրինակ գոյութիւն ունի այժմ, մէկը Բրիտանական Թանգարանում. մնացածներից մէկը միայն տիրոջ կող-

մից աճուրդի դրուելով մեծ պատերազմից առաջ ծախուեց 14,000 անգլիական ոսկիի առատպելական գնով: Այժմ ոչ մէկը վաճառելի են ո եւ է գնով: 1811ին ամենաբարձր գնով նշանակուած եւ Շէքսպիրի Պատմական Դրամանները պատկերազարդուած մօտ 200 վոթագրեալ նկարներով դրքում կայ հետեւեալ յիշատակութիւնը.—

«1623ի տպագրութեան բազմաթիւ տպագրութիւններ հետեւեցին յաջորդ չորքանեակում, Պոպի, Կապելի, Սըր Թոմաս Համէրի, Թէոբալդի եւ ուրիշների կողմից: Բայց դլխաւոր տպագրութիւնը, որ պարունակում է զանազան մեկնիչների սրբագրութիւնները եւ լուսաբանութիւնները, Պ. Ռիդի բացատրական դասագրքի, եւ Ջոնսոնի եւ Ստիվենսի ծանօթագրութիւնների հետ, հրատարակուեց այս վերջին պարոնի ձեռքով 15 հատորների մէջ, եւ այնուհետեւ Պ. Ռիդ տպագրեց, եւ ընդարձակեց 20 հատորների մէջ: Այս, ըստ որում ներփակում է ամէն դիտութիւն վերաբերական հեղինակին, է անշուշտ ամենակատարեալը: Հանդուցեալ առենակալ Բոյդելլինը դերազանցում է բոլոր միւսներին, եւ չքեղատպարդութեան կողմից է անտարակոյս ամենավայելուն դիրքը Եւրոպայում»:

Սոյն տողերը պարունակող դրքի հետ հատորածոյի մէջ է նաեւ Բոյդելլի Շէքսպիրի քարտեզածաւալ տպագրութիւնը չքեղ վոթագրեալ պատկերներով եւ հոյակապ կազմով հրատա-

բակուած 1802ին 1803ին, եւ որանց ընկերանում են Սամուէլ Ջոնսոնի 10 հատորներով 1766ին տպագրութիւնը, հրատարակուած 33 տարի առաջ քան նրա եւ Ստիվենսի միասին կատարած աշխատութեան հրատարակութիւնը 1794ին. Ջորջ Բէյլի 15 հատորներով պատկերազարդ տըպագրութիւնը 1793ին. «Ազգային Շէքսպիր» եռահատոր, եւ «Կայսերական Շէքսպիր» երկհատոր, որոնք Բոյդելի Շէքսպիրից յետոյ լրբենց պատկերներով եւ կազմերով եւ ոսկեզօծութեամբ տասն եւ իններորդ դարում հրատարակուածների մէջ ամենափայլուններն են: 1623ի տպագրութեան ֆոտո—գինկոգրաֆիով ընդօրինակուած հրատարակութիւնը 1862, որով իսկականը տեսնելու անկարելիութեան դատապարտուած մահկանացուները նայելով այս օրինակի վրայ, կ'ունենան գաղափար Շէքսպիրի առաջին տպագրութեան մասին: Եւ միահատոր ամենափոքրիկ հատորիկան Շէքսպիրը, տպուած ամենամանր տառերով ամենաթաթակ թղթի վրայ, եւ ընդունակ հանգստօրէն տեղաւորուելու փոքր մի գրպանի մէջ: Նրանից առնուած Շէքսպիրի պատկերը երեւում է Թանգարանին նուիրածս բոլոր գրքերի ներքին երեսի վրայ, ուր եւ երեւում է Շէքսպիրի առաջագրութեան օրինակը, եւ այլ առաւել կամ նուազ լաւ, եւ գունաւոր եւ այլազոյն պատկերներովտպագրութիւններ, որոց մէջ կան Շէքսպիրեան նշանաւոր խաղացողների եւ հերոսուհիների պատ-

մութիւնները լրենց դունաւոր պատմական ըզգեստներով, նաեւ այն ամէն ծաղիկները որ յիշուած են գործերում, եւ դարերից ի վեր տարաւոյ զանազան եղանակներում զարդարում են այն տան պարտէզը ուր նա ծնել էր կամ մեռել:

Անկարելի է որ սոյն գրքերի ներքին եւ արտաքին պայծառութիւնը չը հմայէ Հայաստանի գրողներիդ ոգին, եւ չը հրանդարէ ձեզ մըղուել եւ կարենալու կարդալ մեծ բանաստեղծը իւր գրած լեզուով, որովհետեւ իսկապէս այն ժամանակ է որ ոչ—անգլիացի ընթերցողը պիտի կարենայ հրճուիլ Շէքսպիրի լեզուի եւ մըտքի արտայայտութիւններով: Ամենալաւ եւ ամենաուղիղ թարգմանութիւններն իսկ նման են անգլիերէնի առաջ, իսկ վատ եւ անճիշդ թարգմանութիւնները բոլորովին նսեմացնում են ոչ միայն գրուածքի արտայայտութիան վայլը, բայց փոքրացնում են եւ գրողի հանճարը:

Վերոյիշեալ գրքերին ընկերանում են անգլիական, եւ մասամբ ֆրանսական, մեծ գրագէտների եւ բանաստեղծների հեղինակութիւնները ընտիր փորագրեալ պատկերներով եւ չքեղ կազմուածքներով, ոմանք մինչեւ 20 եւ 25 հատորներով, որոց մէջ թերեւս ամենավսեմն է Վալտէր Սկոտի ամբողջ գործի ամենալաւ եւ 17 տուաւոր հատորներով հրատարակութիւնը զեղազարդուած 2,000 փորագրեալ նկարներով: 1842ին տպուած այս չքեղ գործը գտնուում էր Սկոտի զերդաստանում, ինչպէս որ իւրաքան-

չիւր հասարին կրած անուաթղթից երեւում է կառավարչապէս նոր եւ մաքուր վիճակի մէջ։

Արդէն երկար կեանքը եթէ բաղդ ունենայ երկարել փոքր ինչ եւս տողերիս դրողը պիտի չարունակէ նուիրուած մնալ Հայաստանի Մատենադարանի դէղեցկութեան, օգտակար դրքերի պիւտերով, եւ մահից յետոյ նրա կենդանի ոգին պիտի յարատեւէ նոյն ուղղութեամբ։

Եթէ ամէն մի հարիւր հայ դրագէտների մէջից դէթ երեք կամ չորսը լիովին տիրապետեն անգլիերէնը եւ կառավարչապէս մարմին այդ դրքերից լաւագոյնների դիտութիւնն եւ իմաստութիւնը, հաւանօրէն պիտի կարենան դառնալ մեծ տաղանդներ իրենց հայրենիքի դրականութեան համար, եւ ճշմարիտ պարծանք իրենց ազգի անուան։

Լաւ դրականութիւնը մարդկութեան ամենալաւ տենչանքի արբանեղէն է։ Հայաստանի դրագէտը կարող է գտնել այդ դրքերում իր ամենաթարմ բաղճանքի արբալայրը, որի մէջից ընդունակ եղողը կարող է ընդունել դրականութեան հանճարի խոզը եւ վառել իւր մաքում դրբական ստեղծագործութեան լոյսը, եւ բարձրացնել իւր գաղափարների մեծութիւնը։

Հայաստանի մէջ քրիստոնէութեան կրօնական չաղախով շինուած ունայն սուրբերը արտաքսուում են, եթէ արդէն բոլորովին չեն արտաքսուել Հայ ժողովրդի սրտից։ Ճիշտ այսու նրանց տեղերում ապահովօրէն պիտի կանգնեն դիտութեան, դրականութեան, եւ ընկերային վիճակի բարենորոգութեան հանճարի սուրբերը։

Գ. ՏՕՆԱԳԵՏԵԱՆ

ՎԵՐՋԱԲԱՆ

Այս դրքի ընթերցանութեան ընթացքին, խորհուն ընթերցողներ թերեւս խորհին եւ խորհրդածեն, թէ այս դրուածքը արդեօք ի՞նչ է պատկերացնում ըստ ինքեան, թէ արդեօք յեղափոխական պատմութի՞ւն է, եթէ ոչ բանաստեղծական յեղափոխութիւն: Կամ թէ նրանում փայլող եւ խաւարող անձնաւորութիւններ խակապէս այնպէս իրակա՞ն էին իրենց բառերով եւ խօսքերով եւ գաղափարներով, եթէ ոչ արուեստական, նման վէպերի արուեստական դէմքերին:

Այստեղ ճշմարիտ պատմութիւն, օդային յեղափոխութիւն եւ ցնորական ազգասիրութիւն մխաճուլուած են միասին, եւ ուր անձնաւորութեանց արտերից գոլորշիացող ոգեւորեալ զգացումներ եւ մաքերից մխացող նոցա բոցավառ մտածումներ իմ հոգին մարմնացրել է եւ իմ դրիչը նկարել նրանց վսեմ եւ նսեմ բառերով եւ ճառերով յաւէտ հիւրընկալ մերկ թուղթի վրայ:

Այնպէս պատահեց որ մօտ 14 տարի առաջ դրածս մի դրութիւն վոխանակ մեկնելու իւր սահմանեալ վայրը, մնաց հանդչած իմ մօտ խաւարում; յոյս աշխարհ գալու այժմ այս դրքի մէջ, ուր յոյս է տեսնում այդ դրուածքի դլխաւոր առարկայի կեանքի պատմութիւնը, եւ այդ երկու դրուածները այժմ կապւում են

մխիթանց ճակատագրական կապով:
Հայաստանի Թանգարանի կառավարիչներից Յոբէն Սարգսեանի խնդրանքն էր, որ ես գրի առնէի իմ պատանեկութեան սիրելի ընկերոջ եւ պատանի Հայաստանի սիրեցեալ բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրեանի կեանքի տուեալները-ձերից ինչ որ գիտէի, Թանգարանի համար: Հաւանօրէն նա այժմ այնտեղ չէ, բայց նրա մխքը եւ սիրուց անուսրակոյս այնտեղ են. եւ եթէ նրա կեանքը բաժանուած չէ այս աշխարհից նրա կենդանի աչքերը պիտի տեսնեն այս նամակս սոյն գրքում, որ ինչպէս իրեն համար էր, նոյնպէս եւ է իրեն նմաններին համար:

Յոբէն Սարգսեանի բարի ընկերակցութեամբ Թանգարանն եւ իւր մատենադարանը տեսնելուս հետեւանքով էր որ դուայ Թանգարնին կամ Հայաստանի գրողներին ծանօթելու ուղիղ ճանապարհը, որ կարելի է դառել Հայաստանի գրողներին ուղղած մի այլ գրութիւնից, որ յառաջ է բերուած այստեղ որպէս Ցաւելուած: Բայց այն ժամանակից մինչեւ այսօր Հայաստանի գրողների մխքը եւ գրիչը յայտնապէս գրալիօրէն մեծ յառաջդիմութիւն են արել: Թէ նրանք ուրիշ հանճարեղ հին հեղինակութիւններին խմատատրանութիւններից ո՞րքան են ազդուել, դա անկարելի է ինձ գիտենալ այսքան հեռուոր տարածութիւնից, բայց մի բան բացայայտ է, որ բազմաթիւ, բազմատեսակ եւ գերահրաշոյր Շէքսպիրեան գործերի անդրմիներէն հրատարակութիւնները մագնիսա-

կան ազդեցութիւն են գործել Հայաստանի վաւերուն դրողներէ մաքի եւ հոգիի վրայ, ինչպէս որ տեղեկացայ Լոնդոնի թերթերից, յայտնելով իրենց ընթերցողներին թէ Յորհրդային Հայաստանի դրագէտները կատարել էին Շէքսպիրի գործերի հրատարակութեանց ցուցահանդէսը, որ հետաքրքրութեան առարկայ էր դարձել իրենց մայրաքաղաքի հասարակութեան համար: Այս եւ այսպիսի պատահական լրագրական տեղեկութիւններից ուշադիր անգլիացի գրագէտների մոքում Հայաստան արդէն ճանաչւում է որպէս Շէքսպիրի հետաքրքիր ընթերցող եւ հիացող:

Իսկ իմ այս գրքի յառաջաբանի ուշադիր ընթերցողներ, եթէ երբէք դանուին, պիտի նկատեն թէ այնտեղ յիշուած մի կարդ նիւթեր ի թիւս որոց եւ Սուլթան Համիդի երազը չկան այս հատորում, որոնք գործի առուտրութեան պատճառու թողնում եմ յաջորդ հատորի համար, «Յեղափոխութիւն, Բանտ եւ Ազատութիւն»:

Այդ ժամանակի ինձ նամանների արիւնադոյն տանջանաւոր եւ երջանկաբեր այդ երկրորդութեան մասին սեւագրեալ բառերը արդեօք ի՞նչպէս հնարաւոր պիտի լինի նկարել այս իմ մթնշաղ աչքերով ձիւնափայլ թուղթի վրայ: Այդ միայն բաղդը կարող է անօրինել ինձ համար:

ՑԱՆԿ

Յառաջաբան	5
Հանդուցեալ Աբշալոմ Բաֆֆիի նամակը	13
Կեանքի ապշալոյսը	15
Տունից դուրս	21
Տեսարանների հրապոյրը	34
Վաղարշապատի հին վտակները	48
Տեսիլքից իրականութիւն (Էջմիածին)	91
Վերադարձ ի Թիւրքիա	135
Ուռումն ի Տիգրանակերտ	180
Վերստին դէպի Էջմիածին որպէս սան ճեմարանի	200
Կարին եւ Կարս	214
Վեհարան եւ ճեմարան	227
Ծերունի Յարութիւնեան	231
Սարգիս Աւետիսեան Կուկունեան	236
Ճեմարանի այլ դասընկերները — Բարապամ Ամատունի	254
Պապ Վարդանեան	259
Նիկողոս Մելիք-Թանգեան (Նեբսէս Արք.)	260
Յարութիւն Տէր Մկրտչեան (Մխիթար Արք)	262
Ղուկաս Իվճիլարցի	264
Յովհաննէս Աստուածատրեան	273
Արմենակ Հայկունի (Զամանեան)	278
Ազատ Մտքեր—Սպանումն Ալիքսանդր Բ.-ի	284
Փարամազ եւ Փարեանեան	292

Մահ Գէորգ Դ-ի եւ սկիզբն իմ թափառականութեան 298
Երեւանի հրապարակը 303
Դէպի Աշտարակ (Գեան Քասախ եւ լեռան Արագած) 307
Յեղափոխականական ժողով Երեւանում 317
Թիֆլիս — Գարուսա Արշակեան 331
Ալեքսանդր Ծատուրեան — Նամակ Յովէն Սարգսեանին 343
Հրաժեշտ ընկերներին—Ուղեւորութիւն ի Կ. Պոլիս 405
Յաւելուած — Առ գրագէտս Հայաստանի 425
Վերջաբան 442

ARMENIA
AND
ARMENIAN PEOPLE
THROUGH THE CENTURIES

AN AUTOBIOGRAPHY IN ARMENIAN

BY

PETROS TONAPETEAN

VOL. I

BOYHOOD AND YOUTH

Published by the Author

1947

LONDON

Printed in France by Turabian Press, Paris

— 447 —

5n.

A II
80282